



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագրքերի» հաստիքներ  
ոչ առևտրային իրավասուրբուն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել կարգը զանկարգան մնալով: կամ կրկնել  
մնալով: կամ սրտագրքերն արտոնագրել: առևտրային հասարակուրդ

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1006

1007

1008

1009

Uinola Papp

Uinola Papp

Uinola

613

P 60

Uinola

1371

1376

1377





Հրատանու (Մեարիճ) հարկերական ժազդոյ

**ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ**  
**ԱՄՈՒՅՆՈՒԹԵԱՆ**

ՈՒՍՈՒՄՆ

ՍԻՐՈՑ, ԵՐՁԵՆԿՈՒԹԵԱՆ, ՀԱՌԱՅԱՐՄՈՒԹԵԱՆ

ԱՄՈՒՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿՐՈՒԹԵԱՆՑ

ԵՒ ՀԱԿԱԿՐՈՒԹԵԱՆՑ

ՆԱԾԱՆՑ, ԵՆՈՒԺՒՒՆ, ԱԳԱՀԱՐԻՔԱՆ  
ԱՄՈՒՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԵՂԻՆԵԿ Ե. ՏԸՊԷՑ**

ԹԱՐԳՄԱՆՆՑ Մ. Ս. ՔԱՔՄԱՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՔԱՐԿՈՒՄԻՆ Ե. Ն. ՊԵՐՏՊՈՒՆՆԻՍ ԻՒ ՀԱՄԻ

ԿՈՄԻՏԵ

ԳՆՆ 3 ՔԱՌՔ ՄԵՃԻՏ

---

ԻՄԱՍՑԱՍԻՐՈՒՄԻՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

---

---

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ , Երանէշ Դ. Պարտիզպանեան եւ Հնկեր  
— Կ. Պոլիս , Արմեն-Համամ , Միգա-փաշա-խան  
Թիւ. 3

---

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY  
540 EAST 57TH STREET  
CHICAGO, ILL. 60637  
TEL: 773-936-3000  
WWW.CHICAGO.EDU

392

ԲՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱԿ

# ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆ

ՍԻՐՈՑ, ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ, ՀԱՐԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ  
ԱՄԵՐՆԱԿԱՆ ՀԱՄԱՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՀԱՆՁՆՈՒԹԵԱՆՑ

ՆԱԹԱՆԵ, ՇՆՈՒԹԻՒՆ, ԱԳԱՀԱՐԱՆ  
ԱՄԵՐԻԿՈՒԹԻՒՆ

**ՀԵՂԻՆԱԿ Ա. ՏԸՊԷՑ**

ԹԱՐԳՄԱՆԻՉ ՄԻԲԱՑԷԼ, Ս. ԳԱԳՄԱՅԵԱՆ



Կ. ԳՕԼԻՍ

ՊՐԻՆՏԵՐՍԻՆ ԱՆՏՈՆՆԻ Կ. ՊՐԻՆՏԵՐՍԻՆ ԵՒ ՀԱՄ

X 1876

16128

---

Հրամանաւ Հասարակաց կրթութեան  
(Մեարիմ) ժողովոյն

---

7673-57

## ՇԱԲԱՐԱՆԻ ՔՈՒՉՄԱՆԻ

—

Բարաց ապահանքներն եւ գեղեցիկները, որք են զուժարքը զույսի անկեան ազգաց, ամեն ժողովրդաց վրայ տիրաբար բռնանալէն, առաքինութիւնն՝ իբրեւ միանախոյ գործ՝ պարստանայ, կեցնութեանց եւ երգիծանաց առաքելաց ըզյալէն, զարշեցի սեւ ժգութիւններն ու նոցա ամեն պարագայներն իբրեւ նազրկացութիւն ու նարատարութիւն նշահատուելէն, անուանական երցման կուտարութիւնն առ ոչինչ զբուելով ու քարեկանական առաքինի գոգա սերը ծաղրելի զգայուններու գործ կանարուելով, նիւթական փուլաշառ ստիանքն՝ պատկերութիւնն ու շնութիւնն իբրեւ նարանեութիւն ընդունուելէն, երջանկութիւնը քաղցի եւ նարատութեան մէջ միայն փնտաուելէն ի վեր, անուանութիւնն իբր ընտանիք՝ էական կերպարանքը կորսնցուցած կամ յաւ եւս կերպարանափոխ եղած է։ Այնպէս որ երբտաւարդք՝ իրենց ապանի կիսող վրայ ապապայ անհաստարժութիւն կը մտկարերեն, նարտաւ մեղք՝ իրենց զուտիներն անուանայնելու պարագային մէջ նորութիւն զտնայ կը յուսան հան, որ միայն նոցա երջանկութիւնը փնտաուելու էին. եւ եթէ չիայ անկեպատներն, անանելով իրենց զուտեպ սիրայն, որ կրնար թերեւս երջանկայնել եւ առաքինի ընել զանոնք, կը նահատակին կը զմկատակին նոցա միութեանը եւ վերջնապէս թշուառացնել կուխանն. նրբորդք՝ ասանց երբէք մտարեղելու անուանութեան բուն նպատակը՝ որ է մայրութիւն, եւ իրենց պարտքը՝ որ է կրթութիւն զուտեպ եւ յուսաւորութիւն ապապայ սերնդեան, միայն զգայական կանոնք կերեւակային։ Փաստանդք՝ սակի, եւ իրենց աննկիք կիսող մեղաց եւ ազգականաց միջոցու պատուոյ փառք եւ առիթան կը նկատեն։ Երայ այս փնտակին մէջ անուանացոյք թշուառ կամ ապերձանիկ անուանութիւններ կը կատարեն. իսկ աննցմէ զգուշացող ինտատան կարծուած մարդիկ ա-

մուրի կենալ՝ կարոշեն, եւ կը շարոյզեն, (\*) բաւական չեն  
 համարիր ամուսնական կենաց բնական պատասխանատու-  
 թենէն վտարար երկնշէյնին, ուրիշներն ալ կը վախճեն  
 ու կը վառեն:

Ասիայն բնութեան ձայնը միշտ եւ անդադար « ամուս-  
 նացէք, կը պուայ: ամուսնացէք, ամուսնութիւնն է զմեզ  
 առաքինութեան շարքին մէջ՝ առաջնորդողը, ամուսնութիւնն  
 է երկանկութեան ապարդիւր շարքարդը, ամուսնութիւնն է  
 ձեր կազմութեան ողջացանկիչը, ամուսնութիւնն է գոյու-  
 թեան եւ ճշմնիմաստութեան որէնքը, ամուսնութեամբ  
 պիտի կրնաք առ Աստուած, առ ազգն, եւ առ անն ունե-  
 ցած պարտքերնից հատուցանել, մեծամեծ մարդիկներ առ-  
 լով ընկերութեան:

Իսկ՝ ինչպէս որ ըսինք բնութեան այս որէնքն այնչափ  
 ազաւազած է որ շարոյզական ազգու ուսմանց կարճաւ եզաւ  
 բոլոր մարդկութիւնը: Ամեն ժողովրդաց մէջ՝ այս մեծ խըն-  
 դիրն յուզուեցաւ, նարտար եւ մեծ հանձարներ գրեցին:  
 ասեմարանք հասարակաց բեմերը զնդացուցին. մերաջննաց  
 մէջ ալ հանդէսք եւ մասնաւորաց ասեմարանութիւնք նա-  
 ուեցին այս նիւթը, մասնաւոր գրեանք հրատարակուեցան,  
 քանոյի իրբու առաջին պէտք զգայի եզաւ ամուսնութեան  
 շարոյզական շարժումիւնք: Իսկ իր ամեն պարագայիւքք  
 ամուսնութեան վրայ խօսող կատարեալ գրած մը ի հանդէս  
 չգալը տեսնելով, առաջ աարիէ ի վեր ի նկատի ունէի Ա.  
 Տրդէյ զազգիացի նեղիմակին այս խնդրոյն վրայ գրած սոյն  
 երկապիտութիւնք եւ կտպատէր որ նարտար գրիչ մը նմանորու-  
 թեամբ կամ թարգմանութեամբ առ Հայ լեզու փոխադրէր  
 զայն . . . . . սակայն ակըն-  
 կալութիւնս մինչեւ ջարդ ապարդիւն մնալով, եւ պիտի  
 ազգայնացս ներթափանս ոչւոյն վտահելով որ միայն սոյն  
 գրեմոյն ազնուութիւնն ու կարեւորութիւնք իրենց ու շայքու:

---

(\*) Այս տողերը գրեյու զիս բերազրողը, նրապարտ-  
 կացին բերրերեն մեկուս մե: եկեղեցական ամուրութեան  
 վրայ գրուած յօդուածի մը մեջ աշխարհական ամուրութեան  
 ներքին բարձրարիւն է. կուզէի քանի մը տող աւելի գրել  
 սակայն բարձրանութեանս նեղիմակին աշխարհականաց եւ  
 եկեղեցականաց ամուրութեան վրայ գրած գրուածները բա-  
 ւական կը նամարիմ:



թիւը պիտի գրաւէ եւ անանգադիր պիտի ըլլան գրական ապագրիզին մէջ ունեցած համահայկութեան, որոշեցի ժառանգութեան դասն ժամերու մէջ Կեղեմակին մեծ հասարակութեանը ի Հայ թեզու անկէ դաշտ - երկամիտութիւն մը որ բնութեան որդիքն իրեն առաջնորդ առած՝ ընկերութեան մեծ ծառայութիւն ճատուցած է, գերջապէս կրնամ ըսել Կեղեմակին դասն եւ ութը հասարակարմար գործոց գլուխն համարուած է :

Կիսաւարտութիւնս Կեղեմակին գործը գովել չէ, քանզի ոչ արեւ կայ եւ ոչ ալ գրիչս բաւական է գովեալ շտապել եւ ալ իսկ չարգարթել. սա միայն կրնամ թէ կարն միջոցի մը մէջ մինչեւ 1871 թուականը իւր իններորդ ապագրութեանը հասած եւ այսօր Կ. Պոլսոյ մէջ կարենմ որինակ մ'ալ մնացած չէ : Եւ արժանի ալ է, քանզի կրնայ իրեն գասագիրք ծառայել ամեն կարգի եւ ամեն աստիճանի անհասոց : Անուանութեան շարժու հասած երիտասարդաց, որք պիտի ստիճին իրենց ապագայն ապահովելու եւ երջանկութիւն հաշտայթելու միջոցները - անուանացեաց, որք պիտի կըրթութին՝ իրենց զակները անուանութեան խնդրոյն մէջ դաստիարակելու եղանակին վրայ - անուրեաց, որք պիտի նշեն իրենց խառնազնաց կեանքը եւ բնական որինաց Կեանելով նիւթական եւ քարոյական առողջութիւննին գտնան, ու քարորտութիւն փայելեն, ենրոց, որք պիտի ի-նանան թէ ինչ անխեչքութիւն կընեն իրենց ծաղիկ հասակը անու, անցընելով, անագան անուանանալովն, եւ առովթէ իրենց անմին եւ թէ ընկերութեան գտանգաւոր ու Քասակար ըլլալնին :

Կեղեմակն իր գործը գիւրամատչելի եւ քաղցրարոյք հասով մը ամենեան հանելի ընելու համար երբեմն քանաանցեական եւ գիպատանական զարնուածքներ ալ գործածած եւ զարգարած է իր փոխադասութիւնը :

Անասարակաց եմ որ ազգայինք ուշի ուշով կարգալով եւ ամեն մէկ նկատագրութեան անուանելիք կէտերը ինաստապիբելով, իմ փոքրիկ ծառայութիւնս ապագրիւն չպիտի մընայ, ինչպէս որ ինձ մեծ ապագրութիւն ըրած էր. եւ այսօրեայ փոքր ծառայութիւնս ապագային մէջ մեծ պիտի համարուի եւ պատուի, որ է իմ միակ փառաբառս ու գտնանակութիւնս :

Թարգմանչին ստորագրութիւնը չկող սրինակները  
նենգեալ պիտի համարուին

*Մարտի 1870*



ԱՌ ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲԱՅՐՆ ԻՄ

**Տ. Տ. Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս**

*Ս. ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ*

ՔԱՔՄԱՃԵԱՆ

Հ Ա Ն Գ Ո Ի Յ Ե Ա Լ

**ՊԱՏՐԻԱՐԻ Կ. ՊՕԼՍՈՅ**

ՍԿԱԻ ՅԻՇԱՏԱԿ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY

PHYSICS DEPARTMENT

PHYSICS 354

LECTURE NOTES

BY

PROFESSOR

ROBERT A. FAY

1962-1963

CHICAGO, ILLINOIS

ԲՄԱՍՏԱՍՍԲԻՐՈՒԹԵՐԻՆ

## ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

### ԳԼՈՒԽ Ե.

Անասնորթին ըստ ժամանակաց, կրիմայից եւ ըստ  
բարբոսց զանազան սարաց.

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՁԱԲԱՆՈՒԹԵԱՆ(1) մէջ, որ  
գործոյս երկրորդ մասը կը կազմէ, ըստ կենսաբա-  
նական օրինաց ցուցուցինք թէ իւր ցեղը ժշանկենա-  
ւորեալս բնազգումը ամեն կենդանի էակաց մէջ կը  
պատահի, ե թէ այս բնազգման զրոյց կը կայանայ  
սեռից եւ տեսակաց գոյութիւնն ու տեւողութիւնը,  
կենդանեաց մէջ սեռից մերձաւորութիւնը բնազգ-  
մամբ կը կատարուի, սաքս բնական օրինաց կը հնա-  
զանդին: Մարդոց մէջ, որք մի եւ նոյն գործարաններն  
եւ մի եւ նոյն բնազգումն ունին, սեռից միութիւնը օ-  
րինաբ հաստատեալ եւ կամ՝ զանազան սովորութեանց  
ենթարկուելու, ամուսնութեան անունն առած է:

---

(1) Թարգմանութեանս ներկնակին՝ անունն Ա. Նրպէի  
այս գործը որ տակից առաջ ներշնչուել է ֆէնտիի աշխատու-  
թեանը նայելովն թարգմանուած եւ կարճ միջոցի մէջ սպա-  
ռած է, այսպէս երկրորդ անգամ կը սպառարուի կենաց բն-  
թացքին մէջ զանուոյ ամեն կարգի անկանց մեքք զանդ-  
ւելու է իբրեւ մտաւորական սնունդ, թանցի առաջնորդ  
կենաց կրնայ ըսուիլ:

Իսկ մարդկային օրէնագրութեամբ հաստատուած այս օրէնքներն ու սովորութիւնները կյիմայից, ազգաց, և քաղաքակրթութեան առաինանին համեմատ կը փոփոխին :

Եւրոպիոյ մէջ, և ընդհանրապէս բարեխառն գ. օ. աներուն տակ՝ ամուսնութիւնը միակնի են, այսինքն՝ արք միայն մէկ կնոջ հետ կը միանան : Միակնութեան կենսաբանական պատճառը իզական սեռին ծննդեմէն շատը կուգայ, որք հարիւրին իննսուն և վեց կը հաշուուին : Սորա քաղաքական պատճառը մեր նիւթին օտար ըլլալուն, անոր վրայ շատ համառօտիւ պիտի խօսիմք :

Տար երկիրներու մէջ արուաց առ էգս եղած համեմատութիւնը ասոր հակառակն է : 96 արուաց վրայ 100 էգ կը հաշուուի, որմէ կը հետեւին բազմակնի ամուսնութիւնը, Աֆրիկէի և Ասիոյ մէջ քաղաքական նկատմունք, իրրև կրօնական սկզբունք և անչոյցին բազմակնի ամուսնութիւնը : Քանզի սեռան որ կանայք կանուխ կը կորսնցնեն իրենց ծննդական կարողութիւնը, և օրէնագրաց նպատակը ընդարձակ և անապաս երկիրը բազմամարդ ընել էր : Եւրոպիոյ քաղաքակրթութիւնը, որ տակառ առ տակառ բարբարոս ժողովրդաց մէջ կը սպրդի, այս սովորութիւնը քառական չափաւորեց : քանզի մեր օրերը բազում նանապարհորդք նկատեցին որ բազմակնութիւնը այս ժողովրդաց մէջ ընդհանուր չէ, և որ ազբաս գասուն մէջ շատ քիչ գանուելով, միայն հարուստ մասին մէջ կը պատահի, զոր հետեւաբար հարստից զգացական բարուց յատկացնել հարկ կը ըլլայ : Երաց այս վիճակէն կը հետեւի որ բազմակնի ժողովուրդք մեզի, թուլամարթ և բարբարոս են, և արհապետութեան ու քանաւորութեան գաւազանին տակ գլուխներն ծնած :

Վերջապէս, այն ազգաց մէջ յորում իգական ծննդոց թիւը արական ծննդոց թիւէն խիստ նուազ է, հոն բազում արանց համար մէկ կին կիշնայ, թիւ պէթցիք այս փրնակին մէջ են, ինչպէս նաև Պէնթամբ, Նէփոյի, և Ճափայի բնակիչք, կանանց նուազութիւնը հոն բազմաանութեան ստեղծած է, իսկ ամուսնութեան այս ներք, որ հայրական սիրոյն և իրաւանց մեծապէս կը փրատէ, որ աւուր կը շափաւարուի այն ատենէն ի վեր՝ որ անզուշն բնիկք ուրիշ երկիրներու մէջ կին փնտռել կերթան, և որ վերջապէս բարբոսփն պիտի ջնջուի :

Անհակառակելի իրողութիւն մը, այն է թէ միակնութիւնը երկրիս վրայ աւելի ընդհանրացած է, քան բազմակնութիւնը : Հին ատենի մեծամեծ ազգերը միակնի էին, և արդի քաղաքակրթութիւնն այս ներք ընդունած է՝ մարդկային ջեզին ու բարուց համար լուազոյնն ըլլալուն :

Արդ՝ եթէ անգամ մը կենդանեաց սանդուղն իջնամբ, պիտի անտանը թէ միայն մարդոց մէջ չը կայանար միակնի ամուսնութիւնը, շատ ուրիշ կենդանեաց տեսակներ ալ կան, որք բնազգմամբ կը կենակցին և աննուկ միակնութեամբ կը մեռնին : Այս տեսակաց արուք երբ մերնաւորութեան կարող ըլլան, իրենց համար էգ մը կը ընտրեն, և զայն իրենց հակառակացին հետ մահու շափ կը կուտին, երբ յաղթող հանդիսանան՝ միութիւնը կը հաստատուի իրենց մէջ մինչև ջմահ : Այլ ևս սոցա մէջ անհաստատութեան որինակ մը չտեսնուիր, և միայն մահուանէ վերջը միայն սորա ընկերը իրեն ուրիշնոր ընտրութիւն մը կընէ : Ասանք են կապի մէկ քանի տեսակները, իջումը, ազուէտը, կզարիտը, իջուրդը, որք միայն մէկմէկ ընկեր ունին, թո՛ղնայ մէջ արծիւք, շահէնը, արագիլը, կարապը, ազաւնին, սոխակը, և այլն :

Թուօթեան հաստատած ամենայն ինչ անփոփոխ  
արկնքներ են, որ իրենց գործադրութեան սեպհա-  
կան եղանակն ունին, բայց մարդկութեան հաստա-  
տածներն առաւել կամ նուազ խոհական կամ անհե-  
թեթ հազար փոփոխութեան ենթակայ են. երկրա-  
դրնդիւս վրայ սփռեալ ժողովրդաց և զանազան ազ-  
գաց մէջ ամուսնութեանց նկարագրութիւնն ու ա-  
տոր արարողութիւնները կրնան ապացուցանել մեր  
այս բաժը :

Արեւոյ մէջ որ է սրբան մարդկային սեպին, այն-  
պիսի ժողովուրդներ կային, որոց մէջ ներելի էր  
հօր մը իւր ազնկան, որդւոյն իւր մորը, եղբոր իւր  
քրոջ հետ ամուսնութիւնը : Պարսկաց, Ասորաց,  
Պարթևաց և աւրիշ մէկ ջանք հին ազգաց մէջ մարդ-  
իւր մորը հետ կրնար մրանալ : Ամուսնութիւնը հին  
յունաց մէջ միևնոյն մօր զաւակաց արգելեալ, իսկ  
միևնոյն հօր զաւակաց թողեալ էր : Եգիպտացաց,  
Ալլաբացաց, Ալթափէպրսից, Նեհուայից, Փերու-  
ացաց, Սիամացաց և այլոց մէջ ազաա էր մարդ իւր  
քրոջ հետ ամուսնանալու : - Թարթարաց, Սկիւթաց-  
աց, Երիթացաց, Գարախայներու մէջ յանախ կը պա-  
սահէր որ հայր մը իւր ազնկան հետ ամուսնանայ :

Գրեթէ արեւելեան և Աֆրիկէցի ժողովրդաց շա-  
տերուն մէջ բազմակնութիւնն ընդունուած է, մինչ-  
դեռ ընդհակառակը Թիպէթի, Նեփոյի, և Ճափա-  
րի մէջ շատ մարդիկ մէկ կնոջ մը հետ կամուսնա-  
նան : Լասայի թագաւորութեան և Գայիշիթի մէջ  
նոյնպէս մի կնոջ շատ անձանց հետ ամուսնութիւնը  
կրտեսնուի : Նաիրք, այն է Մալապարի աջնուա-  
կան օփկնայք ազաա են շատ տրանց հետ ամուսնա-  
նալու, մինչդեռ արք մէկ կնոջ մը հետ միայն կրք-  
նան ամուսնանալ : Հնդկաստանի հիւսիսային կող-  
մը Թուափներու և Նեփարներու կանայք իրենց ու-  
ղածնան շափ կրնան երբիկ ստնել :



Հնգկուսասանի մէջ նշանուութիւնը շատ աւուրց հանգեաներով կը կատարեն. հանգէսը ըմնալուն՝ ազդիկը իւր ծնողաց տունը կը գտնայ, և երիտասարդը տարի մը ետքը կրնայ գայն տեսնել: Այս միջոցին երիտասարդը պարտաւորեալ է իւր ապառնոյն ծնողացը համար աշխատիլ: - Օթմիրը բուրսովին տարբեր եզանակ մ'ունին. շատ ամիսներ ազդիկանը հետ բնակելէն ետքը, երիտասարդը նորա ծնողացը կիմացնէ թէ իրենց ազդիկը կրնայ իրեն յարմարիլ: Ընդհակառակը չը յարմարած տանն՝ ետ կը գրկէ: Գտնելիս սեւերուն և Գալմուքներու մէջ նշանուած ազդիկ մը տարի մ'ամբողջ երիտասարդին հետ կենալու է, նորա ամուսնական կարողութիւնը փորձելու համար. եթէ այս միջոցին ազդիկը յգի չմնայ իրբն անարժէք նիւթ մը ծնողացը կը գրկուի:

Ռուսիոյ հիւսիսային Թաթարք իրենց սիրած օրիորդին ձեռքը շն կրնար ստանալ, եթէ ոչ երկար ասան նորա հետ մրցելէն և գետնհար ընելէն ետքը: Կռօնչանակ մէջ հարսանեաց արարողութիւնը կատարուելէն անմիջապէս ետքը՝ ազդիկը լեռները կը փախչի, ամուսինը պարտաւոր է ետեէն վազել և զանի վաչրի եզնիկի մը պէս որսալ. երբ երիտասարդը հասնի և բռնէ ազդիկը, խաախ կը կուտի հետը, այն ասան ամուսնոյն ուրիշ միջոց չմնար, եթէ ոչ կինը տապրակի մը մէջ կապել և այսպէս ամուսնական առաջատար ամիկը:

Ալուիներու մէջ ամուսնութիւնը զտանգաւոր արշաւանք մը և հշմարիտ յարձակում մը կրնայ համարուիլ: Ազդիկ մը նշանուելէն ետքը՝ իւր ծնողաց տունը կը քաշուի, ուսկից ամենեկին լեյլար. և իւր ապառնի ամուսինը այս ապառտամարանէն հանելու է հակառակ գաւազանի հարուածներու, որ իւր կռնակին վրայ կարկուտի պէս կը տեղան. միայն այս պայմանու կրնայ զայն առնել:

Գամաթ քացիք և Գործարները ասկից ոչ նուազ  
այլանգակ և ասելի վաանգաւոր սովորութիւն մ'ու-  
նին : Ամուսնանալ ազոզ երթաասարգը իւր սիրած  
ազգիան ծնողքէն հրաման կուզէ անոր գալելու : Ե-  
թէ այս հրամանը տրուի, որիորդը յախց ցգլուի  
կաշիէ իրացքներով և ժապաւեններով կը փառասուի,  
այնպէս որ անթափանցելի վահան մը կը ձևանայ :  
Իւր ընկերաց սգնութեամբ որիորդին ըրած գիմազ-  
ութեանցը հակառակ, երթաասարգը պարտի իը-  
րացքներն ու ժապաւենները քակել : Ահարկու կու-  
ւէ մը, հազար կեղեքածքէ, և հազարումէկ վեր-  
քերէ ետքը իւր նպատակին կը հասնի և յաջիտոյ  
ամուսին կը հանգիստանայ : Այս մարտը շատ անգամ  
մահացու ալ կըլլայ : որիորդը և իւր ընկերուհիք  
մազերը կը քաշեն, երեսը կը կեղեքեն, կըտղենն,  
ասնհար կընեն խեղճ սիրահարը, որ կը լանայ իրաց-  
քը քակել, և բազում ամիսներէ և երբեմն ասրինե-  
րէ վերջը կընայ իւր կինը ձեռք անցնել : Եստ ան-  
գամ այնպէս կը պատահի որ շատ ասրիններ հետա-  
մուտ ըլլալէ ետքը՝ խեղճ ազան կը պարտասորի իւր  
սիրուհին հրատարիլ և ամսթահար, հարուստօր  
ընկենալ, վիրասոր և երբեմն ջիւեանս խեղանգամ  
ետ գտանայ :

Ռուսիոյ հիւսիսային գաւառաց ոմանց մէջ, որ-  
իորդը հարսանեկան արարողութենէն անմիջապէս  
ետքը իւր ամուսնոյն գաւառանի խուրճ մը կը ներ-  
կայացնէ՝ սիրոյ մէջ անասրբերութիւն կամ պազու-  
թիւն պատահած ատեն՝ զինքը ձաղկելու համար :

Գորէի մէջ մարդիկ ազատ են ըստ քանց՝ իրենց  
կրնն ու անկից ունեցած զուկները վաճառել : Մի-  
սուրի մէկ քանի ժողովրդաց մէջ ընդհակառակն է-  
կրնն ուզած ատեն իւր ամուսինը կը թողու, և ամ-  
ուսինը պարտասոր է քացի իրեն զգեստներէն ու

զինքերին բոլոր ունեցածք անոր թաղուլ : Այս փա-  
խըստակեան կինը կրնայ այս ինչ կամ այն ինչ մար-  
դուն հետ կենակցիլ : յագեցած ատեն դայն ալ ձգել  
և իւր ծագիկ հասակի տարիներն ուղածին հետ ան-  
ցընել :

Պարսկական որկնքներն երեք տեսակ ամուսնու-  
թիւն կը հրամայեն . առաջինն է մեկ կամ բազում  
կին գնել . երկրորդը՝ վարձկան կին մը առնուլ . ինչ-  
պէս որ տեղ մը կը վարձուի : Գաշնագիրը գտաւարի  
մը առիւ կը հաստատուի . և առանց փրաս կամ  
ծախք վճարելու անկարելի է գաշինքը լուծել : Վար-  
ձու պայմանաւամբ յրանալուն . որ երկար կամ կարճ  
կրնայ ըլլալ . կինը խզնի մտաք կը վճարուի . և եթէ  
փոխադարձ կամք ըլլայ . կրնայ գաշնագիրը նորոգ-  
ուիլ կամ ուրիշ վարձուիլ : Արորոք տեսակը . որ է  
միայն արժանի ամուսնութեան անուան . ազնուա-  
կան գառն երկու անձանց միութիւնն է : Հարուստ  
և ազնուական ընտանեաց ազնիւներն իրենց ամուս-  
նայն ատն արկինն են . և կը հրամայեն վարձկան կամ  
զերուհի կանանց . որք կտտարեալ հնազանդութիւն  
պարտին նմա :

7673. 12

Կեզաաց ձէլ՝ որիորդայ ամուսնութեան յասկաց-  
եալ խիստ իմաստուն սովորութիւն մը կար . մտաք  
չէին ազնիւն ամուսինն որոշողը . որիորդք առանձնա-  
յնորհ ունէին իրենք ընարելու . և իրենց ընարու-  
թիւնը կրնայէս յարգելի էր : Հարմեցու ազնիւն  
հայրը յիտունի շափ երիտասարդներ նայի կը հրա-  
ւիրէր . և երբ սոքա սեզանին բոլորաբար կը շարուե-  
ին . որիորդը անոնց բոլորաբար չի՛նելով իւր նախա-  
դաստամէին գէ՛մը կը կենար և ընկեղեկաց գաւաթն  
անոր կը ներկայացնէր . եթէ երիտասարդն ընդու-  
նէր՝ ամուսնութիւնն անմիջապէս կորոշուէր . և նայն  
որը իւր ամուսինը կըլլար :

Դասգլխոյ առաջին ցեղի թագաւորներն՝ իրենց տէրութեան ամենագեղեցիկ և կարգի ազնկանց մէջէն կրնաբէին իրենց կիները : Ասոնցմէ շատերը բազմակնութիւնն ընդունեցին . ինչպէս Փլոպիս Ա. որ երկու քերց հետ ամուսնացաւ , և Կոնիքան թագաւոր Օսլէանի , որ Ս. Գապի ասեն շանթից հակառակ իւր երկու կիները պահեց : Մեծն Գեարտէ առաջ Ռուսոց Չարերը դաւհիկ ժողովրդէն կրնաբէին իրենց կիներ , և միշտ գեղեցկութիւնն էր ընտրելութեան պայմանը :

Այս տեսակ սրինակներու պատմութիւնը տակաւին շատ գիւրին պիտի ըլլար շարել , բայց կարծեմք բաւական ապացուցիւք թէ ամուսնութիւնք կը փոփոխին ըստ ժամանակաց , կլիմայից , ժողովրդոց և բարուց : Խաւքն ընթաց կը վերջացնենք՝ գիտելով թէ նորահաստատ ժողովրդոց նորատի հասակին մէջ ամուսնութիւնք անգագար կանին և կը բազմանան . իսկ ընդհակառակը կը նուազին՝ և ամուսնաց թիւք կառուելու այն ազգաց մէջ , որք զեղխութեան ուրուած են ինքզինքնին , և որք իրենց անկման կամ կործանմանը կը գիտեն : Այս մասին համոզուելու համար բաւական է ակնարկ մը դարձնել Արիւսի իսկ ժամանակը ժաղկեալ , և Սաորինակայտութեան ատեն ազականեալ Յանաոսանի վրայ . բարուց ազականութեան կամ խտտութեան համեմատ ամուսնութեանց բազմանալը կամ նուազելը հաստատելու համար , բաւական է հանրապետական Հասկմայ , և կայսերաց տիրապետութեան տակ Ենչեալ Հասկմայ պատմութիւնն աչքէ անցնել :

Հին Հասկմայ մէջ երկու տեսակ ամուսնութիւն սովորական եղաւ . մին՝ սրբոց սեռաւորիւն և միւսը՝ հոբելուսիւն : Առաջինն է այն միութիւնը , զոր մարդ մը իւր ստախեանին հաւատար կնոջ

մը հետ որինքս կը հաստատէր: Այս ամուսնութենէ ծնած որդիք ընտանեկան առանձնայնորհ, և հարց' հայրական իշխանութեան իրաւունքները կը վայելէին: Հօգեւորակն ամուսնեաց ամուսնութիւնը երկրորդ կարգի միութիւն մ'էր. այն է թէ երբ մեկն իրեն աստիճանէն ստորին աղիկան մը համար միտուեալ ունենար, անոր հետ այս կարգի ամուսնութիւնը կը հաստատէր. այս ամուսնութենէ ծնած աղայք առաջնաց պէս երբէք ընտանեկան իրաւունք չունէին: Ես միայն կար որ հարեորդի կամ պոսեկորդի կոչուելու նախատինքն ազատ էին, բաց ի անոնցմէ՝ որք պոսեկի աղիկէ մը ծնած էին:

Իրաւամբ որոշեալ այս աստիճաններն ուրիշ նպատակ չունէին, եթէ ոչ պարտաւորել զբազարացիս: որ իրենց սեպհական շահուն, պատուին և իրենց զարակաց օգտին համար, ամուսնութեամբ իրենց արժանի ընկեր մ'ունենան:

Այս անսակ ամուսնութիւնք զազրեցան երբ պատերը կայսերաց գահը բարձրացան: Մինչև այն աստեւ ամուսնութիւնք առանց քահանայից պաշտօնութեան կը կատարուէին. արգարութեան ասեաններու մէջ, առաջի գատարաց և առաջի ծնողաց կամուսնանային. այսպէս էր Երբայից մէջ մինչև Ս. Պետրոսի հինգերորդ յաջորդ Սոթերի պը: Այս փառասէր Եպիսկոպոսը հասկցաւ թէ ինչ կարեւորութիւն կրնայ տալ կղերական մարմնոյն, երբ ամուսնական գործոց մէջ միջամտութիւն ընէ: Հետևարար հրատարակեց թէ ապագային մէջ որ և է կին չկրնար ամուսնանալ առանց քահանայի մ'օգնութեան: Այս կերպով հոգեւորական իշխանութիւնը աշխարհական իշխանութեան հետ միացուց, որմէ ծնունդ առաւ եկեղեցւոյ այն անհուն հեղինակութիւնը, զոր այնչափ երկար աստեւ պահեց, և որոյ գեթ թագաւո-

բաց հեղինակութիւնն անգամ կը խորտակէր :

Քիչ մը ետքը եկեղեցին ամուսնութեան նկատմամբ զանազան օրինաւորութեան ներքէն հնարեց, այնպիսի արգելքներ գրաւ, որոնց համար՝ որ և է գումարի մը փոխարէն, ազատութիւն շնորհելու կարողութիւնը Պապն իրեն վերապահեց, և այս անգրաւելանական օրէնքները Գաղղիոյ թագաւորաց աստն իրենց գործադրութիւնն սկսան Գաղղիոյ մէջ :

Իրաց այս վիճակը կործանելու համար երկար և ազգու լուծեր պէտք եղան . քանզի ժողովուրդը սրնապաշտական օգիտութեան մէջ մնացած էր : Գահանայն իւր հոգևորական մասնաւոր պաշտօնին զրբկելու և քաղաքային գործերն անոր ներքին ասնելու համար, ՓՆ. գարու մեծ մարգոց ներամբ լուսաւորութիւն տարածել և 1793ի սոսկայի յեղափոխութիւնը պէտք եղաւ . Այն աստն՝ օրէնագիրք և թագաւորը հասկցան թէ՛ անպատեհ և հակաբաղաքական է ամուսնական գաշնագրոյն մէջ ամենակեթեւ ազգեցութիւն մը թողուլ քահանայապետի մը ներքը . ուստի այս գաշնագիրքը բոլորովին քաղաքային եղաւ, և եկեղեցւոյն կատարած պատկի արարողութիւնը չէր այլ ինչ, եթէ ոչ օրինաւորութեան ներքը, որով կրնար զանց ասնուիլ :

Ուստի նոր օրէնագրութիւնը ամուսնութեան վերաբերեալ կանոններ գրաւ՝ առանց նկատողութեան ասնելու կրնական ամուսնութիւնը, այս կանոնները, որ քաղաքային օրինագրքին մասերն են՝ այսպէս կը համառօտուին .

1. Ամուսնութեան վաւերականութեանը համար հանութիւնը,

2. Արգելք ամուսնութեան,

3. Ամուսնութեան վերաբերեալ օրինաւորութեան ներքը,

4. Ամուսնութեան քաղաքային արգիւնք .

5. Լուծուիլն ամուսնութեան հակառակ օրինաց .

Ասրա մանրամասնութեանցը համար օրինաց զքին գիտել հարկ կըլլայ :

## ԳԼՈՒԽ Բ.

Ընդհանրապես ամուսնութեան վրայ զանազան  
նկատուածքներ

Միայն ամուսնութեամբ աչքը ստուգիւ աչք և կիներն ալ ստուգիւ կին է . քանզի այն ասան՝ կրնան իրենց նմաններ ծնանիլ : Բարեբաղոյ աչք և կին առանձին չբլեւելու շնն երկրիս վրայ : Մին միւսին հետ միանալով է որ կենաց մէջ երջանկութիւն կը գանան և Պետութեան անեցած պարտքերնին կը հասուցանեն՝ հպատակներ պատրաստելով նաև : Իրենց զուակաց բարի գաստիարակութիւն մը տալով և նոցա բազարացութեան պարտքերը սովորեցնելով է . որ աչք ու կին օգտակար կըլլան ընկերութեան . վերջացէս՝ ամուսնութիւնն է որ աչքն ու կինը աւելի կատարեալ կընէ . նախ՝ քանզի իրենց կազմութեան կատարեալ զարգացմանը հարկաւոր է . երկրորդ՝ քանզի իրենց ընսանեաց տպրուտը ազահովելու համար՝ աշխատութեան կը պարտաւորէ զմարդ :

Աչքն ամուսին մը առնելով . իրեն ընկերուհի մը կընտրէ . սրուն հետ ընկերաբար բաժնելու է իւր էութիւնն . ինչքը . առաքինութիւնները . տաղանդը . իրաւունքն ու պարսքը : Իրուանց հասարակութիւնը և ընկից ընկերակամութիւնը ամուսնական ընկերութեան հիմունքն են կին մը իւր ամուսնոյն հետ մի էակ կազմելու է . երկուքն ալ միմիանց համար կապրին . և երկու գոյութիւնք ի մի խառնուելու են : Անոնք որ իրենց կինը գերի կընեն . թշնամի են ընկերութեան . քանզի՝ կնոջ մը և մանտանոց մեր մը պատկանած յորգանքն առաքինութեանց և բարուց



ազրիքն է : Բնութիւնը զամենն որ ամուսնութեան  
կը կոչէ , և ընկերութեան համար ամուսնութիւնը  
պարտք մ' է , ամուրիքն անգուտ անգամ մ' է : Ամուս-  
նական միութեան նպատակը մեր ընդունած գոյու-  
թիւնը մշտնօրէն արել և զուակները առարկնական  
գործանութեանց մէջ կրթել է : որպէս զի որ մը  
Պետութեան օգտակար քաղաքացիներ ըլլան :

Տղայ մը մեծ ջնել , ծառ մը անկել , և գալստ մը  
մշակել Հնդկաստանի և Գարսիաստանի մէջ պատ-  
ուարժան գործեր կրն , և են պատրիտի . միթէ մենք  
բարոյական մասին այս ժողովուրդներէն յետի' նն ըլ-  
լայու ենք :

Աստուածաշունչը՝ շատ տեղեր , ամուսնութիւնն  
իրբն կատարելութիւն և ամուրի կեանքն իրբն ան-  
պատասուցութիւն կը քարոզէ : Եսայի կը ստիբեցնէ մեզ .  
թէ կանանց համար վատահամբաւութիւն էք աչի'իկ  
մնայր :

Փրկիտօսոյ մը՝ Մովսէսի գրեանց վրայ քան աա-  
րի խորհրդածելէ ետքը՝ կը հեանեցնէ , թէ Հրէայք  
լաւ հաստատութիւն մ'ունէին , այն է կուսութենէ  
գարչելին : Եթէ այս փորձիկ անապաշա ժողովուրդը  
իրբն առաջին օրէնք յնկատէր զամուսնութիւնը , ս-  
րում մարդ հնազանգիլ պարտի , եթէ նորա ևս մեզի  
պէս կրճուարաց և կրճուարուհեաց վանքեր ունե-  
ցած ըլլային , այսօր երկրիս վրայ ապրող ազգաց թի-  
ւէն շատնց անհետացած էին :

Յունական և Հասթիական օրէնքները՝ ամուս-  
նութիւնները կը խրախուսէին քաղաքացւոց թիւը ա-  
ւելցնելու նպատակաւ . ոչ թէ միայն շատ զուակներ  
ունեցողները կը վարձատրէին , այլ նաև խստիւ կը  
վարուէին ամուրեաց գէժ , և ասուցանաց կը գտառ-  
պարտէին զանոնք : Սգաստու ամուսնութիւնները քաղ-  
մացներու համար . հրաժան ըրաւ Հասթիացեցի քա-

զարացուց' բացի աստեղագիտութեն , գերութենէ ազատեալաց ազգիկանցք հետ կարգուիլ , ասանց այս մութիւնը գաշնագրագաց քնասելու : ժողովրդեան ազգահամարի մը մէջ՝ երիտասարդները ամուսնութեան խրախուսելու համար՝ իւրաքանչիւր ընտանեաց հօր հազարական սէսթէքս բաժնել տուաւ : Լիզուրկոսի և Սոչոմի օրինակին հետեւելով , յղի կիներն այնչափ յարգանք պատուեց , որ դժուար էր ազգիկան մը մնայր ըլլալու չքաղմալ : Ամեն քաղաքացի՝ ինչ աստիճանէ ալ որ ըլլար , յղի կին մը նամբան տեսած ատեն՝ իւր նամբան փոխելու և հանդիտաւ անցնելու համար տեղ ձգելու էր . սեպուհն այնուպիսիներն անգամ նամբան այսպիսի կին մը տեսած աստեղմին ուղիւնելու էին :

Գամիլ ասո գանձք և հարկերով ստիպեց ամուսրի Հասկմայեցիները՝ պատերազմի գաշտին վրայ մեռնողներուն աչքեացք հետ կարգուելու :

Կեզասաց , Պրանքաց և Գերսանաց մէջ ամուսնութիւնը նոյնպէս յարգելի էր . վերջապէս՝ բացի զեղիսութեամբ և տիրապետութեամբ ապականեալ մէկ յանի ժողովուրդներէ , ամեն ազգաց պատմութիւնը կը ջուշնէ մեզ թէ ամուսնութիւնը յարգելի և ամուսնութիւնը պարտաւելի եղած է :

Ամուսնութեան համար այս ընդհանուր մեծարանաց նայելով , յայանի կըլլայ թէ՛ ամուսնացեալ արք և կանայք ընկերութեան բարոյական աստիճանին վրայ ամենարարձր տեղը գտաուած են՝ զան թէ այն հոգարտ և ինքնահասան ամուսրին , որ անպատգաունկի մը պէտ շատ անգամ իւր մերձաորացը կը քնասէ :

Ամուսնութիւնն ամեն ընկերութեանց հիմն արարի բարուց պահապանն է . ամուսնութիւնն է որ այրն ու կինը աւելի աւարքինի կընէ և կարգելու զա-

նոնք մալուխեանց և յստի գնացից մէջ մտնալի : Ամուսնացեալ մարդք գէշ գործ մը ըրած աստն իւր կինը ետ կը կեցնէ զինքը : Ընտանեաց մայր մը մալութեա կետին՝ իւր սիրելի զաւակունքը անանկով, ուղից նամբան կը մտնայ : Ընտանեաց հայր մը իւր գէշ միտումները կը սաննահարէ : իւր սրբուցը տալիս յուզէր կարմրիլ : ու նախաախինքը ժառանգութիւն թողալ աննց : Երեսելի քաղաքագէտք ըսած են :

« Ամուսնացուցէք զինւորներնից, որք չպիտի ուզեն զինւորականութենէ փախիլ : մէկ մը սր իրենց ընտանեաց կապուին, ալ անկէջ ետքը հայրենեաց ալ կապուած պիտի մնան : Ամուրի զինւոր մը շատ անգամ վարձկան մը, դատարկատորս մը կը համարուի, որուն համար մի և նոյն բանն է Պապին կամ որ և է հեթանոս ազգի մը ծառայել : Յոյն և Հասթնայեցի պատերազմիկը ամուսնացեալ էին, և ասնն ազգաց ալ յայլմեջին :

Այս նկատողութիւնք բաւական զորտար են կառավարութիւնները պարտաւորելու, սր բոլոր իրենց կարողութեամբը իրախուսեն ամուսնութիւնները, և ամուսնացեալ աննիքք յարգելով ու ամուրիները պարտաւորով բազմացնեն զանոնք : վերջապէս լատարոյն որէնքնեքով միութեանց իրաւանն :

Եթէ ամուսնութիւնը ընկերութեան համար կարեւոր և ծանր է, անհատից համար ալ վերջին աստիճան լարի՞ գործ մ'ըլլալ պէտք է, և երբէք թեթեւութեամբ խորհելիք խնդիր մը չէ : Փանդի խընդիրք սերտիս միմիանց կապուած երկու գոյութեանց վրայ է, որք եթէ կատարեալ համեմատութեամբ ըլլան՝ անուղական երջանկութեան նաւազայթնեքովք պիտի զուարթանան : Իսկ եթէ միմեանց հակակիր են, ցաւոց և հեծութեանց մէջ պիտի ալժուներն, թարչամին :

Իրեն ընկերու հի մը՝ փնտառող մեկը աւելի կըթու-  
թեան , բարոյականութեան նայելու է , քան թէ հա-  
րսասութեան , քանզի այս երկու յատկութեամբ կին  
մը իւր ամուսինը գրեթէ միշտ երջանիկ կընէ : Եթէ  
նախապաշարեալ , սին և մշար բարեպաշտական սը-  
գիտութիւնը առանին կենաց մահարեք թշնամիքն  
են . գաստարակութիւնը , մտաորական գեղն ու  
արուեստները նորա հրապոյրքն են :

Մեկ կէտ մը կայ որ կը պաղեցնէ զմարդ , և գրե-  
թէ միշտ իւր ապառնիէն կը հեռացնէ . այն է թէ՛  
երբ գիտուածը կամ նախանձութեան նարսար խու-  
զարկութիւններն իրեն նանչնեն թէ իւր նշանածը  
յառաջագոյն սիրային նենգութեան մը մէջ գրա-  
նուած է : Ահա ասոր համար է որ կանայք իրենց  
անցեալ աւրձութեանցը մէջ այնչափ գազանազան և  
անթմափանցելի են : Սորա՞ որ այնքան գիւրափափ են  
ուրիշ ամեն գործոց մէջ , այս մասին անյողթեյի յա-  
մտութիւն մ'ունին . աւելի կը հանգարտեն հազար  
ու մէկ տանջանաց , քան թէ ամենափոքր յայտարա-  
րութիւն մ'ընել , և ընդհանրապէս իրենց գազանիքը  
գերեզման կը ասնին :

Այս սնտաբ խուզարկութիւններն ու պաշա-  
թիւնները ստատասութեան սկտել կը պարտաւորեն  
զկինն . և որովհետեւ մէկ սուս մը ուրիշներ ալ կը  
րերէ հետը , ուրեմն շատ հաւանական է որ սաս-  
խասութեամբ սկտող կին մը միշտ իւր ամուսինը խարէ :

Յզայութիւն է կըսեմ այնչափ նշգիւ հեռամուտ  
ըլլալ անցուար առարկնական անցելոյ մը , քանզի ե-  
թէ ներ ամուսնանալիք կեալ համբաւն ու բարոյա-  
կանութիւնը բարի է , եթէ նաշակաց և միտումի հա-  
մանմանութիւն կայ , եթէ զստան էք որ առած ա-  
մուսիններնուդ հետ երջանիկ օրեր պիտի անցնէք ,  
ինչո՞ւ համար մեկգի լնդէք բարբ այն թշուառու-

խիւններն , այն փոքրոցի շինականաց նախապաշար-  
մունքները , որք աւելի մտաւորական խեղճութիւն ,  
քննադատութեան ակարութիւն կը նշանակեն , քան թէ  
պատուոյ այս կէտին մէջ՝ զգացման փափկութիւն :

Երեսասարգ մը էանշաց , որ սքանչելի կազ-  
մուածքի տէր , քաղցը և առաքինի կնոջ մը հետ վա-  
յելելիք երջանկութիւնը ուրի տակ առաւ . կնոջ մը՝  
որ այխարհի մէջ՝ սիրային սխալանք կոչուած մեկ  
պակասութիւնը խոստովանելէ առաջ , ամուսնական  
երգումը արտասանել մերժեց : Նշանածը այս խոս-  
տովանութեան վրայ ետ կեցաւ : Այս անկեղծ և բա-  
րեբարոյ կինը սասխաութեամբ չէր ուզէր սկսել .  
քաղց երեսասարգը չը հասկցաւ անոր միտքը : Վեց  
ամիս ետքը , նոյն իսկ այս բժականգիւր և կտակածա  
պարոնը չորս անգամ ոչքի մնացած Յն տարեկան  
կնոջ մը հետ ամուսնացաւ , որ հաւանականաբար իւր  
չորս ամուսիններէն բաժնուած միջոցին , մեկ քանի  
այն սրինակ սխալանաց մէջ զանուած էր :

Համարնակ խոստովանոցը նուազ ենթակայ է  
խաբելու քան զայն՝ որ իւր առաջին մտերմութիւն-  
ները կը պահէ . ըսա իս՝ առաջինը նախապատիւ է քան  
զերկրորդն , ես կը սիրէի և կսքանչանայի այն կնոջ  
երբ սա կերպ խօսէր . Մինչ ազատ էի , իմ գործերս  
զքստ հաճոյիցս անսրինելու մեռնհաս էի . քանզի որև  
ե՛ մեկու մը համարաաւուրութեան պարտական չէի .  
արտվնեան մեկու մը հետ կապուած չըլլալով , երգ-  
աննազրուժ զանուած չեմ : Այսօր ամուսին մ'առ-  
մներով գլխովին իրեն կը քաննեն՝ ինքզինքս . անց-  
սեալս իմն էր , սակայն ներկայս և ապագայս ի-  
զրեն կը պատկանին :

Ամուսինը հանգարս սրտի այրայիսի կիները կըր-  
նային առանձին թողուլ : Մի՛ տարակո սիր երբէք :  
Ամուսնական երջանկութեան համար կտակածեալ

անցելոյ մը աէր, իսկ երգումէն ետքը խնայումն և բարի կին մը նախամեծար է, քան կոյս անուամբ ամուսին մը, որ ընչ ասենէ՛, իւր ամուսնական հասարակութիւնը պիտի մոռնայ: Ընթերցողը այն նախապաշարման վրայ լուսուարելու համար բացատրենք:

Կենդ մը մաքրութիւնը միթէ որևէ օտար յարաբերութեան, կամ թէ՛ այս յարաբերութեան բազմանացը մէջ չի գտնուելուն վրայ՝ կը կայանայ, և կամ միթէ մաքրութիւնը այս պայմանները կը պահանջէ՛:

Այս խնդիրը ընթերցողաց խորհրդամտութեանը կը յանձնեմ. գիտեմ ծանր է, զայն լուծելու համար խնաստասիրական հանճարք բուսական լին ըլլար:

Կենաց մէջ այնպիսի պարագայներ կան, յորում ամուսնութիւնը գրեթէ բռնի է, թէպէտև երկու կողմանց միեակիին և հասակին մէջ մեծ անհամեմատութիւն չըլլայ ալ: Հոս կասարեալ անձնուիրութիւնը, բարձր զոհողութիւնը և վսեմ երգման մը ամբապինդ խոստանոնքը յառաջ պիտի բերեմ: Արդ՝ ինչպէ՞ս պէտք է երախտապարտ ըլլալ այնպիսի անձի մը ծառայութեանը, որ գրեզ գծրազգութենէ, մահուանէ և գուցէ իսկ նախասինքէ զերծանելու համար իւր հարստութիւնը, իւր ազագայն և մինչև իսկ իւր համբուր զոհելով՝ քեզ մատուցած է: Ինչպէ՞ս պիտի կրնաս ազատուցանել որ սիրող սքանչանար և երախտագիտութեամբ կը բարսիտէ, եթէ քեզի ըսէ այդ անձը:

« Ինչ որ ըրի մինչև ցարգ՝ գարձեալ պիտի վերսկըսէի, հազար անգամ պիտի զոհէի ինչպիսե՞րս՝ քեզի արտասուք մը, նեղութիւն մը չպատճառուելու համար. քանզի կը սիրեմ գրեզ, քանզի բոլոր յոյսս ի քեզ է, և իմ ամենամեծ երջանկութիւնս գրեզ երջանիկ տեսնայս է:

Միայն մէկ ամուսնութիւն մը կայ որ կրնայ այս-  
չափ եւ անդուն յոժարութիւն մը, այսպիսի զեզեցիկ  
անձնութիւն մը վարձաարեւ : Մնացք պէտք է  
որ զգային և այս անասկ միութեանց գէժ չկենային,  
եթէ՛ կրկին կրնե՛մ, միեակի և հասակի մէջ  
անհասկեմատութիւնը շատ մեծ չէ, քանզի առարի-  
նութիւնը նախապատիւ համարուելու է քան զհա-  
րքատութիւն :

Սէրը՝ յագեղէն շիշ ատեն ետքը կը թռչի, այս  
ասկական աստծը այնպէս հաւատացուցած է թէ  
եէրք բազմանայ յագեղովը կը մարի. բայց ամենե-  
ւին ստոյգ չէ, քանզի պատուաւոր անձը՝ անասա-  
կին, սիրող և ակար կիւնը՝ պըրող և քմնող կնոջ հետ  
կը շփուի : Զգայուն և երախտապէտ սիրա մը, ան-  
կեզծ և պատուաւոր մարդ մը միշտ պիտի կանչուայ  
իւր անհուն սրբաբը, զոր կռած է այն կնոջ հետ,  
որ իւր համբաւը նորա սիրոյն զոհած և որ իւր հան-  
գիտան առարկիւնութիւնը զոհելով երջանկութիւն  
շնորհած է անոր :

Հիմայ ամուսնութեան հետեւայ տարիներուն  
զանք : Սիրոյն որ եթէ զանուած է երկու ամուս-  
նեաց մէջ, խանդակաթ մանրմութիւն մը, միտակզ  
ապրելու քաղցր պիտոյք մը յաղորդելու է. յար-  
զանքն ու բարեկամութիւնը ամուսնութեան ամե-  
նագեղեցիկ ծագիկներն են : Իսկ անոնց փթթիլը  
սեանելու համար ակնածութիւն, մեծարանք և  
քաղցրութեամբ չի յարարելութիւն մը պէտք է :

Այն իրեն բաժինն եղած իշխանութիւնը զեզ-  
ծանելու, և ոչ ոչ կինը ամուսնոյն իրաւանցը  
ձեռնամուխ ըլլալու չէ : Փոխազարնարար միժեանց  
զիջանելու են և իրենց յարարելութեանցը մէջ գառ-  
նութիւն և յամուսնութիւն գործածելու չեն երբեք :  
Ամուսինն իւր կնոջը համար միշտ խնամք ու մարդա-

սիրութիւն ունենալու է . և եթէ ինքը արդար ու  
իրաւացի գատէ , անոր բաղձանքը գոհացնելու է և  
երբեմն նա չիմզբած նորազգալու է : Նա մանա-  
ւանդ անոր քով երբէք անտարբերութիւն կամ ձանձ-  
րայի՛ ջուցնելու չէ : Ասոր փոխարէն կինն ալ իւր գո-  
րովք ամուսնոյն և զուսկացը գարններու համար  
աշխարհի դրասանքները մտնուելու է . վասն զի այն կի-  
նը , որ միայն զարգ կը խորհի և կը կրէ , որ միայն  
հանգէտ և թատրոն կը մտածէ , շատ գեշ վերջաւո-  
րութիւն մ'ունի : Ամենայն ինչ իւր ժամանակին . պա-  
նուկապատանք՝ աղալութեան , նորանեւութեան խա-  
ղայիքները՝ որիորդաց , իսկ մարջ՝ զգաստութիւն և  
խահեմութիւն :

Հարցնենք անգամ մը պարահանգէտ վազազ կա-  
նանց , թէ ի՞նչ է աշխարհի մէջ փայլելու այն անշաղ-  
բաղձանքը , գոգնատ և շողոքորթութիւն լսելու այն  
սին հանգրը : Ինչո՞ւ համար այս զարգարանաց զեզ-  
խութիւնը և խիստ շատ անգամ անվայել այս սրբ-  
րանքը : Կը ներքէի ազնկան մը , որ սիրահար կը փըն-  
տրուէ , իսկ ամուսնացեալ կնակ մը . . . Ո՛հ , կը գը-  
թամ իրեն , կը ցուիմ իւր խեղճ ամուսնոյն վրայ և  
կը վարմամ իւր զուսկացը համար , կին մը իւր ամ-  
ուսնոյն միայն հանելի երեւնալ լանալու է , իրեն  
սէտք չեն հասարակաց երկրագագութիւնները :  
Աւա՛ղ , գրեթէ միշտ ստոյ հակառակն է : Կանա՛յք ,  
կը խնկարկեն և կը խարեն զնեզ , յետոյ բերնէ բե-  
րան կը խասին ձեր վրայ , կը քննադատեն , հուսկ  
ուրեմն սիրահարներդ կը ձգեն զնեզ՝ ինչպէս անձեա-  
կամ աղայք , որք իրենց խաղայիքը երեւս կը թո-  
ղուն : Թակարգը բանուելու համար զիւրախար՝  
այն թիթեանիկին կը նմանիք , որ անխահեմարար կայ-  
րի նրազի կրակէն : Յետոյ երբ բաժանման սրբ-  
համնի , յանցանքը որո՛ւն է : Ա՛հ , ամուսնոյն է :



խառապահանձի, նեղախրա, նախանձաւ էր, կրտ մեր գիւրախոր կեղծ պարկեշտը, ես ո՛չ գերբի ե ո՛չ մաւ սունք եմ որ զիս շորս պատի մէջ փակեց, ե որ աւելի գէշն է, զանցառութիւն կընէր ե կը մտնար զիս, իւր փրուհեաց ետեկն երթալու համար. վերջապէս անասնելի էր ինձ: Ազեկ գիտցէ՛ք որ կին մը այսպանելի կատաղութեան այս աստիճանին շնամեր, եթէ ոչ քանզի ուրիշ կնոջ մը խրատներովն ապահանած է. վասնզի նշմարիտ է սա առածը թէ՛ կնն է զկնն սգոխմուչ:

Այս վայրկեանէն տան մէջ ամեն բան տակն ու վրայ եղած է. գրացեաց հետ կը շատախոսեն, կը բամբասեն, իրենց նեղութիւններն անխորհուրդ բարեկամահեաց կը պատեն, որոնք փոխանակ մխիթարելու՝ իրենց վասնզաւ որ խորհուրդներովք կը թունաւորեն: Ազէտք միշտ անբարար կը յառաջանան, այլնս բոլոր քաղքին մէջ ուրիշ բան չխոսուիր, եթէ ոչ այս ցուալի անարամները: Ամեն մարդ կը խնդայ ասոր վրայ, խեղճ ամուսինք ժաղջելի կըլլայ. բայց ցուալին այն է, որ չիք ապահարզան այս ասորափոխիկ գայթակղութեանց վերջ տալու համար:

Շատ անգամ ամուսինն ալ ծանր պակասութիւններ ունի իւր կնոջ նկատմամբ, իւր պարտուց մտացումք, անտարբերութիւնք, զուարեասէր կեանքը կնն կորնչնել կուտան իւր ընկերահայն սէրն ու համարումք. բայց այն ատեն իւր գլուխը եկած գրծբազումութեանց վրայ ցուելու չէ, քանզի ինքն հրաւիրեց: Սակայն ե այնպէս խելացի ե բարեկիրթ կին մը իւր ամուսնոյն յոսի ընթացիցն ուղեապի հետեանքը ազգարարելու է նմա: Շատ յիշ կը պատահի որ կին մը պատշաճ աստիճան ե քաղցրութեամբ արւած խորհուրդներովք, իւր հզատակցութեամբք արատաւաքք վաղ կամ անուղան իւր ամուսինք ուղիղ

նամբան չտրեւ. եթէ չըլաչոյի, ըսել է թէ այսք զըլ-  
խափին մարգկու թե՛նէ ելած է. հրէշտակի մը քով  
սազայէն է : Ահաւասիկ այս պարագայիս մէջ ու-  
պահարգանք հարկաւոր է :

Հեռի ինէ կինը լասագոյեւրս և բոլոր յանցան-  
քը արանց յասկացնելու գիտաւորութիւնը . այն անու-  
կան մանք խեռութեանց նկատմամբ կրտեմ', որք ե-  
թէ յանախ պատահին, միմիանց գեմ' կը գրգռեն  
երկու ամուսինները : Իսկ եթէ բոլոր պատահարնե-  
րը, բոլոր պարագայները կշտենք, եթէ ի ըլլա ու-  
ձենք խառնակութիւնը, մէկ խոսքով եթէ անկողմ-  
նակարութեամբ դասեմք երկու կողմը, պիտի տես-  
նաւք, որ իշխանութեան անպատահ գործածութիւնը,  
խիտ շատ անգամ ամուսինը յանցաւոր կը հանգիսա-  
ցնէ, և կինը նորա գեմ' կը յազէ : Լսեցեք մեր ժա-  
մանակակից առաջին փիլիսոփայներէն մին' որ կըսէ.

« Դաս կանայք իրաւունք ունին գանդատելուն  
համար. թէ միայն ջառ գտած են հան' ուր սէր  
վայելել կարձէին. յանցի մարգիկ այնպիսի իրաւ-  
ւունքներ սեպհականած են, որ իրենցք չէ, և սիրոյ  
տեղ անհաւասարութիւն կը պահանջեն : Սիրով միա-  
ցած ամուսն' միմիանց հաւասարութիւն կը յայտենն,  
զի եթէ այն ինքզինքը տէր կարձէր, սէրը հաւասար  
չէր ըլլար. մեկ կողմանէ յանուորի մը և միւս կող-  
մանէ ասրուկի մը սէրը կըլլար : կինը ամուսնութեան  
կապով մեզ կապուած ըլլալով, մեր մեկ մասն է,  
մեր վրայ եզածին ինչն ալ մասնակից է, և մենք ալ  
իրմէն կախեալ ըլլալու : վերջապէս իրմով ապրելու  
ենք : Ահաւասիկ հաւասարութիւն, ահաւասիկ սէր,  
կինն ազաւ կոչուելու է. ո՛չ թէ իբրև ամուսին, այլ  
իրբև մարգկային արարած : ո՛չ թէ կին ըլլալուն հա-  
մար հաւասար ըլլալու է առն, այլ քանցի իւր ամ-  
ուսինն է Ծ :

Եթէ այրն այս խելացի պատուէրներուն , այս քաղցր ու մաքուր բարոյականութեան խելամուտ ըլլալը , այր և կին աւելի երջանիկ կը լլային :

Աւազ , ինչո՞ւ համար այնչափ նաւակոծութիւնք Հիսկենեան ծովուն մէջ : Այնչափ գեղեցիկ արեւնե-րէն ետքը , ինչո՞ւ համար այնչափ տխրամած երկինք մը , և այնչափ միգապատ օրեր : Ինչո՞ւ համար այն ստակացի փոթորիկները : Հազիւ հազ նաւահանգիս-տէն ելած , սիրով և ապացացի յուսով արտերը բա-րախելու միջոցին , ինչո՞ւ համար այնչափ ամուսնու-թիւնք առաջին ժայռին գէժ կերթան կը լախլախին : Հարցո՞ւք ասն , քննէ՛ կինը , շատ անգամ աւազի հաս մը իրենց երջանկութեան նաւը խրած է :

Շատ անգամ լրած եմ , որ կանայք իրենց ամուս-նայն անասորերութիւն մը սկսելը կամբաստանեն և կը տրանջան . աչ ևս նայն փոյթն ու յարգանքը շու-նի . աչ ո՛չ եռանդոս և ո՛չ սիրուն է . աչ առաջուան պէս զիս չը սիրէր , կըսեն . ասի կը վշտացնէ զիրենք , անտխորտ կընէ . բայց կը սխալին : Եթէ կանայք քիչ մը մտած էին , զրեթէ այս անհրատեշտ փոփոխութեան պատճառը տխրի գանձոյին այն զբաղմանց այն գործոց մէջ , որք ամուսնութեան առաջին պահուն այնչափ թեթեւ , իսկ վերջերը ժանր կերպարանք մ'առած են : Կանայք , ի հարկէ ձեր գարունը կը ջախջ . բնա-կան է այս . կեանքը տասն եւ ութը տարեկան հա-սակին մէջ այնքան գեղեցիկ է . սիրաւ նոր , ցնորք-ներով , բանաստեղծութեամբ և սիրով յի է . սրտի տալու որութիւնները հեշտայի են . ժամերը երջանիկ և արագընթաց կանցնին , ծաղկի մը տերեւները փեթ-թուելու նման հեշտիւ և բերկրութեամբ կը համ-բուին հանոյից տերեւները : Այո՛ , կանայք , խիստ գեղեցիկ օրեր են ասանք . . . բայց աւազ , ամեն բան կըսպասի այս աշխարհիս մէջ . մարդկութեան

գժնդակ նակատագիրն է այս : ամեն բան կանցնի ,  
իսկ սէրը ամենէն շուտ : Սակայն միտի՛ր արուեստէ՛ք ,  
նորասի կանոս՛քք , այս ազեւասյի նշմարութեան ա-  
մաքիչ մը կայ , այն է թէ՛ երբ ամուսնութիւնը պատ-  
շանագոյնս յարմարած է , երբ յարգանքն ու վատ-  
հաւթիւնը սիրոյ բոցակէզ տարութեանը յաջորդեն ,  
այն ատեն յո՛ժարութիւնը խորին արմատներ կարձա-  
կէ , և ընտանութիւնն աւելի հանգիստ և աւելի յա-  
րասեւ երջանկութիւն մը կը շնորհէ նեղ :



## ԳԼՈՒԽ Գ.

### Յազագս անլուծանելի ամուսնութեան

Միթէ բնական է որ ամուսնութիւնը անլուծանելի ըլլայ : Այս հարցման պատասխանը բոլորովին բացասական է : Ասոր լուսագոյն ապացոյցն այն է թէ շատ ազգաց մէջ տագնապներ կայ : Մի քանի նոր ժողովուրդներ՝ որք անլուծանելի ամուսնութեան վրայ կը պնդեն, երկրագնդիս բնակչաց ամենափոքր մասը կը կազմեն : սա ալ յայտնեմք, թէ անոնց մէջ ալ մեկ քանի տարիէ ի վեր սկսած է այս :

Եթէ իրրե ընկերական հաստատութիւն նկատեմք, ամուսնութիւնն որինոք երայրաւորեալ ըլլալու էր, երկու կողմանց իւրաքանչիւրն ազատօրէն գաշինք հաստատած ըլլալով, գաշնագրութեան պայմանաց հնազանդելու էին : զանոնք լուծանել և շարհել յանցանք մ'է, քանզի որինազանցութիւնը երկուց կողմանց միոյն փաստիլը կենթադրէ, և որէնքը զրկելոյն հասուցումն պարտի : Արդ՝ որովհետև ամուսնութիւնը անլուծանելի ըլլալուն որէնքը զեմ կը կենայ որ այս հասուցումը արտի, ուրեմն անիրաւութիւն կայ :

Ամուսնութիւնը՝ գաշնագրութեան տակն, եթէ ոչ փոխադարձ սէր, զէթ հանութիւն մը կենթադրէրոյց միթէ կարելի՞ է խոստանալ միշտ սիրել զայն, որուն հետ կամուսնացուի : Միթէ կարելի՞ է պատասխանել որ մարդ միշտ նոյնը պիտի զգայ և միշտ նոյնպէս տեսնայ : Ամուսնական երգումն զգացման կամ կրքի մը վրայ հիմնեալ ըլլալով, միթէ խելացութիւն է հաստատել թէ տարիքը, կիրքերը, հի-

ւանդութիւնները, նիւթականին առ բարոյականն ունեցած ազդեցութիւնը, և փոխադարձաբար պահուած պահասութեանց նանաչոյցութիւնը ելն. ելն... տեսնելու և զգալու կերպին մէջ փոփոխութիւն մը չպիտի գնեն: Սրէնսդիքն իրաւունք ունէ՞ր միմէ գերելու, վաճառելու զայն, որ բնապէս անվաճառելի է: Միմէ այլանդակ բան չէ՞ այս վաճառման վրայ յաւելուլ նաև զգացմանց և մտածմանց ստարացումը. պարտաւորել կամ կապել մեկը, զոր կենաց մէջ թէ նիւթականի և թէ բարոյականի զանազան շարժումները փոփոխման ենթակայ կընեն: Ստիպել ուղեւ երկու էակ, որ միշտ միմիանց համար նայն նայակը, նոյն միտումն ունենան, մարմինն ու հոգին, զգացմունքն ու յոժարութիւններն իրարմէ ստարացնել անկարելութիւն մը, հրեշտային գաշինք մ'է:

Թո՛ղ հայր մը հակառակի իւր ազգիկան սիրոյն, թո՛ղ տիրաբար արգիլէ նմա տեսնալ և սիրել զայն, որուն իւր սիրալը տուած է: Այս արգելիքը աւելի կարժարժէ նորա հուրը, որով կը տուարէր. իւր պաշտածը կուտուածացնէ, և այս վայրկեանէն ինքզինքը զսհեալ կը կարժէ: Զայն ուրիշի մը հետ ամուսնացնելը թշուառութեան մտանել ըսել է:

Թո՛ղ հայր մը յանդիմանէ իւր ազգիկը իրեն սրտուած երիտասարդին աւելի սեք շնորհներուն համար Գիտէ՞ք ինչ կըլլայ: Նոյն ասան ազգիկան առ երիտասարդն ունեցած փոքր ինչ միտումը աազակութեան կը դառնայ, և եթէ հայրը թիլ մ'ալ շարունակէ նոյն կշտամբանքը, վերջապէս այնքան կը պազի որ կոկոխ զայն արհամարհել:

Ահա այս առթիւ շատերը կը պնդեն, թէ երիտանիկ ամուսնութիւններ կատարելու համար՝ պէտք կըլլայ պատուիրել երկու ամուսնեաց, որ մահու չափ ասան զիրար, այն ասան սաստիկ պիտի սիրէին:

Այսպէս է մարգկային սրտի ալլանդակութիւնները, ասոնք են բունութեան, անքակութեան արդիւնքները:

Աստ և անգ այնպիսի ամուսնութիւններ կը կատարուին, որոց շղթայները ծաղկով հիւսուած են, և զոր երջանկութիւնը մինչ ի գերեզման կը լուսաորէ. իսկ այս ամուսնութիւններն այնքան սակաւթիւ են, զորս իրրե բացառութիւնք և հազուագիւս զարտաշութիւնք կրնանք համարիչ: Եթէ միանգամ մանուանգ մեծ քաղաքաց տուններն աչքէ անցնէինք և իւրաքանչիւր ընտանեաց հարցնէինք, արգեօք ո՞րչափ ազազակներ ձայն պիտի բառնային այս անլուծանելի շղթայն անիծելու համար: Ասա՛ զէս կին մը միշտ կուրճակով, ամուսնոյն խեղքը յիմարացուցած է. անգ՛ կոչս և մոյի ամուսին մը, որ ջիշմասեն իւր պատրիշ կերպարանքովը խարելն ետքը՝ իսպառ իւր կնոջ սէրը կորսնցուցած է, ալլուր՛ վիրաւորեալ անձնաթրութիւնն անսպառ տանութեանց ծնունդ տուած է: Աւելի հեռուն՝ շնութիւնը, որ իսպառ իր պղծած անկողինը թունաորած է, վերջապէս ամեն անզ անլուծանելի ամուսնութիւնը տխուր գոյներով մթնցած պտակերի մը պէս կը ներկայանայ, և լուսոյ շառաւիղ մը կը փնտէ գոյները քաղցրացնելու համար:

Մտիկ ընենք Գողգոթայ Բռիկութիւն անլուծալի ամուսնութեան վրայ նշանաւոր և ծանր խոսքերը:

« Ամուսնութեան ուղղակի և բնական նպատակը մարգկային ցեղը մշակվեմաւորել է: Ամուսնութիւնն անլուծանելի շղթայ մ'ընելով, ուղղակի այս գիտաւորութեան հակառակ կը գործեն: Մարգն ազատ ծնած ըլլալով, կը խորշի և կատէ սարկութիւնը ու բունութիւնը. կը տեսնուի շատ ամուսնացած մարգիկ, որք թէպէտ իրարու կը պատշաճին, բայց իրենց գրուած լուծէն ստակալով, ջիշ ջիշ կը պաղին:

և երբեմն զիրար կատեն, կը փախչին իրարմէ . . . :

Սոքա տկարամիտներն են, պիտի ըսէք. կը հաւանին՝ բայց սա կայ որ ամենամեծ մտաք այս տեսակէն է :

Զիրար ձգելու անկարելութիւնը՝ իբրև պատճառ յոսի կենակցութեանց շատերուն, հետեւաբար անմարդութեան ու բարուց ապականութեան շարժառիթը նկատելու է :

Կինն արձակելու հրաման չկայ, բայց իրաք՝ անհամեմատ կերպիւ բազմութիւ է, թէ և որինքը ներեալ չէ :

Ռուրբ ասոնց հետեւանքն ի՞նչ է : Բազմամարդութեան բարոյական շուղաց խտտումն և խափանումն, և ինչպէս որ անցեալ դարու հեղինակ մը փարձով հաստատած է, բնութեան ընթացքը կարգիբն, անոր կամայք կը հակառակին, երկիրը կը զրկեն այնպիսի սուրբէ մը, զոր ամեն քաղաքացի պարտի : Գրեթէ միշտ գժառութիւն ու խառնակութիւն կը ձգեն ուրիշ ընտանեաց մէջ, և այլոց սաացուացքը կը յափշտակեն, կամ շուայտութեան՝ կը զարնեն ինքզինքին, հասարակաց և մասնաւորաց բարուցը կը փութեն, ամեն տեղ մուրթիւն և ապականութիւն կը տանին :

Չեմք վախճար խոստովանելու, թէ մշտնջենական ուխտն այն ազեապի ժայռն է, որուն գէմ՝ կը լախլախին սիրոյ և երջանկութեան երեւակայութիւնք, ապագայի ամեն գեղեցիկ երազք : Ամուսնութիւնն երկու երես ունի, մեկը կը ժպտի և միւսը կը կեղծէ. իսկ միակերպութիւնը բոլորովին կը գառնաչընէ զայն :

Իեւրացի կարծեցեալ ոմանք ամուսնութեան վրայ ծայրելով կը խօսին. սիրոյ գերեզմանը, հոգոց և յուոց դաշար, կենաց թիարանն է, կըսեն. ազէկ նկատեցէք որ այս անհամ երգիծարանութիւնները



միշտ ամուրեաց և ամուսնութեան մէջ ապերիանիկ անհասից բերնէն կեցնեն : Ամուսնութիւնը չէ գէշը : այլ օրինաց անբաւականութիւնքն և զանի գաշնագրողաց անբարոյականութիւնն է :

Իտալական առած մը կըսէ թէ ամուսնութիւնը սոսկութիւն կամ գոտի է : Բազմաստութիւնը կարի նիշդ է . համակրութեամբ , սերտիւ միացեալ երկու ամուսնեաց վիճակէն աւելի երջանիկ ի՞նչ կայ . ընտանեաց ուրախութեան մէջ հեշտիւ կանչմին իրենց օրերը : Ձերենց շուտարող երկինքը պայծառ է . և եթէ երբեմն թեթեւ ամպ մը անոր պարզութիւնը պղտորէ , շուտով կը փարատի , և երկնից հաստատութիւնը աւելի քաղցր և աւելի զուարթ կը տեսնուի : Բայց նաև ի՞նչ սոսկալի պատկեր մը կը ներկայէ անպասշտան ամուսնութիւն մը , հակակրօական և անլուծանելի ամուսնութիւն մը : Սորա երկինքը միշտ տխրամած է . կայծականց շանթեր հորիզոնին վրայ կը սլանան : Մրրիկներն արագ արագ կը յաջարգեն , և եթէ մերթ ընդ մերթ խաղաղութեան վայրկեան մը պարզուելու յոյս մը տայ , աւելի սաստիկ և սարսափելի նոր մրրիկ մը կը պայթի և ամեն բան կը կործանէ : Պատկերին մէջ տեղը թշնամական վիճակի մէջ ապրող , մշտնջենապէս շղթայակապ վայրագ գազաններու նման երկու էակք կը տեսնուին , որք զիրար կը հայհոյեն , կանիծեն և կը ծեծկուին : Միթէ գոտիք մը չէ՞ հոն . . . Ո՛հ , եթէ ընկերութեան մէջ աստիկ և գարշելի անն մը տեսնելը տագնապ մը կը համարուի , ի՞նչ կըլլայ այն երկու ամուսնեաց շարշարանքը , որք զիրար աստելով , իրարմէ խորշելով և նշովելով ալ , միատեղ ապրելու բանագատուած են : Ով անբաւականի և անլուծանելի ամուսնութիւն , սակաւին ի՞նչ սոսկալի փառսեր կան քու գոժնգակ և ալեւտարեր հաստատութեանդ գէ՞մ :

## ԳԼՈՒԽ Գ.

### Գաղնազիք ամուսնութեան

Կենաց մէջ տեղի ունեցող մութհակաց մէջ ամուսնութեան գաղնազբէն աւելի ծանօթ չկայ, և այս գաղնազիքը ո՛չ թէ միայն ամուսնեաց, այլ նաև համայն ընկերութեան կը պատկանի: Արգարէն՝ եթէ ազգի մը զօրութիւնն ու հարստութիւնը անհատից թիւէն և քարոյականութեանէն կախուսն ունի, յայտնի է թէ՛ ամուսնութիւններն սրլափ քաղմութիւ ըլլան և քարի քարի օրինօք խրախուստին, այնչափ ալ ժողովրդաց քաղմութիւնը կտռաւելու, և ազգային երջանկութիւնն այնչափ մեծ կըլլայ: Արդի ընկերութեան յառաջագիտութեան և պիտայիցը վայելուչ քարի քարի օրինօք պայտապանել և խրախուսել զամուսնութիւնը ևս քան զևս հարկուոր կըլլան քանզի ասոր վերարեբեալ օրէնքներն հինցած և սրբազրութեան կարօտ են:

Ամուսնութեան օրինաց մեկ քանի յօդուածները հաս կընդ օրինակեմք. որպէս զի ընթերցողք աչքի առջի ունենալով զանանք, օրինազբբին գիժելու պէտք չունենան:

## ՔԱՂԱՔԱՅՈՒՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

### Գաղնազիքի օրինազբբէն բազեալ յօդուածք

Յօդ. 144. — Այրը տառն և ութը տարին և կինը տառն և հինգ տարեկան հասակը չքացուցած, ամուսնութեան գաղնիք չեն կրնայ կուել:

Յօր. 145. — Սահայն ժանդ պատճառներու հա-  
մար Իշխանութիւնը կրնայ հաստի յնայիլ, և արտա-  
նութիւն տալու ազատ է :

Յօր. 146. — Երբէք հանութիւն շեղած ասեն՝  
ամուսնութիւնն անկարելի է :

Յօր. 147. — Առաջին ամուսնութեան լուծմանէն  
առաջ, և այս լուծման վրայ 15 ամիս շանցած երկ-  
րորդ ամուսնութիւն մը գաշնագրել անկարելի է :  
Ապահարզանի բարեմանէն ի վեր՝ ամուսնութիւնն եր-  
կուց ամուսնեաց միոյն մահուամբը, կամ քաղաքա-  
կան մահու գատապարտութեամբ կենացքաւ ըլլա-  
լովք միայն կրնայ լուծուիլ :

Յօր. 148. — Որդին քսան և հինգ տարին, և  
գուտարը քսան և մեկ տարին չբացուցած, առանց ի-  
րենց հօր և մօր հանութեանը շեն կրնայր ամուսնու-  
թեան գաշինք կաել : Իսկ ծնողաց երկուքին մէջ  
կարծեաց անհամաձայնութիւն եղած ատեն, հօր հա-  
նութիւնը բաւական է :

Յօր. 151. — Ընտանեաց որդիք չափահաս ե-  
ղած, այն է՝ տղայն քսան և հինգ և աղջիկը  
քսան և մէկ տարին չբացուցած ասանին, և որոց  
ծնողքը յամուսնութեամբ գէժ կը կենան իրենց գաշ-  
նագրելիք ամուսնութեանը, որդիք պարտաւորեալ  
են՝ յարգակամ և որինտար գրութեամբ՝ իրենց հօր  
և մօր հանութիւնը ինչրերու :

Յօր. 161. — Մի և նոյն ազգատոհմէ սերեալ հա-  
րազատ կամ բնական զուակաց և սերելոց, նաև նոյն  
ազգատոհմի մէջ ինամութիւն ունեցողներուն մի-  
միանց հետ ամուսնութիւնն արգիլեալ է :

Յօր. 162. — Կազմեակի ազգատոհմէ սերեալ հա-  
րազատ կամ բնական զուակաց և սերելոց, նաև նոյն  
ազգատոհմի մէջ ինամութիւն ունեցողներուն մի-  
միանց հետ ամուսնութիւնն արգիլեալ է :

Յեր. 163. — Ամուսնութիւնը նաև արգիլեալ է հօրեզրօր կամ մորեզրօր ընդ իւր եզրօրագասեր կամ քեռագասեր, և հօրաքեռ կամ մորաքեռ ընդ իւր եզրօր որդւոյն կամ քեռորդւոյն : Սակայն իշխանութիւնն ազատ է այս արգելքները բաւնալ ծանօթ պատճառներու համար :

Յեր. 165. — Ամուսնութեան գաշնագիրը հրապարակաւ կը հաստատուի երկուց կողմանց միոյն քնակութեան քաղաքային պետութեան պաշտօնակաշին առջև :

#### Ամուսնութեան ծագած պարտաորութիւնք

Յեր. 203. — Ամուսինք՝ միայն ամուսնութեան գործով, իրենց զանկները սնուցանելու և հոգալու պարտաորութեան գաշինք հաստատելու են միտակց :

Յեր. 204. — Որդիք ազգեցութիւն չունին իրենց հօր կամ մօր ամուսնական կամ ուրիշ որևէ փնակ մը ընտրելնուն գէտ :

Յեր. 205. — Որդիք պարտին սնուցանել իրենց կարտակալ հայրը մայրը և ուրիշ ազգականները :

#### Ամուսնեաց անձնիք պարտ և իրաւանք

Յեր. 212. — Ամուսինք փոխադարձ հաւատարմութիւն, ոգնութիւն ու ձեռքնաուսութիւն պարտին միմիանց :

Յեր. 213. — Ամուսինք պարտի պաշտպանել իւր կինը, և կինը հնազանդիլ իւր ամուսնոյն :

Յեր. 214. — Կինը պարտի իւր ամուսնոյն հետ բնակիլ և անոր բնակութեան պատշաճ դատած տեղը հետևելու երթալ. ամուսինը պարտի ընդունիլ զայն և ըստ իւր կարողութեան և փնակի՝ հայրթաղիքի նման կենաց անձն պիտույրը :

Քաժակումն անեանց

Անձանց բաժանման պատեառներն են շուրթիւն,  
անասակութիւնք, յուսանք կամ ծանր թշնամանք և  
խայտաւակիչ պատժոյժը գասապարտութիւն :

Յօդ. 307. — Անձանց բաժանման գասը քաղա-  
քային ուրիշ անէն գործոց նման կսկսի, կը հարցա-  
քննուի և կը վճարուի. առանց փոխադարձ հաճու-  
թեան չգործադրուիր :

Յօդ. 308. — Անձանց բաժանման կը հեռուի  
միշտ ընչից բաժանումն ալ :



## ԳԼՈՒԽ Ե.

### Արօնից նուիրագործեալ ամուսնութիւնը

Ամուսնութեան նուիրագործութիւնը ընկերութեանց այս գայիներին յատկացուցած բարձր կարեւորութեան գաղափարէն ծնունդ առաւ զանի աւելի մեծ, աւելի յարգելի հանգիսացնելու համար է որ կրօնից վերաբերումով ծածկեցին: Մովսէսի կրօնքը, որ Աստուածպետութեան ճշգրիտ արդարն է, ոչ միայն ամուսնութիւնն, այլ նաև անոր յարակից ամեն նիւթական գործերն ալ առ ինքն կը գրաւէ, ամեն տեղ և միշտ մկրտութիւն և մարդագործութիւն կը տեսնուի: Ղեւթի սահմին մէջ ջեղապետարար հաստատուած քահանայական սակաւապետութիւնը կաթողիկոսութեան մէջ ալ կը գտնուի, որ քահանայն քաղքէն կը հեռացնէ և պետութեան մէջ պետութիւն մը կ'ստեղծէ: Եթէ Եկեղեցւոյ հարց շատերուն միայրը հրեականութեամբ այնչափ լցուած չլլար, Քրիստոնէութիւնն ալ նուազ խաչնդ սաներու կը հանգիսէր իւր կրօնական և ընկերական վերածորոգիլ պաշտօնին կատարմանը մէջ:

Արեւն կրօնքը ընկերութեանց զարգացման ամենակարեւոր հաստատութիւնը պաշտպանելու և իւր արանչացումն ու փայլը անոր տարւոյ համար գործածուեցաւ: Իսկ այս կրօնքը, որ միայն իրրև օժանդակ կուլուած էր, գլխաւոր գործակատարն ըլլալ ուզեց, իւր պաշտօնին սահմանն անցաւ քաղաքային իրաւունքներն առ ինքն գրաւելով, զոր գարեբրով իրեն վերադարձեց, մինչև որ վերջնապէս քաղաքական մարմինը այս զեղծումը բարեկարգելով

իրակ յափշտակուած այս իշխանութիւնը ձեռք անցուց:

Այսօր կրօնական ամուսնութիւնն այլ ևս նոյն կարեւորութիւնը չունի . քաղաքային ժափն քոչորովին ոչինչ , միայն իբրև պարզ օրինաւորութեան ձև մը կը պահանջուի . և այս ալ միշտ հարմարեւոյն կողմէն : Այս պահանջումը ինչպէս որ մեկ քանի հին և նոր գրագեւոր գիտած են , կանանց գտատարակութիւնը փոխանակ ի ազոյ արոց բարոյական և իմաստասիրական ըլլալու , սոսկ կրօնական ըլլալէն կախու մնունի : Աղէ՛կ է , գե՛շ է : Ընթերցողը Մ. Միշլըէի Քահանայն ու Ան անուն հատընտիր գործոյն կը գրկեմը , ուր այս ինքիբր հեղինակին տեսչական նարարութեամբն և ազգուսութեամբը բացատրուած է :

Ամուսնական օրինաց կատարելութեան խոչընդոտան եզոզ զանազան խոտորմունքները՝ հաւանականաբար իրաւագիտաց և եկեղեցական կանանց գիտաց անձնական նկատումներէն ծնունդ առած են : Առաջինք միայն բնական իրաւունքը նկատած են , և միւսները պոսակի խորհրդով միայն մարմնոյն նուիրագործութիւնը : Բայց ամուսնութիւնը քոչորովին քաղաքային չէ , քանզի իւր սկզբունքն բնութեան մէջ առած և ամեն օրէնսգրութենէ առաջ եղած է . նաև քոչորովին կրօնական գործ մ'ալ չէ , քանզի ամեն կրօնքէ և ամեն խորհուրդէ առաջ եղած ըլլալու է : Ղերջապէս ամուսնութիւնը մարդկային ցեղը մշտնջենաւորելու համար բնութեան հրամայած ասն ընդ կնոջ միութիւնն է . զաշնագրութիւնն ու պոսակը միայն ընկերային և կրօնական ձև մը կուտան անոր : Գաղղիոյ օրէնքը քաղաքային յարարելութեամբ միայն կը նկատէ զամուսնութիւնն . իրեն համար կրօնական նուիրագործութիւնը ոչինչ է , քանզի առանց կրօնական պաշտամունքը մերժելու , ասոնց և ո՛չ մեկը կը նանջնայ , ճշմարիտ է որք բարոյապէս և նիւթապէս

պատշաճ են միմեանց, կրօնից տարրերու թիւն ընդ-  
գիւնանալու չէր երկու անձանց միութեանը, քանզի  
սորա պարտին որ մը քաղաքացիներ ապ Պետութեան  
եթէ հարսնցու օրիորդք օրինաց այս արամազբու-  
թեանցը ազեկ տեղեակ ըլլային, տարրեր կրօնքէ ե-  
զած անձանց մէջ շատ ամուսնութիւններ կը կատար-  
ուէր, որ ընդհանրապէս չկատարուիր: Վերջապէս,  
ի՞նչ նպատակաւ կամուսնանան, իւր սերունդը հա-  
րազատ ընելու համար, և որովհետեւ միայն քաղա-  
քային պաշտօնակալն օրէնքը գործադրելու կուտած  
է, ուրեմն եկեղեցական իշխանութիւնը հագեւորա-  
կան իրաց սահմանէն անդին չկրնար անցնիլ այլ ևս:





## ԳԼՈՒԽ Զ.

Ամուսնութեան մէջ ընտրութիւն եւ զայն զու հաստատելու միջոցները .

Ամուսնութիւնը զայն զաշնագրողաց կողմէն կա-  
տարեալ ներդաշնակութեան մէջ ապրելու բազմաճիւղ  
ու հաստատ կամրջ կ'ենթիւնազրէ , որ է աչքիւր ըն-  
տանեկան բոլոր երջանկութեանց . Արդ՝ այս ներդաշ-  
նակութիւնը բարոյապէս և նիւթապէս կատարեալ  
կերպով պատշաճ ամուսնեաց մէջ միայն կը պատահի .  
Սրինաց անլուծանելի դատած երգմամբն իսպառ  
միանայէ առաջ , ընտրութիւնն ալեկ ընելու համար  
բոլոր կարելի միջոցները խորհիլ ամենակարեւոր է :

Այս ընտրութիւնը շատ յատկութեանց վրայ հիմ-  
նեալ ըլլալու է . ասոնցմէ ամանք ֆիզիքական կազ-  
մուածքի , առողջութեան կը կապուին , որք Ամուս-  
նութեան սուղընթացութեան մէջ ջուշուած են . ամանք բարո-  
յից , բնոյթի , բնազգման , ընկերական կացութեան  
եւն . կը յարարերին . Այս վերջին յատկութեանց շա-  
տարուն գոյութիւնը նանշնալը գժուար է , և ծանր ու-  
սումճը պէտք է : Արդարեւ յաճախ երթեւեկութեան  
նուիրեալ աւուրց միջոցին , զոր ամուսնութեան սո-  
վորական նախերգանքը կանուանեն , երկու վախ-  
նալիք ժայտեր կան , առաջինն է սիրոյ ջանկութիւնը ,  
որ կը կուրացնէ նորատի անկնքը , և ամուսնական  
երջանկութեան համար փնտառուած յատկութեանց  
նկատմամբ ամեն խորհրդածութեան կը զրկէ զանանք  
երկրորդն և աւելի աղետալին . սկիւղ ջանկութիւնն  
ազահութիւնն ու փռատմուրութիւնն է . այս մտու-  
թեամբը յափշտակեալ անկնք ամուսնութեան մէջ

հարուստ օժիտ մը ներս անցնել միայն կը նային . կեղծաւորութեան գիմակաւ կը ծածկուին , և շատ անգամ իրենց ինչ ըլլալը երեւան կեցի : Արգարեւ մեր ընկերութեան արդի վիճակին մէջ , յորում ոսկւոյ սէրը վերջին աստիճանի հասած է , յորում հարստութեան բազմանքն այնչափ բուսն է , զեղխութեանց և հեշտութեան ճաշակը այնչափ յայտնի կը խոսուի , որ շատ անգամ ստութեան լեզուն ճշմարտութեան տեղ կը գործածեն : Աչքերնին , բերաննին , ժպիտնին և բարութեան , քաղցրութեան ու սիրոյ արատքին ցոյցերնին ուրիշ բան չեն , եթէ ոչ կեղծաւորութիւն . հարստութիւն կը փնտռեն և ոչ անձ . հարստութիւն կը սեժ . որպէս զի ուզածնուն պէս գործածեն և զուարեութեանց վասնեն զայն : Ասով ժամանակէն առաջ կը հասկցուի պատգանքը , որուն կը հետեւին այն գառն ցաւերն , որք անլուծանելի ամուսնութիւնը գժոզք կընեն :

Ազեկ ընտրութեան առաջին պայմանը նիւթական և բարոյական ներգաշնակութեան , բնոյթից և այնակցութեան , կամ աւելի ազեկ ըսելով զգացմանց արտի և մտաց համակրութեան մէջ կը դանուի : Հակակրութիւնն է որ թուիք հերմակէն , մեծը պղտիկէն , գերը նիհարէն կը նախապատուէ . համակրութիւնն է որ զեղ աւելի այս ինչ կնո՞ կը յանկուցանէ քան այն կնո՞ , որ աւելի այս ինչ կինը սիրուն կը ցուցնէ , կամ կը սիրցնէ քան այն ինչ կինը , թէպէտե միւսէն նուազ գեղեցիկ և նուազ սիրուն ելն ըլլայ :

Բնագիտութեան մեկ սկզբանը նայելով՝ խիստ կտրծի և խիստ տկար մարմինները յուսով գիւրարեկ կըլլան . միայն միջին զարութիւնն է պահպանողականը . ուրեմն հարկ կըլլայ մեկ կողմանէ բարեխառնել և միւս կողմանէ զարացնել : Այս սկզբունքը խիստ ազեկ կը յարմարի նաև ամուսնութեան , եթէ

երկու գործը, բունն և ետանդոս էակներ իրարու հետ ամուսնանան, գրեթէ յայնի է որ իրարու պիտի հակառակին, պիտի կուսին և իրար հայհայեն . . . եթէ երկու անոցայ էակներ միանան, իրար է որ չպիտի կուսին, քանզի շունին այն աշխոյժը, բայց շուտով տաղակայի միակերպութեան մէջ պիտի խորասուզին, որ զիրենք իրարմէ պիտի տաղակաջնէ, և իրենց քով չգտաննին ուրիշ տեղ գնառել պիտի սկսին : Ընդհակառակը՝ եթէ կատաղի, ցասկոտ մեկը քաղցր և համբերող էակի մը հետ միանայ, հաւասարակշռութիւնը կը գանայ . քանզի շատ ունեցողը նուազ ունեցողին հետ կը բարեխաւնուի :

Ընտրութեան երկրորդ պայմանը բարոյականութիւնն է, այն զետե՛ յասկութիւնը, որ յարգանք և պատկասանք կը հրամայէ : Ամուսնեաց միմիանց ունենայիք ակնածութիւնը բարոյականութենէ կը բըզխի : Եթէ երկուքէն միոյն քով պակսի, միւսին սրբտին մէջ անարգանք շուտով կը ծնանի, այնմ հետեւ միութեան բարոյական կապը կը խորասկի, բաժանումը մտաւորաւ և անհրաժեշտ կը լլայ :

Երրորդ պայմանն իրենց և իրենց զուակաց կեանքը ապահովելու համար զուգեւոյ բերելիք միջոցն է : Այս միջոցներն են սփան, աշխատութիւնը, ինչպսութիւնը, կարգաւորութիւնը, ու այն ամեն առաջինութիւններն, որք բարեկեցութիւնն ու երջանկութիւնը ընտանեաց ծոցը կը հրաւիրեն և կ'ընչընեն : Ամուսնական ինչքոյն բացմանց մէջ ընդհանրապէս սփառ առակին տեղը կը բռնէ . այս է առաջին յասկութիւնը, որով կապահովուին . միւսները ետքը կուգան : Սակայն եթէ ազէկ խորհուրի, պիտի տեսնուի որ և ոչ մեկ բան մը այնչափ զիրար կը վաանուի և կը կորսուի, որչափ հարստութիւնը : Սը-

Նանկութիւն մը, հրդեհ մը կրճած ոչնչացնել զայն.  
մինչդեռ աշխատութիւնը, կարգաւորութիւնն ու  
խնայութիւնը անանկ ապահով միջոցներ են, որք  
միշտ ընտանեաց բարեկեցութիւնը, նօսութիւնը  
յաւելցնելու կը տրամադրեն, և խիստ շատ անգամ  
հաստատ հիմանց վրայ հարստութիւն մը կանգնել  
կը յաջողին. որով կը հետեւի թէ ընտրութիւնն ա.  
ւելի առաքինութեանց վրայ հիմնելու է քան թէ  
ստորի :



## ԳԼՈՒԽ Է.

### Շահատիրական ամուսնութիւնք

Ամուսնութեան խնդրոյն մէջ ազգեցութեանց ազետային և ապականիչն այն է, որուն շարժառիթը սակին է. Ոսկւոյ անիծեալ ծարաւը, զոր բանաստեղծը նշաւակած է՝ կարծեա յայնժամ ընտանեաց ամեն անդամներն այ կը գրաւէ, և այնպիսի անական ներքին տեսարաններ կը նանչնանք, որք հաւատաշնուութեան ամենաստուկայի գազանեաց արժանաւոր զուգականը կրնան համարուիլ: Ռամաստեղծութիւնը հաստատապէս, հանապազ և ամեն կերպով այս պժգայի գործաւնութեանց գէժ բողոքեց. բայց այս մասին անոր ըրածը փիլիսոփայութեան արձագանքն է միայն: Ինչո՞ւ ուրեմն որէնքը լուս կը կենայ: Ինչո՞ւ համար ատենակալ գաստաւորին պաշտանը իւր պաշտանական ժապաւէնը կապելուն, քաղաքային օրինադիրքը կարգալուն և երգման ձեւը արտասանելուն մէջ կը սահմանափակի: Արինաց օրրբափայլը զրկելոց համար տեղի ապաւինի ըլլալու էր: Ի՞նչ անպատշաճութիւն կը ըլլար հոս, եթէ ամուսնական հրատարակութեան միջոցին սրտի և մտաց ազատութիւն շնորհուէր ապաւնի ամուսնացելոց, եթէ ինքզինքնին անկախ գաստաւորութեան պաշտպանութեան յանձնէին: Եթէ օրիորդը՝ պաշտպանող իշխանութեան բարձրագոյն ապաւէն մ'ունենար, այսօր այնչափ իֆրիժէնիներուն նոր Գալգասից սրոյն տակ իշխալը լէր տեսնուէր:

Օրէնքներն ընդհանուրին շահուն, մարգասիրութեան մէջ փնտռել պարտին իրենց մտաքը, իրենց ո-

գին. ուստի ամուսնութեան վրայ արգի որէնքներուն որգեգրութեան և յախորգութեան յոգուածներն աչքէ անցնել պէտք է : Բարի որէնք մը կայ, որ ամուսնութիւնը իւր առաջին որրութեանը պիտի կուչի : զանի յարգանք, սիրով և հաւատարմութեամբ պիտի նստայնէր : Երկու հազար տարիէն աւելի կայ որ այս որէնքը կար Ամէնքի մէջ, բայց արժանի էր որ մեր որինացրքին մէջ ոչ տեղ ունենար : Ահա այսպէս կը մեկնէ Պլուտարքոս այս խնդիրը :

Ամենացոց որէնքիրը՝ հռչակաւորն Սոլոն շուղելով որ կանայք իրենց ամուսինը ժախտ առնեն և ոչ ալ ուրիշ վանառչներու պէս ամուսնութեան առուտուր ընեն, պահանջեց որ կանայք չիչ արժէք ունեցող քանի մը կտոր կարասեաց հետ երեք զգեատ առնին իրենց ամուսնոյն, այս մեծ մարզն իրաւամբ կը մտածէր թէ ան և կեով միութիւնը ծննդակա նութեան, հանոյից և սիրոյ նպատակ մ'էր, և ոչ թէ սասկ վտակելու : Արգարեւ՝ կին մը իւր սասկին համար առնել ամուսնանալ չէ, այլ վանառականութիւն : Այս պարտոգայն ինչպէս առնն ստեն կը պատահի անցեալ դարուց քանաստեղծին մեկուն հետեւալ տոգիրը գրել առաւ :

« Ամուսնութիւնը այնպիսի կաց մ'է, որուն շատ անգամ սիրալ կացուած չէ. քանզի առանց ամուսնացողաց յատկութիւններն ու հասակը նայելու միայն ինչքը կառնեն : Միմիանց յարմար և պատշաճ են կըսեն, բայց շատ անգամ խորհածուն պէս չելլիք, ազջիկ մը սրչափ հարուստ ըլլայ այնչափ աւելի բնա է ամուսնոյն » :

Շահու ամուսնութիւնը երկու տեսակ են. մեկ տեսակը մեծառանց մէջ կը կատարուի, իբրև միող իրենց աստիճանը պահելու և իրենց կենաց ընթացքէն բան մը չզրկեցնելու, վասն զի եթէ ազրատ

մեկու մը հետ խնամութիւն հաստատէին՝ ի հարկէ այս պահանջու մը կրչար : Երկու միացեալ հարստութիւնք մի կազմելով անհասին արժէքը կաւելցնեն . և ամեն առարկութեանց , հարստարմատութեանց ցնորքն ալ վրան յաւելցնելով ընկերութեան մէջ կրկնակի նշանաւոր կրչան , կրսեն : Նաեւ հարուստ ծնողք երգուեալ թշնամի են սիրոյ ամուսնութեան , երբ միւս կողմը սասակի մասին իրենցմէ ստորին է :

Հարուստ ընտանեաց որդի մը առարկինի , վեհ զգացմանց տէր , բայց աննշան և անհարուստ ազնկան մը հետ բուռն սիրով սիրահարեցաւ : ամեն կարելի եղած միջոցներով կը ջանան այս սէրէն ետ կեցընելու : Իրեն ազգացուցանելու սր յիմարութիւն կայ այս գործոյն մէջ իր կազմանէ . թէ իրեն պատւոյն և անուանն արժանաւորութեանը կը դաշի : այս ստորին առարկանի ազնկան հետ յարարերութիւնը կարելի եղածին չափ շուտով խզել կաշխատին . և եթէ այս զեղծման համար պէտք ալ ըլլայ ստակի զահալութիւն մ'ընել , յանձն կաւնուան : Եթէ այս որդին պարկեշտ ազայ մ'է , եթէ իր սիրուհոյն ամեն ինչ հարստութեանը եթէ ալ բարձրագոյն՝ գեթ հաստարակչիւ բարոյական և նիւթական յատկութիւններ տեսնայ անոր վրոյ , վերջապէս՝ եթէ ամուսնութեան իռար աուած ըլլալով իւր խտտումը կատարել ուզէ , գիտէ՞ք , ի՞նչ կը պատահի : Ինչոքր կը մերժեն զանի , ժառանգութենէ զրկել կապաւնան . հազար ցաւ՝ հազար զրկանք քաշել կուտան , մինչեւ սր իրենց կամայք զիջանելով իւր խաբած խեղճ ազնիկը երեսէ նզէ : Իսկ եթէ այս ազան իւր ծնողքէն աւելի պատուաւոր ըլլալ ուզէ , իւր ծնողքէն որք կատարեն զինքը վրաս մը գործելու . ազնկան մը պատիւը կործանելու սրուն գէտ պէնքը համր է , եթէ այս երիտասարդը : կրսեմ :

իւր ուղղամտութեան և անխարդախութեանը մէջ  
զորեղ ըլլալով, անպատասխան, վատութիւն հա-  
մարի իւր երգման հաստաք ընծայող և իրեն անն-  
նատուր եղող ազնիւիք թողուլ, եթէ վերջապէս հայ-  
րական կամոց հակառակ ամուսնանալով, իւր պատ-  
աստոյութեան պարտքը կատարել, այն ատեն ծնո-  
ղական կոպերը խափա կը խզուին, այլ ևս անենայն  
ինչ ընցած է հօր և զակի մէջ, և բովանդակ կե-  
նաց համար բաժանումն ու մուսացումն . . . այնպիսի  
ծնողներ կան, որք իրենց որդին վաճակը բառ-  
կան շհամարելով, յախանահան ատելութիւն մը  
կերգնուն, զանի գրկելու համար ինչքերնին կը ծա-  
խեն, կեանքը գառնացնելու համար կաշխատին ա-  
մեն փոս հասցնել, և անոր եղած աչեախց վրայ  
կուրախանան, եւ բոլոր ատնք իրենց որդւոյն հա-  
մար կը կամին : Այսպիսի ծնողք թշուառ խեղագար-  
ներ են, և կրնայ ըսուիլ չար ու վտանգաւոր արա-  
բաժներ, որոնց գէժ որէնք ասննահարիչ միջոցներ  
ստեղծելու էր :

Շահասիրական միւս ամուսնութիւններն, որք  
խոսածներնուս աւելի յառախ կը պատահին, տեսակ  
մը վառառակամութիւն են, որով բան մը չունեցողք  
կը բողնան մեկանց հարստանալ, կամ իրենց անհը-  
բաժելա պէտք եղած գումար մը ձեռք անցնելու,  
վառառակամութիւն մը հաստատելու, իրենց կացու-  
թիւնը որոշելու համար : Այս խոսքով գիւրքին է  
հասկնալ թէ ստակին հեռ կամուսնանան և ոչ թէ  
աննին :

Հորո՞ք է, որո՞ք է սխալ, անհաստիկ ամուսնու-  
թեան բոլոր մը սխալամ ատեն առաջին հարցմունք-  
ները, և հարստութեան նուազ կամ առտելութեանն  
համեմատ ամուսնացողք կարգուկիք ազնիւան բո-  
լորաբար կը ժողվուին և կամ կը հեռանան : Երբեք



բարոյական յատկութեանց խօսք չկայ : Եւ եթէ մարմնական անհատութիւններ ալ ունի, գարշեցի չեն Այն աստիճանի սփիտ փնտռող սրիկայներ կան, որք եթէ համարձակէին, հարուստ սաղասողի մը պիտի ըսէին : Եթէ մարմնոյն երեսն բեռնաշինարն մը է (1) : Եթէ սա հաւատարմ չափ յիմար եղած ըլլար, պիտի աշխատէին համոզել զայն : Կազ կնալ մը պիտի ըսէին, թէ իւր կազութիւնը նազեցի, յանկուցիչ բան մը ունի, որ զինքը երկրպագեցի կրնէ : Երչգ ազուէսին և ազուսին ստակը : Այս կերպով ամուսնացողք իրենց մնչեզին ջանկութեան արարկայ որք ձեռք անցնելուն պէս, ալ անկերնուն մէջ կաննեն : Իեղծ կինը երեսի վրայ կը թողուի, հարստութիւնը կը վաճառուի շահագրտական խաղուց և հանոյից մէջ, որոց շահանակցիք կինը : և եթէ երբեմն ջուրտ գըզուանք մ'ալ անհայ, անոր աչքը գոցելու համար է այն անասականութեանց գէմ, զորս սրինաց գիմելով իրաւունք ունէր արգիլելու :

Պիտի աւարկեն ամանք, թէ մնողք երիտասարդին վրայ առանց մանրամասն ջննութիւններ ընելու չեն տար իրենց ազիլիկը և իրենց խուզարկութիւններէն ետքը ամուսնութիւնն ընել կորոշեն : Ընմարիտ է, բայց սփիտ փնտռողները հարստար, հնարագէտ և երբեմն սրիկայ են և յանգգնարար կը պարծին : հարիւր ձեւեր կանուն իրենց նպատակին հասնելու համար, կեղծ գիմակի մը ներքե իրենց ամենափոքր պահասութիւնները կը պահեն, իրենց մեղրածոր խօսքերը, ժրախան խնամքները, սուտ պարկեշտութիւնը : կեղծ ուղղաբարութիւնը, վերջապէս իրենց խաբսպատիր ձեւերն անանկ յատկութիւններ կը հաւատա-

---

(1) Տես Քնախոսութիւն երեսուն եւ մեկ գեղեցկութեանց կնիչ անուն հասցնողի գործը :

ցնեն, զորս չունին: Մնողք և օրհորգք թակարգք կը  
բանուին, և ամուսնութիւնք կը կատարուի: Բայց  
վերջն ինչ կըլլայ. գաշնագրութենէ քիչ մ'առնն ետ-  
քը երիտասարդին միտումները տիրել կսկսին.  
սորա բնաւորութիւնն այնչափ շուտ, այնչափ որոշ  
փոփոխութիւն մը կը յայտնէ, որ այս նախասե-  
լի խարէութեան զսհը աղչած, իրեն պահուած  
տխուր ազգային գէմ չքեալ, և տառապեալ կը  
մնայ: Այն առնենէն կսկսին արտասուք և հեծու-  
թիւնք, գառն ցաւք, կակժեցուցիչ քանք, թունա-  
ւոր փրնմունք, հակառակութիւնք, և յետոյ ասե-  
լութիւն: Բայց օրէնքը, որ ամուսնութիւնն անլու-  
ծանելի կտայ մ'ըրած է՝ անողոք կը մնայ. կամ տա-  
կաչու և բովանդակ իրենց թշուառութեան հան-  
գուրժելու է, և կամ ընտանեկան գաղանիքը հուշ-  
կելու, և հրապարակային բաժանման գայթակղու-  
թիւնք օգնութեան կոչելու է: Կանանց մեծ մտար  
մինչև այս կէտին հասնելու քաջութիւնք չունին,  
կը հանգուրժեն իրենց գծրազգութեանը, և անհո-  
գութեան զարմանալի զորութեամբ կը ասնին: Իսկ  
ժամանակը կանցնի, կակիժը սրտին մէջ անընդհատ  
խոր վերքեր կը պեղէ, յետոյ տխուր հալու մաշ մը  
խեղճ կինք կը շորցնէ, և գինքն սղաննոզ թշուառին  
ներելով կը մարի. . . իրեն համար բացուած ու վրա-  
յէն գոցուած շիրմին վրայ այսպէս գրելու է. « Ան-  
ուշ-անիշ սեռան-դեան սփիլ ան մ'—ւլ »:

Այս գլուխը կը վերջնացնենք Յօդովեա Մէնէսիտ-  
սիէի զգայուն մեկ քանի առգերալք:

« Արդի բնկերութիւնն ամուսնութեան բնական  
նպասակը բոլորովին հեռուն թողած է. եթէ օ-  
րէնոց իր ժողովոյն ներքին ըլլար բարեփոխել սովո-  
րայիմները, ու զգել կենաց գործերը, լաս գործ ու-  
նէր տեսնալիք ամուսնութեանց բարեղրմանը համար,

քանզի այս որերս բարոյսն շահու առևտուր մը գար-  
նած է : Ըստ գիւղաց միայն կը խորհուի ինձամութիւն  
ընել ուզող մարդուն բարոյականութեանը վրայ .  
յատկութեանց մէջ գտնուելիք նաշակի և յարմար-  
ութեան յարաբերութիւնները զանց եղած են . « Գ-  
նիւն ի՞նչ որչա՞ն չոր՞նոք է . ահաւասիկ ամենուն ունե-  
ցած միակ մտածմունքը , փնտաւած միակ անգե-  
կութիւնը : Վսե՛մ զգացմունքներն ու բարի գործքե-  
րը սժիս մը չեն համարուիր , բարի յատկութիւննե-  
րը իբրև երջանկութեան աստեղք շնկատուելով , ո՛չ  
ոք փոյթ ունի անոք » :

Գաղզիոյ առաջին յեղափոխութեան մեծ բար-  
եաց մեկն ալ , կարգերը միմիանց մտածցնելը ,  
այսինքն՝ միոյն ազնուապետական ամբարտաւանու-  
թիւնը նուառացնելով ու միւսոյն արժանիքը բարե-  
բացնելով աստիճանները միմիանց խառնելն ու շփո-  
թելն եղաւ : Այսօր այս բարիքը գրեթէ կորսուած  
է . ուրիշ ամենագարշելի ազնուապետութիւն մը յա-  
ջարգած է առաջնայն , այն է ոսկւոյ ազնուապետու-  
թիւնը :

Այս ինչ մարդուն ինձամութիւնը հանելի է ձեզ ,  
քանզի հարստութիւն ունի , զոր ներ ազնկան տրուե-  
լիք սժտին հեա միացնելով , աշխարհի մէջ աստիճան  
մը պիտի հայլթայլէ իրեն : Բայց միթէ այս մար-  
դուն նաշակին , յոժարութեանցը և կրօնը անգե՞տի  
էք . վստա՛հ էք որ ներ ազնկան սժիսը իւր շուայլու-  
թեանցը և իւր մոլութեանցը սնունդ չպիտի ըլլայ :  
Երբ ներ և իր մէջն եղած միակ կապը քակէ , երբ  
ներ յարգանքը իրմէ վերջնէք , և արգար անարգանք  
անգաք իր գլխուն , միթէ ինքզինքնիդ չպի՛տի ամ-  
բաստանէք ներ ազնիկը ներքսնիդ թշուառացնել-  
նուդ համար : Սակայն մերժեցիք ազրատ երխա-  
սարգ մը , որուն տաղանդը , անբժութիւնը ու պա-

տիւր հարստութենէ մը աւելի կարծէր : Կարծէր թէ  
իւր գործունէութիւնը , իւր աշխատութիւնը , իր  
բարի վարքը ներ ազդիկը չպիտի երջանկացնէր և ի-  
րեն արուելիք սփտը չպիտի առաւելուր : Աւագ ,  
երբ կրնայիք ամենակրթանիկ միութիւն մը կազմել ,  
աչքերնից հարստութեամբ չլացեալ , ետութեամբ  
մաշտեալ ամենէն գեշն ընտրեցիք , և եթէ հայրա-  
կան սէրը չէ մարտն որտերնուց մէջ , ի հարկէ ան-  
գագար պիտի ամրատանէք ինքզինքնից , ներ զա-  
ւակը նեւ ընթից թշուառացնելուց համար :



## ԳԼՈՒԽ Ը.

Ամուսնութիւնը սիրոյ կամ բռնութեան

Այս անգամ ամուսնութիւններն, որ թէև ամենէն բնականն են, սակայն այսօր ամենէն հազուագիւտ են. քանզի քաղաքակրթեալ մարդը բնութեան իրեն առած ճաշակը կը թողու, անոր անզ արուեստականը գնելու համար. քանզի եսութենէ գրգռեալ ամուսնութեան մէջ առուել իւր հարստութիւնը յաւելցնելու միտոյ մը կը տեսնուի, քան թէ իւր կեանքը բարեկամական հաղորդակցութեամբը, և զուակաց քաջքը գգուանալը երջանկանալու միտոյ մը:

Սիրոյ ամուսնութիւնը ընդհանրապէս երիտասարդութեան աստն կը կատարուին. գեղեցիկ հասակ յարմ սէրը իր առջարած սրտին պէտ մարտի է, յարմ երկու էակը անգիմադրելի կերպով համակցութեամբ գեղայի միմեանց մշեալ հոգւով և սիրով զերար կը պաշտեն. ասանց մետաղեայ շահ մը իրենց սիրոյն խառնուելու:

Բայց մեկ կողմանէ, եթէ սիրոյ ամուսնութիւնը առջի բերան ամենէն բնական և անեղի պատշաճագոյն կերտնան, միւս կողմանէ փորձառութիւնը կը յայտնէ որ թշուառութենէ ազատ չեն: Սէրը շատ անգամ պատրիշ առաջնորդ մ'է. որչափ իր հուրը ստասիկ ըլլայ, այնչափ շուտ կը մարի: Սէրն իրրև պէտք մը, իրրև ֆիզիզական արտարժակ մը նկատուելով, ինքն իր սնունդովը երկար աստն չկրնար սնանիլ, ամեն բան շափելով կակի, և յետոյ նոր սնունդ մը չգտնալով կը մեռնի: Ուրեմն այս զեր-

մաշերժ եռանդէն, մեկ սեռին առ միւսն ջուշած բուռն անեղանքէն վախճալու, կասկածելու և զգուշանալու է. երբ ամուսնութիւնը սիրոյ իբրմութեան եռացման զաւանջանոց միջոցին կատարուի, ցնորից մտաւրուտ յայանութենէն կը վախճուի, վերջապէս անլուծանելի կերպով միանալէ առաջ մեծ իմաստութիւն է խորհիլն և յապաղելը. խոհեմութիւնը կը պահանջէ՛ որ երկու կողմերը սովորականէն աւելի երկար առեն միմեանց յանախեն, որպէս զի զիրար աւելի ազէկ քննեն, որպէս զի սրտի և հոգւոյ աւելի խոր նանայողութիւններ ստանան: Այս կերպ վարուելով կարելի եղածին շափ ջուշոց տառապանաց և հեծութեանց առաջը կանուսի, որք կը ծընանին և կը բազմապատկին մութեանց ծոցը, և եղուկ, կը թունաւորեն այնչափ ազնիւ գոյութիւնները:

Նորաստ սիրահարը, անլուծանելի հազոյցներով իրարու կապուելէ առաջ, հեռանեալ նմանութիւնն ուշադրութիւններ թող գրաւէ միշտ: Սէրը սանգուզի մը զանազան աստիճաններուն վրայ կը չրկի. սիրոյն ամուսնութեանց մէջ սէրը սանգուզին ամենաբարձր աստիճանին վրայ է. ալ անկից վեր չը կրնար ելլալ, բայց ի՞նչաչէ զտո՞ւ ուրիշ բան չը կրնար ընել: Իմացական ամուսնութեանց մէջ սէր չկայ, և եթէ կայ՝ սանգուզին ամենէն ստորին աստիճանին վրայ է: Յայտնի է որ ալ անկից վար չը կրնար ի՞նչալ, բայց կրնայ ելլալ մինչև իսկ ամենէն բարձր աստիճանը: Այս վերջինը կարծուածին շափ հազուադիւս չէ, և կը կատարուի ամեն անգամ որ ամուսինք իրարու վրայ չգիտցուած հանգամանք նշմարեն, և զիրար երջանկացնելու համար ի գործ ածեն զանոնք:

Սէրը անձնակամ, կոյր, և իմաստուն իրաասոց

խուլ ազայ մ'է : Այս բանասրին լուծին տակ նուա-  
նեայ երիտասարդութիւնը առանց ապագային զբայ  
անհանգիստ ըլլալու , միշտ ներկայն կը խորհի , ա-  
մենայն ինչ գեղեցիկ կերակնայ իրեն , իսկ ծաղկանց  
տակ ծածկուած փուշը շնչմարեր : Սիրածը նեաք  
անցնել , նորա բազկացը մէջ երջանիկ ըլլալ , ահա-  
ւասիկ սիրահարաց միակ բազկանը , միակ մտած-  
մունքն , կերուակայեն թէ սէրը ամեն բանի տեղ  
կը բռնէ , և թէ առանց անոր ամենեւին ո՛չ հանգիս  
կայ և ո՛չ երջանկութիւն , նաև իրենց պաշտելոյն  
համար ծնողք , հարստութիւն , բարեկամ , փառք  
կը զսո՛հին : Բայց մեկ մ'որ նեաք անցնելով ասրփու-  
կան յուզմունքն հանգարտի , իրենց երուակայածը  
ցնորք մ' ըլլալը կը յայտնուի , բանակութիւնը իւր  
իրաւունքը նեաք կառնու և այն տակն որչափ նորա-  
տի ամուսինք բոլոր ունեցածնին կուտային ամուս-  
նութեան նախընթաց որը նեաք անցնելու համար :

Ամուսնութենէն քիչ մ'առնն ետքը հանուից ,  
յոժարութեանց և երբեմն բնասրութեանց փոփո-  
խութիւնը փորձով ազայուցանելու համար հեռու-  
եայ պատմութիւնը կընենք :

Պատկերհան մը հարսանեաց պատկեր մը կը նը-  
կարէր , զոր վառվառն սիրահար մը իւր պաշտելոյն  
հեա ամուսնանալու կէտին պատուիրած էր : Կուզեմ  
որ , կըսէր սիրահարը , Հիմենն Աստիակն աւելի գե-  
ղեցիկ ըլլայ , և նեաքը սիրոյ լահէն աւելի փայլուն  
լահ մը բռնէ : Երուակայութեան ամեն լուծք ի գործ  
գիր . նիւթին գեղեցիկութեանն համեմատ պիտի  
վճարեմ գործ գ : Նկարիչը , որ սիրահարին առասա-  
նեանութիւնը խիստ ազէկ կը նանչար , զանի գոհ  
ընելու համար բան մը շնուցաւ և ամուսնութեան  
նախընթաց երեկոյին լննցած պատկերը ասրաւ ա-  
նոր :

Մեր երեսասարգ սիրահարն այնպէս գտաւ որ  
Հիմէնի գէմքին վրայ այնչափ զուարթութիւն չկար,  
գեղոյ և հրապուրանաց կողմէն ազգասէր, վերջա-  
պէս Հիմէնի վրայ ունեցած գազափարս այս չէ. ք-  
սաւ պատկերհանին, միջակ գեղեցիկ նկարեր եւ,  
ուստի միջին կերպով պիտի վնարեմ:

Արհեստաւորը՝ որ տաղանդին շափ ալ իմաստուն  
էր, - իրաւունք ունիք իմ պատկերէս այնչափ գոհ  
չըջալնուց, ասկիսին շորցած չէ, և նեղի համար-  
նակ խօսելու համար, կըտեմ թէ այնպիսի գոյներ կը  
գործածեմ որք իրենց արդիւնքը ժամանակ մը ետքը  
կարտադրեն, մեկ քանի ամիսէ ետքը բերեմ, զստահ  
եմ որ այն ասեմն բողբոջին ասարբեր պիտի տեսնար  
և իւր գեղեցիկութեանը համեմատ պիտի վնարէք:

Արհեստաւորը հետը տարաւ իր գործը: Սիրա-  
հարը հետեւեալ օրն ամուսնացաւ: Վեց ամիս ետքը  
պատկերհանը միեւնոյն պատկերով ներկայացաւ: Ե-  
րեսասարգ ամուսինը զայն տեսած ասեմն մեծապէս  
զարմացաւ: - Իտտացէր էիք ինձ՝ թէ ժամանակը  
ներ նկարը պիտի գեղեցիկացնէր, էշմարիտ է եղեր,  
քսաւ, կոկորմ չնանջնալ: Կը զարմանամ ժամանակին  
ներ ներկերուն վրայ ըրած ազգեցութեանը և աւե-  
լի կը զարմանամ ներ նարասարութեանը: Սակայն և  
այնպէս չեմ կրնար ինքզինքս զապել գիտելու համար  
թէ, այս գէմքը թի մը շատ զուարթ է:

— Բայց բաւական չէիք գտնար, պատասխանեց  
պատկերհանը:

— Աչքերը թի մը շատ վառ գուն են, ջահը խիստ  
փայլուն, քանզի վերջապէս Հիմէնիք սիրոյ հուրէն  
նուազ կեդի ըլլալու էր:

— Բայց ասկից վեց ամիս առաջ աչքերն ազատ և  
նսեմ կը տեսնայիք, և կուզէիք որ ջահը սիրոյ ջա-  
հէն աւելի փայլուն ըլլայ:



— Հիմնի հուրը հասաւաւան է : Ասկից զատ չու  
նկարած գեւորքը զուարթ կացութիւնը ծաղու և ա-  
ղասութեան կերպարանը մը կուայ այնոր , որ բնու  
Հիմնի յատկութեան նկարագիրը չէ :

— Ի՞նչու չու , պատասխանեց նկարիչը , նախա-  
տեսածս կասարուեցաւ : Հիմնն այսօր նուազ գե-  
ղեցիկ է ներ գաղափարին մէջ , քան թէ իմ պատկերիս .  
իսկ առկէ վեց ամիս առաջ ասոր հակառակն էր .  
հասարացե՛ք ինձ , իմ պատկերս չէ որ փոխուեցաւ ,  
այլ ներ այրերը , ներ գաղափարը , որք այսօր նոյնը  
չէն , ինչ որ էին այն ատեն :

— Ի՞նչպէս , կը հաստատ՞ք :

— Այո՛ , աէր . վեց ամիս առաջ եռանդոս սիրա-  
հար մ' էիք , իսկ այսօր ամուսին էք :

Նախքնթաց պատմութենէն սա կը հեռուի , որ ե-  
թէ նորասի անձինք իրենց կամուրջ նգուին , շատ  
անգամ կրից զո՛հ կրլան . ծնողաց փորձառութիւնը  
բարբոսիին պէտք կը չըայ անոնց այրերը բանալու ա-  
մուսնութեան վրայ , որ շատ անգամ գառն պատու-  
ներ կը ծնի : Այս ինչպիսի յետագայ գլխուն մէջ պի-  
տի հասեմք :



## ԳԼՈՒԽ Բ.

Արդոց ամուսնութեանը վրայ նայրական նեղինակութիւն

Ամեն ծնողք՝ իրենց սրգիքը նիւթականի, այսինքն հարստութեան մասին ըստ կարելոյն շահաւոր կերպիւ աւուսնաց՝ ել կը նային, բայց նաեւ իրենց պարտքն է բարոյական կողմը շնորհալ, և երբէք չը յամառիլ երբ միշտ առ միւսն յայանի հակակրօթիւն տեսնան: Այսպիսի ամուսնութիւն մը կատարելու համար իշխանութիւնն ի գործ գնել թանաւորութիւն մը կը ըլլար, որուն հետեւանքը միշտ ազեւայի են:

Երբ երկու կողմանց մին յարմար չէ, ծնողաց պարտքն է իրենց փորձառութիւնն աւ իմաստութիւնը, գործովանաց և իրաւանց ներշնչած ամեն միջոց ի գործ գնել, երկուստարգութիւնը լուսաւորելու և զանանք ետ կեցնելու այնպիսի ամուսնութեան մը, որուն համար քիչ ատենէն պիտի զգնային: Անձկանօք և հանգարտութեանը ապացուցներու են թէ ամուսնութեան ծանր գործը ապագային համար սէրէն աւելի տեսողական զգացմունք կը պահանջէ, թէ յարգանքն աւ սուրբ բարեկամութիւնը պարտին յառաջ ընթանալ, կամ գեթ ընկերանալ: Այս միջոցներն ի զուր ապառելէն վերջը միայն պարտին իրենց իշխանութիւնը ի գործ անել: Բայց և ոչ մեկ պարագայի մէջ այս հեղինակութիւնը կամածին ըլլալու չէ:

Արդիք ոչ կալուած և ոչ վաճառք են, զորս կարող ըլլաս նեւքէ հանել և կամ օժիտով կամ արագասով մը փոխանակել: Երկուստարգք մեծութեան հասակը հասնելուն, ընտանեաց գլուխ ըլլալու կող-

ուած են . որքնոր , որ զաննոր իրրու քաղաքացի կը նկատէ , հայրական զեղծմանց և բռնութեանց գէժ զաննոր պաշտպանել , և յ-դի-վ-ած կոտոր կոշուած գը-րութեամբ անողոր ծնողաց կամայք հակառակ ամուսնութեան գաղինք հաստատելու իրաւունքը պար-գելել պարտք յաննին համարած է :

Զիրար սիրող և միմեանց յարմար երկու անձանց ամուսնութեանը հակառակելու համար հարստու-թեան պակասութիւնը բաւական պատճառ մը չէ . երբ բարոյական յատկութիւններ կան : Հարուստ ծնողք՝ որք իրենց ազնիկը նուազ հարուստ բայց պատուաւոր երիտասարդի մը առջ կը մերժեն՝ քիչ մը աւելի սակի բերող ուրիշի մը տալու համար , ս-վարարար իրենց հեղինակութիւնը կը զեղծանեն , ո-րոյ կը հետեւին անգարմանելի թշուառութիւնք . քանզի կնոջ առ իւր սիրեցեալ ու մերժեալն ունե-ցած սիրոյ և յարգանաց զգացմունքը չպիտի մարին , միշտ զայն պիտի խորհի , և այս մտածմունքն իւր կեանքը պիտի գամնացնէ : Ազա՛ն և շահմնդիր ծնողք թէ միտգտկզէտի առած զեղեցիկ սրինակն աչքերնուն առջեւ ունենալու են : Իւր ազնիկն ու-ղող երկու աննինք ներկայացան իրեն , մին հարուստ և միւսն աղքատ : Հայկաւորն Աթենացին իւր ազ-նիկան նաչակն հարցնելն ետքը , ստիմաստուն խոս-քերն արատասանեց , « Աւելի կը սիրեմ առանց ստակի մարդը , քան թէ առանց մարդու ստակը » :

Եւ Մարտիրոսացի բարեսիրտ վանառականի մը ար-ուած սա ուրիշ մեկ սրինակը : Երկու երիտասարդք իւր ազնիկան նեւոր խնդրեցին , մին հարուստ և ազ-նուական , միւսն աղքատ և մտզմտկական գառն , բայց ֆիզիզական և բարոյական յատկութիւններով զարգարեալ :

Ազնիկն այս վերջինը կը սիրէր . Հայրը համբեց

ազնուահանը , յայտնելով թէ իրեն պէս անձ մը փե-  
տայ չկրնայ ունենալուն կը ցարի . բայց նաեւ յանել-  
ցայ , թէ բարի հօր մը պարտքն է Տէն . Գ . . .  
պարզ անուամբ իւր ազգիկան երջանկութիւնը նախա-  
պատի համարիլ : քան թէ գրասհի տխուրսով նո-  
րա թշուառութիւնը :

Եթէ հայրական իշխանութիւնն ամուսնութեանց  
մէջ սգուաներ ունի , այնպիսի անպատահալութիւններ  
ալ կը գարծէ , զորս Գաղղիոյ օրէնքները լանային  
բաւնայ . սակայն երբեմն այնչափ խոր արմատացեալ  
նախապաշարմունքէն այսօր քան մը կը մնայ , որ այն-  
չափ մտնկամարդ անձանց թշուառութեանը պատճառ  
եղան է : Պիտի ըսեն անանք թէ՛ ծնողք իրենց զա-  
ւակաց կացութեան , շահուն , հարստութեանն ու ա-  
պագային համար միայն նոցա յոժարութեանցը կընդ-  
գրմանան , բայց չկրնա՞ր ըլլալ որ սխալին , միթէ՛ հա-  
րըստութիւնն է միշտ երջանկութիւն բերողը : կամ  
ուրիշ կերպ ըսելով , միթէ՛ երջանկութիւնը վաճա՞ք  
մ՞ է որ ստակով գնուի :

Ի՞նչպէս կը գտնաք այն ծնողքներն , որք ամեն  
փայրկեան կը պատուիրեն իրենց ազգիկանը , որ այս  
ինչ կամ այն ինչ երիտասարդին հետ յաճախ շտեա-  
նուին , փախչին անոնց տեսակցութենէն , անոնց  
եռանդէն , մերժեն անոնց յարգանքը , և որք անդա-  
գար կը կրկնեն թէ՛ որիարդ մը միշտ հետու կենա-  
լու և անգիտանալու է աշխարհիս անցքերուն ելն , ելն :  
Ի՞նչ անուն աարու է այն ծնողաց , որք կը յամուսին  
թէ՛ պէտք չէ որ իրենց ազգիկը տոյրի բնութիւնը ,  
և իրեն որոշուած մարդուն բնասրութիւնը հանդ-  
նայ , և որ մը առաւօտուն կանուխ գայ և բախ-  
նական սեով մ՞ ըսէ՝ « Սրիորդ , պարսմին հետ պի-  
տի ամուսնանա » : Սրիորդն իւր ծնողաց այս կոչոս  
որոշմանը վրայ զարմացած ու ապշած , գլուխը կը

ձուկ և քանի մ'որ յապաղումն կը խնդրէ : Իրեն կը պատասխանեն, թէ իր շահուն համար լննցած գործ մ'է : Թէ գաշնագիրն ստորագրուելէն ետքը՝ ամուսնոյն կը պատկանի ինչը : Հետեւեալ որք Հիմնեան լահը կը վառուի և որիորդն իրրեւ զոհ մը ամուսնական առաջատար կը տարուի . . . ամուսինն իր իրաւունքը նանչնել կուզէ . ազգիկը կընդգիծանայ . . . վերջապէս այրը կը յազթէ : յազթութիւնը հզորագումին կըլլայ . բայց խեղճ ազգիկը կուլայ : Ահաւասիկ միոյն կողմանէ բուռն իշխանութեան սկզբնաւորութիւն մը . և միւսոյն կողմանէ ապագայ կեղծաւորութեան շարժառիթը : Դիակ'ք վերջն ի'նչ կըլլայ : — Եւրաստեանը գիտին է :

Ամուսնական իրաց ազիտութիւնն արգարացնելու համար, որուն մէջ կը ձգեն որիորդները, անպատահութեանց կը գիտեն . կենթադրեն թէ բնութիւնն իրենց կը սպրեցնէ զայն . զոր իրենք խեթիւ և խղճիւ կը պահեն : Հարցուք ամուսնացեալ կնոջ մը թէ իւր ամուսնութեան որք բնութիւնը մեկանց զինքը լուսաւորեց զանազան իրաց վրայ : — Բացասական պատասխան պիտի տայ . և եթէ չիլ մ'ալ իր վստահութիւնը շահած ըլլաս . պիտի ըսէ թէ՛ իւր այրը շնանչնայր շատ արատաւք, շատ անախորժ պարագայներ պատճառեց . որոց առաջը կաննէր, եթէ զինքը լուսաւորած ըլլային :

Ընկերութեան մէջ ամեն անզ ուրիշ բան շնոր տեսնար եթէ ոչ խել մը կանայր . որք ամուսնութենէ առաջ ունեցած ազիտութեանը գեմ կը բողբեն : Յայտնապէս կամբաստանեն ծնողքին իրենց գաւախարակութեանը մէջ առաջին կարգի պիտոյից ուսմունքը զանց ընելուն, և իրենցմէ պահելուն համար այն բաները . որմէ կարեալ էր իրենց երջանկութիւնն ու իրենց ամուսնական և մայրական լու-

սասորեաց վարդը : Իրաւունք ունին այս կանայք : բայց ասանք ալ իրենց ազնկանց դատարարականութեանը համար միթէ ուրիշ յատկագրիմ մը պիտի ընդունին : Յայտնի է թէ ո՛չ . կանխակալ սովորութեան շաւղին պիտի հետեւին իրենք ալ . և եթէ գիտազութիւն ըլլայ իրենց, թէ խօսքերնուն հակառակ կը վարուին և թէ իրենք ալ իրենց ազնկանք պատրանք կը պատրաստեն . պիտի պատասխանեն, թէ քրիստոսը դո՛ւրսէ և քրիստոսը արամարանութիւն :

Իւրաքանչիւր հասակի մէջ ամուսնութիւնը ասորբեր փոփոխութիւններով և գիտօք կը ներկայանայ անհատի մը ճաշակին և գաղափարացը : — Երիտասարդութիւնը՝ սիրեցեաց առարկայն ստանալ միայն կը տեսնայ հան . չափահասութիւնը՝ որ աւելի գըրական կը համարուի . ամուսնութիւնը իւր փառասիրական առաջադրութեանցը գործածել կուզէ . ազահ և ցուրտ ծերութիւնը՝ որուն սիրար այլ ևս գոցուած է սիրոյ գողար յուզմանց , ամենեւին ոչինչ կը համարի երկու անհատից մէջ համակցութիւնը , միայն նիւթական հանգիստ կը խորհի , և միայն հարրատութիւն կորոչէ : Արդ՝ եթէ ծերոց ձգուեր ամուսնութիւններ կատարելու խնամքը , միշտ շահախնդրական ամուսնութիւններ միայն կը կատարուէին : Եթէ երիտասարդութեան մէջ՝ յորում ազահութիւնը երբէք չի յիւեր , հարուստ մարդոց ազգատ ազնկանց հետ ամուսնանալն արգիլուեր , և փոխադարձարար , յայտնի է որ երջանկութեանց դէմ պիտի մարտակին :

Իսկ ամեն ծնողք ծեր և կոչք փառամունքեր չեն երբէք , և գիտասրարար ասրփական և ցանկութեանց օրերն է , որ իրենց իշխանութիւնը պէտք կը ըլլայ սիրալին ամուսնութեանց դէմ գնելու համար երբ կը տեսնան թէ թշուառ պիտի ըլլայ . իսկ ընդհա-

հակառակը՝ երբ սիրեցեալ կողմին գառախարակութեան պայմաններն և բարոյականութիւնն իրենց յայանեն թէ միութիւնը երջանիկ պիտի ըլլայ, այն առեւն ալ նեւնառ ըլլալու են :

Այս վերջին պարագայիս մէջ իրենց կողմանէ մերժումը կրկնակի սեւիւր մը կը համարուի և կրկնակի յանցանոր կըլլան, նախ՝ իրենց որդւոյն նկատմամբ, որուն երջանկութիւնը կարգիչեն, երկրորդ՝ ընկերութեան նկատմամբ, քանզի իւր շիրաժին հեռամուսնացող մեկը վաղ կամ անագան իր առաջին սիրոյ առարկային պիտի տայ խելքը, և ահա այսպէս նորակազմ ընտանեաց մէջ շնութիւնն ու անկարգութիւնները կը բազմապատկին. ամուսնութիւնը ասնոյանք մը՝ ապականութեան ու գայթակղութեան ազդիւր մը կըլլայ : Իրաց այս արտար վիճակը քննադատի մը ըսել առաւ :

Ամուսնութեան երկիրը աս սեպհականութիւնն ունի, որ օտարք կը բազման ընտկիչ հոն, և ընթիկք ելլել կուզեն անկից :

## ԳԼՈՒԽ Ժ.

Իրաւ նորաստի եւ խիստ ծեր ամուսնանալու  
անպատեհութիւնները

Բնութիւնն ամեն բանի համար հաստատուն կէ-  
տեր սրտած է, որոշակէ յայտեայս կամ յայնկոյս անշ-  
նիչ նպատակէն հեռանալ է: Անուսիւն ուղեքան-  
քնն մէջ մասնաւոր գլուխ մը յատկացած է ազատու-  
ցանելու համար այն ամեն անպատեհութիւններն,  
որք կը ծնանին մարմինն իւր կատարեալ զարգա-  
ցումն ու այրութիւնն ստանալէն առաջ, կամ ամուս-  
նեաց մին գէպ ի ծերութիւն խոնարհիչ սկսելու ա-  
տեն կատարուած ամուսնութիւններէն: ասոր հա-  
մար ընթերցողը հոն կը զրկեմք, հոս միայն բարոյա-  
կան անպատեհութեանց պիտի զրազինք:

Կարեւոր անուսիւն: — Նախ՝ կանխահաս ամուս-  
նութեանց մէջ նորաստի անէինք աղու պէս կը վար-  
ուին, այսինքն թեթեւութեամբ և անխորհրդարար-  
միտչեւ իրենց ծնողքը մէկտեղ ունենալու էին՝ ուր  
կոխած նոր երկրին մէջ զիրենք առաջնորդելու հա-  
մար: Շատ անգամ հայրենի լուծէն ազատելու հա-  
մար է որ որիորդն ամուսին մը կտանու, առանց զա-  
նի հանչնալու և առանց գիտնալու թէ՛ բարոյականի  
մասին իրեն կը յարմարի՝ Շատ անգամ կը խարուի  
սիրոյ տեղ զնեւրով զայն՝ որ չէ այլ ինչ եթէ ոչ ազ-  
գրկնութեան միեակէն կանայցի կեանքը թեւակո-  
խելու տենչանք մը: Այսպէս է նաեւ երիտասարդինն  
ալ: Իրաց այս միեակէր յանչափա քրասակար է զե-  
ռահաս անձանց համար, որոց տեսութիւնը խիստ  
նեղ և սահմանափակ հորիզան մը միայն կը ջլա-



պատէ : Ասանց ապագայի վրայ միայն յազնեցնելու , միայն ներկայ երջանկութիւն կը խորհին . փորձառութիւններն պակաս ըլլալով , զիրենք խաբել ու զոչ առաջին սաստիկին խաղալիք են : Թեթեւամիտ՝ անօրասեհ՝ երբեմն վտանդի՝ իրենց ժառանգութեան մեկ մասը հանոյից մէջ կտաքանն . և զեռնոր անուանանալու հասակին չհասած՝ նեղութեան կամ չքաւորութեան մէջ կը մնան : Այն ատեն՝ ամուսնութիւնը , որ այնչափ երջանիկ երեւութով սկըսած էր , ծանր թեւ մը կը ըլլայ : Ասկից կը ծագի այնչափ զժրագոյ կենտակցութիւններ , այնչափ անտարբերութիւն և պաղութիւն , այնչափ չքունն ու անհուսաւորութիւն : Փորձառութեամբ կը բնամբ ըսել նաև որ մատաղ հասակի մը մէջ՝ գաշնագրեալ անուսնութիւնը ընդհանրապէս երջանիկ չեն ըլլար : Ամուսնութիւնը թէ սիրով և թէ շահասիրութեամբ ալ ըլլայ , գաշնագրոյք ամենեւին չեն խորհած՝ թէ ըստանումը ներեյի չէ այն ատենն անգամ , յորում ատելութիւնը սիրոյ փոխանակէ : Օրէնքը՝ մանուսնոց կանանց համար շեղելու չէր այն թուականէն , յորում իւր երկամտիք կը թշուառացընէ այն անխոհեմները . զորս ցանկութիւնն իւր թակարգը և գամ է : Եթէ ծնողաց հեղինակութիւնն իրար իրաւունք մ'է , ահաւասիկ հոս է անոր խառնի գործածութեան պարագայն :

Առօրէն սեռանախիտն : — Բնութիւնը ծննդական կարողութեան ժամանակէս մը որոշած է , հետեւաբար որչափ որ մեկը մաս ըլլայ այս կէտին , ամուսնացած ատենը նուազ կարող կը ըլլայ իւր պարտքը հասուցանել ընկերութեան , այսինքն այնչափ քիչ զուակ կրնայ ծնանիլ : Բայց ուրիշ աւելի նուիրական պարտք մ'ալ կայ , այն է սերեւոյց նիւթական և բարոյական գաստիարակութիւնը : Արդ՝ եթէ մե-

կը խիստ յառաջացած տարիքի մը մէջ հայր ըլլայ, ո՞վ կրնայ պատասխանել որ բաւական երկար տանն պիտի տայրի զաւակաց գաւառիարակութիւնը կատարելագործելու համար: Առանց այս գաւառիարակութեան՝ որմէ կախումն ունի կենաց երջանկութիւնը, սոցա ազագայն խիստ անորոշ է: Ասկից զատ՝ միմէ ընտանեաց անպատում հրեւանդներէն զրկուիլ չէ՞ խիստ ուշ ամուսնանալը: Միմէ ձեռքը կրնա՞յ սերտ յարարերութեան մանալ իւր նորաստի կեանք հետ: Միմէ կրնա՞յ զուկին գգուանաց և պչրանաց յարգը ճանչնալ, կրնա՞յ հասկնալ նորա արհուսութիւնները, շարութիւններն և հազարումեկ խաղերը: որք նորաստի ամուսնեաց երջանկութիւնը, նոցա վնասց և նեղութեանց հատուցումն են:

Աւրիչ կողմանէ ալ, խիստ յառաջացած տարիքի մը մէջ ամուսնացողք ամուլ կրչլան, կամ միայն յուսի, վախ, և վատասող՞ զուկներ կը ծնանին, որք նաև իրենց նման արարածներ յառաջ բերելու տրտուր վիճակին մէջ կը դանուին: Այս կէտն ալ մեծ կարեւորութիւն ունի այն ցեղին համար, զոր զեղխութիւնն և քաղաքակրթութեան մելութիւնները տանն որ վատթարացնելու կը ձգեն:

Հասնի Կտակեր սնտակա սնամեքիւն: — Արդէն Անամեքն Առզըքանեքիւն մէջ ըսած եմք թէ գեղեցիկ պատգմեր հասցնելու համար զուգարութեան յարմարագոյն տարիքը կեո՞ղ համար 18 էն 30, և արանց համար 20 էն 40 է, կենտարանական այս սկզբքան համեմատ ամուսինը կեո՞ղմէն 8-10 տարի աւելի մեծ ըլլալու է: Եթէ այս կանոնը շատ աւելի չափն անցուցած է, զորօրինակ եթէ 40 տարեկան մեկը 18 տարեկան աղջկան մը, կամ եթէ 40 տարու կին մը 20 տարեկան երիտասարդի մը հետ ամուսնանայ, սովորաբար անտեղութիւններ և անգարմանելի թշուա-

առթիւները կը ծնանին առկից : Մարդ իւր արական կարողութիւններն իսպառ կորսնցնելէն և մեկ սարք գերեզմանին մէջ գնելէն ետքը կին առնել, ամուսնանալ չէ : այլ անտանարար զառանցել : Այս անհամեմատ միութենէն քիչ մ'առնն ետքը, անտարբերութիւնն ու ձանձրոյթը կը հասնի, և խառնութիւնը ամուսնական յարկին մէջ հասնելու շտապողիւր . քանզի երիտասարդագոյնն իւր ընկերոջը վրայ իր փնտռած յաակութիւնները չգտնալով, ուրիշ տեղ կը փնտռէ այնպիսի էակ մը՝ որուն մարմինը, բնաւորութիւնն ու միտումները իրենին հետ աւելի ներդաշնակաւ որ է : Հակառակութիւնը չթողուր որ որ և է ակնածութիւն պահուի . գտան կշտամբանաք, կսկծեցուցիչ թշնամանաք կսկսի տեսարանը, նախանձութիւնը կը հասնի՝ խարստած կարծողին կտասաղութիւնն աւելի ծանրացնելու համար . և ալ ամեն որ ուրիշ բան չկայեթէ ոչ հայհոյանք, սպառնալիք, և շատ անգամ ամարգութեան արարք : Անկից ետքը յարգանքն ու միարանութիւնն անկարելի են ամուսնեաց մէջ, ապահարզանն ամենակարեւոր է, ամեն որ նորանոր բուսն տեսարանաց տարափոխիկ սրինակը զազրեցնելու համար . իսկ ամուսնութիւնն անլուծանելի է . . . Ակամայ իրենց ասելութեան և տաղտկութեան՝ ստիպուած են միատեղ ապրելու : Կիմանա՞ք զիրար հայհոյելնին, և միմիանց ստիպալի անէծք տեղադնին : Եկատեցէ՞ք սա երկու թխարանի գատաղարան աշնը՝ որք մի և նոյն շղթայն կը կրեն, ամեն անգամ միմիանց նայելնուն, ամուսնութեան ծանր շղթային բացած խոր վերքերը կը նշմարեն : Միթէ կը մտածէ՞ք որ ընկերութեան համար բարի սրինակ կամ կրթիչ տեսարան մ'ըլլայ այս, և թէ՛ զանի հեղինակոց սրէնագրութիւնը բարոյական է :

Եւ երբ վախճումնոց մէկը 18-20 տարեկան ազլ-

կան մը հեա կամուսնանայ, ի՞նչ բարբիք կը յուսաս,  
ի՞նչ գաղափար, ի՞նչ գգացումներ չպիտի յուզեն ման,  
կամարդ կնով միտքը, որ սիրուն երիտասարդաց ըն-  
կերութենէն ելնելով, ծերունոց մը տառազատար մանէ:

Այս անհամեմատ ամուսնութիւնք, որոց վրայ  
խոսեցանք, շատ անգամ առուտուր են, այսինքն հա-  
րուտա և զեզիս ծերութիւնն ազրաս երիտասարդու-  
թիւնը ժախտ կաանէ: Ի՞նչ սպասելու է այսպիսի ա-  
մուսնութիւններէ: Յայտնի է որ բարբիք շտգատուիր:  
Երիտասարդը կը ժողով ծերը, և ծերունին երիտա-  
սարդութենէն խարուելով, իրեն արժանին կառանայ:  
Սակայն գայթակղութիւնը հոս չլիբլանար, Մերուն-  
ւոց մը հեա ամուսնացեալ գեռահաս կին մը, շատ  
անգամ սիրահարներէ շրջապատեալ, իւր ամուսնոյն  
հայթայթել չկրցած հանգչները նոցա բազկացը մէջ  
կը փնտռէ: Ասոր յառախող կանայք իւր օրինակէն  
տարափոխելով, յուսով անոր օրինակին կը հեանելն,  
և ահա այսպէս շնութիւնը կը բազմազատակի:

Քէ. գարու մեկ բանաստեղծն ըսած է.

« Երբ մեկն իւր աշնան հասակին

Նորասի զուարթ կին մը կաանէ,

Եթէ ապ գահարներ թանկագին,

Զխորհի թող թէ զայն գոհ կրնէ:

Եւ եթէ ցնւերով վշտացած,

Տրտնվայ թէ զիւր կինն այլք սիրեն,

Պատասխան կընդունի իւր վշտաց

Թէ « այսպէս ուզեցիր ժորժ Տանալն »:

Բազդիայ օրէնագրութիւնը, որ հինէն այնչափ հա-  
ւաքածոյ ըրած է, պէտք էր որ Հոռովակեցւոց օ-  
րէնքները պահէր, որ ծերունոյն նորասի օրիորդի  
մը հեա, և պառտաին՝ երիտասարդի մը հեա ա-  
մուսնանալուն գէժ կը կենար: Վաթուուն տարեկան  
մարդոց յիսուուն տարեկան կանանց հեա ամուսնա-

նարուն հրաման կը տրուէր, և փոխադարձաբար, ուրեմն ժերունիք ալ ազատ էին ամուսնանալու . բայց այս աեւակ ամուսնութիւնները միշտ ամուլ ըլլալով, մտրդկային ջեղին առոյգութեանը փնաս մը չէին հասցնէր : Այս որէնքներն իմաստուն էին . մեք ինչու չհետեւիմք անոնց :



## ԳԼՈՒԽ ԺԵ.

Մեծատանց իրենց մէջ կատարած ամուսնաբեկին  
առ ազգն եղած վասնոյ

Անպատշաճ ամուսնութիւններէ անհատից համար  
ժազած անպատեհութիւնները ցուցնելէ ետքը, հոս  
մեծատանց իրենց մէջ կատարած ամուսնութեան  
առ ազգն եղած վասնոյն պիտի բացատրեմք :

Ազատ Գեառութեանց մէջ ահագին հարստու-  
թիւնները սասկումն ազգելու են, ըստ որում հա-  
րստութեանց ի մի վայր հաւաքումն սմանց համար  
յառանձնաշնորհութիւն և ի տիրապետութիւն ամսի,  
իսկ ուրիշներուն համար ի հպատակութիւն և ի գե-  
րութիւն :

Փան փոք Թուս իրաւամբ կրտէր « Իրաց զգու-  
թիւնը միշտ հաստարութիւնն եղծանելու վրայ է .  
որքնագրական զգրութիւնը միշտ հաստարութիւնը  
պաշտպանելու համար նեան կտրեաւելու է » : Ար-  
չափ որ հարստութիւնը նուազ կուտակին և միեւրբին  
այնչափ առաւել կը շրջաբերին, և այնչափ ալ ազ-  
գին բարեկեցութիւնն ընդհանուր կը լայն : Արդ՝ հա-  
րստութեանց կուտակմանը գէժ կենալու և զանոնք  
ժողովրդեան մեծ մասին մէջ սփռելու համար, ոչինչ  
այնչափ նպաստաւոր է ցորչափ հարստից ազրամե-  
րուն հետ ամուսնութիւնները : Իսոյց ետութիւնը և  
ընտանեաց շահն անդադար ընդհանուրին շահուն  
գէժ եղած են : Ոչ թէ միայն հարստաց իրենց մէջ  
կը միանան, այլ և ընդհանրապէս մեկ կամ երկու զա-  
ւակ կունենան, երեք շատ հազուադիւրս կը պատա-  
հի, որպէս զի հարստիան ժառանգութիւնը շատ մա-

սերս չբաժնուի : Փոքր ինչ բարագո՞ւր բն հարստու-  
լորսփին հակառակ գինակ մը կը ներկայէ : Ասին եր-  
կիրներու մէջ ազբաւաց ամուսնութիւններն աւելի  
արգասաւոր են քան զհարստիցն : Գիւղարէից մէջ շատ  
զուակ կը ծնանին , քանզի ընտանեաց հօր աւելի օգ-  
տակար է շատ բազուկներ ունենալ երկիրը մշակելու  
համար : Քաղաքներու մէջ ալ նոյնպէս ազբաւ զա-  
սերը շատ զուակ կուսնենան : Արինակի համար՝ Փա-  
րիզու թշուառ թաղերու մէջ տղայք կը փրտան . իսկ  
այն թաղերն՝ ուր յզփութիւնը կը տիրէ , գրեթէ  
տղոց չտեսնուիր : Ազբաւք՝ եթէ բաւական ապ-  
րուստ ունենան , իրենց բազմութիւ զուակացը մէջ եր-  
ջանիկ են . հարուստք անդադար փոփոխական հեշ-  
տութեանց կը ցանկան , կը վախճան բազմութիւ զաւ-  
կիներ ունենալէ , որք պիտի պարսաւորէին զիրենց  
աանը զեղբարիութիւնը նուազեցնելու : որք իրենց գո-  
յութեանը գրեթէ անհրաժեշտ պէտք մը եղած հա-  
նոյքներէն պիտի զրկէին զիրենց . բայց նաեւ իրենց  
ամուսնութիւններն ալ ընդհանրապէս նուազ արգաս-  
աւոր կըլլան :

Մեր ընկերութեան մը մէջ ի հարէ առ օրցին  
անցած ժառանգութիւնն որչափ մեծ ըլլայ , այնչափ  
ալ ժառանգողն աւելի արժանիք կուսնենայ . և այն  
որ անզուակ մեռնող իւր եզբարց , յերց , հարեզ-  
բարց և այլ ազգականաց ժառանգութիւնն ի մի ժո-  
ղովէ՝ կրկին , երեքկին , չորեքկին և չն . կարեւորու-  
թիւն մը կուսանայ . . . ասկէց կը ժողին անապար-  
ժութեան և հպարտութեան զցայցմանք . որով կը  
փրանայ հարուստը . իսկ սասրին այսինքն իրեն  
հաւատար հարստութիւն չունեցող անձանց համար  
քամահրանք . և ազբաւաց համար նախատինք կը  
ցուցնէ : Եթէ հպարտութիւնն երբեմն ազնուակա-  
նաց ընդ գաւհիկս ամուսնութիւնն արգիլեց . այ-

— ասաց պատուար միջոցներով հարստացած մարդուն ազատութիւնն իւր զուակաց ամուսնութիւնը կարգիչէ այնպիսի մեկուն հետ՝ որուն գոյքը իրենց հարստութենէն բարձրագոյն կամ գէթ իրենցին հաւասար չէ :

Մոլեկան իրաց այս վիճակը անհաստեակն երկան. կուխեան և մանաւանդ ընդհանուրին հանգստութեանն և բարեկեցութեան ամենամեծ արգելչք մ'է : Բնանց ձեռացը մէջ հարստութիւնը կը մշտնվենաս. րէ, և սով սղոմնաճեան ու թիւր մ'ու իմոյ շուշ :

Եթէ արէնագրութիւնն արգելչք մը չգնէ, սեպհականութիւնը ընդարձակագոյն հիման մը վրայ հաստատելու կը հակի : Արդ՝ գրամագլխի եսական կեդրոնացումը, ամեն վարդկեան յեղափոխութեան մը զահելու վտանգին պիտի ենթարկէր զընկերութիւնն ազատութեան և հաւասարութեան գաղափարներով, որք այնչափ առաջ թափանցեցին մեր քաղաքակրթութեան մէջ : Մարդասիրական յառաջադիմութիւնը չկրնարով ոչինչ շահիլ բուռն ցնցմանց մէջ. մեծ քաղաքագիտութիւն մ'է արգելչք գնել սեպհականութեան տարադարձան ծառայմանը : Երբ հասարակութիւնը յայտ յանդիման կը տեսնայ, թէ ամուսնութեանց նպաստակը գրեթէ երկու հաւասար հարստութեանց միացումն է : Ինչո՞ւ համար Պետութիւնը ասոնց իւրաքանչիւրին համեմատական տուրք մը չպիտի գնէր : Ասիկայ ամուրեաց թիւը պիտի բազմացնէր, պիտի բսնն. ո՛չ, քանզի ամուրեաց վրայ ալ արքունի գանձէն տուրք մը գրուելու էր, երբ ասոր պատճառը ազրատութիւն կամ հիւանդութիւն մը չէ :

Նաև՝ ազատ Պետութեան մը կառավարութիւնը հարստից ընդ ազրատ ամուսնութեանց մեծարար և պատուք ձեռքնուտ ըլլալու, և բաշտ կարո-



զուժեամբք իրախուսելու էր, որպէս զի հարասու-  
թիւններն անգագար աստ և անգ սերմանին. քան-  
զի երկրի մը մէջ, յորում մանք անկախ հարասու-  
թիւնները քաղմատասկին, և քարե կեցութիւնը ծա-  
ւալի ամեն ընակչաց միայ. քաղաքացւոց ալ արժա-  
ժանիքը կը ճանչցուի. առանց իրենց ազատութիւնը  
վաճառելու կապրին, և երբ հայրենիքն իրենց  
պէտք ունենայ, մարդ կը գտնայ և ոչ թէ գերիներ:



## ԳԼՈՒԽ ԺԲ.

Անասնուրեան մէջ իշխանութեան պատշաճութիւնը

Թէ Արեւելքի մէջ մշտնջենաւորոց աւանդութեանց իրբն սկզբնակէտը նկատեմք Մովսէսինը, թէ Մննդոց գրքին մէջ իրով յառաջագոյն սքսեալ զանազան հաստոց համադրական պատմութիւնը միայն տեսնամք, միշտ սա յայտնի է թէ առն ի վերայ կնաջ իշխանութիւն կը քարոզէ : Քրիստոս ինքն իստիւ չը պատուիրեց սեռից հաստարութիւնը, թէպէտեւ Սաղուկեցիք յայտնապէս ընդունած էին զայս : Այս վերջին վարդապետութիւնը՝ ինչպէս որ յայտնի է յունական փիլիսոփայութեան մեկ քանի հասագայթներովը լուսաւորուած էր : Քանի որ Քրիստոսն էութիւնը հին կտակարանի որինաց ազգեցութիւնն ընդունած է, կնաջ գերութիւնը վարդապետութեան բնարանն եղած է : Միջին դարու մէջ վարդապետութեան ինչորք յազնցին, թէ ինչ հոյ՝ ու՛ր՝ ուրդու : Սուստատանի հին փիլիսոփայական վարդապետութեանց ուսմանքն է՝ որ Քրիստոսն էութիւնը չափաւորութեան չազին մէջ մտած է, որ որ աւուր կը սեծնայ հաստահարեալ սեռին համար, նոր փիլիսոփայութիւնը հնոյն սկսածը պիտի լրացնէ, որինք պիտի վերականգնէ ամուսնական ներդաշնակութիւնն, այսինքն սեռից ազատութիւնը, բնութեան առ իւրաքանչիւրն շարհած գործնական իրաւունքնեքն ալ վերապահելով :

Ասեն ընտանեաց՝ ինչպէս նաև ամեն ընկերութեանց մէջ կանոնաւորիչ իշխանութիւն մ'ըլլալու է, աւանց այս իշխանութեան՝ կարգաւորութիւնն ու ներդաշնակութիւնն անկարելի է, եթէ ամուսնեաց

խրատականներն ըստ իւր կամուց շարժել և միայն ըստ իւր քննաց վարուիլ ուզէ . այլ ևս չիք հաստատարուելու թիւն և ո՛չ հետեւարար համանաշնութիւն :

Արդ՝ երկոցունց ո՛րք հրամայելու է . ա՛յրք՝ թէ կի՛նք . ա՛յ մեն . և ա՛յ միւսք : այլ իրարունքք : Սակայն սա աչ ըսելու է . երբ կարծեաց հակադասութիւն և անհամանաշնութիւն կայ , աւելի կե՞՞նք կիյնայ զիլանելի՛ քան առն . քանզի կիինն աւելի քաղցր , աւելի փափուկ , աւելի երկչուս ընտարութիւն մը ունի . քանզի սա իւր հնազանդութեամբք , տկարութեամբք սիրցնելու է ինքզինքք , և ոչ թէ բռնութեամբ կամ յամուսութեամբ : Ասով ըսել չըլլար՝ թէ կիինք բռնաւոր ամուսնայ մը կամայն իրբև գերի հնազանդելու է . հեռի մենէ այս նշովելի մտածմունքք . բայց կիինն իւր աւելի տկար կազմութիւնը նանջալով , բռնութեան գէ՛մ բռնութիւն ցուցնելու չէ . իւր գեղն , իւր քաղցրութիւնք , իւր հնազանդութիւնք առն ընդգրկմութեանը յաղթելու . աւելի տարահավազոյն միջոցն եր են :

Ամուսնութեան մէկ իրողութիւն մը կատարուի ամեն օր . այն է . թէ ընդհանրապէս տկարագոյնք զօրաւորագոյնք կըլլայ վերջը : Ո՛ր ամուսին կրնայ ընդգրկմանայ իւր կե՞՞նք յանկուցիչ պայմանացք . ո՛ր վայրագ արարածն իւր ընկերուհւոյն գործակից ազալանացք անզգայ կը կենայ , կրնա՛յ գտնուիլ այն աստիճանի իմաստուններ , որ նազելի և արտասուպից գեղեցկութեան հրապուրանայն անպար մեան : Հէրցիւլէս Օմֆայի ստիցք փարեցաւ , և Սփրատ Արազիայի ինգացք վրայ հեշտի քնացաւ :

Երբ կիինն եզակիան հակադասութիւն իւր ընտ. թեւն էլլելով ոչ-քաղցրութեամբ տիրել ուզէ , գրեթէ չկրնար երբէք իրեն հնազանդեցնել : Երբ կե՛՞նք պտայ , ո՛չ պատասխանը կառնու . մինչդեռ ընդհա-

կառաւոր զգուանօք խառն հնազանգութիւն մը բարձրագոյն հրաման մ'է, որուն մարդ գրեթէ երբեք չընդդիմանար : Կանայք երբեք մտածալու չեն սա հրամարտութիւնը . « Առանց քաղցրութեան կին մը անհամ պատու մը, անհոտ ծաղիկ մ'է » : Բնութիւնն երկու սեռերը փոխադարձ առընչութեան մէջ գրած է, կինը մարդուն ընկեր ընել ուղած է, և ո՛չ գերին, ուղած է որ այրը կնոջ նեցուկն ու բարեկամն ըլլայ, և ոչ թէ բանասորը, որ մին միւսոյն երջանկութեան գործիքն ըլլայ, և փոխադարձաբար : Մեկ խոսքով որպէս զի խաղաղութիւնն, յարգանքն ու երջանկութիւնը արեւն ընտանեաց մէջ . պէտք է որ կինը հնազանգի մտածոյն, երբ այս վերջինն իրաւանց կը հնազանգի :

Այն անձնասրէ զորութիւնն ու աշխատութիւնը, կինն անձնասրէ վաշելլութիւնն ու սէրը :

Այրը մարդկութեան գլուխն է, իսկ կինն անոր սիրտը :

Այրը նորակազմ ընտանեաց նեցուկն է, իսկ կինը անոր ծաղիկն ու բուբուռը :

Այրը կաշխատի ընտանիքը սնուցանելու համար, կինը կը կրթէ և արթուն մաշք ըլլալով իւր անընդհատ խնամքներովը կը հոգայ :

Այրը սիրելէն առաջ կը խորհի և կը հաշուէ, իւր սէրը շատ անգամ հպարտ է : իսկ կինը կը սիրէ և անչահասէր սիրով կը սիրէ : Եւ երբ կեանքը գառն ըլլայ մարդուն, երբ սիրտը ցաւօք լի է եակաւոր հոգերով կենօք, երբ ոյժէ իյնայ, այն ատեն կինը վեհ ոգուով և իւր քաջարտութեամբը նեցուկ կը ըլլայ նմա, և աննը կը նսրի :

Վերջապէս կինն յուսոյ շատարիցն, փափուկ ցալացունն է, որ մարդուս գոյութիւնը կօծէ, քանզի առանց անոր չիք սէր և հեռուարար չիք երջանկութիւն : Կենաց երկու բուեաներուն վրայ անոր կը

պատահիս, որ մանկան առաջին քայլերն ու ծերունւ-  
ւոյն գաղղտիւն ընթացքը կառավարող է: Ասոր հա-  
մար է որ Պէսնտաակն աք Սէն Բիէա ըսած է «կար-  
ծես ընտթիւնը կինը մարդոց մէջ սփռել է ընկե-  
րական չգիտչին երկու ծայրերն՝ այսինքն մանկու-  
թիւնն ու ծերութիւնը զորացնելու համար»:

### Առտնին կառավարութիւն

Ճնարկան գործոց կառավարութիւնն՝ առաջինի  
կնով, բարի մեր յայթանակն է. հոն է որ իւր բոլոր  
հարտարութիւնն ու խելքը կը փայլի իւր կառարեալ  
փայլումը: Այն իւր գործունէութեանն աւելի  
մեծ և աւելի պերճ գուրջ աշխատելու կոչում է.  
կնով ընազգումը ներքին կարգաւորութեան և ընտան-  
եաց պիտոյից կը տանի զինքը: Եթէ մարդուն այն  
աւելի ընգարնակ հորիզոնի մը վրայ կը տա-  
րածի, կնով աչքը մտնէ աւելի կորոյէ, և մանրա-  
մասնութիւններն աւելի ազեկ կը տեսնայ: Մոր մը  
արթնութիւնն իւր ամուսնոյն և զուակաց երջանկու-  
թեանը պատկանեալ իրաց վրայ միշտ անդադար ըլ-  
լալու է. ներքին գործոց նկատմամբ կարգաւորու-  
թիւնն ու խնայութիւնը կարեւոր յասկութիւններ  
են, նաև հարուստ և յգփայեալ անձանց համար ալ:  
Տան տիկին մը ամենափոքր մանրամասնութեանց  
խնամը ունենալու է. քանզի այս մանրամասնութիւ-  
ններն ամեն որ կրկնուելով բարձր կարեւորութիւն մը  
կատանան:

Զբաղմունքն և ընտանեկան պարտքերը սնտախ ցան-  
կութիւններէ, զեղիութիւններէ և ա կը կեցնեն մաշք

մը, իւր ամուսնոյն և սիրելի զուտկացը ոգտակար կընեն զինքը : Անզուգահան որինակ մը կըլլայ իւր ազնկանցը, որք կանուխ նարա աշխատութեանցը ընկերանալու են : Եւ ազնիկ մը՝ որ կարգն ու ներգաշնակութիւնը հայրենի տան մէջ՝ տիրել տալու համար իւր մարդ հետ կը մրցի, ետքն ալ իւր ամուսնոյն տանը մէջ՝ կը մտցնէ զանոնք : Ահա այսպէս կը կազմուի խնայող, խոհեմ և խնաստուն կանանց ցեղը :

Քաղցրութիւնն՝ որ կնոջ կառավարութեան հանդամանքներուն վրայ որոշ գաղափար մը կուտայ, պէտք է բոլոր անոնց վրայ տարածէ, որոց կը հրամայէ ինքը : Սպասաւորաց հետ միշտ արգահասանոց վարուելու է, քանզի սիրոյ և երախտագիտութեան գիւրազգաց են . խստութիւնը կը գանձացնէ զանոնք կը առաջակացնէ և տեսրցը գէմ կը գրգռէ : Արեւմտկինը զանոնք քաղցրութեամբ վարելու, իրենց սինակին կարեկից ըլլալու և նոցա բարոյականութեանը հսկելու է . քանզի ընսանեաց մեկ մտար կազմելով՝ պէտք է որ ո՛չ թշուառ և ո՛չ ալ մոլի ըլլան :

Թող շհաստան, թէ այն ամեն մանրամասնութիւններն, որոց տան տիկին մը իւր ժամանակը կուտայ, կրնայ իւր մտաց և բնաւորութեան գեղեցկութեանը փրատել : Ընդհակառակը՝ պարտք մը ազեկ կատարուած տեսնելու գոհունակութիւնը զինքը կուրախացնէ, կերտանկացնէ, և իւր արժէքը նանշնալով, խիզնն ալ կը հանգարտի : Անգործութենէ, գտտարկութենէ, ծուլութենէ և աննորոյթ են կը ծնին անասանելի բնաւորութիւնները, յստի յսժարութիւնները և բաւոր այն պակասութիւններն՝ որով մարդոց մտքին մէջ այնչափ կը մեղազբուին կանայք :



## ԳԼՈՒԽ ԺԳ.

### Կնոջ վայելուչ գաստիարակութիւն

Կնոջ ֆիզիզական կազմուածքը շատ կը տարբերի աշականէն և այս տարբերութենէն իւր սեռին յատուկ գաղափարներ, բնազգումներ և կերպեր կը ծագին: Բնութիւնն ուղած է, որ կինն առաւել մայրական ինձանոց համար յատկացեալ ըլլայ՝ քան թէ գիտնական կամ բարձր գրականական ուսմանց. քանզի կնոջ գլխաւոր գրազմունքն իր նորաոտի ընտանիքը մեծցնելն է: Իսկ եթէ իւր ուզող կազմուածքը գիտութեանց համար նուազ ընդունակ կընէ զինքը քան զայրն. միթէ ասկից կը հետեւի թէ և ոչ մեկ ուսման գրադելու չէ՞: Հեռի մենէ այս մտածութիւնը, որ ստակալի բարբարոսութիւն մը կըլլար ժամանակիս շուտաւարութեան գեղմ. կինն ոչ թէ միայն տնական ներքին նիւթական ինձանոց համար որոշուած է, ըստ որում մանկանոց փոքրիկ հասակին գաստիարակութիւնը մայրենի պարտաւորութեանց մին է. այլ նաեւ նախնական կրթութեանց զանազան մասերուն մէջ այլ մարդուն փոխանորդելու կոչուած է. և ի՞նչպէս պիտի կրնար այս գործը կատարել, եթէ պէտք եղած գաստիարակութիւնն ինքն առած չըլլար: Ասկից զատ՝ միթէ ուսումնական մեկու մը ընկերութեան հանելի կրնա՞ր ըլլալ, եթէ մտաւորական ամեն հարստութեանց օտար ըլլար. և միթէ մարդ կրնա՞ր երկանիկ ըլլալ այնպիսի կնոջ մը հետ, որուն միայն բոլորովին անմշակ՝ լոկ նիւթական գործ մը համար եղած ըլլար. և կամ այնպիսի կնոջ մը

հետ, որուն միտքը միայն անփութն և սնասի բանե-  
րով լեցուած ըլլալով խելացի և ժանր խոսակցութե-  
նէ կը ևաներանայ :

Լուսաւորեալ կի՛նն ազատ է այն նախապաշար-  
մունքներէն, որք մտաց աստիճանը կը նուստացնեն :  
Տգեա և գիւրահաւան կի՛նը միշտ սնապաշտ կըլլայ,  
և յայտնի է թէ ո՛ւր կը ամբի սնապաշտութիւնը :  
Գոստիարակեալ կի՛նն իր խոսքերուն մէջ զգուշա-  
ւոր կըլլայ և միայն պատեհութեամբ կը խօսի : Տը-  
գեա կի՛նն անզազար կը շատախօսէ, և գրեթէ միշտ  
խօսածը բավրասանք է : Արդ՝ գոստիարակութեան  
գործն է կանխաւ արգիլել բավրասանաց այս մի-  
տածը, որ Բանդի-ժը-անունը տուած է ոմանց :

Ըստ մեզ՝ այն կի՛նը որ գոստիարակուելու մի-  
ջոցներն ունի արհեստից և գիտութեանց ասար կե-  
նայու չէ, և որովհետեւ բաւական է իրեն զգխաւոր  
ժանտիւթիւններն ուսանիլ, ուստի իւր ուսմունքը  
նուազ երկար և նուազ խորին պիտի ըլլայ քան զա-  
րանցն : Իւր խելքը կըթեւլով, միտքը մշակելով է որ  
կի՛նն իւր ամուսնոյն կը հաւատարի, որ կի՛նայ անոր  
միտքը հասկնալ, անոր յարգը նանչնալ, նաև մեծ  
օգնական ըլլալ, և որ աւելին է իւր զաւակացը հա-  
մար թանկագին գանձ մը պիտի ըլլայ : քանզի ման-  
կութեան գոստիարակութիւնը յասկապէս մտք կը  
պատկանի : Աւրեմ՝ թող կի՛նը գոստիարակուի, բայց  
իւր գոստիարակութիւնը հաւատարուն ըլլայ, ու անա-  
կան շահուն, ընտանեաց բարեկեցութեանը համար  
գործածուի : Մանաւանդ յո՛ւր աստիճանի բիւլ-ախաւր  
մարտութենէն զգուշանայ, որ նարանեւութիւն մ'ըլ-  
լալ կապտանար : քանզի այն կի՛նը որ ստանաւորներ  
կը չի՛նէ, յի՛նար ընտանեաց պիտոյն հսկել, քանզի  
ու՛ ժամանակ և ո՛չ այն նարտարութիւնն ունի, ըստ  
որում ընդհանրապէս երեւակայութեամբ է որ կը



մեզանչէ, կեղծ պարկեշտութեան մը տակ արտաքոյ կարգի սնուցարժութիւն մը կը պահէ, իւր ոտանաւորները զովարանողները կը սիրէ, և սրտանց կատէ գանձէք, որը կը ծագրեն զիրենք: Այս կողմուածքի աէր կին մը իրեն սրինակ հանգիստցող Սուսայից պէս մնարով, երբէք ամուսնանալու չէք, իրեն համար ամուսնութիւնն արևակ գրութիւն մ'է, և զինքը թշուառ կընէ: Իտարս ոտանաւոր շինողներուն համար է և ոչ թէ բարոյագէտ կանանց, որոց հարստար գրիչը կանանց գաստիարակութեան խնդրոյն մէջ մեծ ծառայութիւններ մատուցած է:

Իսկ մեր խնդրոյն: Յայտնի է որ երկուց սեռից գաստիարակութիւնը գրեթէ նոյնն է մանկութեան հասակին մէջ: Չափահասութեան աստե կակսի զգայի կերպով տարբերիչ, և կատարելութեան հասակին մէջ, յարում սեռին բարգաւաճմանն ազգող կազմական մեծամեծ տարբերութիւններ կը յայտնուին՝ երկուց սեռից գաստիարակութիւնն ու կրթութիւնը կարի յոյժ կը ասորբերին: Այն աստե նաշակները կը յայտնուին և զէպի աաննին հանգամանս ձգին, սրտորդը կին ըլլալ կակսի, և նարատ պատանին արական աշխատութեանց կը թեւակոխէ:

Ահա այսպէս է՝ կը կրկնեմք գարնեալ բնութեան ըրած բաշխումը, անական ներքին գործերը կնոջ կը գինակին և արատրին գործերն ասն կը վերարբերին: Կինը ասնը մէջ կարգաւորութիւն, մարրութիւն, վայելչութիւն և խնայողութիւնը սիրել տարու է, սր է մայր աատութեան, եթէ ասն բազուկը կրելու է աշխատութեան ժանրութիւնը, կնոջ արթուն աչքն աստե բանի գրոյ ըլլալու և անական կատարութեան ամենափոքր մանրամասնութիւնները նկատելու է:

Ասկից զատ ստիպուած եմք սա ալ ըսելու թէ

մեծամեծ ասանց մէջ՝ ուր զեզխութիւնն ու յը-  
փութիւնը կը տիրէ, մեկ ակնարկով կը հասկցուի,  
թէ ներքին անորինութիւնը ասան տիրոջ՝ կը վերա-  
բերի թէ ասան տիրոջ :

Ասանցմէ սա կը հետեի թէ ընկերական զանա-  
զան կացութեանց մէջ կնոջ կրթութիւնն ու գաւաթ-  
արակութիւնը պէտք է որ ամուսնոյն հետ համեմատ  
ըլլան. ասի ամուսնութեան այն պայմաններէն մին  
է որ ակազական երջանկութիւն կը շնորհեն :

Եօսք մը՝ օրիորդաց դաստիարակարեան վերայ

Գաբուն ըսած է Մեր կրթութիւն կոչածն ուրիշ  
բան չէ ըսա ինքեան, եթէ ոչ կանուխ սկսուած սո-  
վորայթ մը :

Մեն աը Գերան փիլիսոփայն կը խորհէր թէ կրթ-  
թութիւնը նիւթական և բարոյական բարի սովորու-  
թիւններ կազմելու վրայ կը կայանայ. այսինքն աը-  
զայոց անանկ բարի սովորութիւններ տալ, որք վեր-  
ջապէս բնածին կըլլան : Եւ կրթութիւնն ալ ուրիշ  
բան չէ :

Երբէք կանայք այստեսան պէս սիրուն եղած  
չեն. բայց նաև երբէք այսչափ նուազ բարի ամուսին  
նուազ բարի մայր, և նուազ լուսաւորեալ եղած չեն  
այն պարտուց մէջ, զորս կատարելու կոչուած են.  
և ինչո՞ւ համար այս : Քանզի նորածնութիւնը նոցա  
զարգուցը պէս նոցա կրթութիւնն ալ յինչն գրաւեց,  
նորածնութիւնը կը պահանջէ որ օրիորդք վեց կամ  
ութը ասորի գիշերօթիկ զպրոց մը կենան խել մը  
բաներ սովորելու, որոց համար ամեննին նաչակ մը  
չեն զգար, որք առ այինչ պիտի ծառայեն իրենց և

զորս թիչ ասեմնէն միտի մտանան . Մարք և զատոփ-  
արակուհիք որիորդաց կուումը գիտնալու փոյթ չընեղ-  
նուն զաս . նոյն ուսմունքները կը սովբեցնեն . առանց  
մտածելու թէ այս ինչ ուսմունքը կը հակառակի այն  
ինչին . և այսինչը այն ինչին . առանց նանջնալու  
և մշակելու այն բնազանդումը , որ երբեմն խիստ ու-  
րոշ կը տեսնուի ազգկան մը վրայ արհեստի մը համար՝  
որուն մէջ հակայարույլ պիտի յառաջագիծէր , եթէ  
նարտարութեամբ վարէին զինքը :

Ինչո՞ւ համար մնողք այնչափ եռանդ կը ցուցը-  
նեն փայլուն աազանգներ տալու իրենց ազգկանց ,  
զորս ամուսնացած ասեմնին խիստ թիչ առիթ կու-  
նենան գործածելու , կըսէ նոր բարոյազէտներէն  
մին . քանթէ սովբեցնել անոնց որ իրենց մեծացը հը-  
նազանդ ըլլան , ինքզինքնին յազցը . ընկերացը հետ  
սիրուն ցուցնեն , բարի անտես և նարտար ըլլան  
բոլոր այն գործոցը մէջ , որ ասն մը ինայութեան և  
բարեկարգութեան կը վերաբերի : Փանդի խիստ թիչ  
կը պատահի , թէ որիորդ մը որ իւր նորաստի հասակը  
արուեստասիրաց և խել մը ինկարկու համանեաց գո-  
վեստիցը մէջ անցուցած է . պարկելու . իւր ամուս-  
նոյն հնազանդ . անտեսագէտ , արթուն ելն կին մը  
ըլլայ : Գաստիարակութիւն մը , որուն առաջին ար-  
ժանիքն սրահի և եկեղեցւոյ մէջ փայլի է . երբէք  
բարի ամուսին և բարի մայր ըլլալու հազամանքնե-  
րը չեն կրնար տալ կնոջ մը :

Ազգիկնիզ քմենելու և հանելի ըլլալու անկարգ  
տենջանաց մէջ կը կրթէք . ասնն որ մարդիկ հրա-  
պուրելու և անոնցմէ իրենց երկրպագումներ գտնա-  
լու արհեստը կը սովբեցնէք . յետոյ կը յանդիմանէք  
զիրենք , երբ իբր հնազանդ աշակերտ՝ ներ գասե-  
րը ի գործ ածեն . Միթէ անտեղի այլանդակ ըն-  
թացք մը չէ՞ այս . Ի՞նչ մակդիր պիտի տայիք պա-

րի առաջնի մը, որ ընտիր աշակերտ մը հասցնելն յեանյ, անոր սրանքները կտարէ, ուրիշի մը հետ պարելը տեսնելուն համար:

Արեւն ֆրանսահեաց թեթեւութիւնը և յոգ-  
գողգութիւնը մեղադրելու չէ. քանզի իրենց կըր-  
թութիւնը մարդ տեսած ատեն, պիտի կարժէր որ  
ուրիշ բանի համար որոշուած չեն, եթէ ոչ զգայա-  
կանութեամբ իտակելու, և ոչ երբեք իմացականու-  
թեամբ: Մեկ քանի տկար ատղանդներ, զարգարուե-  
լու արհեստ, հանելի ձևեր, մարմնական գիւրք, ինչ  
ինչ շարժմանց մէջ վայելչութիւններ սովորեցնել,  
վերջապէս հանելի ըլլալու արհեստը կատարե-  
լագործելէ ետքը, որիորդի մը գաստիարակութիւնը  
կը լրանայ: Ըշմարիտ է որ այս յատկութեանց միա-  
ցումն ընտիր բան է. բայց յիշեալ բաւականանայ,  
եթէ միայր, գաստողութիւնը և իմաստութեան հան-  
ձարը ետ մնացած են: Այս ինչ կիմը, որ լաւ կեանչ-  
նայ ձայնական երաժշտութեան մէջ կորի մը և գա-  
գարի մը արժէքը, որ կարգաւի մէջ կրկին լաճանի  
մը գծաարութիւնը, և ետան պարի մը վայելչու-  
թիւնը գիտէ, այնպիսին կըսեմ իւր ամուսնական և  
մայրական պարտաւորութեանց ոչն անգամ չգիտէ:  
Արեւն ի՞նչպէս կուզեա որ կարող ըլլայ ընտանեկան  
առանին գործելը կատարել, իւր գաւկները կըր-  
թել, նոցա նիւթական և բարոյական (գաստիարա-  
կութիւնը վարել, Հեռուեալ ապացոյցը որիորդաց  
թերի գաստիարակութեան հաստատիչ փորձ մ'է,  
կրք աղագ ամուսնացնելու որք գայ, եթէ քեզի  
պատշաճ երեւցած այս ինչ կամ այն ինչ որիորդին  
գրայ տեղեկութիւն հարցնել երթեա. եթէ քեզ  
հարմանցնել ուղած ազիկանդ ընտա որութեանցը վրայ  
մնազքն աւ բարեկամները հարցաբնեւ, անմիջապէս  
սա անմիտիտ պատասխանը կուտան քեզի: — և կա.

տարեաց անձ մ'է : սքանչելի կերպով կերգէ ու կը պարէ , և կամ հիամնայի գաշնակ կը զարնէ և կը նկարէ : — Երբէք անական արժանեաց և բարոյական յատկութեանց խաւրը չկայ , ամեն ասնն երկրորդական ինդիր մ'է այդ :

Իմաստուն և ժանրարարոյ մեկը : որ զաւկներ ծնանելու և զանոնք վայելչապէս կրթեցու համար ընկերուհի մը կը փնտռէ . միթէ կրնա՞յ իւր նպաստակին հասնիլ , եթէ ըստ երգող և ըստ պարող սրիորդ մը ասնէ . այնպիսի ազնիկ մը : որ անական խնայողութիւն ու մաշտական պարագ ըսուած բաներուն ինչ ըլլալը չգիտէ : Մայանի է որ այրն ամուսնութենէն քանի մ'ամիս ետքը խարուած ըլլալը պիտի հասկնայ : Աւազ , պիտի ըսէ , ես իմ ամուսնոյս վրայ ընտանեաց մեր մը հանգամանքները փնտռեցի , և ուրիշ բան չգտայ , եթէ ոչ նուագերգու մը կամ պարահանգէսները վազող մը : Եւ այն ասնն գառն կրչայ ամուսնութիւնը :

Սակայն հետի ինչմէ սրիորդաց դաստիարակութենէն գեղարուեստից ուսումը գուրս նշեցու գիտասարութիւնը . մանտանդ երբ նաչակ և կոչումն ունին այս մասին . ընդհակառակը կը հաստատուի որ ասանք աչ իրենց պատեհութիւններն ունին . իսկ կը խորհիմ նաև որ գեղարուեստից ուսումը՝ երբ ազբելու միջոց մ'ընել չուզուիք երկրորդական ըլլալու և ընտանեաց ապամի մեր պարսաւորութեանց և բարոյականի ուսումը զանց ընելու չէ երբէք :

Այս կրթութեան մարտնչն սա կը հետեւի որ սրիորդք ընդհանրապէս թերի . սնուպարժ , յոգսողք և անխորհուրդ կրչուն , որ իրենց միակ ուսումնքն ակմից հաննարն սասնաքն է , որուն թեպետև իրենց պէս թեթեամիտ մարդիկ կը բանաինբայց ինչպի մարդոց աչ բանի կուտայ թէ — : գու

իմ կինս շեռ կրնար ըլլալ . քանզի ես այնպիսի կին մը կուզեմ , որ մայրական պարտքը գիտնայ և ի գործ գնէ . գու յողջողջ մայր մը միայն կրնաս ըլլալ , որ ամուսնութեան ծանր պարտաւորութիւնները շկրնար կատարել ։

Երբ այսպէս կրթուած աղջիկ մը ամուսնանայ անփորձ երիտասարդի մը հետ , կամ որ չգիտէ իւր կնոջ բարոյապէս ինչ ըլլալը , մեկ քանի ամիս բաւական է իւր կնոջ տխուր յատկութիւնները նանձալու համար . նախ խրատներ կուտայ , մեկ քանի արդար գիտողութիւններ կրնէ , զորս առ ոչինչ կը համարէ կինը . յետոյ յանգիմանութիւններ կուզէ , որք նմանապէս ազարդիւն կը մեան . թէ մին և թէ միւսը կսկսին զիջելնք միտքնող չլիմային ծանրութիւն գգալ՝ կինը ամուսինէն կը դանդաղի , ամուսինը կնոջմէն , և զիչ առեմէն խաղաղութիւնն ու երջանկութիւնը կը խուսափի ամուսնական յարկէն : Պատեառն ո՛վ է . յայննի է որ կնոջ ամուսնական և մայրական պարտաւորութիւնները կատարելու մասին անկարողութիւնն է :

Խոստովանելը նաեւ թէ ամուսնութեան վրայ կատարեալ գրուածք մը չկայ : Այս կարեւոր խնդրոյն վրայ խօսող գրքերուն մէջէն ամանք թեթեւ են և սնտաք , բան մը չեն տվրեցնէր կանանց , ամանք սոսկ կրնանկան ընթացքի մը վրայ կը խօսին , որուն հետեւութիւնը խիստ շատ անգամ բնութեան գէժ հակասել , անհիմն երկիւղներ ազդել , և տկար միտքերը կեղծ բարեպաշտութեան դարձնել է : Կենսաբանական և առողջարանական մեկ քանի գործեր ալ կը գտնուին , որք ամեն բան մեկգի թողլով յատկապէս ամուսնութեան ֆիզիզական մասերը կը նառեն . ասանք լատազոյն գրքեր պիտի ըլլային եթէ իրենց խիստ ուսումնական ո՞նն առանց նորաարի կանանց պարկեշտութիւնը խառնելու հասկնալի ըլլար :

Գարուց ի դարս մշտնիենաւ որոզ տխուր հնաւանդ սօ-  
վորութեանց հաւատարիմ ըլլալով մարք, կզգուշա-  
նան իրենց հարսնացու աղջկան ձեռքը ձգել այս ա-  
ռողջարանական կամ կենսարանական գործերէն մին,  
որք իրենց խիտա սգաակար կրցար ամուսնական և  
ապառնի մայրական պարտաւորութեանց մէջ ինչ  
կերպ վարուելինն գիտնալու համար: Եւ աղէկ նկա-  
տեցէք, այս ամսթիւս մարց շատերը, զորս ամուս-  
նական խտաւածք մը կը խրտեցնէ, որք պուեստա-  
կան քառի մը առջեւ կը գէշանան՝ իրենց անհոգ  
տրերն անբարոյական վիպասանութիւններ կարգա-  
լով կանցնեն, այնպիսի վիպասանութիւններ, որոց  
մէջ կին մը իւր ամուսինը խտրելու հազար հնարք կը  
սովորի, որոց մէջ սուտը, շարութիւնը, նուաստ նեն-  
գութիւնները, շնական տափանքը, անպարտի ա-  
տելութիւնները, վրէժինդրութիւնն և ամեն եզե-  
ռանց ուսումը իրենց սակալի մեքիութեամբը տես-  
նուելու համար գրական ժաշկանց տակ կը պահ-  
ուին: Այս վիպասանութիւնները մօրը ձեռքէն  
աղջկան ձեռքը կիջնան, որ անկանաք կը կարգայ  
և այս ընթերցումէն կը թունաւորի: Կայք մա՛րք . . .  
գժբազգ, որի՛րգք . . .

Քանի որ չափահաս որիորգք ամուսնութեան նիւ-  
թական և բարոյական գործաց մէջ ազեւտ մնան, ը-  
տած է ժամանակակից բարոյագէտ մը, քանի որ կա-  
նայք այնպիսի մէջ փայլելու սովորութիւն ու պէտքն  
ունենան: քանի որ իրենց իրաւանց բարձր գազա-  
փարը պաշարերնին մտքնել տայ, քանի որ իրենց  
արժանիքը մեկ քանի սնտախ տաղանդներու փայլմանը  
մէջ բովանդակել տան, և իրենց երջանկութիւնը  
զարգուց և շարգարանաց ցանկութեանը վրայ գնեն,  
յաստ տխուր ամուսնութիւններ և շատերուն ամուրի  
մնայը պիտի տեսնանք:

Մենք ալ ծանր ուսուցի մը հետ կը կրկնեմք, թէ  
ցուայի է որ օրհորդաց գառախարակութիւնն սասանն-  
նազ անձինքբարբառովին ազէտ կը պահեն զանանք: Հարս-  
նացութեան հասակին վերաբերեալ հմտութեանց  
մէջ չափահաս օրհորդք իրենց մօրմէն կամ երկ-  
չոս ու սնուցալտ անձերէ կրթութեամբ իրենց այնչափ  
սխտանի եղած բաները չեն սովորիր. նոցա առջեւ սի-  
րոյ բառն արտասանելու կը վախնան, և այս կրկն  
աղջեցութեան կամ անոր յիշատակացը ենթակայ  
անձինքն են, որ սրտի գազանիքներն այնչափ զգու-  
շութեամբ կը պահեն: Իսկ՝ որչափ ալ արգելք դրուի,  
բնաղջումը սիրոյ վերաբերեալ ամեն արարողոյից  
մէջ զանանք կը կրթէ: Ահա ասիկ ճիշդ այս գազա-  
գողի կրթութենէն է որ սխալ և նենգաւոր գազա-  
փարներ կը ըսողեն և սիրոյ վրայ սխալ գառողու-  
թիւններ կը հանեն: Դատախարակութեան ստարտախ  
եղանակ մը, որ առարկայները իրականութեան տար-  
րեր կերպարանքով մը ծածկելով՝ ամուսնութեան  
վրայ սխալ գաղափար մը կուտայ կանանց և անհնա-  
րին պատրանք կը պատրաստէ նոցա:

Միթէ աւելի բնական և աւելի խոհեմութիւն չէ՞ր  
ըլլար տակաւ առ տակաւ խելամուտ բնել չափահաս  
աղջիկը այն ազագոյն գերին, զոր ընկերութեան մէջ  
կատարելու կոչուած է, և սէրը ամուսնութեան մէջ  
ստացած ձեւովը ներկայացնելին իրենց, և ոչ թէ այն  
արտաքոյ կարգի կերպարանքովը, զոր վիպասանու-  
թեան ընթերցմամբ բորբոքեալ երեւակայութիւն մը  
իրեն կընծայէ: Այն ատեն՝ ազնկ գիտնալով որ ի-  
րերը առանց կորուստ մ՝ ընելու չեն կրնար երեւա-  
կայութենէ ի ստուգութիւն անցնիլ, կզգուշանայ սի-  
րոյ նենգութեանց և խարդաւանացը գէժ՝ որով կը  
ծածկուի իր նպատակին համեմելու համար: Այն օ-  
տենն ալ վիպային ցանկութեան մը խարեղապատիր կա-



տարեւոյ թեանցը յխարուելով, վերահասու կըլլայ  
այն ամեն փոփոխութեանց, զորս սովորութիւնն և  
ստացումը բազմանայ մէջ պիտի բերեն, ու սիրոյ ան-  
հրաժեշտ փոփոխութեանց կը գիտնայ համբերել: Ս-  
րբորդաց կրթութեան այս կերպը, կը կրկնուի, կե-  
նայ ընթացքին մէջ շատ պատրանքէ և շատ թշուա-  
ռութիւններէ կը զերծանէ: Այս խորհրդածութիւն-  
ները խելացի մարց կը թողուի, որպէս զի փնտսեն  
անով իրենց սգուար:

Ամեն բժիշկ սա կէտին վրայ համամիտ են թէ  
ազալոյց առոյգ կազմն ու առողջութիւնը մեծաւ մա-  
սամբ խելացի մօր մը շուսաւորեալ ինձնքներէն կա-  
խուան ունին: Խորին քննիչ մը յաւելցուցած է, թէ  
ազալոյց բարոյականութիւնն ու մանկութենէ վերջի  
վարքը իրենց մայրերի գաստիարակութենէն կը նա-  
խադրուի: Կանանց մեր քաղաքակցիթութեան վրայ  
ունեցած մեծ ազդեցութիւնը ամեն մարդ կը նան-  
նայ: Արդ՝ ըստ որում ընկերութեան հոգին և յար-  
ժիշ գորութիւնն են, ուրեմն իրենց ծագիկ հասակին  
մէջ բարոյական գաստիարակութենէ կարեւոր բան  
չկայ: Այս գաստիարակութեան հիմն ըլլալու են  
կարգաւորութիւնը, ինայութիւնը, մարքութիւնը,  
արթնութիւնը, զգաստութիւնը, բարեգործու-  
թիւնը և բոլոր այն առարքնութիւններն, որք կինն  
յարգելի և մեծարելի կրնեն: Եսեւ պէտք է որ նա-  
րասի անձինք ընկերութեան մէջ խաղալու գերեր-  
նուն վրայ անդադար լուսաւորուին, և իրենց ազա-  
լոյց փնակին յարաբերոյ իրտանց և պարտուց չըր-  
ջանին մէջ սահմանափակուին: Այլը զիւր կինը  
սիրելու և յարգելու հաւասար պէտք մ'ունենալով,  
ամուսնացող սրբորդն ալ ինքզինքը սիրջնելու և յար-  
գելի ընելու յասկութիւններն ունենալու է:

Սրբորդաց գաստիարակութեան մասին կը խոր-

հիմք, թէ արգիւնը բարձրագոյն է քան զոր էր երբեմն. սակայն մեկ քանի կէտերու մէջ՝ սակաւին անկասար կը տեսնուի մեզ: Աւսման վերաբերեալ ամենայն ինչ՝ ինչպէս քերականութիւն, լեզուագիտութիւնը, պատմութիւն, աշխարհագրութիւն, թուագիտութիւն, գեղարուեստ ելն ասոնց ամենն ալ աղեկ են, բաց ՚ի որում մէջ սերտազութեան յատկացեալ ժամանակէն, որ ըստ մեզ գրօսանաց և մարմնամարզական կրթութեանց ժամանակին հետ բազմաաւելով խիստ երկար է: Դասախարակու հիշք երբէք սա հշմարտութիւնը մտնալու չեն: Ասով Գոս է սով Երեւոյ Գլ Գոյ ինչ չտուի: Արգ՝ մարմնամարզութիւնն արխորաց գասախարակութեան մէջ նկատուելիք ոչ թէ առաջին քանն է, այլ ամենակարեւորն, քանզի ասկից կախու մնի մտաւորական կարողութեանց զարգացումը: Արխորաց գիշերթիֆիներու մէջ հաստատուած կարգացն հակառակ, ուր ուսմանքն ութը ժամ և գրօսանքն երկու ժամ միայն կը տեսնեն, մնացք որում մէջ վեց ժամ աշխատութեան վրայ գէթ չորս ժամ գրօսանք պահանջելու էին: Երխատարգութիւնը, ինչպէս որ հանգստութեան համար նմիելու, նոյնպէս զարգացման համար ալ մարմնական շարժմանց և գրօսանաց պէտք ունի (1): Մտաւորական աշխատութիւնն ըր՝ եթէ երկարատեւ ըլլան երխատարգաց մարմնական կազմութիւնը վտանգարցնելով, մտաց զորութիւնն ըրն զգալապէս կը խանգարեն. մտնաւանց այն գեռահաս անձանց վրայ, որոց գործարանական բարգաւաճումը անցազար գործունէութիւն կը պահանջէ:

(1) Աստղագիտութիւն և կասաբերագործութիւն մարդկային գեղեցկութեան հասցմար գործոյն մէջ տես մարմնամարզութեան գլուխը: Այս յանկուցիչ և կրթիչ գործը տուն կանանց մեզքը ցանտելու է:

Արիչ կազմանէ, ուսմանց յայտագրերու մէջ անա-  
կան անասնազիտութեան, առողջարանութեան,  
կենսաբանութեան, բժշկական բուսաբանութեան և ըն-  
դասախոսութիւնները չեն տեսնուիր երբէք: Որք  
մայր ըլլալու որոշուած որիորդաց համար ամենամեծ  
կարեւորութիւն ունին: Յայանք է որ առանին բժշ-  
կութեան ծանօթութիւնները մայրական խնամոց մե-  
ծաւ մասամբ կը նպաստեն: Արդարեւ նորատի մայր  
մը իւր զաւկին առողջութեանն համար իւր սեռին  
նանրութիւնը կը մտնայ: առանց ուտելու և քնա-  
նալու ամբողջ գիշերներ որորոցին քով կանցնէ, ան-  
ընդհատ այս սիրելի էակին վրայ ակնապիշ՝ նորա  
ամենափոքր շարժումները կը նկատէ, նորա պէտքե-  
րը կը գուշակէ: իւր զաւկին հետ մեկտեղ աննշա-  
սին գողնն ու ջերմութիւններն զգալով կը սառի և  
կը ջեռնու: Ո՛հ, անոր սազնապն ու վիշտը թեթե-  
ցնելու և զանի բժշկելու համար ինչե՛ր չէր սար:  
Այն ասան գառնութեամբ կը վշտանայ առողջարա-  
նութեան առանին բժշկութեան սկզբունքները սով-  
բած չըլլալուն, և աղեկ գեշ մեկ քանի սնտախ ար-  
ուեսաններ սովորելով իւր ծաղիկ հասակի տարիները  
կորսնցուցած ըլլալուն համար. արուեսաներ՝ որք ա-  
մուսնութեան ծանր պարտաւորութիւնները մտցնել  
կուտան:

Ասով ըսել չեմք ուզէր որ որիորդ մը բժշկակա-  
նութեան գասերն աւարտելու է, բայց կը հաւա-  
տամք որ մեր գարու կանայք ալ հին ժամանակի և  
միջին գարու իշխանահեաց և այնուսկան տիկնանց  
որինակին հետեւելով, վիրաւորելոց և հիւանդաց ա-  
ռաջին օգնութիւնները աւելու տար ըլլալու չեն:  
Յանկարծական տկարութիւն մը կամ ընտանեաց մէջ  
գեղջը մը պատահած ասան, մանտանգ գիշերը,  
բժիշկ չկայ որ իւր առաջին խնամքներն ու գարման-

ներն ընէ, և ինքնիրեն գարմանելու ազէա ըլլալով, հիւանդին վրայ ցաւ ին ու համբարութեան քաղաքէրէք բաւական կը համարին՝ մինչև որ բժիշկն համբի Այս միջոցին՝ ախար կը յառաջանայ և բժիշկը որչափ ուշանայ, այնչափ ալ բժշկութեաւ գժուարութիւնը կառուելու :

Ասկից կեդրակացնենք՝ թէ մօր մը համար իւր զաւակացը մարմնական սղլապահիկն ու սնունդը կարգադրելու, անոնց տկարութիւնը նախազգալու և հիւանդութեան ատենին՝ իրրե լուսաւորեալ հիւանդապահ՝ առողջապահ բժշկի մը հրամանաց համեմատ՝ զանոնք հսկելը գիտնալու նման ամենազնիւ գիտութիւն, ամենասուրբ զբաղմունք մը չը կրնար ըլլալ :

Կարծեմք բաւական բացատրեցինք, թէ գործնական առողջարանութիւնն ու աստին բժշկութեան գլխաւոր ծանօթութիւններն ընտիր գաստրոպրակութեանց ցումն են թէ որիորդի մը և թէ երիասարգի մը համար. քանզի՝ եթէ ելմարիա է թէ մայրութիւնը քահանայազորութիւն մ'է, ուրեմն իր պաշտօնը սահմանափակուելու չէ այն ռամկական խնամոց մէջ, որոց ազրիւրն իւրաքանչիւր կին իւր սրբաին մէջ կը գանայ : Իսկեակի մը և բնակութեան լաւ կամ յաւի ընարութենէն, այս ինչ ժառանգական կամ վերջէն եկած ունակութեան բարի կամ գեշ գաստմէն, այս ինչ սնունդէն կամ այն ինչ վարժութենէն աղու մը համար առողջութիւն կամ հիւանդութիւն, ֆիզիգական բարգաւաճումն կամ արգելք կրնան յառաջ գալ : Այս ելմարութեան միայն մեկ որինուկը ցուցնելու համար, կըրեմք, թէ աղայոց իրոց սղական խուլական, ելքնդնական ախտերն՝ ամեն բժշկաց խուլին նայելով, իրենց սկզբնաւորութեան ատեն կրնայ առաջին ասնուիլ. ըսել կուզեմք, որ եթէ

տակաւ ին այս արտերուն զոհեր կան . այն է թէ մարք  
ասոնց նշաններն ու ազեապի յառաջագիմութիւնը  
չհասկնալով , ժամանակն անցնելէն ետքը բժշկաց կը  
գիմեն :

Ետս ազեկ համոզուած եմք , որ մեծ ծառայու-  
թիւն է եթէ ընտանեաց մարց գիրքըմբռնելի « Մ.Ն.  
Ի-Ին ԲԵՂԵ-Ի-Ն-Ի-Ի և Մ-Ղ-Բ-Ն-Ի-Ի » անուն գրքոյկը  
արուի . զիրենք պարտաւորելով որ յանախ կարգան,  
որպէս զի անոր պարունակած ոգտակար պատուէր-  
ներն ըմբանեն և գործագրեն . կը պարտաւորեմք  
նաև նորատի ամուսինները որ « ՍԵ-Ն-Վ-Ն Ի-Մ-Ղ-Բ-Ն-  
Ն-Ի-Ի » անուն գիրքը ուշագրութեամբ կարգան . ո՛չ  
թէ զրօսանքի . այլ իրենց և իրենց սերնդեան ա-  
ռայգութեան վերաբերեալ խել մը ոգտակար խնդրոց  
մէջ գտասիրարակուելու համար : Այս գիրքը որ Գաղ-  
ղիոյ մէջ քանի մը տարուան միջոցին իւր ութերորդ  
տպագրութեանն հասած է . մեր խնդրոյն մէջ իւր  
կարեւորութեանն ապացոյց մ'է :

### Յնոչ բարի դաստիարակութեան նշաններն

Կին մը , որուն դաստիարակութիւնը առողջ ի-  
մացականութեան վրայ հիմնեալ է . իւր ընտանեաց  
երջանկութիւնն ու ընկերութեան զարգն է . նա-  
խանձն , հպարտութիւնը , սնապարծութիւնը , նա-  
խապաշարմունքն , սնապաշտութիւնն իւր սրտին շին  
կրնար մերձենալ . բամբասանքը , շար նախանձն , ա-  
տելութիւնն ու բարկութիւնը իւր հոգւոյն հանգար-  
տութիւնը շին պղտորեք երբէք :

Զինքը սիրցնող և փնտաւել առողջ բարի յատկու-  
թեանց մէջ որոշ կը տեսնուին բարեկարգութիւնը ,  
խնայողութիւնը , մաքրութիւնը , պարկեշտութիւնը ,

ուղղամտութիւնը , համբերութիւնը , բարեգործու-  
թիւնը , աշխատասիրութիւնը , խոհեմութիւնը , քա-  
ղութիւնը , անձնախրութիւնն և համբերատարութիւնը :

**ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆ և ԽՆՍՅՈՒԹԻՒՆՆ** երկու  
յատկութիւններ են , որք զուգընթաց են միշտ , ասն  
մը հոխութեանը պատեաա են . մինչդեռ շտապու-  
թիւնն ու անկարգութիւնը յիշ առեմնէն ամենամեծ  
հարատւութիւններն ալ կը տապալեն . Եթէ այրն իւր  
աշխատութեամբը կը վառակի , կինն ալ խնայութեամբ  
մատակարարելու է . ահա ասոր համար ծախքը ե-  
կամուտին հետ չափել կամուխ սովորեցնելու է աղի-  
կանց : — Հարատւութիւնը խնայութեան մէջ է , ինչ-  
պէս որ երջանկութիւնը բարեկարգութեան մէջ :

**ՄԱՔՐՈՒԹԻՒՆ** : Կեռն անհրաժեշտ այս յատկու-  
թիւնն ոչ թէ միայն իւր անձն և զգեաար հոգալու ,  
այլ նաև ամուսնոյն և զաւակացն ալ հսկելու կը տա-  
նի զինքը : Մարտութիւնը տան մէջ բարեկարգու-  
թիւնն ու հանգիստը կապահովէ . սա կը պահէ և կը  
նորոգէ ամեն բան և արտաքին գործերը պատշա-  
նագոյնս կը կարգադրէ . վոյ անմարուր կեռն , քան-  
զի գարշանաց և զզուանաց առարկայ մ'է :

**ՊԱՐԵՆՇՏՈՒԹԻՒՆ** : Կեռն մը համար այինչ այնչափ  
ազեկ կը վալէ . ցորշափ հանգերնից և խառտածքի  
մէջ պարկեշտութիւնը : Զլմարիտ պարկեշտութիւնը  
կը զաէ , կազնուացնէ աննը և առանց արտաքին  
ցոյցերու բարութեան կը ասնի : Բարեկիրթ կինը  
իւր սահմին , իւր արազաններուն և իր նիւթական ու  
բարոյական յատկութեանցը վրայ չխտիր երբէք :  
Սիրելի , նախազգոյշ , և միշտ մի և նոյն կամէն ունի :  
Պարկեշտութիւնն անանկ յատկութիւն մ'է , որ շատ  
պակասութիւնները կը ծածկէ . ասար հետ մեկտեղ  
փոքր ինչ երկչտտութիւնն իգական սեռին ամենազե-  
ղեցիկ զարգերէն մին է :

ՌԻԳՂԱՄՏՈՒԹԻՒՆ . Առարկնութեանց այս առաջինն , որ զմարդ իւր ընկերոջը համերայի կընէ , որքորդաց սրտին մէջ խիստ կանուխ փորագրուելու է : Աւրիչին անիրաւութիւն չընել , որ և է պարագայի մէջ անոր չմտանել , աչկիանց մէջ իրբն սովորութիւն ընդունուելու է :

Տղայք բնութեամբ ջանկալու և իրենց հանելի եղածը գրուելու հակամէտ կըլլան , առանց մտածելու թէ գեշ է ըրածնին՝ կառնեն կը պահեն և իրենց գողնալը կուրախանան : Աւրեմն ծնողաց կէլնայ իւր փափաքածը սեփհականելու մասին աղայոց այս բնական միտումը պզտիկութենէն կուտրել : Ամենէն աղեկ միջոցը՝ գործնական օրինակներով գարշելի ջուցնելու է իրենց նենգութիւնն ու գողութիւնը . բարի օրինակներու սովորոյթը չուտով յոսի միտումը կուզղէ . ջանգի՝ ինչպէս որ Լօք կըսէր , սովորոյթք իմացականութենէ աւելի գիւրաւ և հասաատունս գործ են : Աւղամտութիւնը զաահութիւն կը թնի և յարարերութիւնները կը գիւրացնէ . այս առարկնութենէն զրկեալ մարդիկ փտանգաւոր և գարշելի են :

ՐԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ . Բարի և զգայուն հօգւոց առարկնութիւնն է այս . առանց ասոր միւս առարկնութիւններն ընկերութեան համար ապարդիւն պիտի մնային : Աւրեմն՝ մանկունք ի աղայ տիոց բարեգործութեանց սովորելու են , որպէս զի մեծցած աստննին իրենց կացութեանը և կարողութեանը համեմատ կարող ըլլան ի գործ գնել : Բարեգործի մը վարձաարութիւնը , զայն ընդունաչին երախտագիտութեանը մէջն է : Ապերախաութիւնը բարեգործին աղնիւ ետանգը պատեցնելու չէ : Բարեգործութիւն ընել բազդին զրկանքը , ընկերական անիրաւութիւններն ըստ կարի գարմանել և կենաց մէջ ամեն

Մարգուհանգուսեան իրաւունք ունենայու հաստատութիւնն հաստատել ըսել է :

ԱՆԵՒԱՏԱՍԻՒՅԻՒՅԻՒՆԸ աւատութեան և հարբաւութեան ազրիւր մ' է : Չանկրութեան , անգործութեան և ծուլութեան անգեղեայն է , որոցմէ կը ծնանին այնչափ մուլութիւնք : Կին մը՝ որ իւր սանը մէջ գրազիլ գիտէ , աշխարհային գրասանքները կանարգէ , և միայն իր ընտանեացը մէջ կը գանայ երկնակութիւնը , վերջապէս իւր ամուսնոյն և զաւակաց նախախնամութիւնն է : Աշխատութեան մէջ գործունէութիւնը զարութիւն մ' է . ծուլութիւնն ամեն աւաքինութեանց գէմ արգելք մ' է , որ շարժիլ կարողութիւնը կը սկստացնէ : Մուլութիւնը շողաբութութեան , կեղծատարութեան , կեղծեաց , անբարեխառնութեան , ինքնասիրութեան և ին. արամազիւր կընէ : Մուլութիւնը կը հաստատէ կրից իշխանութիւնն և հետեւարար ամեն մուլութեանց մայրը կըլլայ : Ընդհակառակն աշխատութիւնը յոսի միտումները կը վանէ . բարեկարգութիւնը կը հաստատէ և առողջութիւնը կը պահէ :

ԻՈՒՆԵՒԱՍԻՒՅԻՒՆԸ ապահովութեանց մայրն է , կըսէ հին առած մը : Կինն իւր վարուցը մէջ խոհեմ խօսուածքին և գործոցը մէջ զգուշ և բոլոր իր տեսածներուն և լսածներուն համար խորհրդապահ ըլլալու է : Արիւններուն գործին միջամուխ ըլլալու , երկզգիմի խօսքեր և քննադատութիւններ ընելու չէ երբէք . այլոց համար միայն բարի խօսելով իւր նեանհատութենէն վեր խնդրոց մերձենալու չէ . երբէք իւր կարծեացը վրայ չվնդելով , բունք իրաւունք ունենալ ուզողներուն՝ թէ այլ ըլլայ և թէ կին՝ պարկեշտութեամբ զիջանելու է : Այս կերպով կը բռնայ այն թշնամանքներն , որք վիճարանութեանց մէջ միշտ յամառութիւն կը յարուցանեն :



**ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ** ամուսնական վիճակին անհրաժեշտ առաքինութիւն Տ՛ է : Ասեն որ պայծառ ըլլա՞րք , երբեմն փոխորկալից ալ կըլլայ , համբերութեամբ սպասելու է որ խաղաղութիւնն հասաւտուի : Ամուսինը՝ իւր հոգւոյն և գործոցը վիճակին համեմատ երբեմն անտարտ , նեղսիրտ և բարկացած կըլլայ , ազայք ազմկարար , հետաքրքիր , որկրամուլ , խեղկըլան , կը պատեն , կը կոտորեն , կը պոսան , կուլան և ըն . ընտանեաց մայրն իւր հանգարատութիւնն ու համբերութիւնը պէտք է ի գործ գնէ , միոյն անտարտութեանը հանգարտելու և միւսներուն յանգուզն աշխոյժը յափառորելու համար :

**ԱՆԿԵՂՄՈՒԹԻՒՆ** : Բոլոր այն յարարերութիւններն , որոց հիմը անկեղծութիւնը չէ , ողբալի և այպանելի են , կը խաբեն և կը խաբուին , ոչ արժանի են և ոչ ալ որ և է վստահութիւն մը կրնան վայելել : Այն կիներ՝ որուն սրտն անկեղծութիւնը կը պակտի խորամանկ , կեղծաւոր և պատրիշ կըլլայ . կը վախճուի , կանարգուի և ամեն մարդ անկից կը հեռանայ , կրնն արժանաւոր և յարգելի ըլլալու համար , իւր ամեն գործոցը մէջ համարձակութիւն և անկեղծութիւն գնելու է :

**ԲԱԶՈՒԹԻՒՆ** : Այս բառով , չեմք ըսեր ուզել այն ջուալի տիւնը , որ զմարդիկ իրենց նմանեացը վրայ յարձակելու և արիւնը թափելու կը մղէ . ընդհանրապէս , այն վստճ եռանդեան վրայ կը խօսիմք , որ գժբազգ մեկը մեծ վտանգի մը մէջ գանուած ասան՝ իւր կեանքը վտանգի ենթարկելով , անոր օգնութեան հասնելու կը մղէ զմարդ : Այն հազուագիւտ առաքինութիւնն ըսել կուզեմք , որ սքանչելի համբերութեամբ ձախորդութեանց , վշտաց և թըշուառ արկածից առկալու կը խրախուսէ : Ահաւասիկ մարդկութեան օգտակար այս քաջութիւնն է որ ծը-

Նոգք իրենց զուտկաց հոգւոյն մէջ ընդարեակեցու են՝

ԱՆՉՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ և ՀԱՐԵՐԱՏԱՐՈՒԹԻՒՆ,  
Ընդհանրապէս առաւել կնոջ քան թէ՛ արանց կազմութեանը յարակից առաքինութիւններ են : Այս առաքինութեանց որինակները կանանց պարտիւք : Ամեն ժողովրդաց պատմութիւններն և առանդութիւնները յննէ՛, պիտի տեսնաս որ կանայք զորմեցին բարեգործական առաջին զորմերն : Իրենց քաղաքակցաց փրկութեանն համար անձերնին նու իրենցին : Ամեն անշուր ազնիւ զորմ մը, կառարուելիք զհոգութիւն մը կայ, հոն միշտ կին մը կը տեսնաս : (Այս ինդրոյն համար կարգա՛ կնութեանն թիշտութեանց և խորելութեան կանանց մասն զիրոյ) թէպէտեւ անձնու իրութիւն ու համբերատարութիւնը իրական տեսին ընական են, սակայն ընթերցմամբ և որինակներովը այս ընտիր յատկութիւնները քաջակերելը միշտ բարի է :

ԶԳՄՏՈՒԹԻՒՆը բարեկիրթ կնոջ անհրաժեշտ առաքինութիւն մ'է : Առանց ասոր պարկեշտութիւնը կը մարի և անկարգութիւնները կսկսին : Ընդհանրապէս ամեն հանույք՝ մասնաորապէս սիրոյ հանույք չափաւորութեամբ ի կիր առնելու է : Ասանց զեղծումը քիչ ատենէն թէ նիւթականն և թէ բարոյականը կը վտարարացնէ և կը կործանէ : Ընթերցողն Ամուսնական Առողջարանութիւն գրքին կը գրկեմք, ուր այս ինդիրը իւր ամեն մանրամասնութեամբ բացատրուած է :

Համառօտիւ խօսելով ասանք են այն յատկութիւններն, զորս լաւ դատարարակութիւն մը որբորդաց որսին մէջ ապաստելու է : Երանի այն մարդուն որ այսպէս կրթուած կին մը կտանու . հարբատութիւնը, պատիւներն և այխարհային բոլոր անայնութիւնները այսպիսի գանձ մը չէին արժէք :

Ըօր մը առ դաւարն խօսած խրատը նորա ամուսնութեան  
նախընթաց գիշերն , ըստ ծիւռու եւ Տիկին տը Ժանլիի

« Պիտի ամուսնանաս , սիրեցեալ դուստր իմ' : եր-  
ջանկութեանդ ցանկացող հօրմէ դ քու ունենալիք նոր  
փիւսակիդ մէջ հեռուելիք վարուցդ վրայ մեկ քանի  
խրատ լսէ :

« Քու ապառնի ամուսինդ քաջ է և ազնիւ անձ մ' է ,  
իւր ընտրութիւնը պատիւ է թէ քու ծնողացդ և թէ  
քեզի . քանզի քու յատկութեանցդ վրայ հիմնեալ է  
և ոչ հարստութեանդ : Զքեզ ուրիշ օրիորդաց մէջէն  
օրտէջ , ուստի դու ալ փորձով հաստատելու ես թէ  
իւր ընտրութեանը մէջ սխալած չի :

« Ամուսնութեան առաջին ամիսներուն կարեառե  
չբխանի մէջ ամեն' քան գեղեցիկ է զուտեա . քանզի  
Ժազկանց նէկաարին պէս քաղցր է : Քու նոր ազգա-  
կաններդ գրեզ գ.գ.ուսնօք և մեծարանօք պիտի ընուն,  
ամուսինդ գրեզ սասանալուն համար երջանիկ համա-  
րելով ինքզինքը՝ իւր սիրովը գրեզ պիտի չլացնէ .  
քու կամքդ իրեն համար հրամաններ պիտի հա-  
մարուն , զորս պիտի փութայ կատարել : Պիտի նա-  
չակնս ամուսնութեան ամեն հանգչքներն առանց ա-  
նոր դաւանութիւններն զգալու : Սակայն բոլոր ա-  
ստօք կրնան փոխուիլ . նաեւ շատ դժուար է որ ու-  
րիշ կերպ ըլլայ : Կրից եռանդեան կը յախորդէ հան-  
գարտութիւն և շատ անգամ' , աւա՛ղ , անասարբերու-  
թիւնը կը հասնի : Բայց՝ ահաւասիկ գրեթէ ան-  
հրրատելաւ այս փոփոխութիւնը քեզի համար յայպ-  
զեւու միջոցը :

« Նոր ազգականացդ նկատմամբ բոլոր պատե-  
հութիւնները պահելու մտադիր եղի՛ր : Սիրէ՛ ու  
յարգէ՛ քու աներդ ու կեսուրդ : Լսէ՛ անանց խրատ .

ներն և հպատակութիւն ցուցուր, ամեն պարագայի մէջ նոցա անհանոյ ըլլալէ փախի՛ր, և հոգա՛ զանոնք իրբեւ քու հայրդ :

«Ախրէ՛ տաքքերդ ու տալերդ, անոնց հետ սիրով և քաղցրութեամբ վարուէ՛ միշտ, ու նեղքեզ եկած ծառայութիւններն ըրէ՛ : Այնպէս վա՛րուէ որ տաքքերդ գրեզ սիրեն և յարգեն, քայց անոնց հետ այնչափ շատ ընտանաւթիւն մի՛ ունենայ : Ամուսնոյդ մնողացը հետ ունեցած այս վարմունքդ հաստատամիտ ըլլալու է, ամեն փոփոխութիւն որ ի բարին ջլլայ : պաղութիւն կը հրաւիրէ քեզ, եթէ առաջինը քաղաքափարութիւն կը կարծուէր, այս անգամ երկրորդ փոփոխումը բարեկամութիւն ըլլալու է :

«Ախայն ամուսնոյդ վտանգէ՛ գազանիքդ և միշտ ամենամեծ համարձակութիւն մը ցուցու՛ր : Երբորդի մը քով զանի պարտաւելի զգուշացի՛ր, ասի առ ինչն եզած ակնամութիւնը կը նուազեցնէ և առ քեզ ունեցած սէրն ալ կրնայ նուազիլ : Եթէ քեզի անհանոյ սովորութիւններ ունի, զանոնք ջնջել այխառելու ետ, քայց անզգայի կերպով, իսկ դու ալ նայէ՛ որ իրեն անհանոյ եզածները չկատարես : Պահէ՛ քու պարկեշտութիւնդ ինչպէս հասարակաց նայպէսնա, և քու ամուսնոյդ հետ ունեցած ամենասերտ յարաբերութեանց մէջ ալ, մանաւանդ որ քու այս պարկեշտութիւնդ առտել ընտկան զգացման քան թէ կրճական սկզբան արդիւնքն ըլլայ :

«Ի բաց վանէ՛ որակդ նախանձութեան ամենափոքր մտածմունքները, այն կրնն որ իւր ամուսնոյն հաստատարութեանը վրայ կը կասկածի, խիստ շատ անգամ անհաստատրի՛մ կընէ զայն, եթէ կասկածներդ հիմնական ըլլան, հանգարա, խահեմ՛ զանուելու և նարտարութիւն բանեցնելու ետ այս թշուառ կու պակցութիւնները մարելու, զինքն իւր պարտուցը

ճամբուն բերելու համար : Բաւական չէ առաջինի ըլլալ, նաեւ առաջինութիւնն անբասիր սիրուն և հանոյական ընելու է : Բարի եղի՛ր՝ բայց երբէ՛ք ազան հանոյից մէջ . անահանգ զուարեացի ըրէ՛ : որպէս զի ամուսինդ ուրիշ տեղ ժամանակ անցնելու չերթայ : Բովզ անանկ զբազմունքներ ստեղծէ՛ որ զինքը գերի վարեն : Կարելի եղածին լափ յաճախ իւր զաւակաց զեմը բե՛ր զինքը . քանզի հայր մը որ լափ իւր զաւակացը զեմը գանուի, այնչափ աւելի կը սիրէ և սիրուիլ կուզէ : Զանձբանալու և ինքզինքը ուրիշ ցանկութեանց տալու ո՛չ ժամանակ և ո՛չ ալ պատեհութիւն ձգէ իրեն : Զկայ բան մը, որուն չկարենայ յաղթել կամ չն, համբերութիւնն ու ճարտարութիւնը : Խստապահանջ մի՛ ըլլար, քանզի սակը յոգնեցնէ և կը ձանձրացնէ ամուսին մը : Առողջ միտք մը առողջ մարմնոյ մը մէջ . անպաշտութեան երկիւղներէ ազատ, սիրուն և զգայուն սիրտ, ազատ և վեհ հոգի մը ամուսնեաց առաջին հանգոյցներն են : Եացա գաստարակութիւնը, որ փոխադարձ ըլլալու է, բարոյական և մարմնական կարողութիւնները տակաւ առ տակաւ կտտարելագործելու և զարգացնելու վրայ կը կայանայ :

Տիկին ալ ժանյի ալ ըսած է . շեղ ամուսինգ ազէկ համզուած ըլլայ թէ՛ ամեն վայրկեան իր ներկայութիւնն հանելի է քեզ : Զինքը քու քովդ կարելու միակ միջոցը միշտ զինքը տեսնելու հաստար հանոյք ցուցնելն է : Անկարելի է զբարբառել կին մը, որ իւր ամուսինէն հեռի գանուիլ չուզելէն զսա, զանի իւր գործոցն ակամատէս վկայ ունենալ կուզէ միշտ : Սգուտ քաղէ՛ այն անցաւոր իշխանութենէն, զոր սէրը կընծայի քեզ անոր վրայ ունենալ . որպէսզի իւր պակասութեանցը վրայ համարձակ խօսելու իրաւունքն ստանաս . բայց այս ալ կարեկցութեան

և անձնուէր բարեկամութեան մը գործալիք ձայնափն ըլլայ :

« Խորհուրդ հարցուի միշտ, եթէ կուզես որ նա ալ քու խորհրդոցդ հետեի : Իւր վստահութիւնն ըստանալու համար, առանց պահելու, քու կը ալ մի՛ զլանար իրմէն : Եթէ փոքրիկ վէներ պատահին, գործաւանայ ձայնը գործածէ՛ և մեծ զիջումն ու հպասակութիւնն ջոյց աւելի իրեն, բայց մի՛ հանդուրժէր երբէք, որ բառ մը կամ շարժում մը քու փոփոխութեանց ֆրասէ : որչափ որ զինչը յարգես, այնչափ ալ ինքն զքեզ կը յարգէ :

« Երբ զուկներ ունենաս, մի՛ մտնար որ իրենց նախնական գաստիարակութիւնը մեր մը հարկադրեալ պարտքն է : Զանոնք առաջ՞ մտաք, ընկերական առաքինութեանց գործանութեանը մէջ՞ կրթէ, մինչև այն հասակը՝ որ քու նեղքէդ ելլան : Իրենց համաըսարանական գաստիարակութիւնն սկսելու համար :

« Յուսա՛ առ Աստուած ազիլիկս, յարգէ բարոյականն ու առաքինութիւնը, որ մարդկային էութեան վիճակեալ ազնիս սեպհակամութիւններն են : Ի բաց վանէ՛ մտքէդ երկակայութեան ցնորքները, և ճշմարտութիւններն ստուխնէ որոշելու համար՝ ամեն իրաց Հեղինակին քեզ սուսած իմացակամութիւնն ի գործ ածէ : Վերջապէս՝ միշտ շարիք ընելէ խորշուրով ու բարիք գործելու առիթները փնտաելով կենաց մէջ՞ քայլէ՛ : այն ստեղծ ամենուն սիրելի, յարգելի ու մեծարելի կըլլաս » :

Ո՛հ, եթէ ամեն ամուսնացեալ կանայք այս խրատուց հետեւէին, որչափ յարգանք ու սիրով պիտի մեծարուէին :

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Հանձար եւ զեղեցկութիւն իբրեւ միջոց երգանկու-  
րեան երկուց ամուսնեաց

Ինչպէս որ լուսոյ նառազայթները ընացած  
բնութիւնը կը զարթուցանեն, նոյնպէս ալ միտքը  
մարդկային կերպարանքին կեանք և մասնաւոր նշա-  
նակութիւն մը կուտայ. սրտի և հոգւոյ գանձերը կը  
նանչնէ: Միտքը կը բարձրացնէ գեղեցկութեան  
արժէքը. և եթէ գեղեցկութիւն չըլլայ՝ անոր ան-  
շը կը բռնէ. գոյութեան վրայ աննաւեյի հրապոյր  
մը կը հեղու. ոչ թէ միայն հանոյքները կը կրկնա-  
պատկէ. այլ նաև կը զարգացնէ մեր ցաւերն ու  
կամօքէ:

Գեղեցկութիւնը վաղանցիկ ժաղիկ մ'է

Որ սրտումս մտ էլ իմ և սրտն նրա էլ լընայ.

Իսկ ընդհակառակը՝ միտքը

Անշը Թոնս էլ էլ տե-ի և տեր էլ մայրն է:

Ահաւաստի ասոր համար է որ կանայք միշտ ի-  
րենց միտքը մշակելու են. որպէս զի երջանիկ ըլլան  
և իրենց ամուսինն երջանիկ ընեն:

Ինչպիսի կին մը զինքը լուսուց երջանկութիւն կը  
պարգեւէ. որչափ ալ նուազ սիրուն և սքանչելի ըլ-  
լայ՝ իւր բուրբութիւնը կը ժողովուն և շնն կրնար զին-  
քը թողուլ. եթէ ազէա ալ ըլլայ. ամեն մարդ զա-  
նի գեղեցիկ կը գտնայ ու կը պաշտէ: Մշակեալ ինչը  
քով կին մը երբեք չծերանար և միշտ զինքը կը  
փնտռեն. Բանաստեղծ մը ըսած է՝

Եթէ՝ առ քեզ գտնան հանձար

Նառաքինի յատկութիւնք

Սէր, բարեկամք ու երախտիք  
 յաւելուն միշտ յազմութիւնքդ,  
 Եւ հախառակ քու հասակիդ,  
 Ասկարիդ կենսին, սիրեն քեզ,  
 Եսն և նման թէ ըլլայիր  
 գարուն տարիքդ, յոր ալ չեա :

Ո՛վ միտք, անսպասելի աղբիւր հաւեցից, ո՛վ  
 կրնայ շնանշնալ քու իշխանութիւնդ : Դու էիր, որ  
 եղովբասի և կըտրամասի անեւութիւնները ծածկեցիր,  
 գու էիր որ մարդկանց անենապեղին Գրաթէսի  
 բազկին կապեցիր զիմաստնահին իրարչի՝ գեղեցիկն  
 ի կանայս, գու էիր որ Ասրազիաի և Լախի ստիցը  
 կապեցիր Յունաստանի մեծամեծ մարդիկը, քանզի  
 միտքը գեղեցիկութեան հետ միանալով մարդկային  
 կատարելութիւնն է, և այս կատարելութիւնը սէր  
 և սքանչացում կը հրամայէ մարդոց :

Կը տեսնա՞ք, տիկնայք, միտքը հազուադիւր  
 բովանդ մ'է, զոր շատ կանուխ փնտաւել սկսելու է,  
 զայն ունեցող կանայք այխարհիս թագահիքն են :

ՄԻՏՔ, այս անհուն կարողութիւնը՝ զոր երկինք  
 Դազդիացի կանանց շտաբուն պարզեւած է, իրենց  
 հազորդակցութեան հրապուրանալը համար կը փըն-  
 աւեն զիրենք մարդիկ Մտաք, հրապուրանօք ու գե-  
 ղեցիկութեամբ նոցա վարած իշխանութեան վրայ  
 համազուեղու համար, բաւական է Դազդիոյ պատ-  
 մութեան թերթերը գարնել, Դրականութիւնն ա.  
 նանց գործերովը հարստացած է, և շատ անգամ գի-  
 տութեան հրատապ գազաթները մեր հայակաւոր  
 ժամանակակից տիկնանց քայլերուն տակ հարթուած  
 է : Այխարհիս անենաքաղաքակիրթ ազգերն Տիկին  
 ալ Սէփինեէի և իւր սիրուն ազգիկան ժառանգ զէմ'ի՛նչ  
 կրնան ջուցնել, Տիկին ալ Սթակիի և Ժօրթ Մանի  
 հանեարայն, որուն փառքը մեր նոր հրատարակու-



թեանց փայլը նսեմացուց . Տիկին է . ար ժէնաւատէ-  
նի . Թասթիւի , Տէպոսաւ-Վարձաի , Քօլէի , Սէկա-  
լասի եւն . եւն . գիւթիչ բանաստեղծութիւնները ,  
Տիկին անկարանթէսի պատմական ծրագրերը , Տիկին  
անլի փրկաստանութիւնները , վերջապէս նորակերու-  
թեան հանդէսներու և զբոսայց մէջ գեղեցիկ սե-  
ռին գրչէն ելած յոգուածները , որք հանճարով կը  
փայլին , կը յայտնեն թէ կանայք ալ գրականութեան  
պատկին մասնակցելու իրաւունք ունին , որով Գաղ-  
ղիա իրաւամբ կը պարծի :

Եթէ կանանց առիթը իբրև մ'ունենայինք իրենց  
մտաց վարչութեանը վրայօք , պիտի ըսէինք որ զգու-  
շման ամեն իմաստակութենէ և սեթեւեթեայ ճար-  
տարանքէ : Եթէ Մօլիէն իր հեղնութիւններովը Ռամ-  
պուէյի ապարանքը հարածեց . եթէ Լորա Պայրըն  
իւր պարտաները միգախառն Ալգիսի հեղինակուհի  
կանանց վրայ արնակեց , այն է թէ՛ երբ մարդ շատ  
հեռանայ բնականէն , ժաղրեցի կըլլայ . միտքը գը-  
րատուն մը զարգարուելու պէս չզարգարուիր : Ասա  
ու անդ՝ տաւել կամ՝ նուազ պատեհութեամբ՝ հան-  
ճարեղ կարծեցեալ պարբերութիւններ նետելու վը-  
րայ չէ խնդիրը , հաստատուն դաստիարակութիւն մը ,  
այսինքն օգտակար բաներ սովորիլ պէտք է . և ո՛չ  
թէ սնտաի ընթերցումներով ժամանակ կորսնցնել :  
Հաների ըլլալու և երկար ատեն հանդանալու մի-  
ջոյր միտքը հաստատուող դաշագփարներ ունենալն է :  
Երեւակայութիւնն իգական սեռին մտացը իշխող  
կարողութիւնն ըլլալով , նորասի անձանց վրայ անոր  
եռանդը չափաւորել և դատողութիւնին վարտել  
պէտք է . քանզի դատողութենէն կը բղթի ուղիղ  
իմացականութիւնը , և այս ալ այն շահն է որ կը լու-  
սուորէ բարձր այն շրջանը որուն մէջ կը շարժի ան-  
հասին նարտարանդութիւնը : Շանֆու ըսած է ՚Գե-

զեցկութենէն տեղի իւր հոգւոյն յատկութեանցն համար յարգուած կինն իւր սեռին մէջ՝ բարնբազոյն է : - Աւելի իւր գեղեցկութեանը քան թէ իւր մտայք համար յարգուած կինն իւր սեռին յատուկ է : - Բայց այն կինն, որ միայն իւր ծննդեանը կամ առտինանին համար կը յարգուի, իւր սեռին ալ ստարին է :

Գեղեցկամեծիւն : Այս բառին սիրտը կը բարատե և աչքերը ի սքանչացումն կը պատրաստուին : Քանզի արդարեւ գեղեցկութիւնն ամեն էակի վրայ իւր քաղցր իշխանութիւնը կը տարածէ . ամենազատաններն ալ կը յաղթէ . անտարբերները կը բորբոքէ . ամենախիստերը կը կակզացնէ, իւր նրինացը կենթարկէ թէ զիմաստունն և թէ արամաքն, զորու որն ու տկարը . Իսնաստեղծք գեղեցկութիւնը երկնքէն կիջեցունեն և զանի աստուածացուցած են, էակին ամենափայլուն բայց միանգամայն ամենէն անցաւոր հանգամանքն է : Գեղեցկութիւնն ամեն ատեն և ամեն ժողովրդոց մէջ յարգանաց և խնկարկութեան պաշտօն ընդունած է . քանզի գեղեցկութիւնը կը ծնի սէրը, և սէրը այլաբնիս ակերն է :

Գեղեցկութեան հրապոյրքը տեսած աստեն՝ իմաստունն իւր իմաստութիւնը, անտարբեր սիրան իւր պաղութիւնը կը մտնայ, ամենավայրագ էտկը կը մեղմանայ, ու ամենահպարաը կը խոնարհի : Ինչ եղաւ սուկային Արիլէս զՓոլիքսէն Արամանաոսի արփանցը վրայ տեսած աստեն . և մեծն կանթէ նինսն Լանգլոսի ծնգացը շփարեցաւ :

Աւրեմ՝ ֆիզիզական գեղեցկութիւնն ամենէն երեւելի հանգամանք մ'է . մանտանգ երիտասարդութեան համար, որ պաշտելի առարկայն կերկրլոր պագէ :

Իսկ գուք, կանայք, զորս բնութիւնը զրկած է

այգ յատկութենէն, միմիմարուեցէ՛ք : արուեստը մինչև մեկ կէտ մը այգ պակասութիւնը կրնայ գարմանել : Բացէ՛ք Առզու-ձուրիւն բեղչի-թիւն անուն գործը(1) . և այս թանկագին գործոյն մէջ պարզ ռայց արդիւնաւէտ միջոցներ պիտի գտնաք՝ ձեր մարմնոյն անշարհ գիծերը շակելու , զնեղ ձեւաւորելու , անկասարութիւններն աներեւոյթ ընելու և հաեոյական փոփոխութիւն մը գործելու համար . այնպիսի փոփոխութիւններ զորս ձեր հայելոյն մէջ տեսած տեսնեիք պիտի ժպտիք :



---

(1) Առաջարկանութիւն մարզկային զեղեցկարեան և Առաջարկանութիւն զիմաց երկու հասցեակր գործեր են , որ կը գտնուին բոլոր այն ազգու միջոցները , զորս արուեստն ու գիտութիւնը գտած են մարմնական զեղեցկութիւնը պահելու և զիմաց անկասարութիւնը ընկելու համար :

## ԳԼՈՒԽ ԺԵ.

Առաջնութեան մէջ Սեր . Հանոյր . Հանսկրարիւն

### Հ Ա Յ Ո Ւ Ը Մ Ա.

(Սեր

Առաջինութեան ներքնիւ աւրը . կրտ Տիկին Աթաւի . կազնուացնէ հոգին . կրնգարեակի միտքը . կը կասարեւագործէ բնասորութիւնը . կը պահպանէ այն խտտորութեանն և այն անկարգութիւններէն . որք կրնային վտանգել ու աշխարհի գորութիւնն ու առողջութիւնը . իւր կարողութիւնն իրրե բարեբար ազգեցութիւն մը և ս' իրրե աւերիչ հուր ի կիր առնու :

Սերն ամեն բանի շարժիչ գորութիւնն է . հոս' այն գողարիկ . պարկեշտ սիրոյն համար կը խոստիչ . զոր սիրաւը կը ներքնիչ . և խնայականութիւնը կը վարէ . այն հանգարաւ սերն ըսել կուզեմք . որ բարեկամութիւն ալ կրնայ կոչուիլ . և ոչ թէ զգայականութեանն ծնած այն կրակոս աւրը . որ տեղանքն յազենալուն պէս կանհետանայ :

Ճշմարիտ աւրը կապակցութեանց ամենամարտին ու ամենահաստատան է . իւր բոցը բնազգութեանը կը զտէ և զգացումը կրնգարեակի : Ճշմարտապէս գրտեալ սիրաւը զգայականութեանն շրջաթուրք . ինչք կասալնորդէ զանոնք և անոնց խտտումն առաջը կասնու : Միշտ երկչուս և այս պարկեշտ սերը' շնորհները չիւրիչէ և խտրանք չկարգելէն զաս . անոր արժանանալ միայն կը բազկայ : Լուսութեան և

գաղտնեաց մէջ ի կը պահուին իւր ամենաքաղցը եւ սանդղներն . առանց պարկեշտութիւնը խռովելու , ամենայն ինչ բաղձանաց կը նուիրէ . հեշտութեանց վայրկենին անգամ վայելչութիւնն ու համեստութիւնն իրմէ շնն զատուիր :

Երկիւզը կամ խիզէք երկու առաքինի ամուսնեաց երջանիկ զուարեութիւնը չկրնար խռովել . իրենց ներեալ հանդիմնէրը կը վայելենն և առանց կարմրելու կրնան առաքինութեան վրայ խօսիլ . վերջապէս թէ անն և թէ կնոջ համար զգաստութեամբ մաքրուած և ծննդականութեան յենեալ ամուսնական սէրը քաղցը և տեսչական երջանկութիւն մը կը հայթայթէ , ու կենաց զաւանութեանց զէմ կը նախապարտաւէ զմարդ :

## Հ Ա Յ Ո Ւ Ա Մ Բ .

### Հանոյք

Ինչ են հանոյք : Գէտք մը և բաղձանք մը զորս կը կատարէ մարդ . Արդ՝ որովհետեւ հազար պէտք ունիմք , երբ զանանք կարենաւք կատարել , հազար հանոյք կզգասք : Բայց մտանալու չէ երբէք սա երջմարտութիւնը , երբ հանոյք ուրիշին կամ նոյն իսկ անձերնուս փրատակար է . այն ատեն չիք այլ ևս : Հանոյքը մինչ ի յագուրդ վայելչելու չէ երբէք , քանզի յագուրդն անուարբերութիւն կը ծնի , և յետոյ ձանձրոյթ : Հանոյից և հետեւարար տենիանաց մէջ զգաստութիւնը միշտ երջանիկ ըլլալու ապահովագոյն միջոցն է : Գործածէ՛ , բայց մի՛ զեղծանք :

Փննթընէլ ոչ թէ միայն կը ներէք հանոյքը , այլ

նան հաճառակ Սասիկեանց և Սարգսնի վարդապետաց կը հրամայէր :

Հէզիկիաս կըսէր, « Արդար և բարի Աստուծոյ կամքն այն է, որ որդիք երկրի հասարակաց ոգտին հետ պատշաճեալ հանոյքները վայելեն :

Գրանական Պաննէ կը սովորեցնէ մեզ, թէ Աստուած մարդը երջանկութեան համար ստեղծեց :

Մեծն Սաղմուն միայն արտութիւն և խաւար կը տեսնար ամեն հան, որ հանոյք չկար :

« Մահկանացու՛ք, փութացէ՛ք զբանուլ, կը պառար Պարսիկ քանաստեղծը, վազը շատ ուշ է » :

Անահն Սափով սա կարծիքը կուտար երբտասարդաց

« Հոնցն իւրբու՛ղ զուրբոնցն՝ Ին իւրու՛ն » :

Զուարթն կայկուրոս, որուն փիլիսոփայութիւնը ստակաց չկարծածէն աւելի բարոյականութիւն կը պարունակէ, կուզէր որ մարդ մեռած ատեն խնջույքէ մը ելլելու պէս կնքէ իւր կեանքը :

Հանոյք ամեն հասակի և ամեն ժամանակի մէջ ալ կան : Հանոյք կենաց հրատապ շարժոցը վրայ ծաղիկներ կը սփռեն : Աշխարհի մէջ ամեն տեղ աստարներ, խորաններ և երկրպագուններ ունին : Եթէ հանոյք արանց համար այնչափ հրապոյր և իրենց վրայ այնչափ իշխանութիւն ունին, զանոնք ստեղծելու արուեստին միջամուխ ըլլալու և իրենց պայծառութեանը մէջ պահելու նման բնական բան չկայ : Ամուսնութիւնը քաղցր հանոյից արդիւնաւէտ արքիւր մ'է, և ասանց ամենածանր անպատեհութեանց անկարելի է անուցմէ զանց անել :

Հոս զգայական հանոյից վրայ չոքտի խաւիք գրինուար հանոյք՝ որ ամուսնեաց կամացը թուղեալ է, բայց յափտուր կերպով գործածել պարտին : Զանգի տակից կախուսն ունի իրենց առողջութիւնը :

աշխոյժն ու ազագայ ընտանեաց գեղեցիկ գաղութաւոր

Որչափ սրտարուցիւ ուրիշ հանոյք, որչափ բարոյական հեշտութիւնք և հրճուանք կը ծնին ամեն վաշիկեան տմուսնական յարկին մէջ, երբ միութիւնք կատարելապէս պատշաճ է : Դեռ ահաս կինը, որ մայր կը լլայ, որ իւր զուկին առաջին քաղերք կատախնարդէ, որ նորա առաջին գգուանքը կընդունի, որ նորա առաջին թոթովախոս քառերք կը լսէ, որ նորա ժպիտը կը տեսնայ, ո՛հ, ի՛նչ երջանկութիւն կը գայ նա, և ասկից մաքուր երջանկութիւն կը լլայ՝ արգետնք : Մայր մը իւր զակներէն չըղապատեալ, սրտմէ տմանք կուրծքին կը փարին, տմանք իր քաղկացը մէջ կը նեատին, գեղեցիկ մանկունք, որ իրենց աննեղ գգուանքն առատապէս կը շապեն, և ամենաքաղցր անուններով կը կոչեն, ո՛հ, միթէ այս կինը հազար անգամ երջանիկ չէ՞ : Եւ երբ հայրն՝ այս խանդակաթ տեսարանին տկանաւես, կը տեսնայ որ տղայք վայրկեան մը կը թողուն իրենց մայրը՝ իւր քաղկացը մէջ վաղելու համար և իւր գորովագութ կինը որ նորա երջանկութիւնը կը պսակէ քաղցր համբոյրով մը, ո՛հ միթէ այս մարդը հազար անգամ երջանիկ չէ՞ : Իւր ընտանիքը սնուցանելու համար բոլոր իւր նեղութիւններն ու յոգնութիւնները չե՛ն մտաշուիր միթէ :

Ով գո՛ւք, որ պտաւ աղջիկ մնացած էք, թէ հպարտութենէ և թէ նազանք, թէ ագիտութենէ և թէ կեղծ բարեպաշտութենէ գրգեալ, դուք որ ամուրի կենաց անլութիւնն տմուսնութեան արգատաւորութենէն նախամեծար համարելով ամենասուրբ պարաքերնից չհատուցիք, որչափ սղբալի էք Մայրութեան անպատում հանգչներն ու բերկչութիւնը շնանցաք երբէք, անոր քաղցրութեան յարգը չէք կրնար գնահատել, ընտանեաց մեր ազնիւ պաշտօնին սաար՝ չեք կրնար ո՛չ անոր հրճուանքն և

ս'չ ալ գիշտերն հասկնալ, Անկատար կանայք, ձեր սիրալ երաշտութենէ ջամբած է, սիրոյ ճառագայթը՝ որ կենդանացնելու էր զայն, խաղաւ մարած է խիստ ջառայի՛ էք . . .

Եւ գուք ինքնասէր և հոգարա արք, ոչինչ էակք, որ ամուսնութենէ փախաք, քանզի պարտքեր կը զնէ, քանզի ձեր դատարկապորտութեանը մէջ՛ ընտանեաց հօր աշխատատէր կեանքէն փախցաք, և գուք ամեն կարգի և ամեն միարանութեան ամուրիք, զորս փոխտոսպայք և որէնսգիրք իբրև ընտանեաց խաղաղութեան փտանգաւոր մարգիկ նշաւակած են, հարցուցէ՛ք երկրագործաց՛ թէ ի՞նչ կընեն ամուլ տունկերը, Ռացէ՛ք մարգկային ջեղի պատմութիւնը, պիտի տեսնաք հոն, որ հնութիւնը կը գարչէր ամուրի կեանքէն, և ի՞նչ ամսիթ, նախատինք և տուգանք կը գրուէր ամուրեաց վրայ, Վերջապէս գարնուցէ՛ք անգամ մը աչքերնիդ համայն բնութեան վրայ և տեսէ՛ք թէ բոլոր կենդանի էակք ծննդականութեան օրէնքին ենթարկեալ և հպատակեալ չե՛ն .

Ազեկ յիշեցէ՛ք զայս, երկու սեռի ամուրիք, այր և կին ամուսնութեանը կը կատարելագործուին փոխադարձաբար, կենաց մէջ առանձնակի չլիող այր և կին երկու անկատար էակներ են, որք առանց սերմանելու կանցնին երկրիս վրայէն և չպիտի քաղեն, Ամուսնացէ՛ք, այս է բնութեան հրամանն, ընկերութեան կամքն, Ամուսնացէ՛ք, շափահաւ կազմութեան նայնն է այս, ամուսնացէ՛ք և հանդիս պիտի քաղեք, որ ամուսնութեան քաղցր պտուղներն են .

Նորաոտի ամուսինք, սա խրատուց հեռեւեջէք, Իսկ այր՝ ձեր ընկերոջ՛ երջանկաւթեանն զքաղեցէք անդազար, մի՛ զանց տունէք այն ամեն միջոցներն որք կրնան զինքը երջանկացնել, ինչն ալ մտմանկից ըլլոյ ձեր հանդից, և կամ իրենիքէն զատ ուրիշ



հանոյք մի՛ ունենաք : Այն առեմն ամենայն ինչ էք  
ներ երախտագէտ կեանք համար , և իւր սիրտը նեղմէ  
զատ ուրիշի տեղ չպիտի ունենայ : Իսկ ալ , մանկա-  
մարդ կանայք , որ ներ ընարած աննը կը սիրէք , որ  
իրմով և իրեն համար կապրիք , զինքը բաշտովին և  
միայն նեղի սեփհակամեջու գազանիքն՝ ամուսնական  
յարկը սիրոյ առեարի մը փոխանակեցայեքն ու անոր  
քաննելի գիցուհին ըլլաքն է :

## Հ Ա Յ Ո Ւ Ա Մ Պ .

### Համակրութիւն

Երանի՛ , հաշտ երանի այն երկոց սուտեաց , որո քո  
խորոյ՝ հակադրութեամբ փոքոտ են :

Խօսք մ'ալ այս ընածին զգրութեան վրայ , որ  
համակրութիւն կը կոչուի :

Եւ ո՛չ մեկ փոխափայ մը չէ կրցած տակաւին հա-  
մակրութիւնը հնչգրիտ լուծման ենթարկելու : Սա միայն  
գիտեմք որ միայն առ միւսն նեղի զգրութիւնն է , ո՛չ  
թէ գեղեցկագոյնն , սիրելին , լուսագոյնն ըլլալուն  
համար : այլ՝ քանզի հանոյ կերեւնայ , և անծանօթ  
զգրութիւն մը առ այն կը մղէ զմեզ :

Համակրութիւնը թէ զգայականութենէ , թէ  
սրտէ և մարտ բոյսի , իւր արգիւնքը միշտ նայն են ,  
այն է՝ թէ մարդ կզգայ որ համակրական առարկա-  
յին կը նեղի : — Կան մարդիկ՝ որք միայն բարձրահա-  
սակ կիները կը սիրեն , մինչդեռ այլք փոքր կիները  
կը նախապատուեն , անանք՝ ինչպէս Արեւելցիք միայն  
գեր և մարմնեզ կիները կը յարգեն , անանք՝ ինչպէս  
Անգղիացիք միայն նեղար և բարակ կիները կուզեն :

Վերջապէս՝ կան մարդիկ, որք մարմնական պահապան-  
թեան մը, ազեղութեան մը կը սիրահարին : Ժան  
Ժազ Ռուտ խոժոռագէ՛մ կանանց միտումն ունենայը  
կը խոստովանէր . անուանին Տէքաթ բոլոր իր կե-  
նացը մէջ չի կանանց յոժարութիւն մ'ունէր : Այս  
երկու մեծ անձանց խօսքին նայելով համակրու-  
թիւնը ազայութեան ապաւորութենէ առաջ կուգար :

Նորանեւուրթիւնն ալ համակրութեան մէջ բա-  
ւական ազգեցութիւն ունեցած է : Ժամանակ եղաւ,  
յորում մեծ փոք կիները կը պաշտէին . քանի մը տա-  
րի ետքը նիհար փորերուն եկաւ կարգը : Ետտ Ժա-  
մանակ չկայ, որ Գաղղիացի տիկնայք կը խենթենա-  
յին գունաս, վախ, մելամաղձոս և գրեթէ մա-  
րած նայուածքով մարդոց համար : Ասոր փոխարէն՝  
մարդիկ ծխրեալ, հիւժեալ և մեկ սայր գերեզ-  
մանին մէջ կանանց համար սիրով կայրէին<sup>(1)</sup> :

Համակրական ամուսնութեան մէջ ինչ որ լատ-  
գայն, սիրելի, վե՛ժ բան կայ երկու էակաց միայ,  
ընկերական է, և այս ընկերականութենէ կը ծագին  
յարգանք ու երջանկութիւն : ապագային մէջ մի-  
րինակ զգացմամբ կերպաւորեալ այրն առ կինը միա-  
ցնող կապն աւելի սերտիւ կը հաստատուի, և երբ  
ամուսնեաց մին տկարանայ կամ թշուառանայ, իւր  
կենակցին նեցուկն, օգնութիւնն և մխիթարութիւն-  
ները կընդունի : Այս փոխադարձ օգնականութիւնը  
արեգական մեկ նաւագայթին նման է, որ ծերու-  
թիւնը կը տարջնէ այն աստն՝ յորում կեանքը կը  
պտոյժի ու կը սառի :

(1) Տե՛ս նորանեւուրթիւնը և զարգացման ի զանազան  
ուրրս երկրագնդի և մասնաորայեւ ի Գաղղիացիս անուն  
գարեմն մէջ այս նիւթին վրայ հետաքրքրաւոր մանրա-  
մասնութիւնները :

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Անտափն մը նաստատելու միջոցները

Կինը՝ նշմարեալն ըսելով, արարածոց գեղեցկագոյնն ու քաղցրագոյնն է, բայց նաև ամեն արարածոց մէջ կինն աւելի խնամք և աւելի մարտնչութիւն կը պահանջէ : Ժան ժագ Ռուսս ըսած է, « Աշխարհիս մէջ չկայ այնչափ զգուելի բան մը, որչափ անմաքուր կինն, և անկից հեռացող մարդիկ յանցանք չունին » : Ռուսփ՝ իր մարմինն ու զգեստը չհոգացող կինը կը պարտաւորէ զիւր ամուսինն աւելի յանկուցիչ առարկայ մը փնտռել : Այն ասեմէն աչքն առ կինն միացնող քաղցրութիւնը կոշիչանայ, և երջանկութիւնը կը փափփի :

Արգարե և կին մը ինքզինքն իւր ամուսնոյն սիրըցնելու և անփոփոխ կերպիւ զանի առ ինքն կապելու համար, բաւական չէ գեղեցիկ և բարի ըլլալ, պէտք է որ միշտ մաքուր և մտազիր գիւրջով մը, և պիտի յաւելցնե՞մ՝ քիչ մ'աչ նազելի տեսնուի անար : Քանզի մարմնոյ և զգեստուց մարտնչութիւնը, հանգերնից և զարգարանաց մէջ բարի նաչակն ու ասանց հեռ մեկտեղ քիչ մ'աչ պըրանք սիրոյ և բաղձանաց ամենաբուռն գրգռանքն, ամենահաստատուն չզիջանքերն մին են, որով կը կապուին արք : Եւ ամեն կին գիտէ զայս :

Եթէ հասարակութեան մէջ տեսնուելու համար կնոջ ըրած զարգարանաց խնամքը ասն մէջ աչ չը շարունակուին, եթէ կինը տխուր ցնցոտեաց մէջ ցուցնէ ինքզինքն իւր ամուսնոյն, որ իւր գեղոյն անհոգութիւնն և հանդամաչու անապրեբութիւնը կը

յայտնեն, երկու գժնգակ պարագայ կը հետեւին, նախ՝ ամուսինը կը հաստատայ թէ իւր կինը իրմէն աւելի ուրիշներուն հանդիմադու Գանազիր, և ուրիշներուն՝ քան թէ իրեն ուշագրութիւնը գրաւելու նախանձախնդիր է. երկրորդ՝ եթէ իւր յանախած ընկերութեանց մէջ ամուսինն անանկ կանանց պատահի, որոց գիրքը հանելի է և հրապուրիչ, բնականաբար պիտի զգայ այն բազմանքը, զոր իւր կինն զգալ կուտայ զինքը իւր զարգարանաց մէջ անանոց արանց: Այս երկու պարագայները խիստ շատ անգամ երկու ամուսնեաց մեկզմեկէ պապելնուն, անտարբերութեանն, ու քիչ մը ետքը իրենց անկարգութեանցը պատճառ կը լինան:

Արեւն կինն ինքզինքը իւր ամուսնոյն աչացը մարտը և զարգարուն ջուցներու և անհանոյ տպաւորութեանց առաջին ասնելու խիստ ուշագիր ըլլալու է. քանզի աչաց անհանոյ եղած բաները նանձրոյթ կազգեն, և ընդհակառակն՝ ինչ որ կը ժպտի կուրախացնէ իրենց սիրաւ և բազմանքը կը զարթուցանէ: Ահաւասիկ նիւթական յասկութիւնները, կին մը իւր ամուսնոյն կապելու բարոյական յասկութիւններն են զգատաւութիւնը, քաղցրութիւնն, անկեղծութիւնը, վստահութիւնն, աշխատասիրութիւնը, համարձակ և ուղղամիտ վարք մը, բանականութեամբ լուսաւորեալ հնազանդութիւն մը, գարսֆն, սիրունութիւնը, պարկեշտութիւնը, փափուկ քաղաքափարութիւնը, վերջապէս ամուսնական մտքը խնամքները, հազար ու մէկ զգուանք, որանց ամենագաման, վայրենի մարդն անգամ չկրնար գէժ կենալ:

Ասնն պարագայի մէջ կինը կին մնալու է, և երբէք ամուսնոյն իրաւանց նեւնամուխ ըլլալու չի: Արահան հաշակ զգացող կին մը երբէք ամուսնաւրու չիք:

Յոթարութիւնք . քմածին հանոյր և կանք արգիլեալ ըլլալու են . քանզի սոքա ամուսնեաց մէջ խել մը անհամաձայնութեան , յոսի գծուարութեանց և հակառակութեանց ազդիրքն են , և միշտ վերջնին մտացումն ու լքումն է :

Անպատեհութիւնք , աղշութիւնք , հետաքրքրութիւնն ու նախանկուսութիւնք վտանգաւոր թշնամիք են . այս պակասութեանց աէր կին մը ամուսնութեան մէջ երջանիկ չկրնար ըլլալ :

Եսանդուն նորասի կին մը փրպասանութեանց ընթերցումէն զգուշանալու է , որպէս զի միտքը զգայական գարնուածքներու մէջ չնգէ : Այսպիսի վերմախերմ ընթերցմամբ յուզեալ երեւակայութիւն մը իրերն իրենց բնական գոյնովը չտեսնար և ջնարից բաւզին մէջ անզագար կը մտլորին ու երեւակայական իրաց հետամուտ կըլլան : Այսպէս ապականեալ կինն եթէ՛ գիպուածով իր երազներուն իրականութիւնը տեսնայ հրապուրիչ երիտասարդի մը վրայ , անձնատուր կըլլայ , և սա՛ զանի խարեղէն ետքն իւր խզնին և յուսահատութեանը կը թողու :

Պարահանգէսք նենգութեանց և կորստեան կեդրոններ են . ընտանեաց մայր մը խիստ քիչ յանախելու է հոն , և այն ալ իւր ամուսնոյն ընկերակցութեամբը :

Զանազան թասրոններ պարահանգէսներէն վար շնն մեար . հոն ներկայացուած խաղերը գրեթէ միշտ անբարոյական են և կանանց միտքը կաղախանեն : Տեսարանին վրայ խարուած ամուսիններ , հրապուրիչ կիներ , բարուց և կրօնից կեղծասորներ , սիրուն սրիկայներ և ընտեսներու կը սովորին խնդալով :

Նորասի կին մը՝ որ առանց առաջնորդի և առանց փորձառութեան աշխարհի վտանգաւոր յորձանաց մէջ կը նգէ ինքզինքը , գեչ խորհրդոց , գեչ ու

բինակաց, անառակութեան, զրկանաց, մոլորութեան  
թերազրութեանց նշանակ կըլլայ և վերջնապէս՝ գրե-  
թէ միշտ կը յազդուի։ Ուստի՝ իրենց պարտուց հա-  
ւասարիմ մեալ ու զոչ կանայք պարտին գորովանաց  
մէջ հաստատուիլ, ամբանալ իրենց ամուսնոյն և զա-  
ւակացը ըով, ուր թշնամին չզօրէ յարեակիլ։

Կին մը գաղտնիք պահելու չէ իւր ամուսինէն,  
քանզի ամենափոքր գաղտնիք մը եթէ իմացուի, ան-  
վստահութիւն կը սրբանագրէ և կասկած կը ծնանի-  
ելք կասկածն սխի սրտին մէջ ծնունդ առնուլ, նա-  
խանձութիւնք, յարգազիր։ Մանաւոր գլխի մը մէջ  
պիտի տեսնանք՝ թէ այս գոնգակ կիրքը ի՞նչ անպա-  
տեհութեանց կը ասնի։

Վերջնապէս՝ սէրը, բարեկամութիւնը, յարգան-  
քն ու ինամք և կնոջ մը առ իւր ամուսինն ցուցած  
անկամութիւնները տակաւ առ տակաւ ամուսինն իւր  
ընտանեացը կը կապէ. և հան դատած հանգրք նախա-  
մեծար կը ցուցնեն նմա քան աշխարհի մէջ տեսած-  
ները։

Ամուսնական երջանկութեան անոգութիւնը մե-  
ծաւ մասամբ՝ կնոջ մը բարբէն, վարբէն և բարի ըն-  
թացքէն կախումն ունի։ Առաքինի սիրով, բարե-  
կամութեամբ, հաստատուն հաստատարութեամբ,  
չարունակ խանդաղատանօք, փոխադ արն յարգանօք  
և երախտագիտութեամբ է որ ամուսինք ամբողջ կե-  
նաց մէջ միացեալ և երջանիկ կը մնան։

## ԳԼՈՒԽ ԺԷ

Կրնն իրնն սրտակցելու եւ անկից սիրտակցու կերպը .

Մարգիկ , որք կուզէք երջանիկ ապրիլ ձեր կընտիր հետ , մի՛ մտնար որ ամուսնութիւնը բարւոյ եւ շարի ծառն է , եթէ ազեկ մշակուի , բազայ պրտաւորներ կուտայ , իսկ եթէ զանց ըլլուի կամ գեւ մշակուի , գառն պատուներ կարձակէ եւ կամ անպրտուղ կը մնայ :

Ուրեմն՝ համազագ վարժութիւն ըրէք եւ շնորհէ՛ք ձեր կնոջ բնասորութիւնն ու միտումներն ազեկ հասկնալու . իրաւ՝ դժուար ուսում մ'է , ես ալ կը հասանիմ . բայց ուշագրութիւն եւ հաստատամտութիւն պէտք է :

Մշակեցէ՛ք իւր համակրութիւնները , ընդարձակեցէ՛ք իր զգացմունքը , եւ իւր ճաշակը ձերինին եւ կամ ձերը իրենին ներգաշնակել նայեցէ՛ք :

Ինձա՛յ , ակնածութիւն եւ բայր այն շնորհալից փառաշունչն ունեցէ՛ք , զորս իւր իգական կազմութիւնը կը պահանջէ :

Պատկ որեր կան , յորում կրնն առանց պատճառք գիտնալու անձնակամ , վէս , տհա՛ն , ջատկոտ կըլլայ . ոչինչ բան մը իւր զգայնութիւնը կը յուզէ , պզտիկ բանի մը համար կը սրգոցի , կը բարկանայ . խեղացի մարդը կը յարգէ նորա անձնակամ յոժարութիւնները եւ այսպիսով տակաւ առ տակաւ իւր կնոջ սիրան առ ինչն կը հաստատէ :

Եստ մի՛ պահանջէ՛ք ձեր կնոջմէն եւ պահանջելէ առաջ իրնն պատշաճական խնդիրքը կատարել սովորեցէ՛ք :

Ներողամիտ եղի՛ք իրենց մանր՝ պակասութեան-  
քը . քանզի ներ անձնական անկատարելութիւններն  
ալ այս ներողամտութիւնն որէնք կը գնեն նեղ . իւր  
կնով պակասութիւնները բարեկարգել ու զոյգ ամու-  
սինք նախ իրենները կանոնադրելով սկսելու է .  
թող ինքն որինակ տայ . ի հարկէ իրեն ալ կը հետե-  
ւին :

Ձեր կնովք հետ պարկեշտ եղի՛ք . հպարտութեամբ  
և անձնապատանութեամբ կորածուցածներնիդ  
պարկեշտութիւնը կը վասակցնէ նեղի անօր սրտին  
մէջ :

Ձեր հարաարտմտութեան բարձրագոյն ըլլալը  
երեսին մի՛ տար երբէք . եթէ ազգարարութիւն  
մ'ընել ուզէ՝ թէպէտև շնչին և ուշին աբժէք ալ ու-  
նենան՝ հանութեամբ և մարդասիրութեամբ մտիկ  
ըլէ՛ք . Ամենաթեթև անարգանք մը իխոր կը խոցէ  
կինը , և ի խոր խոցեալ կին մը միշտ վրէժ լուծել  
կը նայի :

Մեկզի թողէ՛ք թշնամական բառերը , որք կը  
նուտատացնեն արժանապատութիւնը ու պարկեշ-  
տութիւնը կամօյնեն . մեկզի՛ այն կակժեցուցիչ կը-  
ծու , ծանր խօսքերը , որք անձնասիրութիւնը կը  
փրատորեն . քանզի այս կողմէն փրատորեալ կին մը  
երբէք շներէք , և իր սեռին յատուկ կերպովը վրէժ  
կը լուծէ :

Կնով գգուանքն ընդունելու մասին անտարբեր  
մի՛ ըլլաք , և աւելի գորովայիր ու սիրայիր կերպով  
հատուցէ՛ք :

Միայն պարզ և բնական հանույից սովորեցուցէ՛ք  
ներ կինը . քանզի հանույք ալ աննդեան պէտ է , ու  
աննապարզերը աննոր են որոցմէ նուազ կը տալտկա-  
նայ մարդ . մի՛ մտածաք նաև որ հանույք գիւրեղձ  
ծաղիկ մ'է , զոր փափկութեամբ քաղել պէտք է ,



չափացիչ անուշահոտութիւն մը , որ տանն տանն հոտատելու է , և այն աչ շատ թեթեւ կերպով , քանզի մոլեգնութիւնը կը մաշէ զգայնութիւնն և անտարբերութեան կը տանի :

Երբէ՛ք ամառգի , երբէ՛ք բարկասիրտ , անախորժ , անտարբեր , կուշտոզ մի՛ ըլլաք . և երբէ՛ք , իսպառ նախանձառ : Եւ եթէ գծբազգարար կասկած մը սահի ձեր սիրտը , յիշեցէ՛ք որ նախանձն աւելի կոչը է քան զսէր . աւելի խառար քան զաղջամուզին . աւելի ուղտախի քան զխոյն :

Եթէ հիմնական վախ մ'աչ ունենաք , զգուշութիւն քանեցուցէ՛ք . բայց նաև առանց շատ հեռուն մղելու , փախէ՛ք այն առիթներէն որ ձեր կնոյ առաքինութիւնը կրնան յուզել , մանաւանդ խնաստութեամբ վարուեցէ՛ք . և ձեր այս ընթացքին մէջ զգուշացէ՛ք ծաղրելի ըլլալէ :

Անոր առջև յարանջելէ կամ ձանձրութեան նշան մը ցուցնելէ զգուշացէ՛ք :

Անգործութիւնն է մայր ամենայն մուրութեանց , ուրեմն նայեցէ՛ք որ ձեր կրնն անգործ չլինայ . անգործութեան գէժ ամենամեծ գեղջը նորա միտքը միշտ գեղ ի սիրած գրազմանց վարելն է :

Եթէ կը սիրէք ձեր կինը և վայելել կուզէք իւր սէրը , նորա գեղեցկութեան փայլովը հասարակութեան մէջ տանելու ահիտհեմութիւնը մի՛ գործէք . քանզի անշուշտ ուրիշները պիտի ցանկան նմա :

Տան մէջ յիմարարաց կամ միամտարար ամուրի բարեկամներ մի՛ մայնէք , որոց շրթանցը վրայ ուղղաարատութիւնը կը փայլի . բայց սրտերնուն մէջ վատթար տենչանք կը ծածկուի :

Խառն հեռու պահեցէ՛ք ձեր կինը տարիքն առած կանանց ընկերութենէն , որք ալ ևս ինկարկուններ չգանելով իրենց , կեղծ բարեպաշտութեան

հուսան ինքզինքնին, և գրացինեքը բամբասելով  
կանչենն իրենց անգարժ օրերը: Ընտանեկան խաղա-  
զութեան համար այս տեսակ կանանց ընկերութե-  
նէն վտանգաւոր բան չկայ: Լեզունին թունասօր,  
և բերաննուն թոյն կը վազէ, որ անպատեւաւ կը մա-  
հացնէ:

Եթէ ներ կնոջ զգաստ ըլլալը կը սիրէք, գուց  
ալ ներ խօսուածքին և վարմանը մէջ զգաստ ե-  
ղիք:

Եթէ չէք ուզէք որ ներ գրացին ներ խաղազու-  
թիւնը խռովէ, գուց ալ մ'երթնա՛ք հան անկարգու-  
թեան սերմանելու:

Վերջնապէս՝ այն օրերը, յորում թեթեւ մըրիկ մը  
կը պայթի ամուսնական կենաց մէջ, ո՛վ ամուսինք,  
այնպէս վարուեցէ՛ք որ ներ կինը իւր ցաւերը սաար  
սրտի մը մէջ թափելու պէտքը չզգայ: Եթէ բարե-  
կամուհի մ'է այս պատմութիւնը ըսողը, սա ինքն իւր  
խրատներովը պիտի թունասօրէ. եթէ այլ մ'է իւր  
մտերիմ կարծածը, վասա՛հ եղիք, որ իւր տարփա-  
ծուն պիտի ըլլայ՝ եթէ չէ արգէն:

Յիշեցէք սա հին առածը

Կենաց մէջ մտերիմ մը

Է երբեմն կարևոր,

Փայթ և ինամբ բարեկամի մը

Կրնան ըլլալ շահասօր:

Իսկ մեծ վտանգ կուպանայ

Եթէ չէ հաւասարիմ:

Քանզի իր շահն կը հոգայ

Մեր կարծեցեալ մտերիմն:

Եթէ կնոջ մը սիրան ու հոգին անտատա մեան  
այս ամեն միջոցներուն, չիք պղևս յայս նեղի համար  
մարդիկ. առա՛ջ, ժայռի մը վրայ սերմանեցիք. ա-  
ռէ՛ք ներ գաւտղանն ու զլխարկը, փախէ՛ք ամուս-

Նախան յարկէն, զիսն զի ապահանեալ կին մ'ունիք,  
որ միայն աշխարհային հաճոյք, մարգոց յարգանքն  
ու երկրպագութիւնը կը փնտաէ, և զուք պլլոց հա-  
մար կը սնուցանէք զայն: Առանց ժամանակ անցնե-  
լու թողէ՛ք այս կինը, մանաւանդ առանց ազմուկ  
հանելու հեռացէ՛ք, և համբերութեամբ ապահար-  
զանք որինոց հաստատուելուն սպասեցէ՛ք, այնչափ  
աննկանդ սպասուած Մեծիային, զոր անուշա ի-  
մաստուն բարեփոխութիւնք պիտի բերեն մեր մէջ:



### ՊԼՈՒԽ ՓԸ:

#### Երգմնազանցութիւն

Մինչդեռ անմեղ որ խոտանան ու զզամանութեանը,  
 հրապարակային խոսքի մը նշմարաութեանը կը հաւատան  
 և կրօնական հաւատարմութիւն մը կը պահեն,  
 երգմնազանցութիւնը երգման գրծումն և երգուեալ  
 խոտանան զատ մտացումն է: Երգմնազանցութիւնը  
 բարոյապէս մահացու սեխը մ'է. բայց սակայն որ-  
 չափ մարդիկ կան, որք իրենց խաղ մ'ըբամ են զայն:

Տեսակ մը երգմնազանցութիւն կայ, որ յաճախ  
 կը պատահի մեր ընկերութեան մէջ: Երգմնազանցու-  
 թիւն մը, որ ժիծաղերեւ, բարձրագլուխ կը չըլի և  
 զոր կարծեա մարդ հոգ չընէր, անուսնական խոտ-  
 ման երգմնազանցութիւնն ըսել կուզեմ: Ահա սակ  
 այս այսպաննչի և եպերեչի նենգութեան ներ, զոր  
 շատ երիտասարդք կը գործածեն իւր սեռին տկա-  
 րութեանն արդէն կէս մը յաղթուած խեղճ աղջկան  
 մը առաքինութիւնը յաղթելու համար:

« Հրեշտակդ իմ, կը սիրեմ գրեզ կենացս պէս,  
 « աչացս պէս: Բու սէրդ այն հեշտայիր ազագայն է որ  
 « կը ժպտի ինձ, իմ միակ յոյս է: Կեանքս հեռի բնէ  
 « ցուրտ և ստամ պիտի ըլլար: Բու աչքերդ այն մու-  
 « զական հայելին է, որուն մէջ կը ջուրն ինձ խոտ-  
 « տացած հրնուանքդ. քու քաղցր հայեացքդ արեւ-  
 « զական մառադալիմն է, որ զիս կը տաքցնէ. քու  
 « նայնդ երկնային ներդաշնակութիւնն է, որ զիս կը  
 « յափշտակէ և կը չլացնէ: Ո՛հ, գրեզ անանալ, բեզի  
 « հետ խոսիլ, գրեզ իմ քսիս զգալ, գրեզ միշտ սի-  
 « բել իմ միակ բաղձանքս, իմ բուռն սիրտարս է:

« Հանգարտեց՛ւր զիս սոչորոզ ջերմը . հե՛ղ , թափե՛  
« սրտիս մէջ քու սիրոյդ անուշահոտութիւնը , շնոր-  
« հէ՛ նմա , որ երկնից առջև քու ամուսինդ ըլլալ կերդ-  
« նու . շնորհէ՛ ինն ժպիտ մը , համբոյս մը : Պաշտելիդ  
« իմ , համբոյս մը և եթէ , և կամ կը մեռնիմ քու ու-  
« տիցդ ստակ » :

Եւ կի՛նն այս վտանգաւոր խօսուածքին վառահե-  
լով , եռանդուն նայուածքներէն զիւ թեալ , կը խոս-  
փի և անմնասուր կըլլայ մոլորեցնուցիլն . . . Եւ սա՛  
իւր վայրագ արտոժանքն յագեցնելէն վերջը , ամեն  
տեղ կը հծծէ իւր զոհին անունը : Թշուա՛ւը . այսչափ  
վատարար խաբել անմեղութիւնն ու վառահոթիւնը  
և յետոյ պարծենալ համարմակիլ : Միթէ՛ երբեք  
ըսուած քան է , որ գող մը իւր գողութեանը , մար-  
դապան մը իւր սպանութեանը վրայ պարծի : Այս  
այդաննի խաբէութիւնը թագուցանելու համար ,  
ինչ որ ալ ընեն , ինչ որ ալ ըսեն , ամեն բարոյականի  
տէր մարդիկ աղեկ ստուգած են , թէ անմեղութիւ-  
նն երգման միջոցաւ խաբելը սև նենգութիւն մը ,  
գժպհի վատութիւն մը , անպատուութիւն մ'է , որ  
այս եղեանագործաց համբան ազարտելու էր :

Գրանենդ մը , գրամանենդ մը թխարանի կը գա-  
տապարտուի . իսկ ամուսնութեան ինդրոյն մէջ  
խօսամենանենդ մը՝ մանաւանդ երբ զոհը պատու մը  
մը կը կրէ իւր արդանդը ազատ կը թողումը , այս-  
պիսի նենգաւոր մը , որ առանց ամէնաչու և առանց  
խայտառակուելու չրջի աչխարհի մէջ . և աակից ալ  
գէշը կրնէք , ընկերութեան անբացատրելի մեկ մո-  
լորութեամբը՝ նախապաշարման ստակալի մեկ յօժա-  
րութեամբն՝ այս ամսթն ու նախատինքը զոհելոյն  
վրայ կիյնայ :

Այս տեսակ գողութիւն մը անպատիժ թողլով ,  
ուրեմն կընդունիք թէ ստակ գողնալը՝ պատիւ և

ամբողջ ընտանիքի մը խաղաղութիւնը գոչնայէն նուազ պատժուպարա է . և այս կարեւոր խնդիրը կերպարանափոխելու համար սա սովորական խօսքերով կը պատասխանէք : « Օրիորդն ազատ էր իւր ան-  
՝ ՝ ՝ քին , ինչո՞ւ խարուեցաւ . իրեն գէշ , յանցանքն ի-  
՝ ՝ ՝ րենն է , ո՞վ բանազատեց զինքն , ինքն ուզած է » :  
Եւ կարծէք թէ այս պատասխանով ըստ արժանւոյն պատժեցի՞ք երգմնազանցութիւնը , կարծէք թէ միտ-  
թարեցի՞ք ընտանիք մը , և ծնած անհարազատին անձն մը սուիք : Կը ներէք բազդատութեանս , բոլորովին կը նմանի՞ իրրև թէ յափշտակեալ մեկը կառափա-  
րութեան բողոքելու երթար , և զատարկէն սա պատասխանն ընդունէր , « Ինչո՞ւ համար թողուցիք որ գոչնան » : Բայց գիտէ՞ք որ այս պարագայիս մէջ բոլորովին սարքեր է . որէնքն յանցանքին համեմա-  
տութեամբ պատիժ կը սահմանէ գոչին . իսկ ընդ-  
հակառակը միւսին համար ամենաթեթեւ պատիժ մ՞ալ չկայ(1) : Օրինաց այս լուսութիւնն ո՞չ թէ միայն անբարոյսկանութիւնը կը խրախուսէ , այլ նաև կը հա-  
ւասացնէ որ պղնձի կտոր մը որիորդէ մը աւելի ար-  
ժէք ունի : Սակայն ընտանեաց մէջ այսպէս շնն մը-  
տածէր . խարուած խեղճ աղջկան մը հայրը բոլոր իւր ստակը , բոլոր իւր ոսկին կուտայ , որ իւր աղջ-  
կան կորսնցուցածն ետ գարձենն , իրրև թէ կարեցի ըլլար հատուցանել Անգղիացիք անաչառ և խիստ են  
այսպիսի գործոց մէջ . ասոր համար երգմնազանցու-  
թիւնն ալ հազուադիւս է անսոց մէջ :

Ազնկ գիտէ՞ք՝ Օրէնագիրք , որ որիորդը սիրած

---

(1) Այս անդ նեղմակը գլխովին Գաղղիական որէնքը կը պատկերացնէ . իսկ այս մասին Սահմանան բարեխնամ կառաւարութեան պատժական որէնքները գրեթէ բոլորովին կը սարքերին . յանցի այս անսակ յանցանքներու ծանրութեանն համեմատ պատիժ կը սքանազրեն :

տաննին երբէք չեն հաշուեր, և իրենց առաջին յանցանքը մուշտեան մը հետեւանքը չէ երբէք: Ամուսնութեան խարէական խոստումներով, սիրոյ սուտ երգումներով շատ գիւրաւ կը խտրուին: Կը հաստատան այն մարդուն ուզգամտութեանը, որ շատ անգամ չէ այլ ինչ, եթէ ոչ թշուառ կեղծաւոր մը: Թեպէտև կին մը վստահ ալ ըլլայ որ եթէ զինքը չբանջու ըլլան ինչ թշուառութիւններ՝ պիտի գան գլուխը, այնչափ է իւր սիրոյն ազնուութիւնը, որ ամեն վստահ աչքը կտանէ, քան թէ իւր սիրահարին պահանջած սիրոյ փորձը մերժէ: Կինը սիրոյ և ակար սեան է, պէտք է որ որէնք մտնուար պաշապանութիւն մ'ունենայ անոնց նկատմամբ: Այրը գորաւոր և յարձակող սեան ըլլալով, որէնքը բոլոր իր խտուրթիւնները բանեցնելու էր անոր գէժ: Մեկ մը որ պատժական որէնքն հաստատուի երգմնազանցութեան համար, մարդիկ առանց անպատիժ մնալու չկարենալով խտրել, իրենց սիրոյն և սուտ երգմանց զոհեալ խեղճ աչքիկանց թիւն երթալով պիտի պակսէր, և բարբ մեծ շահ պիտի ընէին:

Աւզգամիս սրտից համար բացասելիներ թէ կրօնական, ազգային ու առևտրական, ինչպէ՞ս նաև ամուսնական ինքրոյն մէջ երգմնազանցութիւնն սերբ մը, այսպնանչի բիժ մ'է: այս կեզտ անուամբ ազարտեալ անձ մը թէ ինչոք մը առաջարկելու և թէ բողոքներ մը յայտնելու համար ձայնը բարձրացուցած տանն՝ սրտերը գոց գանելու էր: Երգմնազանց վանաական մը, որ առևտրական գործ մը սկսել, կամ գումար մը փոխառութիւն ընել ուզէ, զինքը ճանչցողներէն կը մերժուի: Պետական անձ մը որ երգում մը գրծած է, կառավարութեան վստահութիւնը կը կորսնցնէ, զոր կառավարութիւնը մեկգի կը թողու կամ զոր անվստահութեամբ ու միայն ստիպողական

անխիճներու մէջ կը գործածէ : Միթէ ամուսնական գործերու մէջ ալ ասանկ ըլլալու չէ՞ր : Մոյն սրինակ երգմնազանցները , ինչ ալ ըլլար խնդիրնին , միթէ մերժուելու չէ՞ին ամենէն սա խօսքերով . : Այն որ ծանր գործի մը համար կը ստէ իւր երգումը , կրնայ նաև փոքր գործի մը մէջ նենգել . խօսքով կամ գրաւոր կերպով քեզի փոխ տրուածը կերպնուս հա . առցանել . բայց միթէ շերգուքնցա՞ր և աւելի ծանր կերպով շերգուա՞ր՝ խնդիրը զո՞նք խաբելու վրայ եղած ասանկը : Միջ կրնայ վստահեցնել զիս , որ այս պարագային մէջ ալ նոյնը չպիտի ըլլայ : Գնա՛ , կորսուէ՛ . այն որ կը խոստանայ կատարելու է . իսկ զու ծագրեցիր քու խոստումնքդ . համեստ և պատուաւոր մարդը գերի է իւր խոստումնք , իսկ զու գրք . Ժեջիր քուկդ » : Վստահ եղի՛ք . եթէ այս փիլիսոփայութիւնը մեր ընկերութեան մէջ յարգուէր , պիտի տեսնայինք որ երգմնազանցից թիւը կը պակսեր :

Սրբորդք , փախէ՛ք , խոյս առէ՛ք երգմնազանց մարդէն . ո՛չ կրնաք ունի և ո՛չ պատիւ : Իւր հօգին վատութեան և մասնութեան զազիր խառնուրդ մ'է , իւր նեխեալ շորնուցովը կը պղծէ զհօգին , զպած տեղը կապականէ : Դարնուցէ՛ք աչքերնիդ իւր կեղծաւոր գիմակէն , իւր քաղցրական արասանութեանէն զգուշացէ՛ք . իւր մեղքած որ բերանը դասն ժանգ մը , մահարեթ թոյն մը կը պահէ : Վախցէ՛ք իրեն մերձենալէ , ծագկանց ներքև կը լարէ իր որոգայթը . հեռացէ՛ք , խորշեցէ՛ք . քանզի իւր պատեռուած շարեացը վրայ կուրախանայ , անմեղութեան թափած արտասուքը կը խմէ ու կը գիմովնայ : Հրէ՛ջը . . . իւր զոհեալներէն միոյն համար հնչած զանգակի տըխուր գանգիւնին աչքը ցամաք և սիրան անդրդուելի անկարելից կը մնայ :

Աւա՛ղ , իւր շնորհալից խօսուածքին վստահելով ,





## ԳԼՈՒԽ ԺԲ.

### Նախանձ

Ահա մը կայ որ մարդկային կազմութեան մեծ աւեր կը հասցնէ . տեսակ մը խելագարութիւն , որ ուղեղին մէջ կը մտնայ , արիւնը կը կատաղեցնէ , կը կեանու , և եռացնելով զայն կը թափէ սրտին մէջ , որ կը ցամքի ու կը մաշի . այս արտք նախանձաութիւն կամ նախանձն է :

Նախանձութիւնը կրից ամենէն կատաղին է . ա. մեն անկարգութեանց , խելագարութեան և սպանութեան կը մղէ զմահկանացուն : Նախանձն է որ այնչափ երկար տանն լեզուաբ հրուանդանը արեամբ ներկեց . որ գաշտնի հարուածներու զոհեց Բերսէն . Բիրբիւսն ու Հէրմիոնը , Սրամանն ու Զաիրն . որ Մէթէային ներշնչեց իւր որդւոց սպանութիւնը , որ կապրէիլ աջ Վերթիի սոսկալի խնդրքը պատրաստեց : Նախանձն է՝ որ խել մը պատմական անձանց նեարջ տուաւ երկաթն ու թոյնը . և մեր սրերն ալ նախանձութեան գործած վայրենի սերներն այնչափ շատ են տաք երկիրներու մէջ , ցորչափ այս կիրքը աւելի եռանդաւ կազմութեանց վրայ կազդէ : Ահա հաս է Վրդգիլիոսի հետ ըսելու առիթը :

Ո՛վ անգութ սէր , ի՞նչ սերներ

Զես գործել տար , ու ներշնչէր :

Նախանձութիւն է , որ կնոջ անհաւատարմութիւնը զտգելու համար մեքենական միջոցներ հնարել տուաւ երբեմն : Այս միջոցները խիստ շատ տարուան բան են , և այն որ նորէն գործածել ուզէր ազուցիկ

փականէն ու կուսական գօտին, հանրութեան ծա-  
ղուն քիչ մը քիչ առարկայ չէր ըլլար : Այսօր իւրա-  
քանչիւր ամուսին իւր մասնաւոր միջոցն ունի, որ  
նշմարեան ըսելով անհաւատարմութիւնը չկրնար ար-  
գիլել : Բայց որ իւր կասկածանաց առաւել կամ նը-  
ուազ ստուգութիւն կուտան : Մեղադարտ կանայք  
աւելի զգուշանալու էին, զոր սովորաբար չեն ընէր :  
քանզի խել մը ամուսինք այսպէսով կիմանան այն  
գաղանիքը, որ իտպառ կարէ ամուսնական ներդաշ-  
նակութիւնը :

Երբէք տարակուսելու չէ, նախանձութիւնը մեր  
նիւթական կազմութեան մեկ ընազգումն է. քան-  
զի անասնոց վրայ ալ կը գտնուի. և այս ընազգումն  
ըստ կիլիմայից և ըստ բարուց՝ կանի կամ կը նուազի-  
այնպէս՝ որ այլ և այլ ժողովրդոց նախանձութեան առ-  
տիճանաւ, երկրիս լայնութեան աստիճանները կը բ-  
նայ չափուիլ : Ըսել կուզեմք թէ այս կիրքը աւելի  
զօրաւոր է Աֆրիկէի և Ասիոյ մէջ, քան թէ Եւրո-  
պիոյ, Սպանիոյ և Իտալիոյ մէջ՝ քան թէ Դաղզիոյ, ա-  
ւելի բուսն է Դաղզիոյ մէջ, քան Գերմանիոյ, և կար-  
ծեա թէ կոչնշանայ բուեռային գօտիներու սասուց-  
եալ երկնքին տակ :

Երկու տեսից մէջ նախանձութիւնը միեւնոյն յառ-  
կութիւնները չունի : — Այն աւելի նիւթական է  
իւր սիրոյն մէջ, որուն նպատակը միշտ զգոյսական  
հանդէսն է : Իսկ կնոջ սէրն շատ աւելի փափուկ է :  
Կինը միշտ կը հօգարտանայ, անանելով որ ուրիշ կա-  
նայք իւր ամուսնոյն բարի յատկութեանցը կարանչա-  
նան : Ընդհակառակը՝ այրն աւելի ինքնասէր՝ բովան-  
գակ ստացումն կը պահանջէ՝ կը կատարի՝ երբ կը  
տեսնայ թէ ուրիշները շատ ուշադրութիւն կընեն  
իւր կնոջը : Իւր նախանձութիւնն աւելի ամարգի և  
աւելի ստեղծական ըլլալով կը մզէ զինքը հաւատալ

գիւրաւ՝ թէ իւր կիներ գործնական անհաւատարմութեամբ յանցաւոր է :

Կի՛նն իւր ամուսնայն վաղանցիկ անհաւատարմութիւններէն աւելի նորա սիրաբար կորսնցնելէն կը վախնայ . իսկ երբ իւր բուռն սէրը պազուիթեամբ և արհամարհանօք հասուցուի միշտ , այն ատեն անսանձելի նախանձու ուժգնութեան կիշնայ : Առած մը կըսէ . եթէ նախանձուս աչքը ստակալի վազր մ'է , նախանձուս կի՛նն աչ կատաղի մասակ վազր մ'է :

Երբ անգամ մը նախանձութիւնն անհաստի մը արեան մէջ՛ սպրօցի . երբ սիրան ու հոգին թունաւորուի այս արտախ . իրեն համար այլ ևս չիք ընտանեկան ուրախութիւն , աւուղ , չիք այլ ևս հանգիստ իւր կենացը մէջ : Իւր օրերը նսեմ , ծանրատապալուկ կանցնին . իւր գիշերները յուզեալ և անքուն են , և կամ ստակալի երազներ պայցն առջև կը բերեն իւր վախշած ու կասկածամ իրերը : Աչքերը խորը կի՛ննան , ու ազոս հայեացք կը պահեն , բերանը կամփոփուի , ճակատը կը կնճախ . եթէ երբեմն փոքր ժպիտ մ'աչ աեանուի իւր չրթ անցը վրայ , յուսահատութեան կամ կեղծաւորութեան ժպիտ մ'է : Դաժան ու անախորժ , անհամբեր ցասկոս , անտանելի աչքոց , ու բեռ մ'է ինքզինքին , կամ կը գիտան իր վրայ կամ կը ծաղրեն :

Նախանձուս մը քանի մը վայրկեան ամուսնական յարկէն հեռանալէն յետոյ՝ գաղապարօղի կը մտնայ , գոցի մը պէս պատերուն ետեւէն կը սպրօցի . գրան մը ետին կը կծկոտի , և հոն ամբողջ ժամեր կասկածոս ուշագրութեամբ ուղբն մատուրներուն վրայ կենցած , վիզը երկնցուցած , սկանդը կզպանքի մը բամամ , անյունչ , անչարժ , երակայն անխորհուրդ բարտիւնը կեցնել ուղեբով աննկանօք կսպտակ , մտիկ կընէ և գուշակել կուզէ . . :

Ճախտակամամին ճարճատիւնը , ակտուի մը գը-

զրոգիւնք : չընդգետտի մը շշունջը , օգին մէջ թըռ-  
չըտող անն մը կը ցնցեն և կը քտտնենցեն զինքը . . .  
Կծու սարսուռ մը իւր բոլոր անգամոցը կը տիրե-  
տիրող երբեմն իրբն ահագին ծամբութեան մը ներ-  
քեւ կը ննչի . և երբեմն այնչափ կընդարձակի , իր-  
բեւ թէ պայթէր . գոցցես երկաթեայ նեռք մը իւր  
լանկոցը մէջ խտանելով անոր կապերը խզել կուզէ :  
Ո՛հ , զժոխապարս օգիներէն աւելի կը տանջուի . . .  
Այսպիսի շարչարանքներ հրամայող գատուորի մը  
բարբաբոս անունը պիտի արուէր , այնպէս չէ՛ : բայց  
նախանձուար կամաւ կենթարկէ զինքն ասոնց . յի-  
մար մարտիրոս . շարչարանք կը փնտռէ : համբերա-  
տարութեամբ իր կուրծքը կը ներկայէ աներեւոյթ  
գաշոյնին , որ կը մխի , և վէրջին մէջ կը գտանայ ա-  
մեն անգամ , որ թեթև գորգիւն մը լսէ : Եւ այս աչ-  
քանցի անհաւատարիմ գանալ կը յուսայ իր կինը .  
քանզի իւր բոլոր զօրութեամբը կը բազնայ : Է՛հ  
թշուա՛ն գու . թող զայն . թո՛ղ այն կինը որ զքեզ  
այցողես կը շարչարէ . եթէ կը հաւատաս որ վտահ  
ես քու անգատուութեանց , ինչպէս որ յիմարարար  
այս անունը կուտան՝ վա՛նտէ զայն , կամ ուրիշ տեղ  
փնտռէ հանգիստդ , զոր շատ անգամ քու պա-  
կատութեամբդ կորանցուցիր :

Արգարեւ՝ միթէ յիմարութիւն չէ՛ երեւակայելը , որ  
կննդ հեա խոսողներուն ամենքն ալ իւր սիրահարն  
ըլուն : Միթէ ծաղրելի չէ՛ հաւատալ , որ բոլոր իր ե-  
րեսը նայողները զքեզ խաբելու համար միարանած  
են կննդ հեա : Այն ժամուն , յորում կինդ գգուանք  
կը խնդրէ , յորում մարդ իւր սիրային հրճուանքն  
յայտնելու էր , միթէ թանկրամատութիւն չէ՛ սա կերպ  
խոսուածք մ՛ ընել :

« Տեսար զինքն այսպէս անշուշտ , այն ատելի էա-  
ւ կը , որուն ստուերը կը հաղածէ զիս . միթէ գորս-

« փանօք չխօսեցա՛ւ թեղի : Երջանիկ էիք իւր տարփա-  
« կան քաղցր խօսքերը ըսելով , և իւր գգուանքն հա-  
« տուցանելով , իւր բազկացը մէջ մարեցար : զինքը  
« կը սիրե՛ս , այնպէ՛ս չէ , իսկ ինձի անատրրերութիւն  
« և գուցէ տանջութիւն . . . » :

Եւ իւր հրացայտ աչքերը կնո՛ղը վրայ անկած ,  
մազերը ջջուած , երեսը գարկահար , սարսափ կազ-  
դէ . . . յետոյ յանկարծ ձայնը փոփօնելով , անհամ-  
քաղցրութեամբ կը շարունակէ . . .

« Մն , խոստովանէ , կազաչեմ , վատահումեան  
« նշան մը պիտի ըլլայ ինձ համար , կը ներեմ խոս-  
« տովանութիւնդ , աւելի պիտի սիրեմ զքեզ , խոս-  
« տովանէ և կերգնում որ աչ նախանձութիւն չպիտի  
ընեմ » :

Յիմա՛ր գու . արգեօք մարդ ինքզինքը ասկից ա-  
ւելի ապուշ և ասկից աւելի թանձրամբար կրնա՛յ ջու-  
ցընել իւր կնո՛ղը :

Թէ յանցաւոր ըլլայ և թէ անմեղ , ի հարկէ բա-  
շատական պատասխան պիտի ապ : Այն ատեն՝ կը  
կատարի . քանզի ազէկ գիտցէք որ հաստատական պար-  
տասխան կուզէք . հաստատական որ զինքը պիտի  
սպաննէ :

Բարկութենէն դողալով « Այո՛ , կըսէ , այո՛ գի-  
տեմ ջու վարքդ . ամեն քան տեսայ , որահումըսած  
էի . և գու կը համարձակի՛ս ուրանալ , թշուա՛ւ . . . »  
Ասոր վրայ կոկոսին հայհոյանք , յետոյ սպառնալիք ,  
որ շատ անգամ մարմնական զօրութեան զեղծմանց  
կը միանան :

Այս վարժանց անհրաժեշտ հեռանումներ սա է ,  
որ եթէ կինը յանցաւոր է , ամարդի ապուշ մը , կա-  
տարի մը կը տեսնայ իւր ամուսինը , որուն զէմ ա-  
ւելի զգուշութիւն բանեցնելու է . կը ծաղրէ զայն ,  
կատէ և աւելի յաճախ խարել կտռաշագորէ . եթէ

ընդհանրապէս անմեղ է, այսպիսի օտարութի խօսուածքէ մը ետքը՝ սասկմամբ կը գիտէ զիւր ամուսինը, իրրեւ անհնարին խեղագար մը կը նկատէ զայն, այնպիսի արարած մը՝ որ այլ ևս զինքը պիտի թըշուառացնէ. և կը պատարապատի տարփուար մը փընարեւէ որ իւր նեղութիւնները տանելու ոգնէ:

Գծրազգ նախանձուար, եթէ հանգարա վայրկեանի մը մէջ յիշ մը խորհէիք, պիտի հասկնայիք թէ ձեր տխուր հիւանդութիւնն է որ սփոքարար կապահանէ ձեր կինը, նախ՝ իրեն այլանդակ, տարօրինակ կերեւաբ, յետոյ անտանելի կըլլար, և ամենէն վերջը ի սրտէ կտակ զձեզ. և ահա ինչո՞ւ համար:

Ենթացրենք թէ զինքը կոյս, բոլոր իւր մաքրութեամբն անկեղծ առած ըլլար, անգէտ բոլոր այն նենգութեանց, որ մեր ընկերութեան մէջ կը նիւթուին: Իւր գործոց թեթեւութեան մէջ փոխանակ անդգուշութեան արգիւնք տեսնելու՝ բոլորովին ուրիշ նպատակ մը կենթացրէք. իւր երիտասարդութիւնն ու անմեղութիւնը՝ խարէութիւն կամ կեղծիք կը կարծէք, և անիրաւ հակոզութիւն կընէք, յետոյ իւր մեկ պզտիկ խօսքը, թեթև ժպտալ կը կշտամբէք. գտնուողէն զգացնել կուտայք, որ իւր վարմանց նանրութիւնը քամրասանաց առիթ կըլլայ և կատկած կը ծնանի: Ինքը գեռ անմեղ, չգիտէ ձեր ինչ ըսել ուղեւը, ձեր նախանձուն ըրած թշնամանքը չը հասկնար: Քիչ մը ետքը խօսութեամբ կը խօսիք և որչափ ձեր հիւանդութիւնն յառաջանայ, գեւգերնիզ կը արբի և խօսուածքնիզ կակծեցուցի կըլլայ. ծաղրելի հրամաններ կուտայք և ձեզի կասկածանաց առիթ եղած բաները կարգիլէք:

Խեղճը ձեր բնոյթին փոփոխութեանը վրայ կը զարմանայ, կը հեծէ, արաստուբը կը կլէ, բուլեւայն կը վշտանայ, յետոյ արանջալ կսկսի, և վերջա-

պէս իւր գաղանկքը ծանօթներէն կամ գրացեաց մեկուն կը յայտնէ : Կանայք վշտացած ասեմնին այնչափ սրտերնին կը բանան և մտիթարութեան կը ջանկան : Մարգահանայ և վտանգաւոր բարեկամուհի մը կը հասնի . որ կը հասկցնէ ձեր նախանձութիւնը և անմիջապէս կսկսի նախանձու գաղջելի և յուսահատեցուցիչ պատկերը նկարագրելու . և արդ՛ հոս կսկսի ձեր թշուառութիւնը : Զեր կինը կասկածներնուզ կը սրտմտի նախ , ձեր զարհուրանքէն կը պիտաւորուի . հետեւեալ օրը կը ծագրէ , առ ոչինչ կը համարի . և թշուառութիւննիզ անկասկածելի է : Կը ասեմայ որ աչքերնիզ վրայէն պակաս չէք ընեք , իւր շարժումները կը լրտեսէք . կը հաշուէք , թէ կուզէք և կը բազմաք որ պակասութեան մը մէջ գանար զինքը : Այն ասեմն կը պահէ ինքզինքը , միամտարար ձեր ներկայութեանն ըրածները՝ վախճալով որ չյանգիմանէք . կզգուշանայ ընելու : Վստահութիւնն ու յարգանք կը կորսուին , կեղծիք կը յաղորդէ անունց : Այս վարկեանէն ալ կին չունիք . այլ ևս խաղաղ կորսուած է ձեզ համար . իւր աչքին ուրիշ բան չէք երեւար եթէ ոչ բռնաւոր կամ յիմար մը : Հակառակ ձեր ասեմն սաստիկ հակազութեանց , ձեր գգուանաց և սպառնալեաց , պիտի խաբուիք և ծագրելի ըլլաք . քանզի կին մը երբէք չներէք . և իւր վրէժխնդրութեան միջոցներն ասունք են :

Ո՛հ , եթէ գիտնայիք թէ նախանձուտ մը որչափ ոգորմելի միանգամայն ծագրելի , յիմար , տաղտկալի և անտանելի է . եթէ անգամ մը լռելիք նախանձուտի մը առջեւէն և ետեւէն խօսուած պարսուսքն ու գաւան ծագրարանութիւնները , բարկութենէ և ամսթէ կուպաննէիք ինքզինքնիզ :

Առ աղեկ նկատեցէ՛ք որ նախանձուտներուն մէջ անելի սրտացոզներն և անելի կատաղիներն են որ ի-



րենց կնովմէն զատուելէն վերջը կը բաղձան և կը առչարին որ հաշտութիւն մ'ըլլայ մէջերնին : Ասոր համար հազար գուեհիկ ընթացքներ կը բռնեն , հազար յագնութեանց կը տական , և իրենց հրատարակուած փնտրած կնով առերուան տակ կը սողան նուաստարար : Թող հնափառութիւն մը այս կերպ վարմունք ունենայ , յայտնի է . յանդի որչափ ալ նուաստ էակ մը ըլլայ հոգ չէ , իրեն մեկը պէտք է որ կողովը բանայ , ջեխոտ ջնջողները մաքրէ : Բայց ամօթ այն մարդոց , զորս կրթութեան բարիքը ուրիշ կարգի մը մէջ գրած է : Մարդիկ , այս կերպ վարուելով կը վատթարանայ , այս վայրկեանէն չեք արժանապատուութիւնը կորսնցուցած էք :

Եստ ջիշ մարդիկ կան՝ որ իրենց ամուրի նաեւ ամուսնական կենաց մէջ այլոց կինը յարգած չըլան :

Մարդ նախանձուտի մը կնովը գիտած ատեն , եթէ սարգական ջանքերը չյաջողին , ըսել է թէ պէտք եղածին պէս չէ կրցեր վարուիլ , և կամ արդէն սիրարն ուրիշին տրուած է : Այս բանակցութեանց միջոցին է , որ զայրացած կինն ամուսինէն վրէժը կը ըսծէ , պատմելով նորա յիմարութիւնները և նորա ամեն խայտառակութիւններն յայտնելով , բան մը գուր չի սուտը , իրեն վրայ կասկածելուն , անկից հարբասահարուելուն գէժ ինքն ալ զայն թիժամանել և անոր փնտսել կուզէ : Միթէ այս ամօթալից խորհրդակցութիւնը լսողներուն արինակ ըլլալու չէ՞ր . ամուսինը ծաղրութեանակ ընելու և խայտառակելու մասին կնով մը այս կատաղութիւնը անանելով իրենք ալ վերջը ամուսնացած ատեննին այս խրատը բռնելու և գործածելու չէին :

Կրակ'ք , կըսէր այս նիւթին մէջ իրաւ փորձառու կին մը , գիտէք որ ինքզինքը նախանձուտ չցունելուն կերպը կայ : Եթէ կոյր զկուրայն անձնա-

տար ըլլար և վտահիք ներ կնոյր , երբէք ներ վըստահ : թիւնք չգեղծանէր . իսկ երբ ամուսին մը անգազար հսկէ իւր կինը՝ շնորէր . եթէ կնոջ մը վրայ կասկած ըլլայ , այս կինն այնչափ վրէժ կը լուծէ . ցորչափ անվտահու թիւնք շարունակուի : Տակաւին գեշութիւն չընող կին մը երբ տեսնայ որ զինքը կը հսկեն , գեշութիւն ընելու բազմանք կզգայ : Ամեն զարուց և ամեն երկրի նախանձամերուն պատմութիւնք կապացուցանէ . թէ ամուսինք են միշտ իրենց սեպհական թշուառութեան պատճառը : Հսկողութիւնք , պահպանութիւնք , հրամաններն , սպանախիքներն , ամեն զգուշութիւն և նախանձու զայրուցք այնչափ վախցուած թշուառութիւնք փութացնելէն ուրիշ բան չեն ըներ : Սա հին քառասուղը մեզ կը սովորեցնէ թէ Արգոս ինքն իսկ իւր հարիւր աչքերովք կնոջ մը նարտար խարէութիւններէն արկարացաւ .

Եթէ դատանն այն պահապան

Չկարաց այինչ հարիւր աչքով .

Բէ՛հ , քու երկու աչքերդ կրնա՛ն

Միթէ պահել կինդ խնակցով :

Երբէք մի կասկածիր կնոջ վրայ . մարդկային ուզեզք խանգարող ամենէն աղետարներ յիմարութիւնն , ամենէն վտանգաւոր անպատեհութիւնն է , ուրեմն խելացի ու խահական եզի՛ք :

Առաջին մեկ կասկածով մը զանի վաստարացուցիք , թշնամանեցիք . քանզի եթէ կասկածը շութեան յայտնի սպառցոյցի մը վրայ հիմնեալ չէ , միշտ սա կույ , որ կասկած մը կըլլուի . արդ՝ եթէ այսպիսի սարակոյս մ՝ ունիք ներ կնոջ վրայ , եթէ կը կարծէք որ շնական գրկախառնութեանց մէջ գրտնուած է , գիտէ՛ք , ի՞նչ կը հետեւի ասկից , իւր նակասին վրայ գրոշմեցիք ամօթն ու նախաախնքը .

քիչ մ'առաջ իրեն բուրած գգաստութեան անուշա-  
հատութիւնը յոփակեաց կնոջ մը հասին փոխուած  
է, կին մը՝ որուն հետ ապրել կը հաւանիք, աակա-  
ւին զինքը ներ կինը կոչել և անոր գգուանքն ըն-  
գունել կը շարունակէք։ Աւրեմն՝ ըսել կըլլայ որ կը  
հաւանիք իւր ակարութեանցը և իւր քմածին յոժա-  
րութեանցն անարգարար մարդահատն, կըլլաք։ Ե-  
թէ երեսնից թուքնէ, առանց արանջելու սրբեցէ՛ք  
ուրեմն, քանզի գուք ուզած էք։

Եթէ ճշմարիտ է որ կինը՝ իրաք անարգ, բայց  
ճարասար նեւերով առաքինութեան կերպարանքը պա-  
հելով մտացած է իւր պարտքը, իւր ամուսնոյն աշա-  
ջը արժանաւոր մտալու է։ Իսկ եթէ շուտիւնը յայտ-  
նի և անժխտելի է, այն ասեմն ոչ յառաջարան, ոչ  
հայհոյանք և ոչ լուտանք, ոչ բարկութիւն և ոչ  
սպառնայիք. քանզի ակարութեան նշան մը կըլլար։  
Մարդիկ այս պարագայիս մէջ իրենց հանգարաու-  
թեամբը մեծ ջուշնելու են ինքզինքնին. այն ասեմն  
միայն երկու միջոց կայ իրենց, կամ շուտեան նե-  
րելու շոք գորութիւն պէտք է, որ խիստ գերա-  
զանց ու ազնիւ միջոց մ'է՛ երբ ներդաճաճութեան  
ժանտութիւնը հասկնալու և իրենց յանցանքը քաւե-  
լու կարող գատուին. և կամ անմիջապէս թողե-  
լու է։

Բայց իւր անառակութեանն համար արձակեաց  
կին մը իրպատ մերժուելու է։

Ընդհակառակն՝ երբ ներ կտակածն անիրաւ ըլ-  
լայ, անհուն պատասխանաատուութիւն մը հրաւիրած,  
էք, տպագայ մը աւերած, կեանք մը խորտակած  
որ նեղի չէր պատկանէր. կամ յիմար մը և կամ ան-  
տանելի թշուառ մ'էք։ Զննչ կանանց վրէժիմդրու-  
թեանը յանձնելու, պատուհասելու, անխժելու էք։

Հեռուեաց եղբւրութիւնը կանանց սրկնակ և զի-

բենք խարսզ կամ զրպարտոզ մարգոցմէ վրէժ լու-  
ծելու միջոց մ'ըլլալու էր :

Փէ. գարու ժամանակացոյց պատմութեան մէջ  
կը տեսնանք թէ նախանձութիւն, կանանց զրպարտիչ ի-  
րուազէս մը Անուանիւնն ի սիրտն անուն գրքին մէջ  
գուրս ժայթքեց կանանց դէմ աննշամ լեզի բար-  
կութիւնը : Օր մը սա թիւրէնք մէջ զանուելով, տիկ-  
նայք անոր պարսաւագրերէն վրէժ լուծելու համար,  
զանք քարկոծելով քաղքէն գուրս վաճակեցին, և այս  
թշուառականը հրապարակու թողութիւն խնդրեցին  
եւսրը միայն կրցաւ քաղաքը մտնալ, նախին վրայ  
գրուած սա գրութեամբ

Վնտիմէ ծնանք ամենքնիս ալ :

Մեծ ու պղտիկ գեր ու նիհար :

Ով որ զանանք կը նախատէ :

Վաստ անարժան կուտելու է :

Այս նախանձութիւն, այս կանանց զրպարտիչն համ-  
բարը բոլոր խառնիս տարածուեցաւ, և երբ ամուս-  
նանալ ուզեց, չզանուեցաւ թէ պառտու և թէ ազեղ  
անանկ կին մը, որ գինքն առնել ուզէ :

Բայց նախանձութեան ներխուժումն ի նշագէս ար-  
մատարի ընելու է սրտէն, ի նշագէս բժշկելու է անոր  
խորին վէրքը : Ահա ասիկ « Եղիւնի-ճիւն կը քրտե՛՛ս ա-  
նուն գրքի հեղինակին հետ առած խրատս :

« Նախանձութիւնն ուրուականներու պէս է, զոր  
մեր երեւակայութիւնը կը ցուցնէ մեզ, երբ ազնա-  
մէջին մէջ մնացած կը սոսկանք : Եթէ ուզգակի գեղ  
ի առարկայն քաղքենք, ուրուականը կանհետանայ և  
մարդ կը զարմանայ անոր տեղ քար մը : Ժառ մը կամ  
որ և է ուրիշ նիւթ մը զանալով : Սակայն՝ առանց  
ստուգելու ոգի մը տեսնել պիտի կործեցինք, և այս  
տեսքը մեր մտքին մէջ ապաստեալ պիտի մնար : Իսկ  
երբ առարկայն հանձնանք՝ վտիտերնիս կը փարատ և

կը խնդանք : Խեղճ նախանձաք , աշագեօ վարուեցե՛ք . կասկած մ'ունի՛ք , ըսե՛ք , և առանց բարկանալու բացատրեցե՛ք : Ուղղակի դէպ թ առարկայն քաշեցե՛ք , ասով շատ անգամ ձեր պարզմտութիւնը պիտի ծաղրէք , և հաշտութիւնն յագուտ սիրոյ պիտի հաստատուի : Եթէ ձեր տարակոյնն բուրբովին անհիմն չէ , կրնաք իմաստուն խրատներով՝ առաջին յանձանաց սգալի հետեւանքներն աչքի առջև բերել , իւր պարտեացն հրաւիրել ձեր կիներ , և վախցուած դէպքը խափանել :

« Եթէ տարրեր կերպով վարուիք , եթէ յրատեսչու համար պահոււրաիք , ձեր երեւակայութեան մէջ առարկայն երթալով կը թանձրանայ , և իրրև յաղջանցիկն՝ ամեն կողմանէ ուրիշ բան չէք տեսնար եթէ ոչ հրէչք , և որչափ աչ խաբուելիզ հասկցնել աշխատին , այնչափ պիտի կարծէք որ կը խաբեն զձեզ » :

Անուսինք , որ կուղէք ձեր կիներ այս հիւանդութենէն բժշկել , ամեն խորհրդաւոր ու երկդիմի ընթացքները մեկդի ձգեցե՛ք : ասոր ամենէն ազգու և միակ գեղը համարձակ և անխտար վարուիք է :

Անուսնութեան այնչափ ժանր չցթայն թեթեցըներու , ընտանեաց մէջ՝ երբեմն հանգիստ և գիշ մը երջանկութիւն վայելելու համար , պէտք է որ աչքն իւր կնոջ գործոցը վտահութիւն ունենայ և առաքինութեանն աներկմիտ ըլլայ : Եթէ այս վտահութիւնը կորսուի , այն ատեն կրճնից կամ փոխափայլութեան գիժեցե՛ք . միայն սոքա ունին այն նուիրական կրակը որ զանոնք կարծարծէ :

Աչքերնուզ առջև բերէ՛ք այն ամեն գեշութիւններն , այն ամեն աղէտք , որք մարդկային սիրազ կրնան տագնապել , բոլոր առանց մէջ՝ նախանձութեան նմանը չպիտի գտնաք : Այս հիւանդութենէն

բանուած թշուառը հազար շարժարանք, հազար մահ  
կը կրէ : իւր սիրտը՝ միանգամայն ամեն կը բերով,  
այսինչն սիրով, ասեղութեամբ, բարկութեամբ,  
վրէժխնդրութեամբ, անօթով և յուսահատութեամբ  
շարժարեաց : իւր սիրտը կը բռնձ, անուպատ ազդիւր մ'է,  
որ նախանձութեամբ թունաւորեաց արիւնն ու զեղը  
կը ցատկեցնէ : Մարդ զանի տեսած ասեկն գոթաւային  
աստուածոց զոհ կը կարծէ, թշուառ :

Նախանձութիւնն, որ է մեանդ անվտանգու-  
թեան և արտառ ու արհաւիրեալական սիրոյ, միայն  
գտան պատուզներ կը բերէ : Հիւանդութեան երկիւ-  
ղացի բորբոքումներով միացեալ անհնարին յիւարու-  
թիւն մը, կատաղի զաւանջութիւն մ'է, որմէ բարձր  
ընկերութիւնն որ ըստ որէ կազաարի. միջին դասը,  
որուն մէջ այս հիւանդութիւնը սովորական է, այս  
որինակին հետեւելու էր :

## ԳԼՈՒԽ Ի.

### Շնուֆիան

Շնուֆիանն է գրթումն երգուեալ հաւասարմու. մութեան, ամուսնութեան սրինաց գէժ ծանր յան. ցանք մը :

Շնուֆիանն այն վերքերէն մին է, զոր արդի քա. զարակրթութիւնն առանց ամբնայու կը բանայ. ժան. տասեսիւ ելունդ մը, որ Հիսկէնի նախաին վրայ կեղ. լի, կը սղծէ անոր մաքրութիւնն և երգման ունչու. թեան իրրև ապացոյց կը մնայ :

Հին ժողովրդոց մէջ խիստ հարգուողիւ՝ շնու. թիւնը, մանաւանդ կանանց շնութիւնն իրրև տա. րապայտան սնիր մը, իրրև նիւազական հրէշ մը կը նկատուէր, նաև խիստ պատժանք ունէր, ինչպէս աղահարզան, խաչատուակութիւն, մշանկենաւոր բան. տարկութիւն և երրեմն մահ : Նախնեաց մէջ շնու. թեան քիչ պատահիլը ո՛չ պատժոց երկիւղին, ո՛չ կնո՞ղ այսորուան սղեւ աղատութիւն յանննարուն, և ո՛չ ալ աւելի զգատտ և նուազ յողգողգ ըլլալնան տա. ըու չէ : ո՛չ, կանանց բնականն երրէշ փոխուած չէ, ինչ որ է այսօր, նոյնն էր և երրեմն : Ասոր միակ պատճառն այն է որ ամուսնութիւնն անչուծանելի չէր, և թէ՛ ամուրի կեանքն ընկերութեան մէջ այս. ըափ արմատ շարձակելէն զտա՞ նշաւակեալ և մարմ. նախան ախտի մը կամ անբարոյականութեան իրրև ախտ. արդիւնք նկատուած էր : Արեմն շնութիւնը՝ անչուծանելի ամուսնութեան և ամուրութեան գէժ ստակալի անբաստանութիւնն է :

Ասկն ժողովուրդ շնութիւնն ամուսնութեան կա.

պերուն իրրև սրբապղծութիւնը նկատած ըլլալով, ամենախիստ պատժոց ենթարկուած էր. աւելի կամ նուազ խիստ, աւելի կամ նուազ տարօրինակ այս պատիժներն ժամանակաց և բարոց պատկերն են: Եղիգոսացոց և Երբայեցոց մէջ շնացողք հասարակաց հրապարակներու մէջ կը բարկոժուէին: Հին Սաքսոնացիք շնացող կիներ կենդանւոյն կայրէին, և անխնին վրայ կախաղան մը կը բարձրացնէին, ա.ս. կից իւր մեղսակիցը կը կախուէր: Մահածկէթի և նոյն իսկ Մոփէսի օրէնքը շնացող կնոջ համար մահ կը հրամայեն. կիներ առցրակի մը մէջ կապուելով կատուի մը հետ, որ է նշանակ շարսիժեան, ծովը կը նետուին: Ասիոյ, Աֆրիկէի և Ամերիկայի բարբարոս ժողովրդոց շատերուն մէջ մինչև ցայսօր խիստ մահուամբ կը պատժեն ամուսնացեալ շնացող կին մը: Հին Յունաց մէջ շնութիւնը, թէև շատ հազուադիւրս էր, միայն խայտառակիչ պատժոյ մը և արտօրի կը դատապարտուէր: Հռովմայեցոց օրէնագրութիւնը՝ հանրապետութեան ասեն՝ շնացող կիներ ամուսնոյն կամայք կը յանձնէր: Ասի բնասնեկան ժողով մը կը գումարէր, որ սովորաբար արտօր կամ մշանկեմուսօր տարագրութիւն կը վնասէր:

Կայսերաց ասեն՝ ասոր պատիժներն երբեմն անհնարին և երբեմն գրեթէ ոչինչ էին: Օգոստոս չունաթեան գէժ հրավարտեկաւ հասառտեց Յուլիայի օրէնքը, որ մահուան կը դատապարտէր. բայց թիչ գործողութեցաւ:

Հին Գոթացիք, զորս բարբարոս կը կոչեմք, կին մը հրապարտողք կը բռնադատէին որ կամ նոյն կնոջ հետ ամուսնանայ և կամ հարստութեան կէսն անոր ապ. եթէ սա մերժէր, կնոջ պատուոյն վրէժը լուծելու համար մահու կը դատապարտէին. քանզի կինն այլ ևս չէր կրնար ամուսնանալ երբէք: Անգ-



զից մէջ ժամանակաւ շնացող կնոջ մազերը կը կըտարէին, յետոյ խարազանի հարուածներով բոլոր քաղաքը կը պատշնէին, մինչև որ հարուածոց ասկ մեանէր: հրապուրիչն ալ ծառէ մը կը կախուէր: Սպանիոյ հին սրէնքները շնացող կինն ու մեղաակիցը ամուսնոյն նեաքը կը յանձնէին, որ զանոնք սպաննենելու կամ անգամները իսխախելու ազատ էր: Քրտուսիոյ մէջ անցեալ դարուն՝ հրապուրիչը կը բանտարկուէր և ընչից կէտը կը կոզոպատուէր. եթէ փախելու ըլլար, զոհեալն անոր կինը կը ըլլար փոխանորդարար, և ամուսնոյն ընչից մեկ մասը յարբունիս կը գրաւուէր՝ ի նպաստ կնոջ և զուկին:

Իրանացւոց նախնեաց, այսինքն Թրանդաց մէջ շնացողը միայն գրամական պատժոյ կը դատապարտուէր: Քլոփիսի աստն ասոր պատիժն աւելի խիստ էր. երկրերիքի աստն մահուան դատապարտուող շնացողաց բազում սրինակները կը տեսնուին: Սակայն յանցարոք եթէ հարուստ ըլլային, հարստութիւններն արքունի գանձուն թողլով կընային վերագնել իրենց կեանքը: Հիւկ Գարէի աստն, ասոր պատիժը նուաստացուցիչ և գրամական էր. գրկեալ ամուսնոյն տուգանք կը վնարուէր և կինը քաղաքին մեկ գանձն մինչև միւսը մերկ չըլելու կը բռնագատուէր: Քիչ մը ետքը մեծամեծք խայտառակիչ պատիժներ և անգամաառութիւն մուծին իրենց երկիրներուն մէջ այն ազնուական կանանց համար, որ գեղջուկի մը հետ շար: Ժէ գարուն մէջ մահապարտութիւնը վերստին հաստատուեցաւ աստինանաւոր կնոջ և անկից հրապուրեալ գեղջուկին համար: Այսպէս այս պատիժը գործադրուեցաւ իրենց տիրուհոյն հետ յարաբերութիւն ունեցող երկու սպասաւորաց կամ ազարակի մշակաց վրայ. 1567 ին ազնուական տիկին մը իւր ազարակի մշակներէն

միայն հեա շուքեան մէջ բանուելով, ամուսնոյն ինքրանօքը երկու մեղադարացի հաշմուեցան, և ընդհանուր ժողովոյ վեճովը կախաղանի դատադարուուելով, նոյն օրը կատարուեցաւ դատակնիքը :

Այսօր այս պատիժը սրինագրքէն բոլորովին անհետացաւ, և անոնց տեղ ճնշիչ՝ բայց դժբաղդարար անկարող կերպեր հաստատուեցան : Պատժական սրինագրքի 337 յօդուածը այսպէս կը ըստ մեծութիւնն հաստատուած և ապացուցուած կէնն առնուազն երեք ամիս, և առ առաւելն երկու տարի բանտարկութիւն պիտի կըլ : մեղաակիցն ալ այսչափ ատեն բանտարկութեամբ և ասկից զատ 500 էն մինչ 2000 ֆրանք առգանձօք պիտի պատժուի :

Այս յօդուածով կերեւայ թէ ժե՛. գարու Գաղղիացիք իրենց նախնեաց հեա բազդատելով ոչխար են : Սակայն ամեն ազգ շուքեան պատժոյ մասին Գաղղիացոց կարծիքը չունին : շատերը տակաւին խտտագոյն պատիժներ կը գնեն շնացող կանանց և արձակել կը վեճեն : Ասիոյ և Ամերիկայի թափառական ժողովրդոց ամանք անդամատութիւն կընեն, որ իւր անարգութեան իրրեւ անվնջելի նշան կը մընայ : - Ամերիկայի մէջ խոօզի վարքերի ցեղը շուքեամբ բանուող կեով չիթը կը կտրեն : - Գրիացիք ակամօնները : - Տարիացիք ստորին չրթունքը գաշոյնի հարուածով մը կը հանեն : - Շարթամները կը ձաղկեն և մերկ հրապարակին վրայ կը կեցնեն : - Պիւմանի կայսրութեան գլխաւոր քաղաքներէն Ռէկիւի մէջ կինը յանցանքը գործուած ասն գրան առլին գլխի վարք և ստրերը յօգս կեննալ կատրպեն : - Չինաստանի և Պայիի մէջ շնացող կինն իրրեւ գերի կը վաճառուի :

Ուրեմն՝ գրեթէ ամեն բարբարոս կամ կէս քաղաքակրթեալ ժողովրդոց մէջ միշտ շնացող կինն և

որ խափա կը պատժուի, մինչդեռ նայն յանցանքը գործող այրը գրեթէ անպատիժ կը մնայ, և կամ անոր պատժ պատիժը համեմատաբար խիստ թեթեւ է. և ասի, ինչպէս որ կըսէր Գրիգոր Նազիանզացին, քանզի այրը զորանորագոյնն ըլլալով՝ որենք շինազն ինչն է : Սակայն նկատելու ենք թէ շատ երկիրներ՝ ինչպէս Գորնէօի, Ճափայի կղզիներուն մէջ շնութեամբ բանուած մարդ մը կնոջ պէս խափա կը պատժուի, և երբեմն զարշեյի անգամատու թիւններ ալ կընեն :

Ըստ որում՝ կինը տկարագոյն է քան զայրն, ըստ որում յարնակմունք միշտ այս վերջնայն կողմէն կը լլան, ըստ որում հրատարիչն իւր նպատակին հասնելու համար ստախոսութիւն ու նենգութիւն կը բանեցնէ, ուստի շնացող արանց գեւ՝ գրուելիք պատիժը խտագոյն ըլլալու էր քան զկնոջն : Ըստանեաց մը մը հրատարուիին առեյի գեշ է, քան թէ ոչ-սմուսնացեալ կնոջ մը մուրթիւր : Ի՞նչ խտութեամբ պատժուելու չէր այն անարգը, որ ամուսնոյ մը սէրը կը գողնայ, և մէկ վայրկեանի մէջ ընտանիքի մը խաղաղութիւնն ու երջանկութիւնը կը խանգարէ :

Ըստգներ եզամ է, որ մարդու մը ըբամ շնութիւնն աշխարհ ծանր հետեւանքներ լանի, որչափ կնոջ շնութիւնը. թէ կնոջ մը շնութիւնն օտար տղաքներ կը մացնէ ընտանեաց մէջ, որ որ մը հարազատ զտակաց ժառանգութեանը պիտի մասնակցին, և հետեւաբար մարդու մը շնութենէն առեյի ծանր պատժոյ ենթարկելու է : Ասի ուրիշ քան չէ եթէ ոչ կերպարանաւորեալ խարութիւն մը. և Մէսիո Անսէլ՝ ասոր խեղճութիւնը սա կերպ կապացուցանէ :

« Երկու գրացի ընտանիք ենթագրեմք, կըսէ, որոց մէջ արք և կանայք հաւասարապէս շնութեամբ մեղանչած ըլլան : Դիցուք թէ Գեարոս Գոզսի կնոջ

հետ բնակելով անկից ազայ մը ծնանի . այս աղ-  
զան Պօղոսինը չըլլալով ալ , պիտի մասնակցի նորա  
ժառանգութեանը : Ինչուք թէ Պօղոս ալ իւր կող-  
մանէ Պետրոսին շնութեան որդի մը ապ , այս աղան  
ալ նմանապէս Պետրոսի ժառանգորդը գիտի ըլլայ :  
Արդ՝ եթէ երկու կողմանէ ալ ինչքերն հաւատար ար-  
ժէք ունին , միայն սա տարբերութիւնը պիտի ըլլայ ,  
որ աղայք իրենց հարազատ հօր անունը չպիտի կրեն .  
և իրաց վիճակը սա պիտի ըլլայ , որ Պետրոսի կինը  
Պօղոսին , և Պօղոսի կինն ալ Պետրոսի հետ իրրու  
թէ ամուսնացած ըլլար . Հոս թէ յանցանքը և թէ  
հետեւանքը նոյնն ըլլալով , սասր պատիժն ալ ամեն  
կերպով հաւատար ըլլալու էր :

Միւս կողմանէ , ենթացրելով թէ Պօղոսի կինն  
ամուրիի մը հետ շտացած ըլլար . հոս բնականարար  
փոխարինութիւն մը յերմար տեղի ունենալ . բայց  
յանցանքը միշտ նոյնը կը մնայ , միայն թէ մեզտակ-  
ցութեան մէջ տարբերութիւն կայ : Արդ՝ այս պա-  
րագային մէջ պատիժը կնոջ վրայ ծանրանալու չէր ,  
այլ մեզտապարս ամուրիին գէժ որէնքը բոլոր իւր  
խոտութիւնը բանեցնելու էր . և որովհետեւ արդի  
բազարակիրութիւնն ամուսնութեան և բնականաց  
թշուառ թշնամեաց գէժ անդամատութիւն շնորէր ,  
որէնք ոչ թէ միայն մարմնական խիստ պատիժներ  
գնելու , այլ նաեւ այնպիսի աուգանաց ենթար-  
կելու էր , որ իրենց հարստութեան մեծագոյն մասը  
տանելով , այլ ևս ամուսնացեալ կիները մշտրեցնելու  
բազմանքէն ետ կենային :

Օրինաց խոտութիւնն զմարդ կը վայրենացնէ , և  
յանցանքն ալ շարգելուր , յանցանաց և պատժոց մէջ  
անհամեմատութիւնը՝ բանասորութիւն , որինաց ան-  
բաւականութիւն և վայրենի բարք կը ջուցնէ .  
մարդասպանաց եղեւնազ օրժաց պատժ ովք տկարու .

Թիւն մը պատժել կրթեալ ազգաց որինագրքէն ան-  
հետացած է : Իսկ եթէ հին օրէնքներն՝ իրենց ար-  
տարոյ կարգի խառնութեամբը մեր բարոյից հետ շին  
համաձայնիք , սակայն այն ատենի շափ ստուգուած  
է՛ թէ շութիւնն այնպիսի յանցանք մ'է որ իսպառ  
կեղծանէ ամուսնական ներգաշնակութիւնն և ընտա-  
նեկան երջանկութիւնը , որ յախորդութեան կարգը  
կարէ և ահարկու անասուցութեամբ հայրենի սէրը  
կը մարէ , որ զկի՛նն նախատանօք և խայտառակու-  
թեամբ կը ծածկէ , որ ատելութիւնները կարծարծ է  
և բուռն վրէժխնդրութեանց կը մղէ : Աստի սոյն  
օրինակ սէիբ մը անդատի՛ծ չկընար մեալ , քանզի ան-  
պատիժ մեալը բազմապատկուելուն պատեալս կըլլայ :  
Եւ ամեն մարդ գիտէ , որ զժրազգարար յանախ կը  
պատահի մեր ընկերութեան մէջ :

Ենութեան զէժ սահմանուելիք պատժոյ խնդիրը  
չսա փոփուկ կէտ մ'է : Արդէն մեզմէ՛ հարստար-  
գոյն և այս նիւթին մէջ՝ փորձատու անձինք իմա-  
տուն միջոցներ առաջարկած են , որոնցմէ ոգուս  
քաղելու էր . մեր ալ անոնցմէ ետքը մի քանի նկա-  
տալութիւններ պիտի փորձենք :

Ամուսինք օրինաց առջեւ փոխադարձ հաւատար-  
մութիւն երգուած են , և օրէնքն ալ կը հսկէ որ այս  
երգումը կրօնապէս պահուի : Արդ՝ երբ դաշնագրո-  
ղաց մին միւսոյն անհաւատարմութեամբն ինքզինքը  
զրկեալ անանկ , շատ արգարացի է որ օրէնքը զանի  
իւր երգումէն քակէ , որ այլ ևս արժէք մը չունի .  
նաեւ արգարացի է որ շութեան ախուր հետեւանք-  
ներն ըստ կարելոյն մեղմացուցիչ պատժօք պատու-  
հասուի յանցարդ :

Ամեն ժամանակ պարկեշտութիւնը կանանց մաս-  
նաւոր զարդն եղած է , և մարդիկ ամենամեծ ար-  
ժէք տուած են անոք : Սակայն՝ եթէ կ'ու՛յ առաքի-

Նախ ինն այնչափ գիւրեզժ է, որ կրից ամենափոքր հնչիւնէն կը խորտակի. եթէ զանազան պարագայից մէջ գրեթէ անկարելի է անոնց տկարութեան առաջին ասնուլ կամ արդիւնը, որէնքն զանազ քարեկարգելու համար իւր իշխանութեան սահմանին մէջ զանուած միջոցները գործածելու էր: Առաջին այն կիներ, որուն անժուժկայութիւնը կամ անզուայ սէրը զինքը մեղապարտ հանգիսացուց, հասարակութեան աշաց առջեւէն վերջնելու համար քաղով մը ծածկելու է. քանզի եթէ հան մնայ, ասկա առ տակառ ամաշտութեան բոլոր զգացումը պիտի կորսնցնէ և ուրիշ կանայք անանկ տեսարանի մը պիտի վարժուին, զոր տեսնելու չէին Ամուսինէն վնասուած շնացող կնոջ մերկութիւնը ծածկելու միակ միջոց, զանի հրապուրոցը՝ եթէ ամուրի է իրեն հետ ամուսնանալու ստիպելն պիտի բլլար. և որովհետեւ ինքն է զանի մարտեցնողը, անպատուողը, ուստի անոր կիջնայ զարնեալ պատուուոր ընել զայն: Ասկից զատ որէնքն՝ արեւակոզ մարդուն բրած մնասը ընցնելու, և ուրիշ կնկան մը հետ ամուսնանալու համար հրաման տալով, իւր թշուառութիւնը մոսցնել տալու էր: Արեւն ապականեալ, խայտառակեալ կիճն իւր հրապուրչին արուելու էր իրքեւ ամուսին, և կամ՝ եթէ ամուսինն հաւանէր իւր շնացող կնքը պահելու՝ հրապուրչին իր հարբատութեան համեմատ աս զանոց գտաապարտուելու էր: Այս ասոգանքը ի նպատակ զրկելոյն և կամ ասոր կողմանէ մերժուած ասնն քարեգործական գիւսմներու սահմանուելու էր:

Անգղիոյ մէջ ամուսնացեալ կին մը հրապուրոզ անէր միշտ իւր հարստութեան համեմատ մեծ և տարապաշման գումար մը վնարել կը գտաապարտուի աս ամուսինն. ասոր համար խիստ քիչ շուխիւն կը

պատահի . մինչդեռ մեր մէջ (Գաղղիացւոց) այս յանցանքն այնչափ յանախ : այնչափ բաղձնապատիկ է : որ կարծես յանցանքն իւր այլանդակութիւնք կորսնցունելով նորանեւութեան կարգն անցած է . առկից ծնունդ առաւ սա առածք թէ շնտա ամուսինք իրենց կինը կը խարեն , գրեթէ ամեն կանայք իրենց ամուսինը կը խարեն . իսկ բարեպաշտահիք առաւել քան զամենքն :

Առկայն կը հաւատամք , որ իրենց ընտանիքն ու պարտքը մտնալով գրացւոյն ասունը շնութիւն առնող ամուսնացելոց թիւը խիստ փոքր է բաղդաատութեամբ ամուսնաց : Արդարեւ տեղի բնական է ամուսինի մը քան թէ ամուսնացելոյ մը կին փնտաւել . այս վերջինը կին մ'ունենալով իւր բաղձանքը կրնայ յազեցնել . իսկ ընդ հակառակն՝ ամուսին կնոջմէ զուրկ չեացած ըլլալով այնչափ գիւրաւ յիջնար յազեցընել . և որչափ զրկուած մնայ այնչափ ալ տենչանայ սաստկութիւնք կատաւելու : Ենտութեանց համար կատաւարութեան փրկակաղցիրը կը յայտնէ՝ թէ բաղդաատութեամբ ամուսնացելոց՝ ամուսնաց շնութեանց թիւը խիստ մեծ է . այնպէս որ համեմատութիւնք 9/10 է : Առկից կը հետեի՝ թէ ամուսնաց թուոյն համեմատութեամբ շնութիւնք ալ կատաւելուն . և կամ սանկ ըսենք , որչափ գողերը շատ ըլլան , այնչափ շատ կը պատահին գողութիւնք :

Այս նկատառութենէն կը հետեի թէ հրապուրիչք ընդհանրապէս ամուսնաց դասէն են , դաս մը որ շատ ատեն շար և միշտ վտանգաւոր է , այնպէս որ պատուաւոր կին մը միշտ անպատահելու է անոնցմէ : Ամուսնաց մէջ կոշտ և անախորժ զգացմամբ վառուած մարդոցմէն չէ որ այնչափ վախնալու է . որչափ որ հրապուրիչ կերպարանք ունեցող , միշտ հնազանդելու և կանանց յոժարութեանը զոհուելու պատ-

բաւա մարդիկներէն : Ամենէն վասնդատոք մարտ-  
թիւնն ալն է . որ ծագկանց ներքն կը սողոսկի . որ իւր  
մեղաւից առաջագրութեանցն ու պատժապարտ գի-  
տաւորութեանցը գործիք կընէ տկարութիւններն ու  
առաքինութիւնները . որ անդազար թակարդ կը լա-  
րէ ամուսնացեալ կանանց , և վերջապէս՝ միշտ զա-  
նանք կը կորսնցնէ : Այսպիսեաց խոսուածքը փափ-  
կութեամբ . գեղեցիկ զգացմամբ լի է , և գիւրաւ  
կը գանայ սրտի նամբան : Այս շուտաները սիրոյ նն  
կուտան հանուցից . գորովասիրա և ցանկացող կերե-  
ւան , մինչդեռ ուրիշ բան չեն , եթէ ոչ հեշտասէր ու  
մարմնասէր : զգացում կը կեղծեն , մինչդեռ ուրիշ  
բան չեն խորհիր եթէ ոչ նիւթական զուարեութիւն  
ու հանուց : Կանայք . խուսէ՛ք այս օձերէն . երբ  
թողուք որ քովերմիզ մտանան , պիտի խամենն զնեզ  
փախէ՛ք անոնցմէ : քանզի իրենց թունաւոր խայթը  
միշտ մահարեւ է :

Ենութեան ծածր խնդրոյն մէջ՝ կանոնաւորապէս  
յառաջ ընթանալու համար , երկու մեծ կարգի բաժ-  
ները հարկ է .

Առաջինը՝ սեռից միասնութեան մասին՝ տարիքի  
անհամեմատութեան , և ամուսնութեան նպատակն  
եղած գործը կատարելու մէջ՝ մարմնական անկարո-  
ղութեան վրայ կը կայանայ . եթէ կինը սոսկ կրա-  
ւորական էակ մը չէ նկատուած . եթէ բնութիւնն  
արանց պէ՞ս բազմանք ու բնազգում տաւեր է անոր  
ալ . եթէ՛ ընկերական ամուսին մէկ մասը կազմելով՝  
իւր առաջին պարտքը մարդկային ջեզը մշտնջենա-  
ւորելն է . ինչո՞ւ համար կայելու է զամբ այնպիսի  
անհաստի մը հետ , որուն տկար և արատացեալ անվա-  
յելչութիւնը զանի կատարեալ ուղղութեան մը կը  
դատապարտէ , և մայր ըլլալու երջանկութենէն կը  
զրկէ : Ինչ իբրուամբ ծերունի մը , որ միայն ցանկա-



լու կարողութիւն ունի, իւր ցուրտ շշուփմամբը՝ օրիորդի մը սրտին մէջ եռացող հիւսիքը գազարելու է։ Ինչո՞ւ համար իւր պիղծ շնչովը նորա գարնան գեղեցիկ օրերը պիտի թառամեցնէ, և իերմալներմ գգացմամբ ի կեանք մը սառեցնէ, և ասոր հետ մէկտեղ տաաննինն, բացարձակ և կատարեալ ամուսնական հաւատարմութիւն պահանջէ . . . գծրա՛զգ օրիորդ, եթէ երգուած ալ ըլլայիք՝ երգման կապը պարտուց կանքը գիւրաբակ պաանեցնեք են ընտելեան գէմ, որ միշտ իւր գործը կատարելու է։

Այս տեսակ միութիւնները զայրացուցիչ և գրմնջակ բան մ'ունին. ծերունի մը որ զինքը կրճող ախարն մեկ մասը թեթեցնելու յուսով, իւր ախտացեալ շաւազար անգամացը փափուկ մարմին մը տալ կուզէ. հարուստ վաթսաննոց մը, որ ցանն տարեկան կին մը ծախու կաննէ իւր գեղեսուիներ յագեցնելու համար. անախրա ազնիկ մը, որ աշխարհի մէջ փայլելու և իւր ձեր ամուսնոյն նոզկալի գգուանքները մոռցնող սիրահարներ ունենալու համար, ինքզինքը կը վաճառէ։ Ընկերութիւնը մասով կը ցուցնէ զանանք և օրէնքը կը լսէ։

Երկրորդ կարգի շնութիւններն անանք են, որք այնպիսի միութեանց մէջ կը ծնին, յորում թէև ասորիքը համեմատական է, բայց երկոցունց ընտանութիւնը միմեանց անպատշաճ ըլլալով, ամուսնութիւնը միայն յահաբնդրական եղած են և թէ՛ քիչ մը ետքը ամուսնեաց մէջ հակակրութիւն ծագած է, որ սովորաբար միմեանց համար սէտք եղած անկաժութիւնը պակսելէն կամ անկարգութիւն արեւելն կը հետեւի։ Ասկից կը ծագի անապրեբութիւն և անմիջապէս կը հետեւի ձանձրոյթ. և եթէ փոքր ինչ նախաննութեան նշոյլ մը կամ անարգութեան գործ մը մտքի տակ ծածկուած կրակն արծարծէ, անմիջապէս կը-

սիւր կօկոխ, գծաութիւնը կը պայթի և շուտիւնն որչափ և՛ է՝ երբ գործերն այսպէս անցնին, համբերատարութիւնը պարտք մ'է: Թշուառութիւնը մեծ է, և սպասելու էր ասոր . . . բայց սակայն առաջն ալ կրնար առնուիլ:

Մարդ շատ անգամ իւր թշուառութեան միտք գործիքն է. հազար տարի առաջ այսպէս կըսէին, այսօր ալ կըսեն և ապագային մէջ ալ պիտի ըսեն: — Ամուսնեաց նուազ ժուժկալութիւնը կանանց պարկեշտութիւնն եղծել կը արամագրէ, և սեռի բնական այս պարկեշտութիւնն այլ ևս ուրիշ բան չէ եթէ ոչ հակառակ մտաւթիւնը ծածկելու ժառայող քող մը: Սերեմն ամուսնոյ մը յոռի վարքն ու բնաւորութիւնն է որ կինը կ'ապականէ, և արտա գործած նենգութիւններն ու զգակի արանց անարգութենէն կը ծնանին: Նկատելէք անգամ մը երկու խռովեալ ամուսնեաց անական կեանքը, և քիչ մը վերը ըսածնուս նշմարտութեանը պիտի համազուիք՝ Բաժանմանց սփորական պատեառներուն մէջ յանցանքը կնոջ վրայ կը ձգուի. բայց իրօք, շատ անգամ ամուսինն է որ կնոջը յանցանքը ըլլալուն պատեառ եղած է: Ամուսնեաց շտաբերն իրենց ժպիտն կասկածներովն և առ իրենց կինն ջցուցած ամարգութեամբը կըլլան այն բանք, որով կը վախնային: Դազանիքի մը վերահասու ըլլալ ուղեւով կանցնի նախանձառի մը կեանքը, դազանիքի մը՝ որ իր երջանկութիւնը պիտի թունաւորէ, և երբ գտնայ զայն, կը սրտայ և կը յուսահատի . . . Խեղճ անծի'տք, բանականութեան վերագարձէ'ք, և կիններնիդ աւելի խեղցի կըլլան:

Իսկ սիրով և յարգանք հաստատուած միութեան մը մէջ երբ շուտիւնը անզի ունենայ, այնպիսի միութեան մը մէջ, յորում տարիքը և միատեանքը կա-

տարեալ ներդաշնակութեան մէջ կը գտնուին, ուր հաւատարմութեան երգումը փոխադարձ և անկեղծ է, յորում ամուսինը միայն իր կոչը վստահութիւնը տուաւ կնոջը՝ զինքը խաթելու համար, ո՛հ, շնութիւնն այն աստն ամուսնական օրինաց սոսկալի սրբծումն է: Սն մ'է որ ընտանեաց մէջ կը սահի, և ամուսնեաց սուրբ կը խայթէ, կը թափէ իւր գառն թոյնը, որ սիրաբ կելլէ՝ հոն խոր վէրք մը փոսելու համար: Տխուր թախմութիւն մը կը համնի, անվստահութիւնը կը նսեմացնէ բնաօրութիւնն, ու հայրութիւնը տարակուսելի կըլլայ: Այլ ևս չիք մշտեքմական սէր, չիք առանին ուրախութիւն, համալիրութեան հանգոյցը կը խորտակին... Եթէ գիւղուածն ուղէ որ յանցանքը գործուած աստն ընտանեաց գլխաւորն իւր կինը բռնէ, ո՛հ, այն աստն կատաղութիւն, բուռն պայթիւն, երբեմն պայմնութիւն և շատ թիչ հանգարտութիւն և համբերատարութիւն տեղի կանենայ, գայթակղութեամբ, անպատուութեամբ և գառն պարսաւանօք հրապարակական բաժանում կար երբեմն, վերջապէս անանկ ամուսիններ կան որ կեանքէն ձանձրանալով գեպի անննասպանութեան կը գիսեն:

Ահաւասիկ ասանք են շնութեան գծնգակ հետեւութիւնները, շնութեան որ ամուսնութեան անլուծանելի ըլլալուն մէջ ինքզինքն արդարացնելու փոքր պատեաւ մը կը գանայ միշտ: Բարե՛, եզո՛ւկ. իւր փառասէր ընտանեաց նեաքով զոհեալ օրհորգ մը՝ անմիտ ծերունայ մը որս եզած ըլլալուն համար, միթէ իւր մանկական քաղցր ժպիտը զստանեալ վաթսաննոցի մը ժպիտովը փոխանակելու՞ ստիպուած է: Երեսուն տարեկան այր մարդ մը՝ իւր անկողնոյն մէջ տեղի ունեցած յանցանքը տեսնելով, շնացող կինը վնասած ըլլալուն համար միթէ մինչև իւր կնոջ մա-

հը հարազատ զարկներ չունենալու պիտի գտաւարտուի: Բարի և անկեղծ մէկը թշուառ կնոջմէ մը խարուած ըլլալուն համար, միթէ ծաղր ու ծանակ և անմտից հեզնութեանցը նշանակ ըլլալու է: Այս վերջին պարագային մէջ ամուսնութիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ ազմկայից վաճառականութիւն մը որ նենգեալ անանկութեամբ կը վերջանայ, և այս անանկութեան մէջ խարուսղն է անպատուեայը: Ինչ ապականութիւն բարուց: Մարդ մը իւր բարեկամին քսակը կամ ժամացոյցը գողցած ըլլալուն համար իրբև գող ներբարկալ կը ըլլայ և իտպառ կանպատուի. իսկ ամենեւին անմոյթ կը կենան կնոջ մը սիրան ամուսնէն կորչելու նեանարկոյ և հարազատ զաւակաց թուոյն մէջ սասար ազայ մը մտցնոյ անառակին, ապայ մը՝ որ թիչ մը ետքը իրենց հայրենի ժառանգութեան մեկ մասը հարազատներէն պիտի գողնայ: Այսպիսի սնիր մը իրբև յանցանք չնկատուելէն զատ, կը խնդան ալ վրան, և գողցուած ամուսինը դառն հեզնութեանց առարկոյ կը ըլլայ . . . Բայց կը հարցնեմ նեզ, ինչ յարաբերութիւն կայ անպարկեշտ գողամեօք պղծեալ կնոջ մը մարմնոյն, և ամուսնոյն նակաւը գրոջմուած բծին մէջ: Ոչ, ընտանեաց հոր մը պատիւը պտանկի մը կողերուն կցուած չէ: Ենութիւնը նորանեւութեան մէջ մտնողէն ի վեր, այս նախադաշարումը կը տկարանայ: Բայց արձակելու, ամուսնական բարուց զեղխութեան առաջին աննելու և ամուսնութիւնն յարգելի և պատկասելի ընելու համար՝ ո՞վ պիտի աայ մեզ ապահարզանի որէնքը:

Գասապխանեցէք ինն, կայսառ և թեթեւամիտ կանայք, եթէ ամեն անհաւասարմութեանց ծայրն ապահարզան ըլլար, կը մտածէ՞ք միթէ, որ արգիլեալ հաճելից այն բուռն ծարաւը թիչ շատ պիտի հանգարտէր: Եթէ Դաղզիայ մէջ ալ յայնկոյս ծովու

գրացեաց (Անգղիացւոց) նման՝ հրապարակաց վա-  
նաստան մէջ : Մի շինի ծախս է շինել : պտաւրու  
թշնամանաց և խայտաւակութեան ձայնով շուանք  
գիրք՝ քաշիւտէին զանգ, եթէ կարելի ըլլար կինք  
փոխել ինչպէս որ կատան կը փոխէր իւր տրեխը . ե-  
թէ ձեր գրաց ալ Մովսէսի կամ Մահմէթի որենքը  
գարծաղբէին, չէ՞ք մտածէր որ սարսափը շատ քաղ-  
ձանքներ պիտի մարէր և մեղաւորից տրփանքը պիտի  
արդիւէր, և ամուսնական պարտքերն աղեկ պիտի  
պահպանուէին :

Դուք ալ խոտափրոտ և բանասոր մարդիկ, պա-  
տասխանեցէ՛ք, գո՛ւք, որ տկար և անպաշտպան էակ  
մը հարստահարելը ձեզի հանգչք մ՞ըրած էք, եթէ  
ամեն մէկ թշնամանքէ ետքը ապահարզանն համէր,  
եթէ ամեն մեկ ամարդի ձեզ, մէն մի շուտանքէ, և  
հարուստէ ետքը արձակումն ծագէր, պատասխա-  
նեցէ՛ք, միթէ այսպէ՞ս պիտի վարուէիք :

Ինչոքը գործով հաստատենք, հարիւր ըու-  
թեանց մէջ յիսունը ամուսնոյն ամարդութեան, յար-  
գանաց պակասութեան, անտարբերութեան և յոսի  
ընթացից հեռեւանքն են. քառասուն և ինը թէ յո-  
սի ընկերութեանց յանախելին, թէ փամեզաւոր  
մտերմութենէ ետքը պատահած առիթներէ, և թէ  
ոսկւով ապահանելէ կը հեռուին, երբ զարգարանաց  
և զեղիութեան անապարծութիւնը կիշխէ կնոջ, և երբ  
իւր հարստութիւնը իր պահուսնանաց հաշակին հետ  
չհամեմատին : Վերջապէս՝ մեացեալ մին ալ անա-  
ւակութենէ և տարփական մոլեգնութենէ կը ծագի,  
կինն ընդհանրապէս բնութեամբ զգաստ է, երբէք  
ցանկութեան կրակոտ քաղձանքը չփորձէր, որ ջո-  
փութեան և անասակութեան կը մղէ. իւր կազմն  
աւելի համեարտ է. քանզի իր պաշտանը մարդկային  
ցեղը մշանկեմասորին է, և հարմեմոյք անկարող են

Ժննդարեւութեան : Եթէ անգամ մը կենդանեաց սանգուզն ինձամբ , կը տեսնամք որ միշտ էզն արու- ին մերձենալուն կապտակ է երբէք չգրգռէր : Այս- պէս ուզած է բնութիւնը , կինը հաւասարիմ է այս բնագոյման : Դրեթէ միշտ այրը կը հրապուրէ , կա- պականէ և կանայաատէ . եղբւի , և բոլորովին անն- շանքն յագեղէն ու պղծեղէն ետքը , իւր քաղցրաշունչ բուրամը կորսնցնող ժաղկի մը պէս կը լքանն զայն :

Շատ կանայք անձնասուբ ըլլալով իրենց ամար- զի ամուսնոյն նախանձութեան գրէժը լուծել կու- զեն : Շատ սրեր տասապելէ և համբերելէ ետքը հեռուեալ խորհրդածութիւնները կընեն . « Ինչո՞ւ համար գիտակիմ այնպիսի արարածի մը՝ որ փոխանակ յարգանաց և ակնածութեան՝ իննի համար գեշ կը խորհի . որ իննի հետ ամուսնանալուն համար թշուառ կը գանայ ինքզինքը , որ քայլերս կը հաշուէ , կը նկա- տէ , և ամենափոքր շարժմունքս կը լքտեսէ . որ բա- րեկամի մը ուզողած խօսքէ մը՝ ժպտակ մը կը կտա- զի . գերջապէս մարդ մը՝ որ իւր նախանձաւ բնաւո- րութեամբը կը թշուառացնէ , որ իր անուրբ կաս- կածներովը կը պղծէ և կը խայտատակէ զիս : Ո՛հ , շփրէր զիս այս մարդը , որ բերանը հրամայելու և արգելք մը գնելու համար կը բանայ , որ միշտ իր զո- րութիւնը և իմ տկարութիւնս կըզգացնէ ինձ . ո՛չ , շփրէր զիս երբէք , քանզի սէրն ամուսնեաց մէջ հա- ռասարութիւն ըսել է , իսկ սա տէր կը կարծէ ինք- զինքը . . . »

Արգարե՛ այն մարդը որ բացարձակ իշխանութիւն մը կը սեպհականէ իրեն , միթէ սիրոյ ոպանելո՞ւ է . երկիւղէ և կեղծաւորութենէ ազատ սէր մը կընա՞յ պահանջել : Միթէ գերին իր տէրը կընա՞յ սիրել , ինչպէս որ տէրն իր հաւասարը կը սիրէ : Ասկից զատ կանգնեմ , սա ըսէք իննի , ի՞նչ իրաւամբ այրն ինք-

զինքն ամեն բանի բացարձակ տէր և բարձրագոյն վեհապետ նանչնել կուզէ, վեհապետ մը՝ որուն ամենայն ոք կրտսորական ազատութիւն պարտի : Միթէ զգրութեա՛ն իրաւածք : Աւրեմն հետեւեցնենք, թէ բեռնակիրն ալ հրամայելու է բոլոր անոնց, զորս իւր բռան հարուածք կրնայ գեանհարել . թէ լայնալանձ գեղջուկը՝ տկարակազմ քաղաքացին նմելու է . ուրեմն հաստարացուկ երիտասարդն իբրև թագաւոր ընդունեցէ՛ք : Մարդկութեան առաջին ատեններն ասանկ էր . մեկ քանի վայրերնի հրոսակաց մէջ ալ տակաւին այսպէս է . կարելի է, բայց ընդհակառակն՝ եթէ մեր գարուն մէջ մտաւորական զգրութիւնը կը տիրէ, եթէ կինն այլ ևս ի՛մ մը չէ, և եթէ մեր ընկերութիւնը նանչցաւ որ նա ալ քաղաքակրթութեան բարիքը վայելելու արժանաւոր է . բաժնակեցէ՛ք զայն ուրեմն այն մարդէն, որ իր կնոջ հնազանդութիւնը պահանջելու համար միայն խիստ նայն մը և կորսի՛ր բազուկներ սո՛մի :

Քիչ մ'ալ զգատաւութեան և հաստարմութեան երգման վրայ քանի մը հանգարաւ խորհրդածութիւններ ընենք :

Միթէ իրաւո՛ւնք է այս երգումը պահանջել . և թէ այր ու թէ կին պիտի կրնան զայն պահել : Ազէկ գիտէ՞ք որ արանց երգումնք անտախ են . թէ իրենց ցանկութեանց և կրիցը համար այնչափ գիւրի՛ն է զանոնք գրծել՝ ինչպէս հազմին գիւրի՛ն է հանգարա իւր մը վեազեաւել . ասկից զսա գիտէ՞ք որ հաստարմութեան երգումն ամենէն գիւրեզժանեթի՛ն է :

Նաե՛ ինչո՛ւ համար կնիկներէն աւելի արանց ներեալ ըլլալու է իւր երգումէն ազատիք : Միթէ ըստուգուած չէ՞ որ ընդհանրապէս՝ նորապի արու ամուսինք իրենց կնոջմով չեն բաւականանար . կինը որ-

չափ ալ նխօթական և բարոյական կատարելութիւն ներով հարուստ ըլլայ, ուրիշ կիներ հրապուրելէ ետ չեն կենար, թէև իրենց կնովմէն նուազ գրաւիչ ալ ըլլան, և առանց խղճի, առանց իրենց պարտուց մտացմանը վրայ ամշնալու, ու առանց վախնալու որ իրենց կիներ զինքը կը նգէ, ամեն կարելի միջոց ի գործ կը գնեն զանոնք խաբելու համար: Եւ բոլոր ասոնք վասնզի որէնչը ջկեանս կաշկանդած է զանոնք, քանզի ամուսնութեան որէնչը մեր ընկերութեան այխոյժ քայլերուն հետ համեմատութիւն չունի:

Արդ՝ եթէ ցանկութիւնը, ուրիշներուն հրապոյրքն ստանալու անյազ իղնը, եթէ աւելի բունն հաւոյից անկեալութիւնը կրնայ զմարդ երգմնազանց ընել, ինչո՞ւ համար կրնն ալ նոյն բաղանչը նոյն պէտքը և նոյն իրաւունքը չպիտի ունենար: Աւրեմն միոյն ներքի եզածը միւսէն պահանջին անիրաւութիւն է:

Ընդունինք՝ թէ կիներ ներքին գրգռիչ յատկութիւններ չունենալով, մարդոցմէ նուազ կզգայ ցանկութեան հուրը, սա կազմական իրաւամբ, թէ այն այնպիսի գործարաններ ունի, որուն գործը ուզեցը գրգռելէ ընդունինք՝ թէ կիներ կրնայ երկար ատեն զպել ինքզինքը տարփական հաճոյքներէ, բայց ընդունինք նաև՝ թէ ամեն կին ալ գեղեցիկ կամ ազեղ, սիրուն կամ անհաճոյ, գիւրախար կամ խըստասիրտ, միշտ ունի վայելչութիւն մը, երևելի կամ պահուած հրապոյր մը՝ որոնց սքանչալոցներ ալ կը գանուին, որք յարգանք և երկրպագութիւն կրնան գրաւել: Ասանկով իրեն ամենափոքր յօժարութեանցն հնազանդելու փութացող մարդն այնչափ աւելի քաղցր ու սիրուն պիտի տեսնայ, որչափ որ իւր ամուսինն անտարբեր և անհաճոյ կեքննայ: Միացուր ասոր հետ այն լքումը, որուն մէջ կը մաշին շատ կա-



նայք : ամուսնոյն երկուք բացակայութիւնը՝ որ իւր գործոց կամ իւր հաճոյքոց կը վազէ , ասն մտած ա-  
սեմն վէա ու նախանձատ բնասորութիւնը . եթէ սի-  
րահարին հուրը՝ ամուսնոյն սառնամանեացը , միոյն  
ահաեութիւնն ու շատ անգամ ամարգութիւնը՝ միու-  
սոյն գողտք սիրունութեանը գէժ գնեա , պիտի ստիպ-  
ուիս խոստովանել թէ կեող համար այս հակապատ-  
կերեանքը շուրթեան գրգռիչ պատճառներ են :

Ասկից զատ՝ ամենուն գիտցած մեկ իրողութիւ-  
նքն է , թէ այն վաշտկեանէն՝ յորում ամուսինը ձանձրա-  
նայ կամ վարքը փոխէ , նուազ կը յաճախէ իւր ասու-  
նը , կրնն այս վարժունքէն թշնամանեալ , աշխարհի  
մէջ անանկ մարդոց կը պատահի , որ իրաւունք կու-  
տան իրեն և ամուսինը կանարգեն կեող սիրտը մշա-  
նալու համար , և երբ կարող ըլլան գրաւել , այլ ևս  
անոր հետեւանքը նախասեռելը գիւրքին է . . . .

Ենութեան ուրիշ պատճառ մ'ալ կայ , որ գրե-  
թազգարաբ չկարծուածէն շատ աւելի կը պատահի .  
ասի դաս մը անհատից սնապարծ վարժանոցը մէջ կը  
գանուի , որք թէ պէտ բարի ամուսին , ազնիւ մար-  
դիկ են : Բայց զեղջիութեան և շուտջութեան հաշա-  
կով , փայլելու փափայտով , ընկերական կացութեան  
մը կը սովորին . կացութիւն մը՝ որ իրենցը չէ : Ըն-  
կերութեանց մէջ յաճախել , հրաւերներ ընդունիլ ,  
և աւելի շքեղը հասուցանել կը սիրեն , իրենց բարի  
ընդունելութիւն կոչածին մէջ անձնասիրութիւն մը  
կը գնեն , իրենց արուած գովեաններով կը փառա-  
ւորուին : Այս բարի ամուսինք չեն նախասեռելք այս  
գմեցակ մղչեգնութեան հետեւանքը . ամենեւին ու-  
շագրութիւն չեն ընէր որ իրենց ամուսնոյն առաքինու-  
թիւնը կը գղրգեն , նոցա զպատուութեանը խրամ կը  
բանան , զանոնք կուպհանեն , և երկիւղալի հրէշին  
գէժ կը հանեն : Բնենք այս վարժանց հետեւանքը :

Գեղեցիկ պարուններու և շքեղ տիկնանց ընդունելութիւն կընեն, որոց շատ անգամ բարոյականութիւնը չգիտեն. պատանիներ կը մտցնեն իրենց տունը. որք մարդասիրական ներքով կը մրցին և հրապուրելու արուեստին մէջ կաշակերտին: Կանայք կրակըսին քաղցը մեծարանքները սիրել, գովեստից խոսքեր կը փնտաեն. այս փաղաքշանաց սուարկայ ըլլալու մէջ անձնասիրութիւն մը կզգան, և առ ինչն յանկուցանելու համար, խոսքերնուն և զարգարանաց մէջ քիչ մ'ալ պարանք կը խառնեն: Մինչև հաս և այնչ խանդարեալ է ընտանեաց մէջ, գեռ երջանիկ են: Բայց կը հասնի այն որք, յորում գրամական միջոցներն այլ ևս չեն ներէր նոյն ընթացքը շարունակելու:

Ամուսինը կը տեսնայ որ անանկ պարտքեր ըրած է՝ զորս չգիտէ ինչպէս վճարել: Տխուր, ցասկոտ և անհամբերութեան շարժմանց ենթակայ կըլլայ: Գարսքերը զինքը կը նեղեն, կամբաստանէ զիւր կինը և իր յոսի ահաճութեան ծանրութիւնն անոր քաշել կուտայ:

Կինն իւր կարողութենէն բարձր՝ իսկ իրեն համար հրապուրիչ կեանքի մը վարժուած ըլլալով, աւելի պարկեշտ կենաց չկրնար սովորիլ, և կաշխատի որ առաջին անուր կամ պակասցնէ այն կորուսաները, որք իրենց գործոց անկարգութեանը յարակից հետեւանքն են: Թէ մին և թէ միւս պարագային մէջ գէշ նշան և ամեն նկատուցաց համար աղեւապի գուշակ:

Վերջապէս՝ ամուսինը վերջին անձուրթիւն մ'ալ կընէ, այն է՝ թէ իւր մարդասէր և սովորաբար նուազ անկեղծ բարեկամաց քոսկին կը գիտէ: Այն ատեն՝ եթէ կինը նորաստի է կամ գեղեցիկ, եթէ որ և է վաշեղութեամբ մը հանելի է, բարեկամը ասն մէջ կամաց կամաց աւելի կը զեւեղի, իւր անձնու իրու-

թիւնք կը յայտնէ , երթնուելու թիւնք կը կրկնապատ-  
կէ , ամուսնոյն խրատներ կուտայ , կնոջը կը ցտակ-  
ցի , մտերիմը կը լլայ , խաբեպատիք մխիթարու թիւն-  
ներ կընէ գաղանթապէս և խեղճ կինն իւր ամուսնոյն  
զանցառութիւնք տեսնելով , և ամեն որ իւր քովը  
տեսած մարդէն պաշտուելով , եղո՛ւկ , տաանց մտա-  
ծելու կը տկարանայ . . . և կը յազթուի :

Յանցանքը որո՛ւնն է . Միթէ անք կինք գեանէ՛ն  
բուսած , կամ Ս. Առանի զրահովը սպտաազինեալ  
կը կարծէիք : Անիրաւ մարդիկ , գաղթեցուցէ՛ք անք  
տրտունիք , և փոխանակ յուսահատելու . ինչպէս որ  
չստանգամ կը պատահի . եթէ կը սիրէ՛ք անք կինը ,  
անգի համար պահեցէ՛ք և երբէք ուրիշներուն մի՛ տա-  
նիք : Պարսնայք , անգաղաք կանանց տկարութիւնք  
կամբաստանէք և տաանց տկարացուցիչ պարագայնե-  
րը խորհելու կը գատապարտէք զանոնք . բայց միթէ  
արգա՛ր է այս գատին մէջ՞ գատաւոր , գատախաղ  
և միանգամայն մկայ ըլլալ : Կանանց գատալութեան ,  
կանանց գատաստանին տարէ՛ք զայն , և այս փաս-  
տով պիտի պատասխանեն անգ : Արանց մէջ՞ միթէ  
կա՞ն շատեր , որ ի կանանց շտի կարող ըլլան երկաշք  
ատեն խորամանկութեանց , գարանից և սիրոյ տագ-  
նապիչ հրապուրանաց գիմազբաւել : Երբ մարդիկ  
կը սիրեն , միթէ՛ իրենց սէրը պահելու և անոր գի-  
մազբաւելու մասին կանանց աննցած կարողութեա-  
նը շտի իշխանութիւն ունի՛ն , իրենց աննին վրայ ,  
երբ այլը կնոջ՞ սարը կիշնայ իւր գերին ըլլալ երգուըն-  
նալով և այս վերջինն անոր համար զգացած սիրոյն  
կը հակառակի . այս երկուքէն ո՞րն է տկարացոյնը :  
Եւ երբ կինը սէրը պարտուց կը զսնէ , միթէ մեծա-  
զոյնն չէ՛ սա . Ուրեմն , պարսնայք զզրաւորացոյնք ,  
գաղթեցէ՛ք կինը տկար ամբաստանել քանզի երբ սէրը  
զբաւէ զանգ , հարիւր անգամ աւելի տկար կերելու իքս :

Վերջնապէս շնութիւնը՝ ինչ կերպով այխորհուրի միշտ ամուսնութեան երկիր զայի և ահարկու թշնամին ու ընտանեաց վրայ ինչպիսիք ամենամեծ թշուառութիւնը կերեայ : Թէ կինը գործէ և թէ այլը , շնութիւնն իր հետևութեանցը մէջ միշտ յանցանք մը , սեխը մ'է , և լաւ օրէնագրութիւն մը եթէ ոչ ինչէր , գէթ ամուսնութիւնը բարոյականացնելով , նուազ առ նուազ հազուադիւր ընելու էր զայն :

Հոս ապահարզանի օրինաց կարեւորութեան մասին գատաւորի մը երեւելի մէկ յիշատակարանը կընդօրինակեմք : Ասի , որ շնութեան և ապահարզանի կարեւորութեանը վրայ հասող գրեթէ ամեն գործոց մէջ կը գանուի , անքակտութեան հակառակ զորաւոր փաստ մ'է :

Գազգիոյ քաղաքաց միոյն գլխաւոր գատաւորը , իւր ամուսնութենէն առաջ մելորեալ կին մը ունենալու դժբաղդութեանը մէջ գանուեցաւ , կին մը՝ որ ընդհանուր գայթակղութեանց ծայր ու ծանակեզած էր . գատաւորն առանց ձայն հանելու բաժնուեցաւ կնոջմէն : Իսկ երեսուն և հինգ տարեկան կորովի ըլլալով կնոջ մը պէտքն զգաց : Արիչի մը կինը խափել ուզելու մէջ խղճահար , նաև իրրև հարն գործածելու մասին աղջկան մը կամ այլի կնոջ մը հետ յարարերութենէն ալ կը վախնայ : Այս անհանգիստ փեճակին մէջ ահաւասիկ օրինաց և եկեղեցւոյ գէժ ըլլած արատները .

« Կինս յանցաւոր է և ես կը պատժուիմ , Կեանքս սփոփելու և առարկնի ապրելու համար ուրիշ կին մը պէտք է ինձ և օրէնքը կը մերժէ . պարկեշտ օրիորդի մը հետ ամուսնանալս կարգելու : Եկեղեցւոյ կանոնաց վրայ անդատահո հիմնեալ ամուսնական օրէնքն , մարդկութեան իրաւունքէն կը զրկէ զիս : Օրէնքը զիս կը պարտաւորէ կամ անտնկ հաճոյք մը

փնտաել՝ որ ինքը կանգունէ, և կամ ամբօթացից սփոփանք մը, զոր կը գատապարտէ ինքն կտախպէ գիտ յանցաւոր ըլլալ:

« Աչքս երկրի ամեն ժողովրդաց վրայ կը դարձնեմ և շեմ աեանար մէկ ազգ մը միայն, բացի Հռովմէական կաթօլիկ ժողովրդէն, որուն մէջ ապահարզանքն ու վերափն ամուսնութիւնը բնական իրաւունք չըլլայ: »

« Կաթօլիկաց մէջ ի՞նչ կերպ բարեկարգութիւն մը իտանուած է ուրեմն, որ շնութեան հանգուրժեշն աւարքնութիւն, և կին շունենալը պարտք մը համարուի, երբ մարդ իր կնոջմէն անարժանարար կը զրկուի: »

« Ինչո՞ւ համար նեխեալ ու փատած կապ մը անքակտելի է, հակասակ օրինագրքի սա յօդուածոյն թէ « Կողմուծը կնոջ տէրն է: Կը թողուն ինն անձի և ընչից բաժանումն և շնն թողուր որ արձակեմ: Սրէնքը կրնայ կինս նեղութս ասնուլ, իսկ կարգիլէ ուրիշ մը ասնելու: Ամուսին եմ, իսկ ամուսնութիւնը շեմ կրնար վայելել, ինչ հակասութիւն, ինչ գերութիւն: »

## ԳԼՈՒԽ ԻԸ.

### Ազահարզան

Ազահարզանն՝ ամուսնութեան գաշանց օրինոց հրամայեալ անթերի լուծումն է, որով երկուեզոյ մը իրենց երգումէն ազատելով առաջին ազատութեան և իրաւանց կը դարձնէ.

Ազահարզանն՝ ինչպէս որ հիմայ պիտի բացատրենք, ամեն ժամանակ կար, և քաղաքակրթեալ ազգաց շատերուն մէջ գեռ կայ սորա. մեր (Պաղգիացոց) Օրինագրքին լնչումը, որ Թագաւորութեան վերականգնելէն կսկսի, մեծ թշուառութիւններ բերած է, և վերահաստատութիւնը շատ անգամ խնդրուած է՝ իրրի բարոյքումն հասարակաց և առանձինն բարոյց, և իրրի ազահով գեղ մը՝ նօրակազմ ընտանիքներն աւերող յանցանաց և սեխրներուն գէմ:

Երբ հաստատութիւն մը փոխուելու խնդիր կը ծագի, հաղար անպատահութիւններ կերեւան հնաւանդ սոխորութեանց հեանւոյններուն աչքին. և աւանց խուզարկելու թէ ուսկից կուգան այս անպատահութիւնները, աւանց քննելու թէ նոր հաստատութիւնը նախամեծար է առաջնոյն, կորոշեն թէ փոփոխութիւնը վասնոգաւոր է. խնդիրն այսպէս կտրել նեանչը խեղացութիւն չէ: Արիչ կերպով ըսանք: Քննելու է, թէ նշանակեալ անպատահութիւններն՝ հաստատութեանէն ծնունդ առած նախադասարմունքներէն չեն ծագիր ուղղակի. արդ՝ այս պարագայիս մէջ, եթէ հաստատութիւնը փոխուի, ընտկանարար անպատահութիւններն ալ բաւնալ հարկ կըլայ և արդէր ինչնին կիյնան: Օրէնքներն

իրենց հաստատութեան նպատակին դէմ արգիւնքներ գործելնուն պէս ամեն անգամ փոխուելու են . առք համար շնորհելու են այն հաստատութիւնները , որք ինչպէս ապահարզանն , ուրիշ բան չեն , եթէ ոչ նախնական իրաւանց կործանումն :

Ապահարզանի վերահաստատութիւնն ամուսնութեանց շնորհակցէն զաս , ընդհակառակը՝ բարոյականութեամբ պիտի վտեմացնէր զայն , և ամուսնաց թիւը պիտի նուազէր . Ասեն մարդ գիտէ , որ այսօր ամուսնութեանց շատը խարդաւանաց վտեւառականութիւն մ'է . ամուսնանալէ առաջ գիմակոյ կը ծածկուին , պակասութիւնները կը կերպարանափոխին , քանի մ'որ մտլութիւնները կը լսեն , և անլուծանելի երգումն արտասանելէ ետքը սանձարձակ կը թողուին . Ապահարզանն այս ամեթալից խարէութիւնը կրնար վերջացնել : Այլ ևս այն դասն կուրենքն , այն անզուսպ հակակրութիւններն , այն ամուսնական ասելութիւնները լայտի տեսնուէր , որք անզազար կը գտնուայնեն զիրար , քանզի անանց վերջանալը տեսնելու յայտ կործնուցած են : Երբ յարգանք վերջանան , միութեան վախճանն ալ հասած ըլլալու էր : Զգացումները մեռնելուն պէս՝ նոր կեանքի մը մէջ մանալու էր մարդ , և զիրար ասելէ առաջ զիրար ձգելու էին : Ասկից զաս՝ ամեն մարդ գիտէ , թէ որ և է բան մը շարունակ վայելելով մարդ կը յագի , և զգացմունք կընդարձանան . մինչդեռ ստացեալ երջանկութեան գողարիւր տեսնելու վախը՝ բաղձանքը կը զարթուցանէ , և տկարացող նաչակը կը նորագէ : Արդ՝ անլուծանելի ամուսնութիւնը կրնար բազդատուիլ այս անքնդհաս վայելչիւն հեռ որ կը բխանայ և կը քնանայ , ու վախը նորա զարթուցիլ խիտնը պիտի ըլլար :

Ուայց ապահարզանի ընդգիմակոտաց կողմէն՝ Անբարոյականութիւն է պատճիւն կը ըսեմ . այս դա-

զափարնեքն ամեն բան կը տապալեն, այնչափ յարգելի միաստութեանց կը մնասեն, և խաղառ կը ջակենն կըսեն: Իսկ, ո՛չ. կը սխալիք, այս գազափարները բան մը չեն տապալէք. բանի մը չեն մնասէր. ապահարզանք միմիանց պատշան և երջանիկ ամուսնեաց համար չէ. այլ յասկապէս հակակիր ամուսնեաց համար: Իսպառ միացեալ կեցէ՛ք գուք՝ որ ամուսնութեան մէջ երջանիկ էք. խաղաղութեամբ վայելեցէ՛ք և եր ընամենեկան ուրախութիւնները. իսկ՝ գուք երջանիկ պիտակի մէջ ըլլալուդ համար մի՛ արգիլէ՛ք ևեզ հակառակ պիտակի մէջ գանուողներուն, որ իրենց թշուառութիւն ու յուսահատութիւն պատճառող չլինին չխորատկեն:

Ճշմարիտ՝ շատ գառն երգիծարանութիւն է ըսել թէ ապահարզանի հաստատութիւնն անբարոյսականութիւն կը ըլլար: Կը հարցնեմ ևեզ ուրեմն, ընդդիմակ ամուսնութեան ահա ելի տեսարանէն աւելի անբարոյսական ի՞նչ կայ. նորափ անձանց համար՝ շտութեան յանցանքէն աւելի գժնգակ ի՞նչ օրինակ կայ: Ո՞վ կընայ աւելի սոսկալի հարուած հասցնել բարուց, քան երկուց ամուսնեաց գալթակզութիւնն, որք երգումին կը գրծեն և կը պանկին, որք ամենամուրախան պարատարութիւններն ոտնհար կընեն, և ամենատարբ պիտակը կը պղծեն: Ասկից զատ, միթէ հասարակաց բարբերը մտանաւոր օրինակներով ազգեցութիւն չե՞ն ստանար: Միթէ չենք տեսնար այն ազետալի արգիւնքներն, որ ծնողքներն իրենց զուտակաց զգացմանը դէմ վարուելուն կը հեռուին: Ընամենքի մը օրինակն իւր գրացին կապականէ, այս վերջինն ուրիշ մը կապականէ, և ապա առ ապա տարափոխիկ տեսք կը նարակէ, ու բոլոր երկրին վրայ կը տարածուի:

Վերջապէս՝ միթէ բարք նուա՞զ մարտը են Յու-



Նախան ու բարեկարգեաց եկեղեցւոյն մէջ՝ յորում  
ապահարզանը թողեաց է, քան թէ լատին եկեղեց-  
ւոյն, որ կարգելէ զայն. Ռուսոյ, Բրուսոյ, Գեր-  
մանոյ, Անգղոյ, Հօլանտայի, Զուիցցերիայի,  
Լեհաստանի, Եսէտի, Տանիմարքայի, Թուրքոյ,  
Ամերիկայի, վերջապէս երկրագնտի բոլոր երկիրնե-  
րուն մէջ միթէ բարբերը նուա՛ղ մաքուր են, քան թէ  
Սպանոյ, Փորթուկայի, Ծրանտայի և Իտալիոյ մէջ,  
եթէ այսպէս ըլլար, այնպահա՛ն ամեն ազգերն անբա-  
րայանիան կըլլային բացի այս վերջինն չորսէն: Արդարեւ  
այս հաստատութիւնը մարդկութեան թշնամանք պի-  
տի համարուէր եթէ անպատեհ չըլլար:

Ապահարզանի որինաց հաստատութիւնը բնակա-  
նարար մեծ ազգեցութիւն պիտի ընէր երիտասար-  
դաց ընտրութեանը վրայ. պիտի ստիպէր որ զիրար  
ուելի աղէկ հասկնալու հետամուտ, և ինքնին ասելի  
ապահով ըլլան անանկ կապ մը գնելով, որուն լուծ-  
ուելէն պիտի վախնային:

Զեղի համար՝ անպատշա՛ն ամուլը, զնեղ խեղճող  
չղթայն պիտի խորտակէր, կռիւնիդ պիտի վերջա-  
ցնէր և աստելութեան ու վրէժխնդրութեան գաղա-  
փարները ջնջելով ներ սրտէն, յանցանքէ պիտի պահ-  
պանէր զնեղ:

Իսկ ի կեղծաւորք և սժտի գողեր, ներ շարու-  
թեանքն ու անարգ խարէութիւններով պիտի պատ-  
ժէր զնեղ:

Զեղի համար՝ վտանգաւոր վաւարուք, շուայ-  
աութեանց միջոցները պիտի պակսեցնէր, և բռնի  
սանձահարէր զնեղ:

Վերջապէս՝ գուք, որ նախապաշարմամբ, յամա-  
ռութեամբ կամ շահախնդրութեամբ, ապահարզանի  
հաստատութեանը կըհակառակիք, միթէ զնեղ ի գութ  
չարժեղու համար սոսկալի պատկերներ և ներ անկարե-

կից հոգին յուզելու համար ահարկու անտարաններ պէտք են նեղ . Արեւն, բայէ՛ք եղեռանց պատմութիւնները , և անսէք հոն կանանց կողմանէ ամուսնեաց վրայ և փոխադարձաբար գործարուած այնչափ անձնասպանութիւններ , թունաորելներ , և ուղանու թիւներ : Ասիկայ չափազանցութիւն չէ . եթէ ասանց թիւն հասկնալ կուզէք , կրնայ ցուցուիլ

1769 ին Փարիզու խորհրդարանը կնոջ և ամուսնոյ մէջ պատահած շտան և ինը թունաորութեան և ուղանու թեան սեիրներ ունէր դատելիք : Եթէ այս թուոյն վրայ յաւելցնենք ուրիշ խորհրդարաններու դատելիքներն ալ , թիւը շատ ստեղծի կըլլայ , և եթէ արդարութեան պահուած այն կարգի սեիրներն ալ յաւելցնենք , մարդ ստեղծէն կը սառէր . . . Այսպիսի ահագին հաշույ մը առին ո՛վ կրնար համարձակիլ ազահարզանը մերժելու . մանաւանդ որ այս օրէնքն եթէ ոչ բոլորովին լնիէր , գէթ այսպիսի եղեռանց թիւը պահեսեցնելու ըլլար :

Հանրապետութեան ասեմն՝ իմաստուն օրէնագիրք անդուծանելի ամուսնութեան ծագած անհամար թըլուտութիւններէն ստեղծով , այն դարմանը գնել ուղեցին , որուն երջանիկ գործածութեանն Յուստիանոս կայսրն ա իր օրդին մեծ բարիք վայելած էին : Այն ասեմն ազահարզանը հաստատուեցաւ , որ ամանց համար սփոփիլ և սլլաց համար դառն անունուեցաւ : Իսկ՝ այնպիսի օրէնք մ՛ալ գրուեցաւ որ կատարեալ և բացարձակ բաժանումն հրատարակող պարագայից փոքրիկ թիւը սրտեց : Մէկ մը որ ազահարզանը վճառէր , կատարեալ հաստատութեան երդումը լնուած էր , և իւրաքանչիւր ամուսին անին կամք ազատաբար կը դատուէր :

« Ազահարզանը եթէ հաստատուի , պիտի անունաւք , որ ասեմն որ ասեմն կողմանէ խել մը մարդիկ

պիտի պահանջեն զայն : ըստզնեբուն կարծեացը զէ՛մ մարտաբու համար իրողութիւններով պիտի պատասխանեմք . բաւական գարեր , յորում նախնի Հոռով ապահարզանը վայելեց : շատ քիչ պատահեցաւ : Պատմութեան հարցուցէք : - Հնգկատանի գաւառներէն միոյն մայրաքաղաքին՝ Ակուայի գլխաւոր գրան վրայ տակաւին տա հին արևանագրութիւնը կը կարգացուի : Ժիւլէֆի իշխանութեան առաջին տարին , հազար և տմուսինք գաւառորենբու նեւամբ կամու բաժնուեցան . ու կայսրը բարկանալով , զայրանալով իրն զիեց ապահարզանը : Հեռեւեալ տարին նախնաթոշին բողջատութեամբ 3000 տմուսնութիւնք անուաղ կատարուեցան , 7000 աւելի շնութիւնք : և 300 կին այրեցան իրենց ամուսինք թունաւորելանուն , 75 մարդիկ իրենց կիներն սպաննելուն համար ցիցը ելան , և զանազան տանց մէջ կատրած կաւրանաց զինը վեց միլիոնի հաշուեցաւ : Ասոր վրայ և կայսրն ապահարզանը վերահաստատել փութաց : Ծրանուայի մէջ առաջին Հանրապետութեան , Հրապատասխան ու կայսրութեան տանն՝ արևակերպ թիւն այնչափ քիչ էր , որ աւելի այս հաստատութեան բարոյական ըլլալուն ապացոյց մը կրնայ համարուիլ , քան թէ ընդգիմարանից համար զէնք մը : Մեր հայերն իրտամբ կրնեն՝ թէ այն փառաւոր տանի բարքերը նուազ մեղմացեալ էին քան թէ այս որում բարքերը : Բանզի այսոր զայն մերժող օրինաց հակառակ՝ ապահարզանն այնչափ բնական է , որ շատ տանց մէջ ամեն գիշեր ամուսնեաց մէջանգր կը պառկի :

Ուրեմն հաստատու է թէ մասնաւոր բոյց զօրեղ փառասիրութիւնք կը զնանային և իրաց այս փրկակէն փառաւոր էին : քանզի սոքա վերահաստատութեան օրէնոգիրներն յուզեցին ընդզեմ ա-

պահարգանի , զոր հանրապետութիւնն իբրև պետք  
մը հրատարակած և իբրև բարիք շնորհած էր . և  
Քննել տաին զայն :

Միթէ բարոյականութիւն է իսպառ միասեղ  
ապրելու բռնադատել այն երկու էակներն , որոց  
վրայ իտրին հակակրութիւնք արմատացեալ են : Մի-  
թէ բարոյականութիւն է զանոնք ի տես հանրու-  
թեան անել , որոց բերնն նախասինք կը ժայթ-  
քեն և սրտերնուն մէջ անոգք ատելութիւն մը կը  
պահեն : Միթէ բարոյականութիւն է շուտեան հը-  
րաման տալ և հաւատարմութիւնն անկարելի ընել ,  
Վանգի , միթէ վատահ չէ՛ մարդ որ շուտաբարոյ  
և պազշտա ծերունոյ մը ծախուած անփորն և կամբ  
շունեցող ազգիկը պիտի անիծէ այն շղթայն , որ  
զինքը գերի կընէ : Այո՛ , պիտի ըստ ազգիկը , յու-  
սահասի , բայց ի զոր , ամուսնութիւնը ջկեանս կը  
տելէ . պետք է որ երկոցանոց մին մեանի , որպէս  
զի միւսն ազատ ըլլայ : Այն ասեն՝ բնականաբար  
ազգիկն իւր ամուսնոյն մահուանը կը բաղնայ : Յե-  
տոյ , եթէ նոզկայի գգուանքը մտնալու համար ,  
գեւաափթիթ սրտի մը վրայ սիրոյ բուրումը շնչելու  
երթայ , անարգ կը կուէք զայն : Բայց գուք ինքնին  
ուզեցիք զայս : Թշուառ փափուկ ծաղիկը սառույցին  
վրայ նետեցիք . ի հարկէ պետք էր որ՝ յարեգակն  
կոյս գառնար , կենդանացուցիչ նառազայթ մը շն-  
չելու համար : Բոլոր ասանց մէջ ինչ գեղեցիկ բա-  
րոյականութիւն կը տեսնանք :

Միթէ բարոյական է մի և նոյն յարկին մէջ բը-  
նակելու , մի և նոյն առաջաստք վայելելու բռնա-  
դատել այն երկու էակներն , որք հակառակու-  
թեամբ կամ ատելութեամբ փրացեալ՝ զիրար շնն  
հանգուրժէր այլ ևս , որք զիրար կը մերժեն : Միթէ  
մարդկութիւն է ճնշել զանոնք ամուսնական շղթային

տակ, երբ կարելի էր կարեկից ըլլալով զիրենք սփռփել, և զայս չընելն զսա արգիւել ուրիշ սէր և ուրիշ բաղձանքները: Յայտնի է որ զանկարելին պահանջել է, որ և է որէնք մը չպիտի կրնայ երբէք սրտի ազատութիւնը սեղմել այսպիսի խիստ կապերով: Աւրեմն ապահարզանի քննումն ո՛չ բարոյսականութեան և ո՛չ մարդկութեան նպատակաւ վերնուած է: Փորձենք անգամ մը թէ ե՛րբ ծագումն առած է սա, և մինչեւ մեր օրերը գտանանք. թե՛րեւս արա պատճառը գտնանք:

Ապահարզանը փոխափայտութեան պատու մը չէ, ըստ որում ամեն գարույ մէջ և ամեն տեղ գտնուած է, ինչպէս բազալալիթեալ ազգաց՝ նոյնպէս նաեւ բարբարոս ժողովրդաց մէջ: Պարսկաց, Հնդկաց և Եգիպտացուց մէջ կար: Արինաց երկրորդ գիրքը (Պլուխ 29) մեզ կը սովորեցնէ թէ Սոփսէս հրամայած էր զայն: Յունական հանրապետութեանց ամենուն մէջ մեծ զարութիւն ունէր, և Հասպժ ալ իւր օրինաց թուոյն մէջ ընդունեց զայն: Հասպժու յայն միայն արանց համար հրամայած էր, իսկ մարդկութիւնն ի նպատակ զրկեալ սեռին պահանջեց, և Յուրիանոս կայսրը նոյնպէս կանանց ալ շնորհեց: Ազեքսանդր Սելեւքիանոս, Վաղերիանոս, և Գիսկզեափանոս և ուրիշ կայսրերն ապահարզանի վերաբերեալ օրէնքներն հաստատեցին, և անոր տեղի տալիք պատճառներն ալ սահմանեցին: Ինչպէս՝ յոսի վարմունք, նեղութիւնք, ամուսնեաց միոյն առ միւսն ձեռնարկեալ եղեռնագործութիւնք, մարմնական և անգարմանեցի անկարողութիւնք, ամուսնեաց միոյն գործած սնիրքն, և որուն նախատանացը միւս անմեղը չպիտի մասնակցէր՝ անոր հետ միասեղ կեանք մը անցնելով, ասոնք անփիջապէս ապահարզան կը պատմադրէին: Յուստինիանոսի ասանք կեո՞ղ անձնական

մաթեմատիկայի և ֆիզիկայի համար հրատարակել հանձնարարությունները, եւս առաւ որոշումը և Յունաստան եկեղեցւոյն առ Հռոմի կաթողիկոսին կարծեցեալ միացումը շարգիլելու վախով անոր տեղ խորագրաւթիւն բանեցուց :

Անքակտութիւնը հաւատոյ վարդապետութեան չք վերաբերիլը, պարզապէս կրթութեան կանոն մ'է : Յունաստանի, Ռուսիոյ, Ֆրանսիոյ, Գերմանիոյ և Քրիստոսի կաթողիկոսաց մէջ ապահարզանը կը գործածուի, ինչպէս նաեւ քաղաքական երկիրներու մէջ : Եւ եթէ՛ կրօնական սրինաց անքակտութիւնը հանչուի ալ, ապահարզանին արգելք մը չըլլար : Ըստ որում քաղաքական սրէնքն առանց եկեղեցական խորհրդէն խոսիլու : քաղաքային պաշտօնակալին առջեւ հրատարակու գաղմագրուած միութիւնն առ ոչինչ կը համարի :

Գաղղիոյ սրինագրքին 170թդ. յօդուածը կը հրամայէ օտար երկրի մէջ հաստատուած ամուսնութիւնը չնկնել, եթէ Գաղղիոյ մէջ հրատարակուած չէ : առանց խոսիլու որ կրօնից պաշտօնէին ձեռնքով կատարուած է : եթէ հրէայք, արեւելեան քրիստոնէայք, բարեկարգեալք, խաւնութիւնն ու գրեթէ ամեն կրօններու ամեն պետութիւնը ապահարզանն իր բու պէտք կը ճանչնան : ուրեմն ինչո՞ւ համար Հռոմի մայ եկեղեցին մերժած է, և ինչո՞ւ համար արկնըու գիր մարմինը նորա սրինակին կը հեռուի :

Յայտնի բան է, Գաղղիոյ սրինագրքին մէջէն առոր ինչումը մասամբ՝ եկեղեցական վարդապետութեան քաղաքական սրինաց վրայ, բանամայլէն տեղի ունեցաւ : 1792թ յեղափոխութեանէն ծնունդ առած ապահարզանը 1816 մայիս 8 թուականին բանարար արտաքսուեցաւ սրինաց մէջէն :

Միթէ պիտի կրնայ ըսուիլ որ ապահարզանի ջրն-

հումք աստուածային կամ բնական իրաւունքէն կու-  
գայ : կրօնից ազատութիւնը , որ Գաղղիոյ մէջ շատ  
արիւնային զինագրութիւններէ ետքը նանչուեցաւ ,  
բնականաբար ապահարզան կուզէ . քանզի՝ անիրա-  
ւութիւն կրչոյք քաղաքային սրինոյք միայն թողուլ  
ներքել և միւսին մերժել . կամ թէ՛ շնորհէ միայն սրուն  
հաւասար ապահարզանի գործածութիւնը կը ժխտէ  
և թողուլ միւսին , որոյ կրօնքը կը հրամայէ արձակել .  
այս իրաւունքը սերտիւ կապուած է խղճմանսքի  
ազատութեան :

Զեմք այլ ևս այն ժամանակները , յարում պա-  
պերն իրենց շահուն համեմատ ազգաց քաղաքային  
իրաւունքն ուղղել կը խորհէին , ինչպէս ըջին Գրի-  
գոր Թ. և Կղեմէս Ե. որք ամուսնութեանց , կտակ-  
ներու , սեպհականութեանց ներին վրայ չգիտեժ որ-  
չափ քաղաքական սահմանադրութիւններ զիջեցին :

Այո՛ , եթէ ապահարզանն իմաստութեամբ կազ-  
մակերպուի . կանոններու , ապացոյցներու , զեղծ-  
մանց առակքն առնող կարելի պայմաններու ենթա-  
կուի և սահմաններու մէջ պարփակուի , երբէք ամուսնութեան շարաեւութեան սկզբանը շքեակեր ,  
կրօնից ազատութեան սկզբանցն հետ կը համեմայ-  
նի . վերջապէս՝ քանի մը տարիէ ի վեր Գաղղիացուց  
մեծագոյն մասին կողմանէ խստիւ պահանջուած ի-  
րաւունք մ'է . 1831ին երեսփոխանաց խորհրդարա-  
նին մէջ ի նպաստ ապահարզանի նայն մը բարձրա-  
ցու և արձագանք գտաւ : 1832ին այս նայնը ուրիշ  
աւելի ազգու նայներով ստուարացաւ . և 1833ին  
որկնոց իր մարմինը փնտրանեց և ընդունեց այսչափ  
փափաքելի որկնքը , որ Լիբրամնոյրկի պաշտախն  
սասուցեալ քարերուն վրայ գնաց խրեցաւ : 1848ին  
Գ. Քրէմլէս ապահարզանի վրայ հրովարտակ մը ըն-  
դունելու համար մեծ քայց գծրապղարար անդուտ

հանքեր ըրաւ : Յուսամք որ արդի խորհրդարանի ի-  
մասամբ ինն այս մերժումը նկատազուիթեան պի-  
տի առնու :

Ամուսնական կենաց մէջ պիտի մտնանք և հետա-  
զասենք՝ թէ որո՞նք են այն պատեհաւորն, որք ամուս-  
նութիւնը կը գառնացնեն և անոր լուծումը կը հար-  
կադրեն : և ասելի լուսարանելու համար՝ սիրոյ ամ-  
ուսնութեանց և շահասիրական ամուսնութեանց  
բաժանումը պիտի ընդունիմք : Առաջիններն այնչափ  
քիչ կը պատահին, որ լուծեամբ պիտի անցնիմք .  
իսկ երկրորդը երկու կարգի պիտի բաժնեմք :

Առաջին կարգի ամուսնութիւնք անոնք են, յա-  
րում մարդ կինն իր ոսկւոյն համար կաննէ : Աս-  
կարկուիթիւն մ է, որ ծնողացը հետ կը գալնագրէ, և  
սովորաբար քաղաքական գալնագրին մէջ իր շունե-  
ցած մէկ հարստութիւնը որոշել կրնայի : որպէս զի  
բաժանումն եղած ատեն, նորա ստախն մէկ մասը  
կողուցաւ : Այս ասուսուրը նուստացուցիչ և խա-  
րէական անարգութիւն մ ունի, իայտառակ և նա-  
խատախց գողութիւն մ է, որուն զէմ արգարու-  
թիւնը կը լռէ :

Երկրորդ կարգի ամուսնութեանց մէջ, փառա-  
մունքեր կը տեսնանք, որք այնպիսի կին մը կաննեն,  
որ թէև հարուստ չէ, բայց որուն ընտանիքը մանա-  
ւոր մեծարանք մը կը վայելէ, և բարձր կացութեան  
մէջ գանուող մէկ քանի անդամները կրնան զինքն  
իր ցանկացած պաշտեններուն մէջ անցնել : Այս ոչ  
տեսակ մը առեւտուր է, որ իրա՞ թէ պէտեհ մետապի  
փայ հիմնեալ չէ, բայց որ շատ անգամ աղէկ հե-  
տեւանք չունի : Արդ՝ շահասիրութիւնն ամուսնու-  
թեան գրեթէ ամենուն ալ շարժառիթն ըլլալով,  
անգամ մը որ ցանկացեալ ազագային մէջ խորտի  
մարդ, ամեն բան իր գէմը կը փոխէ : այս անթա-



լից ստեղծութիւնը վաղ կամ անագան կը բերէ այն պատգը , որում առանց երես թթուեցնելու համբերելու է . այն է շնութիւնը :

Սա վերջին կարգին մէջ իւր ծնողաց կամքին հրապատակեալ ազգիկ մը ենթագրեցէ՛ք , կամ որ երբեմն իրեն ջանկացող փառամոլին արտաքին կեղծաւորութենէն հրապարեալ , առանց մտածելու և վրասառն արտիւ կարտասանէ այն ստակալի երգումը , զոր թիւ մը ետքը պիտի անիծէ : Կամ սոսնանայ խեղճ ազգիկը : Ազէկ գէշ մեկ քանի ամիս կանցնին . Սակայն անանկ որ մը կուգայ , որ ամուսինն իր նոր ազգականներէն յուսացածը յիրնարով ձեռք անցնել , պատասխանատուութիւնը կնկանը վրայ կը նետէ , ամարգի , ահան և բարկացած կերեւի . խարէտկան ամուսնութիւն մը կատարած և իրենց բեռ եղած ազգիկէ մը ազատիլ ուզող մարդկանց գեղեցիկ խօսքերուն խարուած բլլալն անոր երեսին կուտայ . անհարուստ կին մը առած որը հարիւր և հազար անգամ կը նըզովէ . . . Եւ խեղճ անմեղն այս կոշտ նախաաննաց հանգուրծելու և ամեն վայրկեան այս զապիր թշնամանաց գառնութիւնը սրբելու պարտաւորած է . . . Ո՛հ , այգէտին անսիրտ և թշուառ մ'է : Օրէնք թիւ մ'աւելի արդար բլլալու էին այս տկար էտին անոր ձեռքէն խլելու համար , գծբազգ արարած մը , զոր ամուսինն իր թշուառութեանց պատեաւը կը նկատէ . և որուն վրայ կը թափէ անդադար իր վատ կատաղութիւնը :

Ամուսնացեալ մէկու մը ամարգութիւնն երբեմն պատեառ մ'ունի , որուն մարդ չպիտի ընդունէր հաւատալ . հետեւեալ խոստկցութիւնը ասոր ազգացոյց մ'է (A) :

(A) Այս վրայութիւնը պատեալան է . նոյն նեղնակին Բուկարին ա զոնց անան գրքին մէջ ամբողջ կը գտնուի .

— Այլապէս դարչաճար ու տկար տեսած ազնկանն ի՞նչ ըրեր են : Աչքերն արտասուօք կարմրած և կարծես իւր գիմաց գեղեցկութիւնը շարալար հարուած. ներով կապոյտացեր է : Ի՞նչ է ուրեմն իր ցաւոց պատճառը, ինքն որ այնչափ քաղցր և փափուկ է : Աւա՛ղ, խեղճ ազնիկը . . .

— Այո՛, կը հասկնամ, պաճուհապատանաց հասակը չէ մտցեր, անոր համար կը հասալէ . թերեւ մաշքենի գիբիչը կարծեցնելուն համար կուլայ . շատ պզտիկ է խեղճ ազնիկը :

— Զհասկցաք պատճառը, իր ամուսինը նախանք ու ծեծեր է զինքը, և հազիւ վնց ամիս կայ կարգուելին :

— Միթէ ճշմարիտ է, սակայն ինչու համար այդ ամարդութիւնը :

— Իրատ անոսի նպատակաւ մը . բայց ի՞նչ ընենք, այլը հզորագոյնն ըլլալով պէտք է որ տկարը նորա յոսի տհաճութեանցը տակայ :

— Բայց ի՞նչ պատճառաւ ամուսինն այդ ծայրահեղութեան հասած է, հասկցա՛ւք :

— Իանդի կինը փափուկ, աժգոյն, փարթիկ է . իսկ ամուսինը զէր, հաժկու, գունատ որ կին մը կուզէր :

— Կասակ կընէք :

— Ճշմարիտը կըսեմ, ուրիշ պատճառ չկայ :

— Բայց ի՞նչ կողմութիւն է այդ ամարդւոյն ըրածը :

— Ա՛, մի թշնամանէք զինքը, ձեր վրայ ալ կը խնդան :

— Հասկցայ, խենթեցեր է այդ թշուառը :

— Ընդհակառակը : Ամուսինը մարդկանց լուսագոյնն ու սիրունը հանչուած է, ամեն մարդ կը փնտռէ զինքը, և ամեն սրահներու փառքն է :

— Զեմ հասկնաք :

— Իսկ երբ ասն գայ, բոլորովին կը փոխուի օրացոյցս թիւնը գուար կը մնայ, և միայն տնարգու թիւնը ներս կը մտնայ:

— Եւ ազիթիկը կը հաւանի՞ անոր հետ այլոքու:

— Գարտու որեւալ է, միթէ ամուսնութիւնն անլուծանելի չէ՞:

— Իսկ մէկ գարսնն մը կայ, անմեակն բաժանուի:

— Ես ալ կը խորհիմ թէ իրեն համար ամենէն լաւագոյն միջոցն է, քանզի կը զախնամ որ վերջնապէս չսպաննէ զայն:

— Բայց կը գողմքու խօսքերէդ . . . եպերելի, գարշելի է այդ:

— Ճիշդ ըսածիս պէս է, այս տարարագգ ազիթիկան յանցանքը տեղոյն ըլլալն է, զի ամուսինը կուզէր որ կարմիր ըլլար, ասոր համար կը հարստահարէ, կը ծեծէ: Բայց ի՞նչ ընենք, միթէ որինաց հետ զանգելու չե՞մք:

— Չեզմում մը, վայրենութիւն մ'է այդ: Արէնցն անմեղը պաշտպաննէ և յանցաւորը պատժել պարտի:

— Իրաւունք ունիք, այդպէս ըլլալու էր:

— Աւրե՛նն՝ մէկ քանի մարդիկ հասկնալ յուզելուն համար՝ թէ որէնք անողոք չըլլալն զսա, պարագայից հպատակելու, թէ քաղաքակրթութեան յատկազիմութեան հետեւելու, թէ յաւելուածներ ընելու, և թէ նաև պէտք եղած ատենը բարեփոխելու էր, բոլոր ատենը հասկնալ յուզելուն համար կըրտմ, այդ գծրողը ազիթիկը յիշանս այնպիսի պատճոյ մը գտաւարարուած է, որուն պիտանի չէր երբէք, քանզի որէնքն ամենուն և մեծագոյն մասի կամաց յայտարարութիւնն է, և եթէ չեմ սխալիր, հասաւ այն ատենը, յորում շատ որէնք փոփոխել պէտք էր:

— Այդ նորապի կնոջ համար ունեցած կարեկցութիւններդ, ներ խօսքերուն արտայայտած յազմունքը թարգման են ներ խորհրդածութեանցը պիտի ըսէիք ինձ, թէ որնեղբորք անլուծանելի միութեան յարակից ազգայից վրայ պէտք եղածին շափ խորին հմուտութիւն չունին, այնպէս՝ որ եթէ որեւորք ըլլայիք, պիտի հաստատէիք . . .

— Ապահարզանն, այս՝ հասկցաւ միտքս, եւ արնակելու արինսք պիտի խրատուսէի ամուսնութիւնը, քանզի բոլոր տեսածներուս, բոլոր շատններուս նայելով ամուսնութեան անլուծանելի ըլլալը ամարդութեան և քարուց ազականութեան նպատակն էր նեցուկ եղած է :

— Է՛հ, սիրելի պարուն, անհուն անխղճեա մը կայ գործունէութեան և անձնու իրութեան տարազլիֆին՝ յարուժ ազահարզանի պէտքը տարածուեցաւ, և անցուկ անհատականութեան աւուրց մէջ՝ անզք, յարուժ կապրինք :

Վերագաւաճածք առ կիմն և ընձեւելք թէ յառաջախելութեան այս գարուն մէջ՝ ի՞նչ է իւր արժէքը :

Եթէ հարցնես ընթանեաց հօր մը, մա՞նչ թէ ազլիկ ծնանիք կը նախապատուէ, պիտի պատասխանէ թէ մանչ, անձնուպարզ պատանախ մը համար, այն է՝ թէ ազլիկը տեղաւորելու համար սփիտ պէտք է, բայց մանչուն, ո՛չ, նկատեցե՛ք այն ծնողներն, որք իրենց աղաքը ամուսնացնել կուզեն, մէկ նայելով պիտի տեսնաք, որ միշտ շահաւոր կը փնտռեն, այսինքն հարստութիւն բերող ազլիկ մը : Գարնեալ, հարցուցե՛ք քան տարեկան պատանայն՝ թէ ինչո՞ւ համար իւր պաշտելոյն միամալ կուզէ : Անտելիք պատասխաննից, սա պիտի ըլլայ . . . Քանզի սաստիկ կը սիրեն, քանզի իմ գոյութեանս և երջանկութեանս համար կարելուք է ինձ, և թէ՛ աւանց անոր յախ-

անձնական սիրտ, յուսահատութիւն և ոչնչութիւն կը նկատուի : Մանկ մը տարիէն ետքը փնտաւեցէ՛ք այդ հիացեալ սիրահարը, պիտի զարմանաք անանազով որ ուրիշ կեանք մը հետ ամուսնացած է . և եթէ այս սրբութիւն փոփոխութեան համար զարմանք յայտնէք, կը պատասխանէ ձեզ՝ թէ ծնողքն իր սիրոյ ամուսնութեանը գէտ կեցան, քանզի սիրամ ազնիւն հարրատութիւն յունէր, և թէ ինչն ալ ջիշ մը ետքը հասուն խորհրդածութեան յետոյ, հասկցած էր թէ առանց հարստութեան ամուսնութիւնը մեծ անտեսութիւն է երիտասարդի մը համար . ուստի հարուստ տիւտ մը փնտաւած և զտած է : Երես է՝ թէ իր կիներ առաջին սիրահարն պէտ շտրէր, ո՛չ այնչափ գեղեցիկ և ո՛չ ալ այնչափ գորովայն է, միտին երջանիկ յասկութիւնները շունի . բայց ինչ փոյթ, սակիունի, և այս ալ ջիշ մը ջիշ միտիտարիշ չէ . . . Խեղճ որիորդք, կը տեսնա՛ք, ո՛չ ներ առարկնութիւնը և ո՛չ ալ ներ գեղեցիկութիւնը, ո՛չ բարոյական կատարելութիւնիդ և ո՛չ մարմնական հրապոյրնիդ կը փնտաւն, այլ ներ սակին . . . Ահ, մարդիկ . . . և ապա կը համարձակին արանջալ . . .

Ուրեմն՝ կիներ առետուրի նիւթ մ'է, որ երբ ստակ բերէ՝ կը մեծարեն, և երբ միայն առարկնութիւններ ունենայ՝ երեսէ կը ձգուին : Մարմնոյ և հոգւոյ գեղեցիկութիւնը, մտաց և սրտի հարստութիւնը, արուեստ, սէր, անձնախրութիւն, միթէ ասանք մեր զարու մարդոց համար առ ոչնչ կը համարուին : Ուրեմն հաստատեցէ՛ք սասկցումնքը՝ թէ սակոյ գումարն է երջանկութեան պատճառ և ո՛չ թէ առարկնութեան գումարը . ուրեմն՝ սակից կը հետեւի թէ ազնիւնց արուած գաստարակութիւնը այլ ևս անագուտ է, ուրեմն սովրեցուցէք իրենն համարձակ և գոռզարար ըսել թէ « ՈՍԿԻ ՈՒՆԻՄ » . Ուրեմն

փոխանակ վայելելու, և շքեղ զարդարանաց, ոսկեկաուր  
ժանեակներ և զուարթներ կապեցէ՛ք, ուսերնուն զբայ  
ալ իբրև վիճոց սա ծանուցադիրը գրէք : Ան՝ան՝ան՝ի  
հարստ ուզի՞ և անասրակոյս եղիք, որ իրենց բոլոր-  
• արքն աւելի շատ ամուսնացողներ պիտի ժողվուին :  
քան թէ այն գեղեցիկ և առոյգ ազգկանց՝ որոց պայ-  
ծառ նակիսն վրայ իմաստութիւն, համեար, բա-  
բութիւն . . . առանց հարստութեան կը կարգացուի :

Մի մարդիկ, կուզէք՝ որ միայն իրենց սակարկ  
համար սիրուելին հասկցող կանայք անկեղծօրէն  
սիրեն, կը պահանջէք որ միայն իրենց հարստու-  
թեանն համար գգուեալ կիներն՝ զձեզ միայն և միշտ  
զձեզ սիրեն : Միթէ կը յուսա՞ք . . . ինչպէս որ շա-  
հախնդրական ծառայութիւն մը ծառայութիւն չէ,  
և ոտքի սէրն առ անձն սէր չհամարուիք, ուրեմն  
անասրակոյս եղիք, որ երբ ձեր կիին անշահասէր  
սիրով զինքը սիրող էակ մը գտնայ, բոլոր իր  
կարողութեանը պիտի պաշտէ զայն : քանզի կնոջ  
մէկ կազմութիւնը սիրոյ պէտք ունի, իսկ մաքուր և  
անշահասէր սիրոյ : Նասողութեան առնենց՝ ան-  
գամ մը այր և կին ամուսնեաց բնութեանն և  
խառնուածքին մանք ասրերութիւնները :

Շատ հազուադիւրս չէ տեսնալ այնպիսի մէկ բա-  
րեկեցիկ և զուարթասէր կուուած խել մը մարդիկ,  
որք ուրախացից կեանք կը սիրեն, զուարթեցէ՛ս, ի-  
րենց զուարթութեամբ գրասեցուցիչ կապրին, որք  
գրասեցուցիչ վարուցը համար ամենէն կը փնտաւին,  
որք ամեն հանգէմներու կը խառնուին, ամեն խըն-  
նայքներու մէջ կը գտնուին, և ասոր հետ յոյժ սի-  
րուն և աղեկ ազայ անունը կը կրեն : Բայց աւագ,  
ինչ ահա երբ է իրենց անական կեանքը . . . խո՛ս-  
նագէ՛մ, նեղօրբ կը լլան, կը պոսան, կը հայհոյեն,  
կարասիքը կը ասագալեն, կը թշնամանեն մայրը, ազա-

ըր կը վաճառեն և յիմարտար իրենց վաճառած ստակին և հասած ձախողանաց համար ընտանեաց հետ կը խոս. վին : Իրենց բացակայութեան միջոցին տիրած խա. զազութեան և ըսութեան կը յաղարկեն աչազակք, հեծութիւնք և գրացիքն անհանգիստ ընող ազմուկ ու ժխար : Սակայն եթէ գիտութեամբ թշուառ կինն իր ամուսնոյն վարձանցք վրայ տրանկանաց խոսք մը հանէ բերնէն, անմիջապէս կը նախատուի և կը թըշ. նամանուի . քանզի հասարակաց կարծիքն ըսած է . « Ընկերութեան մէջ սիրուն մարդ մ'է, ուրեմն բա. րի ամուսին և բարի հայր մ'է : » — Ոհ, եթէ ես այդպիսի սիրուններէն միոյն ձեռքն ինկած տարա. բազդ զօհին եզրայրն եզած ըլլայի, ասն մէջ կը պահուըակի, ու այսպիսի յուզիչ տեսարան մը տեղի ունեցած ատեն յանկարծ երեւնալով, վրան կը ջտա. կէի, գետինը կը տապալէի, ու զանի կամ կը զրդ. իացնէի և կամ կը խեղդէի : Այսպիսի բանասրաց ձեռքն հեծող հեզ գժբազդները միայն անոնց բա. ջակայութեան ատեն հանգիստ կը վայելեն : Իսկ այս. պիսի ամուսինք վերջապէս այնչափ զզուելի կը ըլլան, որ կանայք զիրենք տեսած ատեննին միշտ հեռա. նալու պատրուակ մը կը փնտռեն և կը գտնան . բայց միշտ քովերնին գտնուիլ բանազատուած ըլլալուն, կը լսեն, կը դողան, գլուխնին կը ծռեն և երբ իրենց ամուսինը առնէն զուրս ելլայ, կարծես ծանր բռնէ մը կը թեթեւնան : Պիտի խոստովանիչ՝ թէ այդպիսի կեանք մը մշտնջենական պատիժ մ'է, թշուառու. թիւն մը, խալ մը, որ ամեն որ կը ծանրանայ, որ կը նմիէ, և գերեզմանը միայն ապաստանարան կը թողու :

Եթէ այս տարաբազդ ընտանեաց մէջ մանանք, ուր այլը բանասր և կինը զօհեալն է, աննուրեք աչեախց սգալի պատկերը կը տեսնաք հոն, միշտ բուսն վիճակի մէջ, տխուր և ահարկու մարդ մը :

անընդհանա ցաւոր և յուարեկ գրկեալ կին մը : Մէկ կողմէն թշնամանք , սպառնայիք , նախաախնք և շուտանք : միւս կողմէն արատաւք , հառաչանք , համբերութարութիւն և անյոյս զտհոգութիւն , ցերեկը գիշերը , ամեն ժամ , ամեն վայրկեան մէկ կողմէն միեւնոյն կատարցիք և միւս կողմէն միեւնոյն սառսպանք . Բաւձեթէի լեարդը կը նմանի՝ որ միշտ կը գիշատուէր անյազ անզղէն . նաև գժտիք կը նմանի որ սուանց սպառելու միշտ կայրէ իւր զահերն ու կը սաշորէ :

Մէկ եթէ կարելի ըլլար այս վշտակիր կանանց շատերուն սիրտը կարգաւ . որք իրենց համբերատարութեանն արատաւքը կը պահեն , կը կլլեն ու ցաւերնին շն յայանէր , հան խոր վերք մը պիտի տեսնուէր , որ մէն մի թշնամանք կը մաշի և կընդարձակի : Անոգսք որինաց անմեզ զահեր , իրենց համար երկինք իւր կապոյս պայծասութիւնը շունի , արեգակն իւր շեռուցիչ նաւագայթները կորսնցուցած է . Ամեն որ աւելի աժգոյն , աւելի վհատեալ գեպի գերեզման կը մտանան , և տիրութեամբ կըննին հան : Այս ասորրազգից շատերն անձնասպանութեամբ պիտի փութացնէին այս յամրարայլ մահը , եթէ մայրական բնազգումն իրենց զաւակացն համար սպրելու յպարտարէր զիրենք :

Ինքնասէր և մտարդի արք , որ միայն ներ կնովը համար սպառնայի խոտուածք մ'ու ցոյցեր ունիք , և երբ գգուանաց պէտքն զգաւ , ստամանց սոսկայի կընին մը յայանող ժպիտով մը կը խնդրէք իրենցմէ . յետոյ երբ կամբերնից կատարէք , յետս կընդէք զինքն ու վտարի մը պէս խորթալով կը քնանայ . Ինչպէս կողմէք որ ներ արիւնացայտ այրերուֆն և մահացուցիչ մասուքներուֆն իրենց ազգած սոսկմամբն հանգերն՝ մասնակից ըլլան ներ սեզմանցը : Հրամաննից Դա-



տարեւու համար երկիրդայից եռանգ մը ու ևեր ամե-  
նափոքը բազմանոց գե՛մ կոյր հնազանգութիւն մը կու-  
ղէք, կը պահանջէք որ ևեր ու բարութեան աստն խըն-  
դա՛ն, և լան՛ երբ իրենց լստաճառած մեկ դուր կեննէ  
ևեր ևախառը և վայրագ լուսթեան մը պարտաւո-  
րէն զևեզ, Տիրապետելու անյազ ծարաւով այնպիսի  
մեքենայ մը կուղէք, որ ևեր ևայնի եղանակին հա-  
մեմատ ծանր կամ արագ շարժին . . . միթէ կը յու-  
սա՛ք, Բայց Թարթար մը այնչափ բանաւոր չէ, վայ-  
րենի Գեաէօի մը՝ իւր սկստօն կամ իւր վաղակո՛ղը  
զնած գերւայն գե՛մ այնչափ խառապահանջ լըլլար:

Արգ՛ եթէ կանանց կողմն ալ գտնուանք, նոցա  
ալ տխրագին կողմը պիտի տեսանք: Եթէ ոչմը լա-  
րայար չեն գործածէր, ախ է թէ շունին զայն իսկ  
թշնամանքն, շարութիւնն ու անհաւատարմութիւնը,  
չոր, աւա՛ղ, խիտ յանախ կը գործածեն, միթէ այդ  
մարդուն բանասրութենէն ստորի՛ն մըրութիւններ են:  
Միթէ շուրթեան ոնիրը ամարգի գորութեան մը զեզ-  
ծտմէն ստելի մեծ չէ՛ . . . Աւա՛ղ, եթէ կանայք  
խաչ կը կրեն, այդ մարդիկ ալ իրենցն ունին, միայն  
թէ սոքա ստելի ծանր կը գտնան զայն:

Ամեն որ աւելի ազմկարար և բանասիրտ և ա-  
ւելի ահան ու վեռ այս ինչ շար կրին՝ ինչո՛ւ համար  
շիճանս կապելու է այն ինչ մարդուն, որ նոյն ինչն  
բարութիւն, մարմնացեալ շաղցրութիւնն է, եւ սա  
միւս կրնը, որ իր շնական արփանաչը ներումն ընդու-  
նելէն ետքը, վերստին կի՛նայ և առակին հառաչա-  
նոց կուսայ ինքզինքը, և զարնեալ՝ սա միւսը որ իւր  
չիտ նայուածքը արանց դարձնելով, ուղղոյն անն-  
նատուր կըլլայ, ինչո՛ւ համար զանոնց իրքն պատիժ  
արժանաւոր քաղաքացւոց գլուխն հանելու է: Այս  
պարագայները շատ հազուագիւտ են պիտի ըսէք-  
լու, բայց եթէ ալ անանից հազուագիւտ ըլլային,

միթէ այս ազեաոյի բացառութեան մէջ գանուող  
թշուառներն իրաւունք չունին որէնքը սգնու-  
թեան կոչելու : Սակայն՝ այսօրուան որէնքը չը  
կրնար սգնել անոնց . . . ուրեմն՝ բարի և անսեղ ըլլալ-  
նուն համար մշտնջենապէս կը դատապարտէք զա-  
նոնք :

« Սա ալ խոստովանելու է թէ, կրտէ վերջին գա-  
րու հեղինակ մը, երբեմն շատ ամուսնացեալ կանայք,  
իրենց ամուսնոյն անկարգութեանը պատճառ են,  
իրենց ամուսնոյն սիրար նամբու բերելու և նոցա սե-  
րը վերստին վատակելու համար՝ փոխանակ իրենց ու-  
նեցած հազար ու մէկ միջոցները գործածելու, ընդ-  
հակառակը՝ կարծես, թէ անական կեանքն անտա-  
նելի ընելու համար վարժութիւն կընեն : Երբեմն՝  
ահան, վայրենի, և մեղամաղձոտ բնասորութեան տէր  
կին մ'է, որ մէկ զուարնութիւն մը կը կատարեցնէ,  
որ բարեկամութենէ կը զայրանայ, որ կարծես իւր  
ամուսնոյն և սպասուորաց պատուհասն ըլլալու հա-  
մար կապրի, երբեմն՝ գաժան, խոտասիրտ և կրա-  
կոտ կին մ'է, որ ս'չ իմաստութեան զիջանիչ և ս'չ ալ  
շափուորութեան գիմազրել գիտէ, երբեմն՝ նախան-  
ձատ և կասկածոտ բնասորութիւն մը, որ մէկ բան  
մը քննելէ առաջ՝ ամենայն ինչ կը դատապարտէ,  
կամ եթէ քննէ ալ, աւելի խոտիւ դատապարտելու  
համար է, երբեմն՝ զգուշաւոր և խորհրդաւոր կին  
մ'է, որ չգիտէ այն գողայ սրտակցութիւնները, որք  
նու իրական ու անբակտելի կապով մը միացած երկու  
սրտից մէջ գանուելու են : միշտ ինքզինքը պահելու հա-  
մար զգուշանալով երբեք չիտսիր, կամ կէս բերան կը  
խօսի, և կամ իր խօսքերը կշտամբանք, թ շնամանք ու  
խոցոսիչ նէտեր են : Եթէ իր գազանեաց մէկ մասը  
կը վատահի, միւսը միշտ կեղծաստեալ վատահու-  
թեան քոչին տակ կը ծածկէ : Երբեմն՝ անխորհուրդ

կին մ է, որ ուշագիշտ աչքով ամուսնոյն հետքը կը գիտէ, որ ամեն բան հասկնալ, գիտցածը չգիտցածն ըսել կուզէ, և չկրնար ինքզինքը զսպել իրեն յվերաբերեալ բաներն անգիտանալու, և կամ մուսայութեան մէջ խաղել պարտաւորած բաները լսելու համար: Երբեմն՝ հակասական սգի մը, հպարտ և խիստ զգայուն ընտարութեան տէր կին մ է, զոր ամենախեղձ և պակասութիւն մը, խռար մը, գուշակեաց ու շինչ բան մը կը զայրացնէ, Երենց ինքնասիրութեանը փաստը իրաց խաբու մտազիր և ուրիշները վերաւորող բաներուն նուազ ուշագիշտ այս անասկ կանաչը կուզեն որ իրենց ներուի միշտ, իսկ իրենք չեն ներէր. ահաւասիկ ասկից կը հեռուի որ շատ մարդիկ իրենց կնոջմէն կը զզուին, կարճակեն: Ահաւասիկ ասոնց հեռուանքն են ապահարզաններն, այն ամբասանութիւնները, որոցմով կը գզրգին գասարանները, այն բողոքները, գայթակղեցուցիչ պատմութիւններն, աղմուհներն, որ ընտանեաց միութիւնն ու հանգիստը կը վրդովեն. վերջապէս այն տատապանքները, որուն զոհ եղած է մեր թշուառ դարը:

Իսողոթոյ մէջ արձակման սրէնքը վերնաշէն բանի մը ասորի ետքը՝ սա հեռուեալ գեղքը պատահեցաւ, որ արժանի է հոս յիշատակելու:

Իրժուար գառն համեստ մարդ մը՝ իւր ևարտարութեամբն ու աշխատութեամբը հարտանաւաղ, իրձէ բարձրագոյն կարգի կին մ'աննելու գծրազգութիւնն ունեցաւ. կին մը, որ յիշ ասեմէն ինչ ըլլալը հասկցուց: Օր մը շնութիւնը գործուած ատեն՝ ամուսինը վրայ հասնելով, իւր յանցանաչք ներուի ընդունեց՝ իսկ այս ամբարիշտ հուշոյն համար ներողութիւնը քոխանակ զոյլու մն բերելու, կարծես իրախոյս մ եղաւ: Ամուսինն երկրորդ անգամ

մ'աչ ներքեց, իմացնելով իրեն՝ որ երբորդին ազա-  
հարզան ինզրելու պատճառ պիտի ըլլայ: Ետև  
սքանչելի փիլիսոփայութիւնը շեշտարեցին զատ,  
թշուառ կինը ծաղրեց իր ամուսինն ու առջինէն ա-  
ւելի անձնատուր եղաւ իր տարփառորացը: Այն ա-  
տեն պատուաւոր մարդն առանց ազմուկ հանելու  
իրաւազէա դատաւորի մը զնաց և իր ցուայի կա-  
ցութիւնը յայանեց, այս պարագային մէջ ամենա-  
կարեւոր եղած ապահարզանը ինզրելով: Դատաւո-  
րը իմացուց իրեն, որ այս օրէնքը Դաղզիոյ օրինա-  
գրքէն գծուած և ասոր տեղ մշտն և ընդ բոժմուտ  
դրած է: Ամուսինը նոր օրինաց անբաւականութեանը  
համար ազազակեց, օրէնք մը որ այսպէսով հարեա-  
կալութիւն կը տրամադրէր:

— Իսկ սիրելիս, յաւելցուց սա, ես պատուաւոր  
և իմ երկրիս օգտակար քաղաքացի մ'եմ, այլ ևս  
հարազատ զաւակներ յունենալ պիտի դատապարտ-  
ուիմ, քանի որ ազգի այս պոսանկը, Պետութեան  
ունեցած պարտքս չպիտի կրնամ զնարել՝ եթէ ոչ  
հարեարդ ինեւրով... ո՛հ, անկարելի կը թուի ինձ այս:

— Այնպէս կըսեն, թէ յեաւազէմ կուտակցու-  
թեան մը ազգեցումութեանը գրուեցաւ այս օրէնքը,  
և սակայն նախնական եկեղեցին ձեր այժմու գրա-  
